



ԷԶՄԻԱԾԻՆ

1969 թ. III

649



ՌՆԷ
ԺԴ ՏԱՐԻ


Յո՛ւրիս ~ օգոստոս

ԶԱՐԻԱԾԻՆ

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՍԻԱՇՆԻ

Է-Ը

1957



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Հայ-վրացական հարաբերություններ	3
Պաշտոնական ընդունելություններ	7
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱՔԱՆ—Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազ- գեն Ա Կաթողիկոսի հովվապետական այցելությունը վրանայոց քնմին	8
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շնորհակալության հեռագրերը վրաս- տան կատարված այցելությունից հետո	34
Հայ գրողները հայ և վրաց ժողովուրդների և մշակույթների փոխա- հարբերության մասին	36
ՊՐՈՑ. ԴՈԿՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵՔ-ԲԵԿ—Հայ-վրացական գրական կա- պերի պատմությունից	39
ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ—Քրիստոնեության մուտքը Վրաստան	43
ՊՐՈՑ. ԴՈԿՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵՔ-ԲԵԿ—Մյուխենի Մայր Տաճարը	47
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Մցխեթան և նրա պատմա-հարապետական հուշարձանները	52
Ա. ԲԱՂԻՐՅԱՆ—Հուլիս Կոմիտաս վարդապետի մասին	58
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ—Գլաձորի դպրոցի մեծ մանրանկարիչ Թորոս Տա- րոնացին	64
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ—Մոզաիկ մանրանկարչության արվեստը Հայաստա- նում	71
Մ Ա Յ Ր Ա Ք Ո Ռ Ո Ւ Մ	76
Հաղորդագրություն Գալուստ Կյուպեեկյան հիմնադրության ներկա- յացուցիչների ժամանման մասին	79
Հայրապետական բարձր գեանառություն	80
Ա. ՈՂԱՆՅԱՆ—Ալեքսանդր Մյասնիկյանի տեղան Երևանի Պետական ռեսպուբլիկական գրադարանը	81
Գեորգիոս Տ. Մամբե արհեստագույն Սիրունյանի այցելությունը Ադրիա-Արենայի և Խաղաղության հայ գաղութներին	86
ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ—Անհետացած հայ գաղութներ Հնդկաստանում	88
Հանգիստ գերաշնորհ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Կարապետյանի	95

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՆ


ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԻ, ԷՇՄԻԱՇԻՆ


ԷՇՄԻԱՇԻՆ, ՍՄՍՄԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“

Redaction of the magazine „Echmiadzin“, Echmiadzin, Armenia, USSR

Երևան, 1957 թ.





ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՈՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՄԵԼՔԻՍԵԳԵԿ
ՊԱՏՐԻԱՐԺ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ամայն վրաց Պատրիարք-Կարողիկոս Նորին Ս. Ոծուրյուն Տ. Տ. Մել-փիսեղեկ Գ-ի Լղբայրական հրավերով, 1957 թվականի հուլիսի 6—11 օրերին Թրիխսի հովվապետական այգեւորւոյն տվեց Ամենայն Հայոց Մայրազոյն Պատրիարք և Կարողիկոս Նորին Ս. Ոծուրյուն Տ. Տ. վազգեն Ա վեհափառ Հայրապետը, արժանանալով արտագին և ջերմ ընդունելւորյան, հյուրը լինելով վրաց եկեղեցու և Համայն վրաց Պատրիարք-Կարողիկոս Մելփիսեղեկ Գ-ի:

Պատմական այդ այգեւորւոյամբ է՛լ ալելի բնդայնվեց և խորացավ հայ և վրաց ժողովուրդների, Հայ և վրաց եկեղեցիների հարաբերւոյութունը՝ եկեղեցականներ և հայրենասեր երկու մեծ դեկավարների անձնական հանգիպումով և մտերիմ հարաբերւոյութամբ:

Ամենայն Հայոց Կարողիկոսի այցը Թրիխսի Համայն վրաց Կարողիկոսին՝ հանդիւսացավ հարեան երկու ժողովուրդների դարավոր բարեկամւոյան վառ արտահայտւոյութունն ու վկայւոյութունը:

Ամենայն Հայոց Հայրապետը Թրիխսի Խովվապետական այգեւորւոյան ժամանակ, ամեն տեղ դիմավորվում էր մեծ սիրալիրւոյամբ, ջերմւոյութամբ և բերկրանքով:

Հազարամյակների պատմւոյութուն ունի հայ և վրաց ժողովուրդների բարեկամու-

րւոյութունը: Այն օրվանից, երբ հայ ժողովուրդը պատմւոյութան ասպարեզ է իջել, նա իր կողմից տեսել է իր հարեան ու Լղբայրակից վրաց ժողովուրդին: Դարեր շարունակ կերտվել և ամրապնդվել են հայ և վրաց ժողովուրդների կապերը, բարեկամւոյութունն ու յարի դրացնւոյութունը: Երկար դարերով նրանք բախտակից են եղել իրենց ուրախ և դժբախտ օրերին, ապրել են կողք-կողքի, տխրել միմյանց վշտերով, ուրախացել միմյանց հաջողւոյութուններով: Ավանդական դարերից հայ և վրաց ժողովուրդները միասին են բայել Վերա ծուլած վաճառ ու տեգ, խառնած արւոյն ու ֆրտիւնք: Հայերն ու վրացիները արւոյնակից Լղբայրներ են, ավելի քան 2000 տարվա բարեկամւոյութամբ կապված Լղբայրներ, վշտով և ճնւոյութամբ սրբագործված», — գրել է Վարպետը՝ Ա. Իսանակյանը: Մեր անմահ բանաստեղծ Հովհաննէս Թումանյանը, որ ջերմ պաշտպաններից մեկն էր հայ և վրաց ժողովուրդների հարաբերւոյութան և իր հոգու թովանդակ ջերմւոյութամբ սիրում է՝ Վրաստանը և վրացական զբաղանւոյութունն ու ժողովուրդը, հետեւյալ սրտառուչ խոսքերով է բնութագրել հայ և վրացական հարաբերւոյութունները. «... էն երկու ժողովուրդները, որոնք իրենց պատմւոյութունն սկսում են նրանով, թե Հայկոսը (Հայկը) և Քարթլոսը Լղբայրներ

էին, մնացել են ու մնում են անասանք՝ կապված իրենց փոքորեկային պատմական հակառակորդ և մեծագույն ճիշտակներով: Նրանք միաժամանակ են հնարել իրենց գիրք, միաժամանակ են ընդունել ֆրիստո-նեությունը, միասին մշակել թե՛ հոգևոր թե՛ աշխարհիկ գրականությունն ու գիտությունը, միասին կովել իրենց ազատության և մշակույթի համար և միասին նույնիսկ իրենց մեծ տառապանքների մեջ ու միշտ բախտակից»:

Հարուստ է երկու ժողովուրդների բազմադարյան պատմությունը հանուն ազատության, հանուն Հայրենիքի և ժողովրդի երջանկության, հանուն Անդրկովկասի անկախության միասնաբար մղված մարտերի հերոսական դրվագներով: Նրանք միասին են կովել հոռմեական լեզուներին և արժիվներին դեմ: Պարսկական բռնակալության դեմ մղված վարդապետական հերոսական պատերազմում, Վրացի Արարիկ Արարիկ և այլ առնու-տեաբ [վրաց] առնելին ուխտագրություն և բազում երդմամբ Ավետարանին հաստատելին» (Փարպեցի): Արարիկան խալիֆայության դեմ պայքարում միշտ հանդես է եկել հայ և վրաց ժողովուրդների կուռ միասնությունը: ԺՊ դարում հայ և վրաց զորքերը ուսուսի տված կովել են սելջուկյան բուր-հերի դեմ, ինչպես նաև Դավիթ Բեկի օրե-րին՝ ԺԸ դարում Պարսկաստանի և օսման-ցիների դեմ:

Շատ փոքորեկներ են անցել գեղեցիկ վրաստանի գեղածածաղ երկնքի վրայով, բայց անընկճելի է մնացել միշտ վրացական ազատասեր ոգին:

Դեղեցիկ է վրաստանը և նրա սիրուն մայրաքաղաք Քրիլիսին:

Քրիլիսիի մասին հիացմունքով է խոսել մեր պատմիչներից Մովսես Կաղանկատվացին, այն անվանելով «փափկասուն, վաճառաշահ, հոյակապ մեծ մայրաքաղաք» («Պատմություն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912 թ.):

Ժ դարի մի այլ պատմիչ՝ Ուստանես Եպիսկոպոս, նմանապես հիացմունքով է խոսում Քրիլիսիի մասին. «հրաշքէն և հրաշալի. նոչակավոր և ականատու մեծի մայրա-

քաղաքին Տփլիսեաց» («Պատմություն հայոց», Ռ հատված, էջ 34, Վաղարշապատ, 1874 թ.):

Քրիլիսիի մասին մեծ հիացմունքով են խոսել նաև վրաստան այցելած ճանապարհորդներ: «Վրաստանում կա մի գեղեցիկ քաղաք, շրջապատված արվարձաններով և բազմաթիվ ամրություններով», — գրել է նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն:

Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը 1672 թվականին Քրիլիսի այցելելիս իր հուշերում գրում է, որ Քրիլիսին «Մերձավոր Արևելքի ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է»:

Վրաց ժողովուրդը աշխարհի հին և արժեքավոր մշակույթի տեր ժողովուրդներից մեկն է, առաջնորդվող, աշխատասեր, կենսուրախ և միշտ երիտասարդ: Վերս ու պայծառ է վրաց ժողովրդի հոգին, վրաստանի գեղատեսիլ և գունագեղ բնության նման՝ գեղեցիկ, կայտառ, կենսաճող: Դեռ 12-րդ դարում, վրաց գրականության փառք և մեծ ճանճոր Շոթա Ռուսթավելին հնչեցրել է ժողովուրդների եղբայրության, խաղաղության մեծ գաղափարներ: Մեծ բանաստեղծի և ճումանիստի խոհերով և զգացմունքներով է դաստիարակվել վրաց ժողովուրդը: Համաշխարհային գրականության ոսկյա ֆոնդում իր պատվավոր տեղն է գրավում վրաց գրականությունը: Վրաց ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում գուրգուրանով, խնամքով և իր աչքի լույսի պես է պահել իր մշակույթը, լեզուն, գրականությունը, ազգային մեծ ավանդությունները, հոգեկան իր նվաճումները, իր անկրկնելի գանձերը:

Խորունկ և սերտ է եղել նաև հայ և վրաց ժողովուրդների մշակութային կապը: Հայերի և վրացիների մշակութային-գրական կապը, մտքի եղբայրությունն ու համագործակցությունը գրականության և արվեստի ասպարեզում բարձրանում է մինչև Բ դար (մ. թ. ա.): Վրացիներից հայերենի և հայերենից վրացիների են քարգմանվել երկու գրականությունների լավագույն նմուշներ: Հայ և վրաց գրականության մերձեցումը մի հզոր ազդակ է հանդիսացել երկու երկրների՝ Հայաստանի և վրաստանի և երկու ժողովուրդների՝ հայերի և վրացիների՝ եղ-

բայրացման և ազգային մշակույթի ծաղկման: «Անձամե Շոքա Ռուսթավելին և Դերիգոր Նաբեկացին այն բարձրագույն նուշարձաններն են, որ տվել է Կովկասի գրականությանը» (Ն. Մառ): Սասունցի Դավիթ Հայկական էպոսը և վրացական Ամիրան Դարե՜փանիսի էպոսը այնքան մոտ են միմյանց իրենց ոգով, գաղափարական բովանդակությամբ և գեղարվեստական առանձնահատկություններով: Վրաց գրականությունը տոգորված է եղել հայրենիքի և ժողովրդի սիրով, հայրենի երկրի հերոսական անցյալով և ապագայի վառ երազով, ազատասիրությամբ, հումանիզմով:

Մեր ժողովուրդը, մեր գրողները մեծ սիրով են երգել «գեղեցիկ և արյունակից արևվամայր» Վրաստանը, նրա «առծիվների օրորոց սեզ լեռները», նրա «տրդիների բմբուս ոգին» և «եղբայրասեր հաջարի ժողովրդին»: Հայ ժողովուրդը սիրել և գնահատել է անգուգական Շոքայի սփանչելի լեզվով գրված գրականությունը» (Ա. Խաճակյան) և «րանկագին Վրաստանն ու վրացական սփանչելի հոգին, նույնքան էլ քանկագին այն մարդկանց, որոնք հանդիսանում են կրողներն ու մեկնաբանները այդ հոգու» (Հ. Թումանյան, «Թումանյանը բննադատ», էջ 490):

Սայաթ-Նովան, Կ. Սունդուկյանն և ուրիշ հայ գրողները որքան հարազատ են եղել հայերին, այնքան և վրաց ժողովրդին: Մշակույթի և գրականության ասպարեզում «հայ և վրաց ժողովուրդները դարերի սկզբներից՝ միմյանց Մենք—Ամիրանի շփաններին, եղել են ուղեկիցներ, գործակիցներ: Միասին կերակրել են, յուրաքանչյուրը պահելով իր ինքնատիպությունը, այդ փառավոր, գարմանայի կույտուրան, որ բովանդակ Սովետական Միության կույտուրայի ամենամեծն է սովետապահուհուն վկայված» (Ա. Խաճակյան):

Արաֆս և Կուր գետերի մի հարթավայրից սկիզբ առնելը, հետագայում կողմ-կողմի եղբայրաբար հոսելը և վերջում միանալը ծովի մեջ քափվելու համար՝ հայ և վրացի մեր բազմաթիվ գրողների համար հանդիսացել է իրապես մի կենդանի խորհրդանշան և եկու հարևան ժողովուրդների պատմական

նակատագրի և մշակույթի զարգացման համար:

Հին է. շատ հին նաև հայ և վրաց եկեղեցիների փոխհարաբերության պատմությունը: Վրաստանում Բրիտոնեության մուտքն ու Բաղդությունը պատմականորեն կապվում է Հոնփսիմյանց կույսերի խմբից Նունե կույսի Վրաստանում առաջնության և Բաղդության հետ՝ վրաց Միհրան Բդեշխի ժամանակ, Մցխեթա մայրաքաղաքում: Վրաստանում Բրիտոնեության տարածման և պետական կրոն նշակման աշխատանքներում Միհրան Բդեշխը կատարում է այն պատմական ու վեհական դերը, ինչ Հայաստանում կատարել են Տրդատ Կ թագավորը և Կրիստոս Լուսավորիչը:

Վրաստանում Նունե կույսի առաջնությամբ, «յոժարութեամբ ընկալան Վիրք զհարոգութիւնն Աւետարանին» (Խորենացի, «Պատմություն հայոց», Վեներտիկ, 1865 թ., էջ 170):

«Անդոստին էուսավորչի օրեն,— գրում է Մադաֆիա արքեպիսկոպոս Օրմանյանը (Վեհապատում, Ա հատոր, էջ 104),— ներքին միավորություն մը հաստատված էր Հայոց և Վրաց եկեղեցիներու մեջ»: Վրաց եկեղեցին և եկեղեցականները դավանաբանական հարցերում «հայոց կհետևին և հայոց ժողովներուն կմասնակցին իբրև նույն եկեղեցվո անդամներ» (Վեհապատում, Ա հատոր, էջ 588), ինչպես Բաբգեն կարողիկոսի օրով 506 թվականին Դվինի առաջին ժողովում, ուր ներկա էր վրաց Գաբրիել կարողիկոսը 23 վրացի եպիսկոպոսներով: Երկու եկեղեցիների դավանաբանական պաշտոնական գրությունները մինչև 608 թվականը գրել են հայ կաթողիկոսները «Վրաց և Աղվանից միասնությամբ» («Գիրք բղրոց»): 608 թվականին վրաց Կյուրիոն կարողիկոսը «Վրաց եկեղեցին Հայոց եկեղեցին գատեց, և Լիվեստոսական միաբնակ վարդապետութենն Բաղկեդոնական երկարնակ վարդապետության վերածեց» (Վեհապատում, Ա հատոր, էջ 589):

Այնուամենայնիվ երկու եկեղեցիների միջև շարունակվեց Բրիտոնեական ոգու և սիրտ վրա հիմնված սերտ համագործակցություն.

որը վերջերս Գևորգ Զ-ի և Վրաց Կալիստրատ Կարողիկոսի ժամանակ վերածվեց սրտագին համագործակցության և եղբայրության:

Խորապես վստահ եմ և համոզված, որ Ամենայն Հայոց Հայրապետի պատմական այցելությունը Թբիլիսի՝ մի նոր ու խոստումնային էջ կրացի ինչպես ընդհանրապես հայ և վրաց ժողովուրդների, և ի մասնավորի Հայ և Վրաց եկեղեցիների բարեկամական հարաբերությունների պատմության մեջ:

Վերջին երեսնամյակում, Վրաստանում սովետական կարգերի հաստատումով, Վրաստանը հասավ իր մշակույթի, արդյունաբերության, գյուղատնտեսության աննախընթաց ծաղկման: Վրաստանի ժողովրդական տնտեսության բուռն ծաղկման հետ զուգընթաց անել են նոր գեղեցկությամբ և մի խոստմնային փրբումով՝ Վրաստանի նոր մշակույթը, գիտությունը, արվեստները, գրականությունը: Վրաստանի Ակադեմիայում է կենտրոնացել վրացական ողջ ստեղծագործ, որոնող միտքը: Գեղեցիկ Վրաստանում ծաղկել են մեկը մյուսից սիրուն զմռսխտ կանաչների մեջ բաղված գյուղեր, ավաններ, քաղաքներ, երկիրը ծածկվել է հագարավոր արդյունաբերական, գրադարանային, ուսումնական-լուսավորական հաստատությունների, հիվանդանոցների, մանկամասերի ցանցով: Եվ այս բոլորը՝ ի սպաս է դրված վրաց ժողովրդի երջանիկ ապագայի ու ազատ կյանքի համար:

Օրերի հետ միասին աճում է և ամրապնդվում հայ և վրաց ժողովուրդների դարա-

վոր ու մեծ բարեկամությունը: Այսօր ավելի քան երբևէ՝ անհակտեյի եղբայրությամբ են միացած հայ և վրաց ժողովուրդները:

«Կուրի չուր խմես, մերը կլինես».— ասում է վրացական առածը: Կուր գետի ջրից շատ է խմել հայ ժողովուրդը: Նա անխորտակելի կապերով, սրտագին ավանդություններով, հերոսությամբ և պատմությամբ, իր անցյալով, ներկայով և ապագայով սերտորեն կապված է Վրաստանին և վրաց ժողովրդին, ու կապված կմնա, ու չկա, չի եղել ու չի լինի մի ուժ, որը կարողանա բաժանել հայ սրտերը վրացական սրտերից:

Ամենայն Հայոց Հայրապետի՝ Նորին Ա. Օծայքուն Տ. Տ. Վազգեն Ա-ի Թբիլիսի կատարած այս հանդիսավոր ու պատմական այցելության առթիվ, բովանդակ հայ ժողովուրդը և նրա հետ Մայր Արար Ա. էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետությունը, ուրբողջ հոգով ցանկանում են ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ՝ հոգևոր-ազգային վերազարթնեմ, ՎՐԱՑ ԺՈՂՈՎՐԴՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ՝ նորանոր հաջողություններ՝ փայլուն նոր էջեր ավելացնելու համար վրաց հերոսական պատմության էջերի վրա, և ԳԵՂԵՑՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ՝ է՛լ ավելի ծաղկում և բարդավաճում, երկու հաբեան և արյունակից ժողովուրդների և երկրների սիրո միության և փոխադարձ համագործակցության մեջ:

Կեցցե՛ Վրաստանը, կեցցե՛ վրաց ժողովուրդը, կեցցե՛ վրաց եկեղեցին:

Թող է՛լ ավելի ամրապնդվի հայ և վրաց ժողովուրդների եղբայրական զաշինը:





ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. Ե. ՔՈՉԻՆՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԽԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԻՑ ԵՎ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ**

Հուլիսի 22-ին, Երկուշաբթի, Նորին Ս. Օծույրյուն Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ պարոն Ա. Ե. Քոչինյանին:

Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի պարոն նախագահի միջև տեղի ունեցավ շերտ գրույց:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԱՅԾԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Հուլիսի 28-ին, Երկուշաբթի, Վեհափառ Հայրապետին այցելեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին աղբյուր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանը, ընկերակցությամբ նախորդ նախագահ պարոն Հրաչյա Գրիգորյանի:

**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԱՅԾԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ**

Հուլիսի 31-ին, չորեքշաբթի, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին աղբյուր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանին:





ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԺՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԵՋԳԵՆ Ա ԿԵԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԵՓԵՏԵԿԱՆ ԵՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՆՇՅՈՑ ԹԵՄԻՆ



արեր շարունակ էջմիածինը բաշխվել է մեր ժողովրդին ուրպես խորհուրդ ու պատգամ: Բաշխվել է նա որպես նշխար առանց սպառվելու, բոլոր հայ հոգիներին անխտիր: Հայոց պատարագի սրբազան սկիհի մեջ Ս. էջմիածինն էլ պատարագվել է՝ հայ հավատացյալների հոգիներին մեջ վարդապետելու համար աստվածային օրհնությունն ու մխիթարանքը, որոնք այնքան անհրաժեշտ են եղել մեր ժողովրդին իր անցյալ մղձավանջային օրերին:

Հավատացյալ հայը իր հոգու բոլոր դռները լափնորեն բաց է արել միշտ՝ հավերժորեն բաշխվող Ս. էջմիածնին, ընկալելու համար մեր պապերի նմիրական պատգամը և մեր լույս հավատի մխիթարությունը: Այդ է, որ վկայում է մեր սիրեցյալ Հայրապետի պատմական ուղևորությունը դեպի բոլոր օտար հորիզոններ, որտեղ կան մեր ժողովրդի պանդուխտ և էջմիածնակարոտ որդիները: Որեւէ իրավ հայ մարդ չբացահայտված որեւէ գաղտնիք պիտի կարողանա՞ր տեսնել այս իրողության մեջ: Անշուշտ ոչ: Բայց այստեղ միաժամանակ գաղտնիքները չեն բացահայտվում, քանի որ էջմիածինն ինքը պերագուն գաղտնիքն է մեր ժողովրդի հավերժող տոկոսությունը, նրա հոգեկան բարձրագույն կարողությունների և ստեղծագործ հավատի, անսասանության: էջմիածինը հայ հոգու դավալն է:

Եվ ահա ա՛յս է, որ Ամենայն Հայոց աստվածարյալ Հայրապետը կամեցել է իր հովվապետական շնորհաբեր այցելությանը ժամանակ հաղորդել իր հավատավոր, հարա-

զատ զավակներին, ո՛ր երկնքի տակ էլ նրանք գտնվելու լինեն:

Հուլիսի 5-ին, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Տ. Մելքիսեդիկ Գ-ի հրավերով, Վեհափառ Հայրապետը մեկնում է վրահայոց թեմը:

ՄԵԿԵԼՈՒՄ ՄԱՍՐ ԱԹՈՒՆՑ

5 Հուլիսի

Մայր Տաճարի դանգերն են հնչում: Զանգերի ղողանջը խաղաղության նման օրհնանքով լցնում է Արարատյան արևաշողաշողը՝ Հայաստան աշխարհի արյունաբաշխի տը, և ապա ալիք առ ալիք սփռվում զաշտերով մեկ, հանգչելու համար բոլոր էջմարիտ հայ հոգիների մեջ: Ամեն ինչ ամեն քանի մասին խոսել է այս ղողանջ մեր ժողովրդի զավակների հետ: Պատմել նրանց հին մեր կյանքից, մեր վշտերից, լառ և քաղցից և մեր խնդից, հաղթանակից և փառքերից, և այսօր էլ զվարթալի պատմում է մեր նոր կյանքից, նոր վերադարձնիքից:

Զանգերն են հնչում...

Վեհափառ Հայրապետը, ողջ միաբանության և ժողովրդի հոծ բազմության առաջնորդությամբ, իջնում է Մայր Տաճար, հարժեշտի իր ավանդական աղոթքն ասելու ծնկի գալու համար Միածնաէջ լուսավորչան Ս. Սեդակի առաջ, Մայր Տաճարի խընկարույր կամարների ներքև Հայոց Հայրապետը, Նարեկացիների և Շնորհալիների և Ալի տակ, բոլոր ներկայների հայացքներ կիզակենտման է: Աստուծո և հայ ժողովրդի

սերն է աղգախս զուգահեռ խողովակներով իջնում նրա մեծ հողու վրա: Տե՛ր, Դու հր-բեք մի՛ խափանիր այս օրհնյալ սիրազե-լումը:

«Տէ՛ր, ուղղեա զզնացս մեր...»: Սաղմոսն է սրտառուչ հնչում Հայրապետի շրթներէց: Վեհափառը աղոթում է բարեհաճող ուղեւորութեան համար:

«Ձերդ Վեհափառութեան,— լսվում է գե-րապետիմ Տ. Վարդան եպիսկոպոսի ձայ-նը,— դարձյալ հրաժեշտի ժամն է: Մեկնում էք վրահայոց թեմը: Բոլորն աշխտեղ ան-հուն կարոտով և խանդավառութեամբ պիտի ողջունեն Ձեր շնորհարիւր ժամանումը և սրբ-

անունից: Թո՛ղ լավագոյն հաջողութուննե-րով պսակվի Ձեր հայրապետական աղցե-լութեանը»:

Դաննալով ժողովրդին, Վեհափառ Հայ-րապետը հրաժեշտ է անում ամենեցից:

«Շատ սիրելի միաբաններ և սիրելի հայ ժողովուրդ: Խորապէս փուլված կզգանք Մե՛նք Մե՛զ այսօրինակ պաներուն, եւր կստիպ-վինք հրաժեշտ տալ ձեզ, հանդիպելու հա-մար ՄԼԵ՛ սիրեցյալ հոտի րազմանազար ու-ղիներուն: Կմեկնինք սակայն հավատով և վստահութեամբ, տանելով Մե՛զ հետ Միաձ-նայ այս Տանաւեն սիրո յղջույն և օրհնու-թյուն հայրապետական: Առաջինը չէ ՄԼԵ՛ այս



ՎԵՀԱՓԱՐԱՆ ԶԱՐԲԱՊԵՏԸ ԹՐԵՎԻՈՒՄԻ ԿԱՌԱՐԱՆՈՒՄ

տաղին նվիրումով պիտի ցույց տան իրենց անսահման սերը դեպի Ձերդ Վեհափառու-թյունը: Մեր աղգային-եկեղեցական բոլոր պեղեցիկ ավանդութիւնները աշխտեղ ևս մենում են կենդանի, որոնց ի տես Ձեր սիրտը պիտի խորապէս հրճվի: Դուք այսօր Ձեզ հետ տանում եք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բուլբու-ռ մխիթարութեանը Վրաստանի հայ հա-վատաւոր ժողովրդին, որպէսզի նա ան-մասն մնա այդ հողեպարտը երջանկութեանից: Գնացե՛ք, Վեհափառ Հայրապետ, գնա-ցե՛ք բարով: Ձեզ սրտային բարի ճանապարհով մագթում ամբողջ միաբանութեան, Մայր Աթոռի պաշտօնեկութեան և ներկա ժողովրդի

ուղեւորւթյունը և վերջինն ալ պիտի շըլլա, և կսիրենք հավատալ, որ Աստուծո ողոր-մութեամբ բաւեանաչող պիտի մեկնինք և լա-վագոյն տրամադրութիւններով պիտի վե-րադառնանք մեր սրբազան այս տունը: Թող Աստուծո օրհնութիւնը մեզ հետ բլլա: Մեր զոհունակութիւնը կհայտնենք ձեւ բարի ցանկութիւններուն համար: Մնացե՛ք խաղա-ղութեամբ»:

Ապա ծնկի է դալիս Հայոց Հայրապետը Իջման Ս. Մեկանի առաջ, մեր պապերի հետ ծունկ առ ծունկ, աղոթելու Աստուծո:

Եկեղեցական թափօրը դուրս է դալիս Տա-ճարից: Նորից դանգերն էլ իրենց մեղանուլ

ողջերթն են ղողանջում, հանգիսավոր ու դաշն հնչյուններով:

Շարժվում է Վեհափառ Հայրապետի ինքնաշարժը շքախմբի անդամների հետ: Թափահարվող ձեռքերը արտահայտում են բոլորի սրտառուչ հուզումներն ու բարեմադլությունները պատմական այս ուղևորության առթիվ:

Երևանն է: Ինքնաշարժը կանգ է առնում երկաթուղու կայարանի կառամատույցի մոտ, ուր ահագին բազմություն է խոնվել:

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար կայարան էին եկել Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, Երևանի Նկեղեցիների քահանայից դասը, եկեղեցական խորհուրդների անդամները, մեծ թվով ծանոթ անձնավորություններ, մամուլի ներկայացուցիչներ, թղթակիցներ:

Վեհափառ Հայրապետին ճանապարհում են նաև Հայկական ՍՍՌ Միևիստեների Սովետին առընթեր Հայ Նկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը, Խորհրդի նախագահի տեղակալ պ. Ս. Հովհաննիսյանը և ուրիշներ:

Մինչև գնացքի մեկնումը մնում է երեք րոպե: Հայտարարում է յարձրախոսը: Վեհափառ Հայրապետը կառավարական ընդունելությամբ դահլիճից ուղղվում է դեպի գնացք: Ժողովուրդը ընկերակցում է Վեհափառ Հայրապետին:

Ժամը 9.40-ին շարժվում է գնացքը, քաղաքի ճանապարհ-ի սրտագեղ մաղթանքների տակ:

Երևանից դուրս գնացքը սուրում է կանաչ ծառուղիների միջով: Հայրենի չքնաղ բնությունն է փոփել մեր նայվածքի առաջ... Գնացքը հեռով բարձրանում է միշտ վեր: Հայրենի բնությունն է, գմբուխտ անտառներով, խոլ գետերով և գրավիչ թովչությամբ: Ի՞նչ գեղեցիկ է մեր երկիրը, մեր Հայաստանը:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում են գերաշնորհ Ս. Սահակ և Ս. Նդինի եպիսկոպոսները, գավազանակիր հոգեշնորհ Ս. Մեսրոպ վարդապետը և Պետրոս սարկավաչ Բերբերյանը:

Անցնում ենք վրացական աշխարհի սահմաններից ներս: Նույն թովչանքն է մամենություն, նույն գեղեցկությունը և միևնույն հրուպուրը: Շարունակում ենք մեր առաջընթացը և արդեն մոտեցել ենք Վրաստանի գեղեցիկ մայրաքաղաք Թբիլիսիին:

Գնացքը կանգ է առնում Թբիլիսիի նախավերջին կայարանում: Հոծ բազմություն է

դուրսը: Լսվում են ծափահարություններ, և ահա գնացք են բարձրանում Վեհափառ Հայրապետին ողջունելու համար այստեղ եկած վրաց միաբնակիցները, գերապատիվ Ս. Նիկիմ արքեպիսկոպոսը և վրահայոց թեմակալ առաջնորդ հոգեշնորհ Ս. Կոնիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը: Երկուդած խոնարհությամբ գերապատիվ միաբնակիցները սրտագին համբուրում է Վեհափառ Հայրապետի Ս. Աջը և հուզված շեշտով ասում. «Սպասելով մեր աչքը շուր դարձավ: Ամբողջ Թբիլիսին Ձեզ դիմավորելու համար է արթնացել այսօր: Զերմագին բարի գալուստ Ձեզ Ձեր հովվապետական երջանկարեր այցելության առթիվ»:

Այս Վեհափառ Հայրապետին ողջունում է բարի գալուստն սրտագին խոսքերով Ս. Կոնիտաս վարդապետը:

ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԻԲԼԻՍԻՈՒՄ

Հուլիսի 6-ը, ժամը 9-ն է:

Գնացքը արդեն դանդաղեցնում է իր ընթացքը. ևս մի պոտյու... ու կանգ է առնում: Թբիլիսիի կայարանում աննախընթաց եռուգն է: Ժողովրդի դանդաղած հսկայական է, իրոք որ «ասեղ գցելու տեղ չկա»: Հազարավոր աչքեր բեկնվում են գնացքի լուսամտաներին: Վեհափառ Հայրապետին տեսնելու համար, Ահա վերջապես նա, ցանկալի հյուրը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ: Գնացքի սանդուղքների վրա, վեղարի գլուխ, հայրապետական ասան իր ձեռքում, իր տարթև հասակով, օրհնում է բազմությունը: Բնդում է ծափողջույնների երկարատև որոտը, որը ծավալվում է կայարանի ամբողջ երկայնքին: Մերթ ընդ մերթ լսվում են սրտառուչ բացականչություններ. «Բարի գալուստ Վեհափառ Հայրապետին», «Քա՛ղը Հայոց Հայրիկին», «Երկար կյանք Ձեզ, Ձեր փառքը շա՛տ լինի»: «Եկեցե՛ք Վեհափառը»: Մափահարությունները շարունակվում են առավել ջերմությամբ և սրտագին:

Խանդավառ ամբոխի միջով առաջնորդում են Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ին: Երևում է Նրա նահապետական կերպարանը իր սպիտակափառ մորուզով: Ողջագուրվում են երկու Վեհափառ Հայրապետներ, երկու քույր Նկեղեցիները, և ինչո՞ւ լասենք նաև՝ երկու բարեկամ ժողովուրդները: Ողջոյն տուր միմեանց ի համարյա սրբութեան: Այդ է վկայում ծափերի սաստկացող որոտը, Խորհրդով, նպատակով, արտաքին երևույթով լափազանց հուզիչ այս ողջագուրումը իրապես արժանի էր ներկաների

աշխարհից թափվող խնդուքյան արտասուքին, Պատմությունը ժլատ է աշխարհի պատկերներին, ստեղծելու գործում, հիշողությունը աշխարհի ողջագործումը ուղարկել էր աշխարհին հազար տարիներ, եվ մի քան տեղին չէ ժողովրդի արտակարգ խանդավառությունը:

Կոյարան Վեհափառ Հայրապետին ոգրունելու էին եկել նաև Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցիչ Զինովի Լավրևսկու, րապոստանների, հրեաների, մայրաքաղաքների ներկայացուցիչները և կաթոլիկ համայնքի պետ Հայր Էմմանուել Վարդիձեն, Վեհափառ Հայրապետին ողջունելու են եկել նաև Վրաստանի պետական իշխանությունից ներկայացուցիչները՝ Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետին առնթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի լիազոր պարոն Շու-

կան պաշտոնական ընդունելության դահլիճը: Ճանապարհ են բաց անում, և տեղ հեշտակի պես մի զետեղի աղջիկ, ուղիտակ մետաքսի զգեստների մեջ, դիրկն ուռած հսկա փունջը ամենաազնիվ ծաղիկների, բարձր ժպիտով խոնարհվում է և արտակարգորեն շնորհալի կերպով սփռում է ծաղիկները Վեհափառ Հայրապետի ոտների առաջ: Ծ՛հ, այդ տեսարանի գեղեցկության խմաստը, որ ծաղիկների լեզվով է պատմվում:

Թափորով, ծաղիկներով, ծափերով ու ժողովրդի խանդավառ ցույցերի մեջ, մեծ հանդիսավորությամբ Վեհափառ Հայրապետները ստալենորդվում են ընդունելության կառավարական դահլիճը, ուր նորին Սրբություն Մեկքիանդենկ Կաթոլիկոսը ողջունի սրտագին խոսք է ասում:



ՄԱԼՔԻՍՏԻՆԻ Կ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ:

լուտաշվիլին, մրահայոց առաջնորդ և թեմական խորհրդի նախագահ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տ. Ստեփանյանը, ընկերակցությամբ նորընտիր թեմական խորհրդի անդամներ արժանապատիվ Տ. Վարդան քահանա Թադևոսյանի, արժանապատիվ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանի (քարտուղար), պ. Սուրեն Ավյանի (փոխ-նախագահ), պ. Գալֆայանի, պ. Սամվել Իսախանյանի և պ. Խնդիր Դիլաքյանի:

Երկու Հայրապետները իրենց շքախմբերով առաջանում են դեպի կայարանի կառավարա-

«Ձերդ Սրբություն:

Շնորհավորում եմ Ձեզ Ձեր ողջ առաջը մասնաման առիթով և սրտանց մաղրում եմ Ձեզ բարի զգրուտ: Հայտնում եմ իմ զոհունակությունը Ձեր կազմից իմ հրավերն ընդունելու համար և այսօրվա բարեկամական այցելության համար»:

Վեհափառ Հայրապետը իր հերթին զերմագին շնորհակալություններ հայտնեց նորին Սրբության սրտագին հրավերի համար և վստահություն հայտնեց, որ այս այցելությունը մեծապես պիտի նպաստի մեր քույր

նկեղեցիների և եղբայր ժողովուրդների սիրո և բարեկամության ավելի ամրապնդման գործին:

Ապա հերթականությամբ Վեհափառ Հայրապետի Ս. Աբրահամյանը եւ զայիս վրաց եպիսկոպոսներն ու քահանաները, Ռուս Պրավոսլավ եկեղեցու ներկայացուցիչ Ջինովի եպիսկոպոսն ու քահանան, կաթոլիկ համայնքի պետ Հայր Էմմանուել Վարդիան, հարանվանությունների ներկայացուցիչները, Թրիխտի հայ քահանայից դասը, թեմական խորհրդի պատվարժան անդամները և ուրիշ ազգայիններ:

Վեհափառ Հայրապետին ողջունում է նաև վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետին առնթրելու կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի լիազոր պ. Տ. Մարտաշվիլին:

Պաշտոնական ընդունելություն ավարտված է կայարանում:

Ինքնաշարժների երկար շարասյունը ձգվում է դեպի մայրաքաղաքի կենտրոն, բոլոր քաղաքացիների ուշադրությունը սեռելով իր վրա: Գեղեցիկ ու կենսոտախ Թրիխտին ողջունում է Հայոց Հայրապետի ժամանումը: Նկեղեցական զանգերի ղողանջը լցրել է ամբողջ մթնոլորտը:

Շրջանցում ենք հրապարակելու Քիչ անց մեր դիմաց պարզվում է զանգվածը հսկայական: Բազմություն: Ինքնաշարժների երևալը դիմադրվում է ցնծության ազդեցիկներով ու ծափերով:

Կանգ ենք առնում վրաց կաթողիկոսանիստ Տաճարի՝ Ս. Սիոնի դարբասի առաջ:

Տաճարի պանդերի տուրախ հնչյունները, խառնված ողջ ժողովրդի հուզիչ բացականչությունների և ծափերի հետ, ստեղծում են իրոք երջանիկ հանդիպման պահը համաժողովրդական խանդավառության պայմաններում:

Վեհափառ Հայրապետը հանդիսավոր թափուրով առաջնորդվում է Տաճար, որտեղ նրան է սպասում ջերմհաղթ հավատացյալների հոծ բազմությունը:

Խորհրդավոր ու ջերմագին երգում է Տաճարի երգչախումբը: Պաշտոնը են բազմաթիվ կանթեղները սրբապատկերների առաջ: Խառնվում են երեսները և բարի մաղթանքներ են թոթովում լուրի շրթունքները:

Արժանապատիվ Ս. Ալեքսանդր քահանան խաչ է մատուցում Վեհափառ Հայրապետին և ջերմագին բարի գալուստ մաղթում Վրաց եկեղեցու բոլոր հավատացյալների անունից, ինչպես նաև հանուն վրաց ողջ հոգևորականության:

Վեհափառ Հայրապետը, համբուրելով սուրբ խաչը, դառնում է դեպի ժողովուրդը և

խորհրդավոր լուսնյա մեջ սրնում է քուրդին:

Այնուհետև նորին Սրբություն Վրաց Կաթողիկոսը դիմելով Վեհափառ Հայրապետին ասում է.

«Ես իմ բոլոր հավատացյալների հետ միասին, հայտնում եմ անկեղծ գոհունակություն Ձեր հայրապետական այցելության առթիվ Մեր Մայր Աթոռ Ռեադարյա՝ Ս. Սիոն Տաճարը: Այս իրողությունը վկայում է նայ և վրաց ժողովուրդների սերտ բարեկամության մասին: Ձե՛ր որ մենք սերունդներն ենք երկու հարազատ եղբայրների՝ Հայոսի և Քարբոսի: Մենք սկզբից եք միաբնակ ենք, ու քեկ երբեմն անցյալում մանր բյուրեղացիություններ պատահել են, սակայն մեզնից ոչինչ չեն փոխել մեր հարաբերությունները: մեք: Այսօր մենք մեզ ավելի մոտիկ ենք: զգում: Ձեր այցելությունը վրաստան ետ էք բացել մեր երկու ժողովուրդների դարավոր պատմության մեջ: Ձեր բարի գալուստը այս հեղափոխական համակրանքի, սիրտ նշան է իմ անձի և վրաց եկեղեցու ու ժողովրդի հանդեպ: Մեկ անգամ ևս բա՛ն գալուստ, մեկ անգամ ևս շնորհակալություն»:

Այնուհետև պատասխան ողջունի խոսք է ասում Վեհափառ Հայրապետը:

«Ամենայն հայոց հավատի և լույսի կեդրոն Ս. Էջմիածնեն սիրտ և խաղաղության ողջունված վրաց բույր եկեղեցիին և այս Ս. Տաճարին՝ Ս. Սիոնին: Մենք խորապես երջանիկ կզգանք Ձեր, որ մեր աշխարհին մեք՝ Կովկասի մեջ Ս. Սիոն մը ունինք, որ բույսի սրտին կխոսի հավասարապես: Նաև եղբայրական ջերմ ու հարգանք ողջունելու Սրբություն Մելիսեդեկ Գ. Համայն վրաց Կաթողիկոսին:

Երկրորդ անգամն է, որ կայցելենք այս Ս. Տաճար և կհանդիպենք վրաց Կաթողիկոսին: Առաջին անգամ 1948 թվականին, երբ դեռ Ռումանիայի հայոց առաջնորդ էինք, հոգեկան խորունկ ուրախություն ունեցանք երջանկահիշատակ Կալիստրատ Կաթողիկոսի Ս. Աբրահամյանի: Ինչպես Ձեր Սրբությունն այսօր, այնպես ալ Կալիստրատ Կաթողիկոսն այն ժամանակ ջերմորեն սեղմեց Մեր ձեռքը, ու Մենք ազոր մեք զգացինք ամբողջ վրաց ժողովրդի հոգիի ջերմությունը:

Թույլ տվի ողջունի խոսք քեկ նաև դեղեցիկ վրաստանին ու վրաց ժողովրդին: Մենք ավելի բան երկու հազար տարվա բարեկամության և համագործակցության պատմություն ունինք: Ոչ մեկ սահման մեզ չի բաժնում: Մեր երկու ժողովուրդները իրարապիտ միևնույն ակունքն են սնունդ առած և միևնույն երկրագործ են ապրած, միևնույն սրբ-

լուրջություններու համար պայմարած: Հոգեպետուհիս ենք Մենք, որ այսօր ալ եռվեր կտեսնենք առավելալ հարագատուրյան և մտերմութեան մեջ: Ուրախ ենք նաև անոր համար, որ անդամ մը ևս կգտնվինք այս գեղեցիկ երկրի գեղեցիկ մայրաքաղաքին մեջ, որ այնչափ հաճախ երգվել է նաև հայ յավագոյն բանաստեղծներու կողմէ: Մենք միշտ պիտի աղոթենք, որ այս գեղեցկութեան և ուրախութեան բաղաձի վրա անպակաս ըլլա Աստուծո օրհնութիւնը:

Իսկ ներկա վրացի և հայ հավատացյալներուն կուտանք Մեր հայրապետական օրհնութիւնը, և կնորոգենք ի մասնագործի հայ

Վերջում Վեհափառ Հայրապետը կանգ է առնում երջանկահիշատակ Կաթողիկոսի շիրմի առաջ, որը դռնվում է Տաճարի ներսում, և Հեղագոց է ուրախանում:

Ս. Սիոն Տաճարում պաշտօնական ընդունելութիւնն ավարտվում է: Երկու Հայրապետները թեմացոյց դուրս են գալիս Մայր Տաճարից: Ժողովրդի նսկա բազմութիւնը լցրել է ամբողջ փողոցը:

Եկեղեցական թափօրը զժամաւորութեամբ է ճանապարհ բացում դիպի առաջ, Վեհափառ Հայրապետները, իրենց շրախմբերով, հանդիսանորութեամբ քայլում են դիպի հայաց



ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՔԸ ԹԻՐԼԻՍԻՆ ՎՐԱՑ Ի. ՍԻՈՆ ՆԵՐԱՆՑՈՒՄ

հավատացյալներ, որ անդուլ կերպով շարունակեն իրենց շինարար-աշխատանքը այս հյուրընկալ երկրին մեջ:

Թող Աստված օրհնէ մեր բարեկամութիւնը:

Կեցցե՛ք Մելիքեղեկ Ամենայն Վրաց Կաթողիկոսը:

Կեցցե՛ք վրաց ազնիվ ու տաղանդավոր մտղովուրդը:

Կեցցե՛ք վրաց գեղեցիկ երկիրը:

Նուալ ըլլա՛ր բոլորդ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամենա:

Անուհետեւ Նորին Ս. Օթովյանը առաջնորդում են դիպի հնագոյն սրբապատկերները և ապա Ս. Սնկարը՝ իր ազոթքը մատուցելու համար:

Ս. Գևորգ եկեղեցին: Քաղաքում, թափօրի տնցքի ճանապարհին, երթեկութիւնը դադարել է: Վեհափառ Հայրապետների նուեից հոսում է երկու ժողովուրդների ողջ վանականութիւնը: Շատերի աչքերի մեջ հուշումից ու խնդրութեանից արցունք կա: Գանապարհի ընթացքում, մտերմորեն դրուցում են Հայոց և Վրաց Կաթողիկոսները: Վեհափառ Հայրապետը, խաչակերում է հավատացյալների վրա, որոնք շերմորեն ընդունում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութիւնը, երկյուլածութեամբ ու հավատով:

Հիովից ջնծապին հնչում են հայոց Ս. Գևորգ և Ս. Էջմիածին եկեղեցիների, դանդաբը: Ուրախութեամբ է շնչում սմեն մարդ:

Ռուսերի դեմքերին հրճվածք է կարգացվում, բուրբի աչքերում ցնծության շողն է նկատելի։ Փայլում են Վեհափառ Հայրապետները։ Ահա երևում է հավատացյալների ծովածավալ բազմությունը հայոց Ս. Գևորգ եկեղեցու շուրջ ու փողոցների մեջ։

Բազմականաչափ հեռու ենք թեև, բայց ահա ծափողջույնների խլացուցիչ որոտը, խանդավառ և միաժամանակ սրտագին բացականչությունների հետ, թնդացնում է մարդը շրջապատը։ Հետզհետե աճում է ժողովրդի խանդավառությունը։ Վեհափառ Հայրապետը խաչակնքելով անցնում է առաջ իր հետևորդներով, ծափերի ու բացականչությունների լլուղ տարափի տակ, Իրապետ ժողովրդական տոն է այսօր։ Աստված, մի՛ խնայիր մեր ժողովրդին այսօրինակ հոգեկան խանդավառություն և երջանկություն։ Վեհափառ Հայրապետը կանգ է առնում դարձափ առաջ։ Այնտեղ վրահայոց թեմակալ առաջնորդ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետը, հոգեշնորհ Տ. Նիկիշ վարդապետը, քահանայից դասը, Խորեն, Սարգիս և Պետրոս սարկավազները և դպիրները լզենատավորված, խաչով ու խաչվառով ու բուրբառներով սպասում էին արդեն։ Վեհափառ Հայրապետը ղեկատավորվում է, և ապա, ամպհանու ներքև, ձեռնափառ Աստուծա շարականի երգեցողությամբ առաջնորդվում դեպի եկեղեցի։ Ժանապարհի երկու կողմը շղթա են կազմել հայ երիտասարդները, սակայն դարձյալ ոմանք զերագույն ձիգով հասցնում են համբուրել նորին Վեհափառության փեշերը։ Եվս մի քանի քայլ դարձրելի ու ծաղիկների վրայով և արդեն Վեհափառ Հայրապետը Թրիխսի Ս. Գևորգ եկեղեցում է։ Թնդում է ռիտախիւր, Ս. Նիկեղեցի շարականը։ Ընդունելության եկեղեցական արարողությունը ավարտված է։ Նորին Վեհափառությունը դառնում է դեպի ժողովուրդը և լսում Տ. Կոմիտաս վարդապետի բարի գալուստի ողջույնի ուղերձը։

«Վեհափառ Տե՛ր, սիրելի Հայրապետ»

Նրբանիկ պատահականությամբ ինչ որպես վիճակվեց Ձեզ կրկին անգամ դիմավորել ու ողջունել այս անգամ գեղեցիկ վրաստանի նուրբան գեղեցիկ մայրաքաղաք Թրիխսի հայոց Ս. Գևորգ եկեղեցում՝ որպես վրաստանի հայոց թեմակալ առաջնորդ։ Վրահայ հավատացյալ ժողովրդի անունից ես պարտք ունեմ ամենասրտագին ու ջերմ շնորհակարարության խոսք ասելու Ձեր շնորհաբեր այցելության առթիվ։

Բարի գալուստ, Վեհափառ Տե՛ր։

Ձեր բնությունն առաջին իսկ տարին Դուք այցի Այաք ի սփյուռս աշխարհի ցր-

ված մեր բազմաշարշար ժողովրդին և Ձեր հայրական խոսքերով ու հայրենաշունչ պատգամներով միխթարեցիք նրանց, արծարծեցիք նրանց հոգում անթելված սիրտ կրակը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և դեպի Մայր Հայրենիքը։ Նույնն է պարագան նաև այսօր, երբ Դուք, այցելելուց հետո Շիրակի և Նոր-Նախիջևանի թեմերը, եկել եք այստեղ նույն ոգով ու ջերմությամբ րոցավառելու մեզ։ Եկել եք ի խնդիր մեզ, Ձեզ հետ բերելով մեր հոգիներին այնքան հարազատ, մեր ինկիլի նախնայաց արյամբ և աշխատանքով սրբադարձված մեկ Մայր Հայրենիքի բույրը։ Բերել եք մեզ նաև Միաժանեչ Մայր Աթոռի և նրա հազարամյա քարերի օրհնությունները, որոնց զորությամբ ապրել ու տեղեկագործել է մեր հավատացյալ ժողովուրդը։

Որքան ուրախալի է տեսնել այսօր մեր նոր Հայրենիքի վերադարձները, հզորությունը։ Մեզանից յուրաքանչյուրի հոգին հուշումով խայտում է, երբ այս լույս օրերին տեսնում ենք նաև վերադարձները՝ հայ պետականության կողքին, Հայոց Նիկեղեցու Դուք, Վեհափառ Տե՛ր, դրոշակիրն եք այդ դարձների։ Թող Տե՛րը ծաղկեցնի Ձեր իշխանության գավազանը։

Ուրախ է այսօր նաև Քրիստոսի Ս. Նիկեցին, որովհետև Ձեր գալուստն առթիվ իր կամարների տակ ի մի են եկել եղբայրական սիրով՝ կրոնական տարբեր դավանանքների ու համոզմունքների տեր անձնափրություններ, հաստատելու համար կարծես առաքյալի խոսքերը, որ մի է Քրիստոս և նրա հիմնադրած Ս. Նիկեղեցին։ Մասնավորապես ողջունելի է ներկայությունը այստեղ Համայն վրաց քույր Նիկեղեցու պետ նորին Սրբություն Մեթիսեդեկ Պատրիարք-կաթողիկոսի, որը, ընայած իր տառապնայալ տառիքին, սիրով հանձն առավ այսքան նեղություն։ Փաղցր է իրականացած տեսնել շարականի խոսքը՝ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ... Նիկեղեցի մի անձն եղև... Խաղաղութեան ծախ հնչեցաւ... Թշնամութիւն հեռացաւ...»։ Հոգեկան միություն այս օրը կլինի պատմական և նշանակալի՝ երկու ժողովուրդների դարավոր սիրո կապի ամրապնդման փորձում։

Թող Աստուծո օրհնությունը լինի եղբայրական երկու ժողովուրդների վրայ։

Այս երկու դարավոր կադեյների՝ հայերի և վրացիների ճյուղերը թող միշտ դուրս մնան ու իրենց հովանիին տակ աճեցնեն ու զարգացնեն բարեկամության ու եղբայրության ոգին։

Թույլ տվեք, Վեհափառ Հայրապետնե՛ր, իմ սիրո համբույրի մեջ խտացնել իմ ու

վրաստանի ամբողջ հայության իղձերն ու բարի ցանկությունները:

Դուք բարի եկեք, հազար բարի:

Ապա հանուն հավատացյալների ուղերձ կարդաց պ. Շահան Սիմոնը:

Վրահայոց նորակազմ թեմական խորհրդի անունից բարի գալուտի խոսք ասաց արժանապատիվ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը:

Բարի գալուտ, Վեհափառ Տե՛ր, որդիական անսահման սիրո ու նվիրվածության մաղթանքների հետ:

Այսօր մեծ տոն է, և մեծ խնդություն: ու մեծ ամենօրյա մեկ, քանզի Մեծ Հովվապետը, Ազգիս արթուն Դիտապետը ու մեր պաշտելի Հայրապետը, այց արավ մեզ, լցնելով մեր սրտերը բերկրանքի հազար ու հազար հուշերով:

Իսկ միասին աշխատել, միասին հեն ստեղծել ու հարկ եղած դեպքում միասին պաշտպանել հարազատ Կովկասը:

Այս սեռն ու եղբայրությունը հովերթալան են ու սրբագործված:

Մեր դարավոր բարեկամի՝ վրաց եղբայր ժողովրդի սրտում, հարազատ Թրիլիսիում, ծաղկել ու փթթել են հայ ժողովրդի մշակույթի հրաշալիքներից շատերը: Մայաթնովայի անմահ քնարձ է հեշել այստեղ: Մեծ Թումանյանի սիրո և եղբայրության սրբազան խոսքերն են թրթռացել այս երկրների տակ: Ներսիսյան դպրոցի հայտնաբեր սաների աշխատանքի և ուսման բերկրանքովն է լցվել հայ մշակույթի գեղեցիկ բուրաստանը:

Հայոց հայրապետների հոգին ու շունչը, Ս. Էջմիածնի զանգերի վանմալույս ու հա-



ԹԱՓՈՐԸ ԹՐԻԼԻՍԻԻ ՎՐԱՑ Ա. ՍԻՐՆ ՆԻԵՂԵՑՈՒՑ ԳԵՊԻ ՀԱՅՈՑ Ա. ԳՆՎՈՐԳ ՆԻԵՂԵՑԻՆ

Վրաստանի հայ համայնքը իր հոգում, իր սրտի ամենախորունկ ուղեկրում դարձրել են նվիրական մեծ խորհուրդներ ունի: Այս գեղեցիկ ու հյուսիսեկալ երկրում դարձրելով կոմիվն ու ամրապնդվել է հայ և վրաց ժողովուրդների եղբայրական բարեկամությունը: Մեծ Շաթույի հանճարով քնարի լարերը հարազատ են հեշել ամեն հայի սրտի համար:

Նվ հայն ու վրացին, կողք-կողքի, դարձ-

վերժական հնչյունները՝ հայրենասիրության բարձր ու անսահման սիրտներն են հանել ու հանում են հայրդիների հայրենատենչ սրտերը: Նվիրական Արարատի ալեոր ու սրբազան դուղաթի մեր անսխիթ է եղել, մեր երազը ու մեր նվիրական խոհը:

Ս. Էջմիածինն ու Հայոց Հայրապետությունը այն ոսկե կամուրջն են հանդիսացել, սրով հայ ժողովրդի հոծ զանգվածները կապվել են ու կապվում են այսօրվա

մեր վերածնված ու ծաղկող Մայր Հայաստանի հետ:

Վրահայոց թեմը, իր հոգեշնորհ առաջնորդով, Թեմական խորհրդով ու հայ հավատացյալ ժողովրդով, ունի մեծ ու կարևոր անհիշքներ՝ հայ ժողովրդի սրտում վառ պահել իր հարապատ Հայրենիքի սիրտ հուրը, Ս. Իշման տեղի վիհ ու հոգեպարար խորհուրդը, առաքինության, սիրտ ու եղբայրության վսեմ իդեալները:

Վեհափառ Տե՛ր, հավաստիացնեմք ենք Ձեզ, որ մենք պատասխանատվության մեծագույն զգացումով կկատարենք մեր առջև դրված այս վեհ ու սրբադաս խնդիրները:

Ձեր հայրենանվեր հոգին, հայրական Ձեր բարի ու ոգեշնչող խրախույսը, մեզ թե՛ անտալիս ու լցնում մեր սրտերը աշխատանքի ու նվիրվածության խինդով ու բերկրանքով: Հավատ, սեր ու միություն— այս է եղել մեր հավատամքը ու այս պիտի լինի, և սրանով է, որ պիտի առաջնորդվենք մենք ու հայ ժողովուրդը:

Կրկին անգամ բարի գալուստ: Մեր սրտերը բաց են, մեր հոգիները լեցուն՝ ուրախության ու բերկրանքի վարարում: Խինդով:

Օրհնեցե՛ք մեզ, Վեհափառ Տե՛ր, Ձեր օրհնությունը մեր ծառաված հոգիների համար ցողարեր ա՛մպ է ու կենարար բախտան: Ու մենք հարատև կազդեցենք Ձեզ համար, Ձեր արևշատության համար, Մայր Աթոռի հաստատության և հարազատ Հայրենիքի ծաղկման ու բարգավաճման համար:

Նվ թող մեր ցնծությունն ու բերկրանքը արտահայտվեն ազգային մեծ օրհներգի նվիրական խոսքերով:

«Ջերկարությամբ կենաց Հօր մեր աստուածագրեաց:

Շնորհևա Պետին մեր հարց, որ գմեղ հովուէ»:

Պահը խորհրդավոր է և խորապես հուզիչ: Թրիլիսիի հավատացյալ հայությունը իր նվիրական զգացմունքներն ու երախտիքն է մատուցում իր Հովվապետին, Բառերը արտասանվում են հուզումով, անկեղծությամբ, ապրումով:

Այնուհետև նորին Վեհափառությունը խոսում է այսպես:

«Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ:

Հյուր եմ եկած ձեզ մոտ, բերելով ձեզ ողջույն և օրհնություն մեր հավատքի Տոն Մայր Արտ Ս. Էջմիածնեն: Ողջույն կերեմք նաև ձեր եղբայրներեն ու քույրերեն, որոնք ձեզ հետ միասին Ս. Էջմիածնով մեկ ամբողջություն և մեկ հոգի կկազմեն:

Այսօր պատմական օր մըն է իրապես, պատմական օր մը քե՛՛ Մեզի համար և քե՛՛

ձեզի համար: Շատ երկար տարիներ է ի վեր Ամենայն Հայոց Կաթողիկոս մը չէր եկել ձեզի այցելության: Պատերազմներով հետևանքով և այլ պատճառներով Հայ եկեղեցիին բնականոն ընթացքը խանգարվել էր: Բայց յամանակի դժվարությունները հաղթահարել են տո, մեր եկեղեցին սկսած է աճա վերածնիլ, բարգավաճիլ, պայծառանալ: Մեր եկեղեցիին հաջողությունները պայմանավորված են առաջին հերթին հայ ժողովրդի ջերմ հավատով և Հայրենի բարեխնամ կառավարության հողատար վերաբերմունքով: Ինչպես ծայնասփոված Մեր վերջին ֆառոգին մեջ րսված է. «բարի և ամենակենցր ալ մալ է. Նվ Մեմ ոչ մեկ հիզ և զոհողություն պիտի խնայեմք, որ պեսգի ալ ալվելի ծաղկի, հզորանա մեր բազմաշարար Ս. եկեղեցին:

Մենք այսօր երկոյան, վաղը և ուրիշ առիթներով պիտի րլանք միասին, պիտի աղոթենք մեր եկեղեցիին հառտատության, մեր ժողովրդի երջանկության, մեր Մայր երկրի բարեգաղման և համայն աշխարհի խաղաղության համար:

Մենք խորապես մխիթարված ու շնորհապարտ կզգանք զՄեզ ներկայությամբ նորին Սրբություն Մելիսեղեկ Դ Վրաց Կաթողիկոսի և Իր շխարհի, որոնք այնքան ճշտամեծաբ կերպով Մեզ առաջնորդելիս այստեղ: Այս սովորական դեպ մը չէ, սիրելի՛ ժողովուրդ: Այս օրը պատմական օր մըն է իր ֆաղք հուզումներով, իր մեծ խորհրդով ու նշանակությամբ, որ անպայմանորեն պիտի արձանագրվի հայ և վրաց եղբայր ժողովրդի պատմության մեջ: Այս րոյտի համար Մենք երախտապարտ ենք նորին Սրբություն Մելիսեղեկ Հայրապետին:

Թող պայծառ մնա այսօրը և անոր խուրունկ խորհուրդը քող յուսավորե Մեր և Մեր հաջորդներուն զօրծունեության հանապարհը:

Անկեղծորեն շնորհակալ ենք մեր սիրելի առաջնորդ Հայր Սուրբեն՝ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետին, արժանապատիվ Տ. Ռուբեն Բանանայեն և թրիլիսահայ մտավորական պ. Շահան Սիմոնեն, որոնց բարի գալուստի խոսքերուն մեջ կար սիրտը համայն վրահայոց:

Շնորհակալության խոսք ունենք նաև Ռուս Պրավոսլավ եկեղեցվո ներկայացուցիչ գերապատիվ Ձինովի Եպիսկոպոսին իր ներկայության համար: Ավելի քան բարեկամական և Ռուսաց Բույր եկեղեցվո վերաբերմունքը Մեր նկատմամբ: Պիտի խրեղեխենք, որ ան հաղորդեք Մեր սիրտ ողջույնը

Համայն Ռուսիո Պաշտիաբն Նորին Սրբոյրյուն Ալեքսիին, որուն արևշատուրյան համար կմնանք միշտ ազդորդ:

Շնորհակալությամբ նաև Թբիլիսիի կրոնական համայնքներու մյուս պետներուն՝ Մեր նկատմամբ իրենց ցույց տված հարգայց վերաբերմունքին համար:

Սիրելի՛ ժողովուրդ, Մեր սիրտը լեցուն է սիրո զգացումներով մեր ժողովրդի բոլոր որդիներուն նկատմամբ, անխտիր ուր ալ որ ըլլան անոնք: Թո՛ղ Աստված ձեզ օրհնէ և պահէ ու պահպանէ անփորձ հավիտյանս, ամենա:

սի՛ մեծ Վզացմունքներ, ես գրեմ, որունք ոչ տառապանքով են մահացել, ոչ արյունով և ոչ էլ ժամանակների անխնա հարվածներով: Իմ այս ժողովրդի սրտից ինչ-որ Շահ Աբաս փորձել է էջմիածինը խլել, և այս ժողովրդի սրտից ինչ որ հեռավոր մարդիկ փորձում են էջմիածինը հերձել... ինչպիսի՞ փոքրություն...

Անվարտված է պաշտոնական ընդունելության արարողությունը, Վեհափառ Հայրապետը, Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Տ. Մելքիսեդեկ Գ-ի հետ, դուրս են գալիս եկեղեցուց, Դարձյալ ժողովուրդը



ՆՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ

Վեհափառ Հայրապետի ողջունի խոսքից հետո Ս. Գևորգ Եկեղեցու երգեցիկ խումբը հուզումով երգում է Հայրապետական մաղթերը:

Ուրախության, հուզումի արցունք կա բոլորի աչքերում...

Ապա Վեհափառ Հայրապետը «Հայր մեր»-ն է ասում և օրհներով, արձակում է ժողովրդին:

Ակավում է աշահամբույրը:

Երկյուղածությամբ, հոգեկան խորին դժոխականությամբ գալիս և Վեհափառ Հայրապետի Աջն են համբուրում: Անսահման երանությամբ կա բոլորի դեմքերին: Աստված իմ, այս փոքր ժողովրդի մեծ ինչպի-

տելացուցիչ ծափահարությամբ է դիմավորում նրանց:

Վեհափառ Հայրապետը, Նորին Սրբություն Մելքիսեդեկ Կաթողիկոսի հետ, առաջնորդվում է Նրա սեփական ինքնաշարժի ժողովրդական ցնծալից ծափահարության տակ, ինքնաշարժները շարժվում են դեպի Վրաց Կաթողիկոսարանը, ուր Վեհափառ Հայրապետը Հյուրն է Վրաց Կաթողիկոսին: Այստեղ, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Մելքիսեդեկ Կաթողիկոսը նախաճաշ է տալիս: Նորին Սրբությունը սեղանը ղեկավարում է ճշմարիտ վրացու հմտությամբ և վրացական սեղանի պապենական սովորությունների համաձայն, սեղանի շուրջ ստեղծում



խանդավառ մթնոլորտ: Մեկօրեան հետքով Կաթողիկոսը առաջին բաժակը առաջարկում է խմել Քրիստոնեական Եկեղեցիների համագործակցության համար, երկրորդ բաժակը՝ Հայրենիքի բարգաւաճման, Հայրենի բարեխառն և կառավարության փառքի և արդարացի աշխարհի խաղաղության համար: Սրտագին ու խանդավառ մթնոլորտում նա երրորդ բաժակը բարձրացնում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կենացը: Նորին Սրբությունը իր շատ գեղեցիկ խոսքերի մեջ միաժամանակ ասում է.

«Նստե՛ք ամենաերջանիկն եմ զգում վրաց բոլոր կարողիկոսների մեջ: Իմ կյանքի ամենաերջանիկ օրն է այսօր: Հոտեկայս խմենք նորին Վեհափառության կենացը»:

Բոլորը ոտքի են կանգնում:

Ապա Վեհափառ Հայրապետը զգացված տոնով շնորհակալություն է հայտնում հարգալից առաջարկության համար և ասում.

«Մեր հասցեին ուղղված սրտանույզ խոսքերուն համար կհայտնենք խորունկ շնորհակալություն: Մենք շատ հուզված ենք ոչ միայն այժմ, այլև այն պահին սկսյալ, երբ ոտք դրինք այստեղ: Երախտապարտ ենք նորին Սրբության՝ իր սիրայի հրավերի և գրկաբաց ընդունելության համար: Այս զգացմունքներով ալ բաժակ կբարձրացնենք նորին Սրբության բանակահին կենացը՝ մաղթելով Անուր արեւատություն և գործերուն հաջողություն»:

Բոլորը հոտեկայս խմում են նորին Սրբության կենացը:

Ապա բաժակներեն առաջարկվում Մոսկվայի և Համախո Ռուսիո Պատրիարք նորին Սրբության Աղեքսիի կենացը, հանուն հայ և վրաց դարավոր բարեկամության և բոլոր ժողովուրդների հղրայրության: Նորին Սրբությունն այս առիթով ասում է.

«Միևնույն հողի որդիներն ենք, նույն կրծքից սնված: Ժամանակը և ժամանակի հանգամանքները մեր երկու ժողովուրդներին երբեմն աշխարհագրականորեն տարանջատեւ են, բայց չեն կարողացել խախտել նրանց հավերժական բարեկամության ամուր հիմքերը: Այսօրվա Մեր ողջագուրավոր այդ բարեկամությունն է խորհրդանշում մեր օրերում»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը նորից խոսք առնելով խորին շնորհակալություն է հայտնում չերմ և եղբայրական հյուրընկալության առթիվ և միաժամանակ ցանկություն է հայտնում այցելելու վրաց ժողովրդի սրբավայրերը:

Նախաձաշն ավարտվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով: Ապա նորից չերմագին ողջագուրվում են երկու Հայրապետները, որից հետո նորին Ս. Օծովությունը հրաժեշտ է առնում նորին Սրբությունից:

ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԲԻԼԻՍԻԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՄ

Շարաթ երեկո է:

Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցում ժամը 7-ին սկսվում է երեկոյան ժամերգությունը:

Եկեղեցում, բակում, շրջակայքում և գրկափոր փողոցում խոնաված է ծովածափայ բազմություն, որը խանդավառորեն դիմադրում է Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը, ամպհովանուներք, խաշով ու խաչվառով և «Հրաշափառ շարականի դաշն երգակցությամբ ուռաջանում է դիպի եկեղեցի: Ամբողջ հուսալարժեք ծածկված է գորգերով ու ծաղիկներով, Վեհափառ Հայրապետի Ս. Աղբ օրհնում է հանապարհի հրկու կողմերում կանգնած ժողովուրդին, որը հողիկան խորունկ հրճվանքի մեջ է այս իրապես տունական պահին:

Սկսվում է եկեղեցական արարողությունը: Կիրակամտի հոգեգմայլ ժամերգությունն է: «Էդյս գուրթ»-ն է մեղմագին երգվում, թովելով հավատացյալների հոգիները: «Մունկի թովիչ մշտն» է պարսկարա պարտիկայի լիլովում եկեղեցու բարձր կամարների տակ, երբ

«Ջանեհն հիմակ կերպեն համակ

գլումբյուր ու բարիչ:

Կամարներեն, խորանեն կր ծաղիկ լոյս ու ծիծաղ»:

և հոգիները կթողվին «Անուր» մեջ այս չինաղ»:

Սրտառույ խորհրդավորությամբ և վեհ հանդիսությամբ արարողությունը շարունակվում է մինչև քարոզի պահը:

Երեկոյան ժամերգության վախճանին Վեհափառ Հայրապետը դառնում է ժողովրդին և քարոզում:

«Ցանուն Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ»: «Ցուել ի մեզ, Տէր ամենակալ, զհաւատ, զյոյս, զգէր և զամենայն գործս առաքինութեան...»:

Սիրելի՛ հավատացյալներ.

Այսօր մեր Ս. եկեղեցին տոնեց հիշատակը մեր Մեծ Սուրբին: Այսօրվան տոնը նվիրված է անուր եղբայրներու գլուխին. «Գիտ եղբայրաց Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին»: Մեր Ս. եկեղեցին երախտագիտության զգացումով տարին Լա-

նի մը անգամ կտոնէ Ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակը: Ս. Գրիգոր Լուսավորչի եղավ մեր Ս. Եկեղեցվո հիմնադիրը: Ան եղավ մեր հոգիներուն ձեռքը, մեր երկրին ու ժողովրդին Լուսավորիչը: Դուք, մենք բոլորս անոր նոգևոր զավակներն ենք: Ան է, որ Գրիգորի պատմական փորձրկալից շրջանին, Զրիստոսի Ս. Ավետարանը ձեռինն է հավատքը առած սրտին մեջ, բազում դժվարությամբներով ու շարժարաններով վերջ հաղթական դուրս եկավ: Ան կրցավ նշմարիտ հավատքը հիմնավորել հավատացյալ ժողովրդի սրտին մեջ, չինեց մեր հավատքի լուսեղեն տունը, Ս. էջմիածնի Մայր Տաճարը, հիմնեց ու կազմակերպեց Հայ Եկե-

Մենք, Ս. Լուսավորչի որդիներս, միշտ առավելալ նուանդով պետք է նվիրվենք մեր Ս. Եկեղեցին ամրացնելու և պայծառացնելու սուրբ գործին: Ահա քե ինչու այսօր առավել լիարժեք իմաստ կստանան այս խոսքերը. «Կաւել ի մեզ, Տէր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաւելնորեն»:

Լուսավորչի օրերեն անցեր են 1654 տարիներ, և այս երկար պատմական ժամանակաշրջանի ընթացքին մեր Ս. Եկեղեցին բազմիցս հալածվեցավ, ավերվեցավ, կողոպտվեցավ բարբարոսներու արշավաններու ընթացքին: Հաճախ անողոք բշտամիներ տանջեցին, նահատակեցին մեր



ՎԵՆԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՐ ԽՈՍՐՈՒՄ Է

ղեցին, բռնատննության սուրբ ավազանին մեջ մկրտեց հայ ժողովուրդը: Այսպիսով հայ ժողովրդի պատմության մեջ սկիզբ առավ փառավոր շրջան մը, զոր մենք կկոչենք բռնատննության շրջան: Գիտեք բոլորք, քե բռնատննությունը պատմական ինչ մեծ նշանակություն ունեցավ մեր ժողովրդի քաղաքական և մշակութային կյանքի համար: Կնանչեմք այդ ասպարեզներու մեջ անոր բերած բարիքները: Ի՞նչ այս բոլորին համար մենք կպարտավորվինք երախտապարտ ըլլալ Ս. Գրիգոր Լուսավորչին:

հոգևորականները: Փա՛նք Աստուծո, սա-կայն, որ այդ շրջաններն անցան այլևս: Մենք այսուհետև մեր Հայրենի բարեխնամ Կառավարության մեզ շնորհած ազատ պայմաններուն շնորհիվ ի վիճակի ենք շինելու և ծաղկեցնելու մեր Ս. Եկեղեցին:

Սիրելի՛ հավատացյալներ, անցյալի մեջ այս քեմը ևս ունեցեր է իւր դժվարություններ, բայց այսօր Մենք այստեղ ենք, որ պեսգի այստեղ ևս տարածենք Մեր շինարար գործունեությունը: Մեր ժողովրդին հոգիին մեջ հավատքը ավելի ուժեղացած, ավելի խորունկ արմատներն ունենալով, ըլլա՛

այստեղ. ըլլա՝ ամենուրեք: Եվ այդ հավատով ան Մեզ կոչմե. ոտպեսցի հոգևոր սնունդ մատակարարող հոգևորականներ պատրաստենք և վերաբանանք մեր եկեղեցիները: Մենք պարտավոր ենք պարտիզգացումը ունենալ և այդ պարտքը իրագործելու նվիրումի ուժը պետք չէ պակսի մեզ: Մենք պետք է գիտակից ծառաներն ըլլանք մեր ժողովրդին և ոգտակար ըլլանք անոր: Բրիլիսիի թեմը ունեցած է նաև փառավոր անցյալ, հրաշալի ավանդություններ, որոնք չեն մեռած, և կտեսնենք, որ անոնց ոգով ալ կշարունակենք ապրիլ. բան մը. որ Մեզ շատ կմխիթարէ: Արժանիք մըն է անցյալի ոգտակար, ազնիվ և գեղեցիկ ավանդություններուն հավատարիմ մնալը: Դո՛ւք այդ ունեք:

Դո՛ւք նաև փայլեք առի՛նք. որպեսզի ձեր եկեղեցական գործերը բարեհաջող ընթանան: Պիտի խոստովանի՞նք, որ Մայր Աթոռն ալ չկրցավ ժամանակին սրբազնիլ Բայետահաճ սխալներն ու թերությունները: Քայց այժմ վրանայ թեմը սկսած է վերակազմավորվիլ, ունենալով պատվական ազգայիններն կազմված թեմական խորհուրդ և թանստեր առաջնորդ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը: Մենք հույս ունինք, որ անոնք, առաջնորդի նետ ձեռն-ձեռնի տված, հաջողությամբ ու պատվով պիտի կատարեն իրենց պարտականությունները հանդեպ ձեզի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Աղոթենք, որ Տերը անոնց ուժ պարգևե և անոնց եկեղեցաշեն գործունեությունը հաջողությամբ պսակե: Ահա այս հույսերով ու մաղթանքներով կվերջանա Մեր խոսքը:

Թող Աստված ըլլա ձեզ զորավիգ, պանև ու պահպանե զձեզ բոլոր փորձանքներեն:

Աղոթենք միաբերան՝

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա:»

Որեկեալ եղերով ի Տեառնէ և ի Մէնջ, ամէնա:

Քարոզի վերջավորության վե՛հ ու տպավորիչ հնչում է Մայր Աթոռից ժամանած Էջմիածնի Տաճարի երգչախմբի երգած Հայրապետական մաղթերգն ու շէջ Միածինն ի Հորէն հոգեզմայլ շարականը: Երգիցողության հետ զուգընթաց սկսվում է աշահամբույրը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ՍՈՒՐՈՐ ՊԱՏԱՐԱԳ

Կիրակի, 7-ը հուլիսի Առավոտ վաղ քաղաքը՝ զարթնում է եկեղեցիների զանգերի զվարթ զողանքով: Աղոթքի ժամն է, եկեղեցիների մեջ առավոտյան ժամերգություն է

պաշտվում: Հայոց Ս. Գևորգ եկեղեցում ևս տեղի է ունենում հանդիսավոր ժամերգություն հավատացյալների հոծ բաղմունքի ներկայությամբ:

Առավոտյան ժամը 11-ն է: Զանգերն հնչում են դարձյալ: Պատարագն սկսելու ժամանակն է: Պատարագելու է Նորին Ս. Օծոթյուն Վեհափառ Հայրապետը:

Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով հանդիսավորապես ժամանում է: Ապա ամպհովանու տակ, խաչվառով ու բուրվառներով, գորգերի ու ծաղիկների վրայով, «Հրաշափառ» և «Երախ լեր» շարականների երգակցությամբ առաջնորդվում է ավանդատուն զգեստավորվելու համար:

Սկսվում է Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագը. «Նորհուրդ խորին» շարականի մեղեդին հմայել է հոգիները: Վեհագույն խորհրդով ու հանդիսավորությամբ հնչում են հոգեզմայլ երգերը՝ հոգեկան անսահման մխիթարությամբ լցնելով հավատացյալների սրտերը:

Հայոց հայրապետը բազկատարած ազսթում է Ս. Սեդակի առաջ:

Հավատացյալները մրմնջում են իրենց ազոթքը: Եկեղեցին լցված է խնկի բույրով ու ազոթքի մրմունջներով: Իրապես հոգեկան խորունկ զգացմունքների և ապրումների ժամն է:

...«Ճուտուր մեզ համարձակածայն բարքառով բանալ զբերանս մեր...» երգում է պատարագիչ Վեհափառ Հայրապետը և դառնալով ժողովրդին սկսում է իր քարոզը. «Յանուն Հոր և Որդույ և Հոգույն Մրդոյ»:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ: Ձեզի կրեւենք սիրո աղբյուր և օրհնություն ամենայն հայոց հավատի կեդրոն Ս. Էջմիածնեն, որ մեր եկեղեցիներու մայրն է. մեր հոգիներու տունը, մեր փրկության ճանապարհը և մեր կյանքի լույսը: Ան եղած է մեր կյանքը և մեր հոգիները լուսավորող սուրբ ճաստատությունը, և անսահմանորեն խորունկ երջանկություն է այդ սուրբ տեղեն բերել ձեզ օրհնություն՝ ձեր կյանքի երջանկության և խաղաղության համար:

Սիրելի՛ հավատացյալներ, անշուշտ դիտեմ, որ հայ ժողովուրդը աշխարհի բոլոր ժողովուրդներու մեջ առաջինը եղավ, որ քրիստոնեական նշմարիտ հավատքը պաշտոնապես ընդունեց: Դ դարու սկիզբեն մենք առդեն քրիստոնյա ենք և այդպես ապրեցանք միշտ մեր օրերը ու դեռ պիտի ապրինք մինչև վերջ: «Հոգի է կենդանաւոր», — կրես մեր Փրկիչը և մեր ժողովուրդը հոգեկան արժեքները գնահատող ժողովուրդ մը եղած է ի սկզբանէ: «Նորհուրդ մարմնոյ ման է», իսկ «Նորհուրդ հոգւոյ՝ կեանք»: Այս սկզբունքին հավատարիմ մնաց ան և

իր քայլեր ստեղծագործությունները, հավանությունները, արժեքները կպարտի՝ անոր: Ամբողջ մեծ պատմության ընթացքին մեծ ժողովուրդը չդադրեցավ ստեղծելու շնորհիվ հոգիի, Ս. Հոգիի շունչին և զորության: Այդոր համար է. որ մեծ Ս. Նիկեղեցվո կամարներուն տակ ձնան ու զարգացան մեծ գիրն ու զրականությունը, Ս. Իսկոնյ յազունի բարգմանությունը, մանրանկարչությունը, մեծ սմանչեի ճարտարապետությունը, որոնք մեզ կենդանացնեն աշխարհի առջև: Մեծ ամբողջ ստեղծագործական կյանքը առաջ եկավ Քրիստոսի Ս. Ավետարանով:

Այսօր ալ մեծ ժողովուրդը կպահե իր հոգին. իր նկարագիրը, իր հավատքը, որոնք մեծ պապերեն մնացած լավագույն ժառանգությունը կկազմեն: Այսօր ալ անիկա կշարունակե ստեղծել, շինել, հավատարիմ մնալով հոգևոր արժեքներուն:

Հոգեկան և քառոյական արժեքները բարձր ու հիշտ զնահատելու շնորհիվ է, որ մեծ ժողովուրդը իր դրացի ժողովուրդներուն հետ հաստատած է դարավոր բարեկամություն: Մանավանդ բազմադարյան բարեկամությամբ և համագործակցությամբ ենք ապրել վրաց ժողովրդի հետ: Հոգևոր միասին ենք ձևեր, միասին ենք ապրել և միասին ստեղծագործել: Այսօր ալ մեծ ժողովուրդները կապրին և կդրայրուեն, և կապրին հավատքի ու հոգիի շինարար գործունե մը, վերածնունդ մը:

Այս զգացումները Մենք արտահայտեցինք Վրաց Նիկեղեցվո ներկայացուցիչ Նորին Սրբազնություն Նիրեմ Մխրտապոլիտին, և անգամ մըն ալ կրսենք, որ մեծ ժողովուրդները պիտի չդադրին հոգեկանը հարգել, պաշտել, ուստի մենք դեռ շատ ընկիւններ ունենք մեծ ժողովուրդներուն հոգիի պահանջներուն լրիվ զոհացում տալու համար:

Շնորհիվ մեծ բարեխնամ Կառավարության բարյացակամ վերաբերմունքին, մենք հետզհետե ավելի լավ պիտի կազմակերպվինք. նորանոր եկեղեցիներու ղեկերը լայն պիտի բանանք մեծ հավատացյալներուն առջև, պիտի պայծառացնենք մեծ Ս. Եկեղեցիին կյանքը. ի մխրաբություն բոլորին:

Հոյրեն օգտվելով պիտի ուզենին Վրաց հորհրդային Կառավարության ազնիվ ղեկավարներուն, գիտության և մշակույթի, զրականության և արվեստի բոլոր ներկայացուցիչներուն և համայն վրաց ժողովրդին մաղթել եղանկություն և խաղաղություն:

Թող երբևէ փորձություններ, տառապանքներ, պատերազմներ չտեսնեն այս ղեկեցիկ



«ԹՈՂԱԼ ՏՈՒՔ ՄԱՆԱԿՏԻՈՅԻ ԳՈՒԼ ԱՆՈՒՄ»

և իրեր: Թող դալար ու պտղավետ մնան մեծ դաշտերը ու պարտեզները, բարիքներով լեցնելու համար վրաց սեպանները:

Աստուծո օրհնությունը անպակաս թյառ ձեռ վրայեն, Երեկի հավատացյալներ, որ պեսգի դուր հավատարիմ մնալ ձեռ եախնիքներու ժառանգությանը և ավանդություններուն, ըլլալ եղջանիկ մինչև խոր ձերություն: Մայր Արտո Ս. Էջմիածինը ձեզ համար պիտի մնա ազդրող հավիտյան հավիտենից, ամենա:

Վեհափառ Հայրապետի այս ջերմ քարոզը փոթորկեց լալոր ներկայանիքի սրահը՝ տալիս չնչնի կերպով գրոշմվելով նրանց հոգիներում:

Արազան պատարագի արարողությունը միևնույն հանդիսավորությամբ շարունակվում է մինչև վեր:

Սուրբ պատարագի ավարտումից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսագրությունը տեղի ունեցավ հոգեհանդիսավոր քահայ թեմի նախկին առաջնորդ հանգուցյալ Տ. Կարա-

պիտ հպիսկոպոս Թովանյանի և Սայաթ-Նովայի շիրիմների վրա, որոնք գտնվում են անմիջապես եկեղեցու բակում:

Հոգեհանգստից հետո Վեհափառ Հայրապետը թափոքով Մէյսօր Քահանայապետ շարականի երգակցութեամբ առաջնորդվեց ավանդատուն:

Ապա ժողովրդի խանդավառ ծափահարութունների և սրտագեղ արտահայտութունների տակ Վեհափառ Հայրապետը մինչև մոտակա հրապարակն իջավ քայլելով ժողովրդի լոծ բազմութեան միջով, և այնտեղից էլ ինքնաշարժներով առաջնորդվեց ղեկի վրաց կաթողիկոսարանի Վեհարանը:

ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՈՏ Ի ՊԱՏԻՎ ՎՆՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Վրաց կաթողիկոսարանում, փոքր հանգրստից հետո, Վեհափառ Հայրապետն ու իր շքախմբի անդամները հյուրասիրվեցին վրացական ընտիր և հյուսիսի մրգերով: Անդանի շուրջ տեղի ունեցան մտերիմ զրույցներ: Նորին Արքեպիսկոպոսը շնորհակալություն հայտնելով ասաց, որ ինքը հատկապես այսօր Վրաց եկեղեցում նշանակել է նախկին պատկան ձեռնադրություն՝ Վեհափառ Հայրապետի այցելությունը վրաց եկեղեցում նշանավորելու համար:

Ընդունելությունը անցավ զերմ մթնոլորտում:

Ապա մեկնեցին հյուրանոց:

Ժամը 6-ին Թրիխսիի հայոց առաջնորդարանում տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ խորհրդակցություն թեմական խորհրդի մասնակցութեամբ՝ վրահայ թեմի մի շարք կապակերպչական աշխատանքների մասին: Քննության առնվեցին Վրաստանի հայոց թեմի եկեղեցական կյանքի վերաբերող խնդիրներ և համապատասխան որոշումներ առնվեցին:

Երեկոյան ժամը 8.30-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով բարեհաճեց պատվել Նուհապետյան ընտանիքի սեղանը:

ՎՆՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԱՅԱԿԱՆ ՍՍԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԶՈՒԹԻՆԵՉԵՆԻ

Երկուշաբթի, հուլիսի 8-ը, ժամը 10.20-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ գերապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոսի, հոգեշնորհ Տ. Կոմիտաս և Տ. Մեսրոպ վարդապետների և Մայր Աթոռի դիմանապետ պարոն Լ. Առաքելյանի, պաշտոնական

այցելություն ունեց Վրացական Կառավարական Տան, Շքամուտքի մոտ էր Վրացական ՍՍԻ Մինիստրների Սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի լիազոր պարոն Տ. Շալուստաշվիլին, որն առաջնորդեց Վեհափառ Հայրապետին Վրացական ՍՍԻ Գերագույն Սովետի նախագահության նախագահ պարոն Զուբինիձնի մոտ: Պարոն նախագահը սիրալիր կերպով դիմավորեց նորին Ս. Օծությանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի և պարոն նախագահի միջև տեղի ունեցավ սիրալիր զրույց, որից հետո, սրտագին մթնոլորտում, Վեհափառ Հայրապետը հայտնեց իր ջերմագին շնորհակալությունը սիրալիր ընդունելության համար և հրաժեշտ ասավ պարոն նախագահից:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄՅԵԽԹԱՅԻ ՎԱՆԶԻՆ

Հուլիսի 8-ին, ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով և Վրաց եկեղեցու հոգեորականության ներկայացուցիչների հետ, մեկնեց ղեկի վրաց ժողովրդի Արքեպիսկոպոսի Սրբոց, Վրաց եկեղեցու կենտրոնական դին՝ հնադարյան Մցխեթայի վտնքը:

Մցխեթա ստանդ խճուղին ձգվում է կոնուս ծառերի միջով: Երկու կողմերին բարձրանում են զմբուխայա սուրբեր: Շրջապատի մեջ տեղի են կաթնա թավշային քնքրություն ունի: Ահա Ս. Խաչ վանքը վեհորեն յուզվել է յետոն կատարին: Այս այն վանքն է, որը հանդիսացել է ուս հոշակավոր բանաստեղծ Լևրմոնտովի «Մծիր» պոեմի ներշնչող աղբյուրը: Ահա և Մցխեթայի վանքի փառաշուք գմբեթը: Ու, քիչ անց, արդեն մոտում են հինավուրդ պարիսպներից ներս, և մեր աչքերի առաջ կթողվում է վանքի հողմահար, բայց հոյակապ կառույցը: Վանքը կարծես ինքնաբերական ու խորհրդավոր վեհություն է հռոգալով, որը բխում է 1600 տարիների հեռավոր անցյալից:

Այս վանքում են թաղված վրաց կաթողիկոսներից ու թագավորներից շատերը:

Վրացական ժողովրդի հոգու տունն է այս վանքը, նրա Ս. Էջմիածինը: Մցխեթայի և Ս. Էջմիածնի ճակատագիրը հեղել է մեկնությունը: Մցխեթան նույնպես տառապել ու պայքարել է իր ժողովրդի հետ:

Մցխեթայում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին հանդիսութեամբ: Վանքի վանահայր հայր Մելքիսեդեկը սրտագին բարի գուլուստի խոսք է ասում և Վեհափառ Հայրապետին հանձնում է մատուցարանի վրա դրված սուրբ խաչը, որով նորին Ս. Օծությանը որհ-

նում է քոյոր ներկաներին: Հայր Մկրտիչան, հոր, այս շատ համակրելի և կենսաթրթիւ ծնւթունին, նորին Վեհափառությանը հանգամանորեն ծանոթացնում է վանքի պատմության և ճարտարապետական արժեքներին:

Այստեղ ամեն ինչ ըմբռնելի, ամեն ինչ անմիջական է մեզ համար: Բոլորս հաղորդվում ենք վանքի դարավոր վեհությանը ու խորհրդով:

Այնուհետև եղանք կուսանաց վանքում, որը գտնվում է քիչ հեռավորության վրա: Մեզ մինչև դարձաք դիմավորության են գալիս կույսերը, որոնք մեկ առ մեկ երկյուղածությամբ համարելով Վեհափառ Հայրապետի Ս. Ագր, երգելով առաջնորդում են մեզ վանքի ներսը, Վեհափառ Հայրապետի արեւա-

բարի դրացնության և աշխարհի խաղաղության համար:

Երեկոյան վերադառնում ենք քաղաք:

Հարուստ և քաղցր են մեր ստացած տպավորություններն ու զղացումները վրացական աշխարհից, ժողովրդական արվեստից և ժողովրդական ու կրոնական հաստատություններից:

ՀԱՇՎԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Երկուշաբթի, Երեկոյան ժամը 8.30-ին, նորին Սրբություն Մկրտիչան Վաթողիկոսը Վեհափառ Հայրապետի պատվին պաշտոնական ընդունելություն կազմակերպեց:



ՎԵՀԱՓԱՌ ԷԼՏԻՎԱՊԵՏԸ ՎՐԱՆԱԳՈՐ ԿՈՐԱԿԱՋՈՐ ԹԵՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԵՒԻ ՀՈՏ

տության համար կատարվում է հատուկ մաղթանք կույսերի Երգեցողությամբ: Այս վանքը ևս համարվում է վրացական Պապության վանքերից մեկը, որն ունի ճարտարապետական ինքնուրույն և հարուստ կառուցվածք և քանդակապարզեր: Վանքը ունի հնարույր ու ներշնչող խորհրդավորություն: Մեկնում ենք տպավորված:

Ապա, Վեհափառ Հայրապետի պատվին, տրվում է ճաշասեղան, որտեղ առաջարկվում է Լեւոնյանների երկու քույր Եկեղեցիների և Ժողովուրդների տեղական բարեկամության,

Ընդունելության ներկա են Ամենայն Հայոց և Համայն Վրաց Կաթողիկոսները իրենց շքամբերով, Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից կրոնական պաշտամունքների խորհրդի լիազոր պարոն Տ. Շալուաշվիլին և Պրավոսլավ Եկեղեցու գործերի խորհրդի լիազոր պարոն Մեքոբիշվիլին, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցիչ Զինովի եպիսկոպոսը, Վրաստանի կաթոլիկ համայնքի պետ Հայր Էմմանուէլ Վարդիձեն, բապտիստների, մալականների և հրեական համայնքների պետերը, հայ և

վրացի ականավոր մտավորականներ, Վրացական համալսարանի պրոֆեսորներ՝ պրոֆ. Լևոն Մեխիքսեթ-րեկը, պրոֆ. Աթաբեկյանը, վրացի անվանի գրող Կոնստանտին Կոնստանտինովիչ Պրահա, գրաքննադատ Վիսարիոն Ձզեն-տին, վրահայ թեմական խորհրդի պատվարժան անդամները և այլ հայ և վրացի սլավոփարժան անձնավորություններ:

Սեղանին նախագահում են երկու Վեհափառները: Առաջին իսկ վայրկյաններին սեղանների շուրջ ստեղծվում է ջերմագին բանակամական մթնոլորտ: Արտասանվում են խանդավառ և սրտառուլ բաժակաճառեր՝ Հայ և Վրաց Նկեղեցիների համագործակցության, հայ և վրաց ժողովուրդների դարավար բարեկամության է՛լ ավելի ամրապնդման համար: Սրտազեղ բաժակաճառեր են արտասանվում ներկու Վեհափառների, հայրենի բարեխնամ կառավարությունների, հայ և վրաց մտավորականների, կրոնական հարանվանությունների ներկայացուցիչների, վրահայ թեմական խորհրդի պատվարժան անդամների և հայ ու վրաց հոգևորականության կենսացների առթիվ:

Նորին Սրբություն Մեղիսեդեկ Կոթողիկոսը բաժուկ բարձրացնելով Վեհափառ Հայրապետի կենացը, ասում է.

«Ես տարբեր առիթներով եմ ասելիքներ ասել եմ նորին Ս. Օծուրյան մասին, բայց ես պիտի ուզեմայի դեռևս շատ ու շատ բան ասել: Նորին Սրբություն Վազգեն Ա-ը երիտասարդ, սակայն մեծ կարողիկոսն է Ամենայն Հայոց, մտնով ուժեղ, սրտով հառուստ, լուսնեղով անսպառ, հավատով լեցուն: Կոչված է մեծ պաշտոնի և պատասխանատվության և ամենադուրյզն իսկ կասկածը չունեմ, որ իմաստությամբ ու փառով կայսակվի ևր ազնիվ գործունեությունը՝ ևր Սրբազան Նկեղեցու շինության և հարազատ ժողովուրդի երջանկության նամար:

Նրա այցելությունը ընդունվեց մեծ խանդավառությամբ երկու ժողովուրդների կողմից հավասարապես: Մենք ևս հոգեին ցրեծություն ապրեցինք այս մի քանի օրվա ընթացքում նրա բանկազին ներկայությամբ մեր մեջ: Նա նվաճեց մեր հոգիները ևր ներքին հոգեկան արժանիքներով և արտաքին շնորհալի տեսքով: Մենք բոլորս նրան սիրեցինք որպես կրոնական Պետի, արժանավոր մարդու:

Թանկագին հյուրեր, մոսկվայս խմենք նորին Սրբություն Վազգեն Ա-ի կենացը և մաղթենք, որ Տեր Աստված նրան շատ երկար տարիների կյանք պարգևի՝ ի պայծառություն

Հայոց Ս. Նկեղեցու և ի մխրաբություն համայն Բրիտանիայ»:

Երկարատև ծափահարությունների Բոլորը ոտքի են կանգնում: Խմում են Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց համար առաջարկված բաժակը:

Ապա խոսք է առնում Վրաց Կաթողիկոսի անդակալ Դմիտրի եպիսկոպոսը:

«Ձերդ Սրբություն. Դուք մուտք եք գործել ոչ միայն հոգային (տերիտորիալ) մերձավորություն ունեցող մի երկիր, այլ հոգեկան մոտիկություն ունեցող մի երկիր՝ ներայրական և հարազատ Վրաստան, որտեղ ընտելվում են ոչ քիչ թվով հայեր հնադույն դարերի ժանտ ժամանակներից սկսած, և դուե՛լ են սիրալիք, ներայրական ապաստարան: Դարերի ընթացքում այնպես են հորադատացել հայերը վրացիների հետ, որ այժմ ոչ սովորություններով և ոչ էլ որե՛կ ավանդությամբ կարելի չէ նրանց իրարից դատորոշել: Հայերը այնպես են իրենց հարազատ զգում Վրաստանում, որ պահպանելով իրենց ազգային առանձնահատկությունները, Վրաստանը համարում են իրենց երկրորդ Հայրենիքը, և նրա շահերով են մտահոգվում վրացիների հետ հավասարապես: Ահա թե ինչու՝ վրաց ժողովուրդը հայ ժողովուրդի հետ Ձեզ դիմավորում է հավասար խանդավառությամբ:

Այս պահին ես ուզում եմ սլաոմական մի դեպք հիշել: Հռոմայեցի զորավար Հուլիոս Կեսարը Արեւելքում տարած իր հաղթանակի մասին կայսեր գրում է. «Եկա, տեսա, հաղթեցի»: Այս երեք բառերը վերաբերում են նաև Ձեզ, Ձերդ Սրբություն. ճշմարիտ եմ ասում, որ Դուք ես եկաք, տեսաք, հաղթեցիք, անմիջապես տիրեցիք մեր զգացմունքներին: Ամեն տեղ Ձեր մասին ասվում է. «Դեռքա՛ն համակրելի, ինչքա՛ն փառավոր և ինչքա՛ն պաշտելի է»: Ձեր արտաքին գեղեցկության հետ, ունիք նաև ներքին, բարոյական գեղեցկություն, որ ավելի կարևոր է:

Թույլ տվեք ինձ շնորհավորել Ձեզ և Հայոց Նկեղեցու ողջ հոգևորականության, Ապրեցեք երկար տարիներ (մրավալսամիներ)»:

Ապա թանկագին նվերներ են հանձնվում Վեհափառ Հայրապետին:

Այնուհետև Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը խոսք է առնում:

«Ձերդ Սրբություն, սրբազան հայրեր և րանկազին հյուրեր.

Այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուխտի գնաց Ս. Մխիթար՝ սրբազան աղոթք ընելու և տանելու ռդույնը հայոց հավատի լուսնեղեն կնքոն հնադարյան Ս. էջմիածին: Մենք զՄեզ անսահմանորեն երջանիկ կրգ-

զանք, որ Մենք եղանք այն անձնավորությունը, որ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս կատարեց այսօրվա այնքան հանելի ուխտագնացությունը: Մենք խորհուրդ և զգացում կա այդ իրողության մեջ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ս. Էջմիածնեն Ս. Մցխեթա եկավ՝ այդ սուրբ հողին վրա իր հոգիին աղոթք մատուցելու առ Աստված: Սա սովորական, ընթացիկ երևույթ մը չէ, իրողություն մըն է, որ ունի պատմական բացառիկ արժեք ու նշանակություն: Ս. Մցխեթան ու Ս. Էջմիածինը հավատքի այն սյուներն են, որոնց

կյանքի ընթացքին տվին այդ ճշմարտության տպագրույցը:

Համոզված ենք, որ Ս. Էջմիածինը և Ս. Մցխեթայի յոթ սյուները անխորտակելի են, և ավելին՝ այդ երկու սուրբ հաստատություններն են եղած ամբակուռ ճիմքեր մեր երկու ժողովուրդներու մեծնցման ու բարեկամության: Դեռ դարերուն անոնք միասին ընդունեցին նոր և ճշմարտ հավատք, գրեթե միասին ստեղծեցին իրենց գիրք ու զրակաւորությունը և բարգմանեցին աշխարհի մեծագույն գիրքը՝ Աստվածաշունչը, և բազում դա-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՐ ԼՍՈՒՄ Է ՊՐԱՅ. Լ. ՄԵԼԻՋՍԵՔ-ՔԵԿԵ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄՅԵՆՔԱՍԻՎՈՐ ՎԱՆՔՈՒՐ

վրա կհանգչին վրաց և հայ ժողովուրդներու հոգևոր կյանքին ու այդ կյանքի բոլոր արժեքները: Մենք հաստատ կերպով կմնանք այն համոզմունքի վրա, որ ինչ որ մեր ժողովուրդներն ունին իրեն ճշմարտ արժեք, ինչ որ ունին անկասկելի, ինչ որ ունին առաքիլների, ազնիվ, այդ բոլորը ծնունդ է առած անոնց հոգևոր կյանքին մեջ, վասնզի այդ բոլորը հոգիի ստեղծագործություններ են, հոգեկան ապրումներու արգասիքներ են:

Փառք Աստուծո, որ այդ է իրականությունը մեր երկու ժողովուրդներու պարագային ալ: Պողոս առաքյալ կրսե. «խորհուրդ մարմնոյ ման է, խորհուրդ հոգւոյ՝ կիսինք»: Ըլլա՛ վրացի, ըլլա՛ հայ ժողովուրդը իրենց ճանաչարյա՞

րենու ընթացքին միասին ապրեցան, միասին ստեղծագործեցին և միատեղ պայքարեցան նաև իրենց հավատքի, իրենց Հայրենիքի և ազատության: Որևէ մեկուն ներքի պիտի չըլլար անտեսել այդ ճշմարտությունները: Եթե հակառակը մտածողներ ըլլային Երևանի և կամ Թբիլիսիի մեջ, այդ պիտի նշանակեր, որ ունեն ճշմարտ բարեկամներ չեն ոչ վրացի և ոչ ալ հայ ժողովուրդին:

Մեր կարծիքով Էջմիածնով ու Մցխեթայով սկսած այս դարավոր բարեկամությունը ոչ միայն հնարավոր իրականություն մըն է, այլ անհրաժեշտություն մը մեր երկու ժողովուրդներու իրավ շահերու տեսակետեն:

Այժմ Մեր սիրտը լեցուն է երախտագիտությամբ, և ողջագուրվելով նորին Սրբու-

րյան հետ, կուզենք արտահայտել Մեր խորունկ գոհունակությունը Մեզ մատուցված նյութական նվերներուն և, մանավանդ, արտահայտված հոգեկան զգացումներուն և հոսմեհուն համար:

Կեցցե՛ք Նորին Սրբություն Վրաց Կաթողիկոսը: Որկա՛ր տարիներ և երջանիկ գործունեություն:

Да здравствует его святейшество Матоликос и Патриарх всей Грузии Мэлихисвети III. (Վեհափառ արտասանում է ռուսերեն):

Կուզեինք ավարտել Մեր խոսքը ըսելով, որ խորապես ցանկալի է Մեզի համար, որ Նորին Սրբությունը իր ծերունագառդ տարիքին մեջ բերե՛ր իր հայրապետական ողջույնը Ա. Մրց-խերայեն՝ Ս. Էջմիածին, որտեղ ամբողջ մեր միաբանությունը ձեկաչոփ պիտի խնդրե՛ր ի սրհնությունը (երկարատև ծափահարություններ):

Հոռեկայա խմբե՛ք Նորին Սրբության քսմկազին կենացը և ի բոլոր սրտե մաղրենք արևշատություն և երջանիկ կյանք:

Բոլորը ոտքի են կանգնում, բարձրացնում են ռաժակաները Նորին Սրբության կենացը խմելու համար: Ողջագործվում են երկու Հայրապետները, Իրենց չեքո՛մ համբույրների մեջ խտացնելով երկու եղբայր ժողովուրդների իղձերն ու զգացմունքները:

Նորին Սրբություն Վրաց Կաթողիկոսը սիրով ընդունում է Վեհափառ Հայրապետի էջմիածին այցելելու հրավերը և ասում.

«Իմ մտե՛րն ու զգացմունքները, իմ ողջ էությունը հուզված են այժմ: Ուզում եմ պատասխանել և ասել, որ կուզենայի, սրտանց կուզենայի լինել Ս. Էջմիածնում՝ ժողովրդական կյանքի և հավատի այդ մեծ ու նվիրական կենտրոնում: Կբանամ հոկտեմբերին կատարել իմ ուխտագնացությունը դեպի Ս. Էջմիածին»:

«Այդ թվականը պիտի արձանագրենք մեր սրտերու օրացույցին մեջ», — վերջացնում է Վեհափառ Հայրապետը:

Սեղանների շուրջը ստեղծվել է խանդավառ և չեքմիկ մթնոլորտ: Հնչում են հայ և վրացական ուրախ երգեր ու շարականներ:

Այս հույժ գեղեցիկ և պատմական ընդունելությունը ավարտվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ
ԽՈՐՀՐԳԻ ԼԻԱԶՈՐ Պ. ՇԱԼՈՒՏԱԴԱՎԻԼՈՒ ՄՈՏ

Հուլիսի 9-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը ընդունվեց Վրացական

ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի լիազոր պարոն Շալուտաշվիլու կողմից, Վրացական ՍՍՌ Կառավարական տանը:

Նորին Ս. Օծության և մեծարգո պարոն լիազորի միջև տեղի ունեցավ սիրալիր պրույց: Պաշտոնական այս ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Վրաց Նկեղեցու միտրոպոլիտ Նիքիմը, հոգեշնորհ Տ. Կոմիտաս և Տ. Սեբրոպ վարդապետները և Մայր Աթոռի դիվանապետ պարոն Հայկ Ասաքելյանը:

Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը, սրտագին շնորհակալություն հայանելով սիրալիր ընդունելության համար, հրաժեշտ առավ պարոն Շալուտաշվիլուց:

ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ
ԳԵՂԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆ ԵՎ
ԹՐԻԼԻՍԻԻ ՎՐԱՑ ՈՒ ՌՈՒՍ ԵԿԵՂԵՑՆԵՐԸ:

Հուլիսի 10-ին, շրեքշաբթի օրը, ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է Թբիլիսիի Գեղարվեստների թանգարանը, Վեհափառ Հայրապետին դիմավորում է Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի անդամ ակադեմիկոս Ամիրանաշվիլին, որը առաջնորդում և հաճելի բացատրություններով ծանոթացնում է թանգարանին և նրա մեծարժեք ցուցանմունքներին:


Թանգարանում առանձնապես Նորին Ս. Օծության ուշադրությունը գրավում են հնագույն սրբապատկերների նուրբ նկարչության և ոսկերչական առավել նրբին աշխատանքների ավագանի ռճն ու հատկանիշները: Մասնավորապես հիշատակության արժանի արվեստի սքանչելի նմուշներ էին ԺԲ դարի վերջերի և ԺԳ դարի սկզբների ոսկերչական աշխատանքների տաղանդավոր վարպետ Բեկա Օպիզարի գործերը:

Վեհափառ Հայրապետը անմոռանալի տպավորություններ ստացավ վրացական արվեստի այս մեծ աշխից: Հրաժեշտի պահին ակադեմիկոս Ամիրանաշվիլին Բեկա Օպիզարի մասին Նոր Հրատարակած իր փորձը նվիրեց Նորին Վեհափառության, իր իսկ մակագրությամբ:

Ապա Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Պետական պատմական թանգարանին կից ձեռագրերի զանազանը, որտեղ ծանոթացավ վրացերեն ձեռագրերի հնագույն նմուշներին հետ, որոնք ճանկայացնում են պատմական և մանրանկարչական-դիզայն-վեստական մեծ արժեք:

Այստեղ հետաքրքիր է չեւրմ պիտի չէ աւելի
ունենում հայ և վրաց մշակութային կապերի
մասին:

Քանի որ ուսաց եկեղեցու դռները զոգանջը
մտնելու համար եկեղեցու դարձաւին, որտեղ
հալածութեամբ մեծ թաղմությունը սրտագին ծա-



ՎԵՆԱՓԱՌ-ԶԱՅՐԱՊԻՏԸ-ՄԾԽԵԹԱՅԻՆ ՎԱՆՔԻ ՈԱԿՈՒՄ

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը ուղե-
լում է վերջերս վերանորոգված Գեորգեանի
վրաց դեղեցիկ եկեղեցին և ապա Թրիխսի
ուսաց եկեղեցին: Հետոյից տրդեն յոսի է

փահարություններով է դիմավորում Հայոց
Հայրապետին: Շատերը ծնկի են եկել, ստա-
նալու համար Վեհափառ Հայրապետի օրհ-
նությունը: Վեհափառ Հայրապետը օրհնում

է բոլորին և առաջնորդվում է կեղեցեաց ներս: Ռուսաց եպիսկոպոսը՝ զերապատիվ Ջինովի ողջունի սիրալիր խոսքեր է ասում շնորհաբեր այս այցելության առթիվ: «Ձերդ Սրբություն, — ասում է նա, — մենք սրտի անհուն ուրախությամբ ողջունում ենք Ձեզ այստեղ: Մատ վաղուց է, որ սպասում էինք Ձեզ: Մեր փոքրիկ համայնքը անհամբեր էր Ձեզ տեսնելու համար այստեղ, և այսօր պատկերացրեք նրա հոգեկան ուրախությանը՝ Ձեր շնորհաբեր այցելության առթիվ: Մեր սուրբ եկեղեցին կրում է Ալեքսանդր Նևսկու անունը և այսօր, Ձեր այցելության կապակցությամբ, ցանկանում ենք Ձեզ հիշատակ տալ մեծ սրբի պատկերը՝ որպես մեր հոգու նվիրը Ձերդ Սրբության: Բարի՛ եկաք մեր սուրբ եկեղեցին:»

Վեհափառ Հայրապետը վերցնում է սուրբ խաչը, համբուրում և, դառնալով ժողովրդին, օրհնում է բոլոր հավատացյալներին: Ապա յարձրանում է սեղան և իր աղոթքը մատուցում:

Հրաժեշտից առաջ նորին Ս. Օծությունը դիմելով ժողովրդին, ասում է.

«Սիրելի՛ Սրբազան և սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ: Անա երեւ օրերե ի վեր կատնվինք Թրիխսի և ճգեկան մեծ ուրախությամբ մատուցինք Մեր աղոթքը հայ և վրաց եկեղեցիներու մէջ: Մեր պարտականությունը թերի կերպով կատարած պլտի ըլլալինք, երբ յայցելելինք հաւ Ձեր եկեղեցին, աղօթելու համար այս Ս. Սեղանի առաջ, որ կկրե մեծ սուրբ Ալեքսանդր Նևսկիի անունը:

Մեզ համար հարազատ են եղած ռուսաց տաճարները: Մենք երջանիկ պատեհությունն ենք ունեցած այցելելու Մոսկվայի, Ջագոսկի, Ռուսալեիայի ռուսական հոյակապ տաճարները:

Ռուսալեիայի հայության Մեր առաջնորդ եղած ժամանակ, շնորհիվ Հայ և Ռուս Բուր եկեղեցիներու միջև ստեղծված բարեկամության, ռուսաց եկեղեցին մեր ալ աղոթքի տունն էր դարձած: Հաճախ կհրավիրվելինք պատահազներուն ներկա ըլլալու: Մեր և ռուս հոգևորականներուն միջև իրոք էղբայրական և սիրո շնորհաբերություններ էին ստեղծված:

Շնորհակալությամբ քանկագին նվերի համար: Էջմիածնի մէջ արդեն ստեղծած ենք փոքր անկյուն մը ռուսական այն սրբապատկերներու համար, որոնք տարբեր առիթներով նվեր են ստացված: Մեր Ռուստով կատարած այցելության ժամանակ ռուսական եկեղեցիներն ստացանք Ս. Դմիտրիի սրբ-

բապականքը, որ սրբությամբ կպահենք այն անկյան մէջ:

Սիրելի՛ Սրբազան, Մենք մշտապես կաղօրենք, որ բոլոր Բուր եկեղեցիները պահվին ու պահպանվին Աստուծո փառին համար:

Այս առթիվ դարձյալ կխնդրենք Ձերդ Սրբազնութենէն, որ Մեր անկեղծ զգացմաններուն բարգմանը ըլլալ նորին Սրբության Ալեքսի Պատրիարքի առաջ, որուն առողջության և արեւաշատության համար կմեանք միշտ աղոթող:

Կմաղբենք Ձեզ ուժ և կարողություն, որպէսզի Տիրոջ այգիին բարի մշակը դառնաք: Իսկ Ձեզ, սիրելի՛ հավատացյալներ, կհայտնենք շնորհակալությամբ՝ Ձեր ցոյց տված ջերմագին ընդունելության համար և կուտանք Ձեզ Մեր հայրապետական օրհնությամբ և կաղօրենք, որ Աստուծո Ձեր բոլորին երջանիկ կյանք պարգևեք:

Այս խոսքերից հետո Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում և մեկնում զանգերի ուրախ զողանքի տակ:

Թրիխսի գեղեցիկ Վրաստանի գեղեցիկ մայրաքաղաքն է, իսկ Թրիխսի գեղեցկությունը այն հանրային պարտեզն է, որ Յունիկուլյոր է կոչվում, Հիանալի է նրա դիրքը, որը տիրում է ողջ Թրիխսին, յայց հիանալի է մանավանդ այն գեղեցկությունը, որը ժողովներին, ժողովրդին և ժողովներին ներդաշնակությամբ է կազմվում, ի՛նչ հաճելի բուրմունք և ի՛նչպիսի զով օդ կա այնտեղ: Ահա թե ինչու Թրիխսի այցելող ամեն անհատ անպայման պիտի գտնէ մի քանի ժամով վայելի նրա հրապույրը, և Վեհափառ Հայրապետը, նորին Սրբություն Մելքիսեդեկ Կաթողիկոսի ընկերակցությամբ, առաջնորդվում է այնտեղ:

Կարճատև պտույտից հետո, Վեհափառ Հայրապետները իրենց շքախմբերով կուսնեն առնում այն դիտակետում, որտեղից տեսանելի էր ամբողջ Թրիխսին:

Ապա տրվում է ճաշ:

Հետո ինքնաշարժներով, երկու Հայրապետները իրենց շքախմբերի ընկերակցությամբ, շափազանց հաճելի մի շրջապատւյուն կատարում դեպի Կոլորի և Մզենթի հրաշալի, կանաչազարդ, անտառապատ ու զովասուն վայրերը: Ձքնաղ Վրաստանի մեկ անկյունն է այստեղ, և ինչպիսի՜ գեղեցկություն ու թովչանք, ինչպիսի՜ թարմություն ու կազդուրիչ մթնոլորտ ունի: Այնպիսի քնքուրքությամբ է շոյվում դիտողի աչքը, այնպիսի կենդանացնող օդ է լցվում շնչողի թոքերի մէջ, որ մարդկային հոգին լալն առաջատու-

ների նման բացվելով խորունկ հաճությւն է ապրում:

Հրաշալի բնության գրկից վերադառնում ենք Թրիխսի, թարմացած ու կենդանությամբ լեցուն:

ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԵԿՈ

Չորեքշաբթի Երեկոյան ժամը 8.30-ին *Երեւանի Մարտի 1-ի* հյուրանոցի ճաշարանի շքեղ և ընդարձակ սրահում կազմակերպվեց ողբիւթի ընդունելություն ի պատիվ Նորին Ս. Օծուկյան:

Սեղաններին նախադառնում են Երկու Վեհափառ Հայրապետները:

Հրավիրյալների թվումն է Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետի ատենապետ Կրտսեական պաշտամունքների գործերի խորհրդի լիազոր պարոն Շալուտաշվիլին և Պրավոսլավ Նկեղեցու գործերի խորհրդի լիազոր պարոն Մեթրիշվիլին: Սեղանի շուրջ սեղ են գրավել հայ և վրաց հոգևորականության ու մտավորականության ներկայացուցիչները, ինչպես նաև Թրիխսիի Ռուսաց Պրավոսլավ Նկեղեցու Եպիսկոպոս Զինովին, Թրիխսիի կաթոլիկ համայնքի պետ Հայր Էմմանուէլ Վարդիձեն, բապտիստների, մալականների, հրեական համայնքի հոգևոր պետերը, վրահայոց թեմական խորհրդի մեծարգո անդամները, այլև հայ ու վրացի պատվարժան հյուրեր, թղթակիցներ և մամուլի ներկայացուցիչներ:

Առաջին իսկ վայրկյաններին սեղանի շուրջն ստեղծվում է սրտագին և հաճելի մթնոլորտ: Երկու եղբայր ժողովուրդների պալալները նստել են մի սեղանի շուրջը՝ իրենց հարգանքը բերելու իրենց Հոգևոր Անտիքին, ինչպես և մեկ անգամ ևս միատեղ ապրելու իրենց եղբայրական պգացմունքները:

Խոսվում են բաժակաճառեր: Կատարվում են հոգևոր և ազգային-հայրենասիրական երգեր: Դարձյալ բաժակ են բարձրացնում երկու Վեհափառ Հայրապետների, Հայրենի րարեխնամ Կառավարությանը, Երկու եղբայր ժողովուրդների հավիտենական բարեկամության, Հայաստանի և Վրաստանի բարգավաճման, աշխարհի խաղաղության, հայ և վրաց հոգևորականության, Ռուս Պրավոսլավ Նկեղեցու, բապտիստների, մալականների, կաթոլիկների, հրեական համայնքի ներկայացուցիչների արեւատուության, հայ և վրաց մտավորականության և վրահայ թեմական խորհրդի հետագա արդյունավետ գործունեության համար:

Նորին Ս. Օծուկյան Վեհափառ Հայրապետը ընդունելության ժամանակ արտասանում է հետևյալ շնորհակալական խոսքերը. «Ձեռք Սրբություն, սրբազան հայրեր և բանկագի՛ն հյուրեր:

Մեր մեկնումին առիթվ այսօր այս հավաքին Մենք զՄեզ լեցուն կզգանք հուզումով, մտածումներով, խանդավառությամբ և անսահման սիրով, քանի որ այս հավաքույթով վերջ կգտնեն Մեր՝ Թրիխսի այցելության պաշտոնական մասը: Թույլ տվե՛ք, որ ամփոփենք Մեր զգացումներն ու խոհերը: Մեր այցելությունը Թրիխսի ունեցավ հատկապես Երեւանի նախնային սիրով ու հարգանքով ընդառաջելու համար Սրբության այնքան շնորհ հրավերին, անձամբ հանդիպելու և մեր բարեկամության շնեքին վրահայր մը ևս ավելցնել: Երկուդ տեսնել ու նանչնալ մեր սիրելի հավատացյալները և անոնց հետ միատեղ մեր Ս. Գեորգի եկեղեցիին մեզ ձերադիր ազդր առաւել առ Աստված, և բերել բոլորին մեր դարավոր Ս. Էմմանուէլի ողբույթը և Ամենայն Հայոց Հայրապետության օրհնությունը: Երբեք՝ հանդիպել Վրացական՝ բարեխնամ Կառավարության ներկայացուցիչներուն և անոնց բարձր ուշադրության հանձնել Հայաստանյայց եկեղեցվո վրահայ թեմին վերաբերյալ եկեղեցական քանի մը խնդիրներ:

Հոգեկան խորունկ գոհունակությամբ այս պահուն կրնանք հայտարարել, որ Երեւանյա տակներն ալ հաջողությամբ պսակվեցան և այս առիթով Մենք զՄեզ լիապես երջանիկ կզգանք:

Համայն Վրաց Կարողիկոս Նուրի Սրբություն Մեւթիսեղեկ Գ-ը Եր հայրական գիրկը լայնորեն բացած ընդունեց Մեզ: Սրտաբաց ընդունեցին Մեզ նաև Վրացական ՍՍՌ Գեորգույն Սովետի նախագահության պարոն նախագահը և Մինիստրներու Սովետին առընթեր Կրտսեական պաշտամունքներու գործերու խորհրդի լիազոր պարոն Շալուտաշվիլին: Իսկ հայ, վրացի և ռուս հավատացյալներու ցույց տված ընդունելությունը ավելի քան սրտագին էր, որ Մեզ խորապես հուզեց և Մեր ամբողջ կյանքի ընթացքին պիտի պահենք Մեր հոգիի ու Մեր հիշողության մեջ: Մենք առիթներ ունեցած ենք և պիտի ունենանք այսուհետև ալ հանդիպելու մեր սիրելիս հավատացյալներուն՝ ուր ալ որ գտնվին անոնք: Այս հանդիպումները Մեզ կմխրաբեն, նոր ուժ ու հավատ կներշնչեն Մեզի, որ բազմապատկված Եռանդով նվիրվենք մեր եկեղեցին վերաշինելու սուրբ գործին:

Մենք կրկին անգամ կհայտնենք Մեր անկեղծ շնորհակալությունը Նուրի Սրբությանը,

Պետական իշխանությանը ներկայացուցիչներուն և հայ ու վրացի մեր սիրելի հավատացյալներուն:

Մենք երջանիկ կզգանք զՄեզ նաև այն բանին համար, որ Մեր այցելությամբ իրապես ավելի ու ավելի ամրապնդվեցավ մեր երկու ժողովուրդներու բազմադարյան բարեկամությունը, բարեկամություն մը, որ պիտի չվտանգվի ասկէ հետո ալ որեւէ առիթով: Կասկածէ հետո է, որ Մեր այս այցելությունը ավելի հարազատ մտնկություն մըն ալ ստեղծեց նաև մեր փոյր եկեղեցիներու ծոցին մէջ, ինչ որ հոգեւին Մեզ շատ կմխիբարէ:

Այս առիթով շնորհակալության խոսք ունինք Թրիխսի կրօնական համայնքներու այն բոլոր ներկայացուցիչներուն, որոնք իրենց ներկայությամբ կրեւեն Մեզ իրենց սրտի և հոգիի անկեղծ հարգանքը: Պատիվ կհամարենք Մեզ համար, որ այս սեղանի շուրջ ունինք հայ ու վրացի մտավորականներու խումբ մը, որ անձնվիրաբար և տաղանդով կաշխատի գիտության և արվեստի բարգավաճման և զարգացման համար: Մենք սիրած ենք գիտությունն ու արվեստը և կսիրենք անոնց ազնիվ մշակները: Շնորհակալություն կհայտենեմ անոնց և կմաղթենք լավագոյն հաջողություններ:

Պարտք կզգանք Մեր հատուկ գոհունակությունը հայտնել վրահայ քեմական խորհրդի պատվարժան անդամներուն, որոնք այնքան եռանդուն աշխատանքով ու հաջողությամբ կազմակերպեցին Մեր ընդունելությունը: Վրահայ քեմական նորակազմ խորհրդի առաջ գործունեության շատ ազնիվ և շատ պատասխանատու նախապարհ բացված է: Վրահայ քեմի էկեղեցական կյանքը վստահված է անոր խղճին և սրտին և Մենք կհավատանք, որ ան պատվով ու փառքով պիտի պսակէ իր գործունեությունը: Կորհնենք ձեզ և կաղթենք ձեզ համար:

Վերջապես հատուկ կերպով Մեր ջերմագին շնորհակալություններ կհայտնենք Մեր շուրջ բազմած հայ և վրացի բոլոր հոգևորականներուն, որոնք այնքան ազնվորեն շքերացան իրենց ամենափոքր պարտականությանց մէջ անգամ: Թող Տեք օրհնէ Ձեր սուրբ գործը: Առիթն օգտվելով, նորին Սրբության խորապետ կցանկանք, որ Ան մոտիկ ապագային մէջ հասնի իր գերագոյն բաղձանքին, և ինք ալ Մեզ նման շրջապատվի երիտասարդ, բոլորանկեր հոգևորականներով:

Թույլ տվեք քաճաղցնել այս քաժակը Ձեր բոլորի բանկազին կենացը և մաղթել

Ձեզ երջանիկ օրեր, աւելատություն և լավագոյն հաջողություններ:

Վեհափառ Հայրապետը իր շնորհակալության խոսքը վերջացնում է բուռն ծափահարությունների տակ:

Այս պահին ներս են մտնում երեք սպիտակազգեստ հայ աղջնակներ և Վեհափառ Հայրապետին մատուցում մի խաչոր կարկանդակ՝ օթարի դալուստ Վեհափառին: Ոսկեզույն մակագրութեամբ և հայրապետական խորհրդանշաններով, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մեկքիսեղէկ Գ-ը բաժակ բարձրացնելով Ամենայն Հայոց Հայրապետի կենացն ասում է.

«Ձերդ Վեհափառություն: Ես տեսնում եմ, որ մենք դրացիներ ենք ոչ միայն երկրով, այլև հոյակերով և զգացմունքներով: Ձեր խոսքերը ընդհանրապես ինձ յատ են հոյակում: Ես շատ շնորհակալ եմ Ձեզանից: Ձեր մասին շատ ասելիքներ ունեմ, և նամոզված եմ, որ ինչքան էլ խոսեմ չեմ սպանելու: Դուք Մեզ հոգեպես շարժեցիք, և կալծես ես ինձ հիմա ավելի առողջ ու ավելի ուժեղ եմ զգում, Ձեր աշխատանքի ետևողով ու լավատեսությամբ ինձ վարակում եք: Ինչքան երախտապարտ եմ Ձեզ Ձեր այն բարի ցանկության համար, որով կամեցաւ, որ ես էլ Ձեզ նման շրջապատված լինեմ այսպիսի երիտասարդ, նույնիսկ կարելի է ասել պատանի հոգևորականներով: Ես սրտանց ուզում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ և ամբողջ ճգնով խմում եմ Ձեր կենացը»:

Ընդունելությունն անցավ շատ չերմ և խանդավառ: Բոլոր ներկաները հրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից լավագոյն տպավորություններով և քաղցր հուշերով:

ՎԵՐՋԻՆ ՈՐԸ ԹԹԻԼԻՍՈՒՄ

Չորեքշաբթի է, երեկոյան ժամը 5-ը, Ինքնաշարժների շարասյունը շարժվում է դեպի հայոց Ս. Էջմիածին եկեղեցին: Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում իր սիրեցյալ ժողովրդից:

Հնչում են ճորից վանդերը տոնական և զվարթ ղողանջով, Սակայն կարծես երկիմաստ շեշտ կա նրանց հնչյունների մեջ՝ ուրախության և հրաժեշտի տրամախառն շեշտը: Մեկնում է արդեն Վեհափառ Հայրապետը: Հրաժեշտի հուզիչ ժամն է: Ինքնաշարժները կանգ են առնում Եկեղեցու դարբասի մոտ, որտեղ խոնաված է հավատացյալ ժողովրդի բազմությունը: Ուժգին թնդում է բարի ողջույնի ծափահարությունը և դարձյալ լսելի են լինում սրտառու բարեմաղթությունները: Եկեղեցական թափորը հագիւմ թն

կարողանում է ճեղքել մարդկային ծովը և մտնել Եկեղեցի, Եկեղեցու ներսում նույնպես հավաքվել է մեծ լավություն:

Բարի ճանապարհի հատուկ շարականներին և սաղմոսների երգեցողությունից հետո նորին Ս. Օծությունը իր հրաժեշտի խոսքն է ասում:

«Միւսկի՛ հավատացյալ ժողովուրդ հայոց: Մենք կրկնակի երջանիկ կգգանք զՄեզ, որ այս պահուն կգտնվինք ձեր այս ջերմ միջա-

անխտիր: Վստան գիտցեմք, որ ան պիտի ձեզ պատեպարե, ձեզ պիտի պահպանե, ձեզ պիտի լուսավորե և ապրեցնե:

Մենք ցտիպված ենք բաժնվիլ ձեզմե, Մեր գործերը Մեզ ևտ կկանչեն: Կրողուն՝ ձեզ ԼԲԵՐ հայրապետական օրհնությունը՝ ձեր բալորի արեւշատության և Երջանկության մաղրաններով:

Մենացեմ խաղաղությամբ: Որհնյալ ըլլա՛ր թղորդ»:



ՀԻՄԱՅՆՇՈՒ ՈՂՋԱԴՈՒՐՈՒՄԸ

վայրին մեջ, այս սուր Եկեղեցվո կամարներուն ներքե: Փոքրիկ այս Եկեղեցին ուրան գեղեցիկ է իր հուրմուտով, իր նարսաղապետությամբ, նույնչափ շքեղ է իր մեծ անունով: Ան կկրե անունը այն սրբազան վայրին, Տաճարին, որանդեն եկանք Մենք և կրեւենք ձեզ հայրապետական ողջույն և օրհնություն: Այն Ս. Տաճար, որուն անունը ընդունած է այս Եկեղեցին, մնաց կանգուն տասնյոթ դարեր շարունակ, վասնզի անոր կառուցման համար Աստված ինքի տվա՛վ մուրհի առաջին հարվածը և ան եղա՛վ աստվածակառույց: Միաժամա՛կ մեր Տաճարը: Ահա քե ինչու դարերը անցան ու պիտի անցնին, բայց ան պիտի մնա հավերժ կանգուն: Դուք ձեր այս Եկեղեցին, հայոց սուրբ Եկեղեցին պահեցե՛ք ու պահպանեցե՛ք ձեր աչքի յույսին պես, ձեր հաւաքատ տան պես: Ան ձեր թղորդի տունն է

«Բարի ճանապարհ, բարի ճանապարհ» — արտասանում են թղորդ միարեւրան, այդ բառերի մեջ դնելով իրենց սրտի ողջ ջերմությունն ու անկեղծությունը: Նորին Ս. Օծությունը դուրս է գալիս Եկեղեցուց, ժողովուրդը հավաքված է ինքնաշարժի շուրջ և ցանկանում է այն դրկել: Բայց ժամանակը կարճ է: Վեհափառը պետք է այցելի նաև Ս. Գեորգ Եկեղեցին: Այնտեղ էլ անհամբեր սպասող հավատացյալներ կան, որոնք ցանկանում են ստանալ Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Վերջապես շարժվում է ինքնարժեքների շարասյունը: Արդեն Ս. Գեորգ Եկեղեցու դարբասի առաջ կանգնել ենք: Ինքնաշարժից իջնում է Հայոց Հայրապետը: Այստեղ էլ կրկնվում են ժողովրդական խանդավառ ընդունելության ցույցերը: Նորին Ս. Օծությունը

նը հանդիսավորությամբ առաջնորդվում է Եկեղեցիի շէրաշափառութեամբ, որտեղ արտասանում է հրաժեշտի իր խոսքը:

«Սիրելի՛» և հարազատ ուղիներ Մեր:

Չորս երջանիկ օրերն հետո եկած է անաժամը հրաժեշտի, ու Մենք պիտի մեկնենք: Տեսանք ու հանչցանք ձեզ, ձեր հավատքը, սիրտն ու շատ ազնիվ հոգին: Մեզ շատ կմխիբարե և կոզկուրե մանավանդ ձեր անսահման սերը Մայր Արքունի Ս. Էջմիածնի հանդէպ, որուն հաստատության ու պայծառության համար Մեզ հետ միասին շեմոտենալուքեցին: Մենք ուրախ հոգիով պիտի վերադառնանք, որովհետև ձեզ տեսանք Երջանիկ պայմաններու մեջ շնորհիվ վրացական ազնիվ ու բացսիրտ հյուրընկալության և շնորհիվ հայկական ջանասիրության և ստեղծագործ ոգիին: Մեր երկու ժողովուրդներու եղբայրական միությունը դարձրու ընթացքին նվիրագործված է և ան այլևս պիտի չխախտվի երբեք:

Մենք շնորհակալությամբ պիտի ըսենք, որ ձեր ջերմ, խանդավառ ու գրկաբաց ընդունելությունը Մեզ խորապես հուզեց, որովհետև ա՛յլ ավելի ամրացավ Մեր մեջ այն հավատքը, որ մեր ժողովրդի սրտեն ու հոգիեն էջմիածնասիրությունը հանել կարելի պիտի չըլլա որևէ ժամանակ, որևէ տեղ, որևէ մեկուն կողմէ:

Վստահությամբ կհայտնենք ձեզ, որ ձեր եկեղեցական գործերն ալ աստուծոն քնակնոն ընթացք մը պիտի ունենան: Նորակազմ քեմական խորհուրդը, որ կբաղկանա բարեխիղճ ու գիտակից զգալիներէ, պիտի չխնայէ իր ջանքերը Թրիխսի մեր եկեղեցական կյանքը կազմակերպելու համար քեմական առաջնորդի ղեկավարությամբ: Եկեղեցական գործերու մեջ ոչ ոք անհատական կողմնակի նպատակներ պիտի չհետապնդէ: Այսպէս Աստված պիտի բարկանա: Եթէ սխալներ շարունակվին և ներքին վեճեր հարուցվին, Մենք պիտի չքողոմենք, որ տեսն անոնք: Մենք պիտի հետևենք և պիտի հսկենք, որ այստեղ խաղաղությունն ու սերը բազմաթիւն:

Այժմ Մենք պիտի մեկնենք, սակայն այս բաժանում մը պիտի չըլլա երբեք: Մենք պիտի մնանք կապված մեր սուրբ հավատով և նշմարիտ հայու ազնիվ հոգիով:

Թող Աստված օրհնէ բոլորդ: Ձեզ կմաղթենք երջանիկ կյանք իւ հաջողություն ձեր սուրբ և առաքիլի գործոց:

Մնացե՛ք խաղաղությամբ:

«Երթա՛ք բարով, բարի ճանապարհ», — մտաբերում է իր Հովվապետին՝ իր հավատացյալ հոտը:

Իր խորունկ հուզումը խեղդելով, Նորին Ս. Օծուկունը հրաժեշտ է առնում իր հավատացյալներին:

Ինքնաշարժները, ծափերի խանդավառ տարափի տակ, շարժվում են դեպի Վրաց Կաթողիկոսարանը: Վեհափառ Հայրապետը իր հրաժեշտն է տալու Համայն Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքսիսդէկ Գ. Իննրա անսահմանորեն սիրալիր հյուրընկալության և աղնիվ վերաբերմունքի համար: Վրաց Կաթողիկոսարանում Նորին Ս. Օծուկունը հրաժեշտի առթիվ տրված ողջերթի սեղանի վրա Վեհափառ Հայրապետը հետևյալ սրտառու խոսքերն է ուղղում Նորին Սրբության:

«Ձերդ Մերություն և Վրաց Ս. Եկեղեցու սրբազան հայրեր:

Մենք հինգ օրերն ի վեր Ձեր հյուրը եղանք մեր շխախտով և այդ օրերու ընթացքին Մենք ականատես եղանք ու զգացինք Ձեր ճշմարիտ վրացական հյուրասիրությունը, ազնվությունը, բարեկամությունը և սերը: Մենք Ձեզ անձամբ տեսած էինք և սիրած էինք ամբողջ սրտով: Մեր այս այցելության առթիվ րազմապատկվեց Մեր հարգանքն ու սերը Ձեր ցուցաբերած գերազանց ազնվության համար: Մենք այդ պիտի չլրանենք մոռնալ Մեր կյանքի տևողության ամբողջ ընթացքին: Դուք ամենուրեք Մեզ շրջապատեցին հոգատարությամբ ու գուրգուրանքով, որպեսզի Մենք մշտապես հիշենք այս անմոռանալի օրերը և ուրախ հոգեվիճակ ապրենք: Ներանիկ զգացումով կըսենք, որ Մենք վայելեցինք ցնծազին ժամեր մեր սիրելի հավատացյալ ժողովրդի հետ, և այդ բոլորի համար Մենք հոգեպես երախտապարտ կմնանք Ձեզ:

Մեր այցելությամբ ամրապնդված բարեկամությունը սկզբնավորություն մը չէ անշուշտ մեր բոլոր եկեղեցիներու դարավոր պատմության մեջ: Այսօր սակայն նոր կյանք և նոր իմաստ մը կստանան անցյալ դարերու մեջ բողոքած ավանդը և պատգամը: Երանի թե՛ — ն դարերու ճշմարիտ քրիստոնեական և բարեկամական ոգին վերստին առաջնորդէ մեզ՝ ի շինություն և ի ծաղկում մեր Եկեղեցիներու:

Կրկին անգամ Մեր գոհունակությունն ու երախտագիտությունը կհայտնենք Ձեզ և անհամբեր կսպասենք Ձեր շնորհաբեր ժամանակ Մայր Արքունի Ս. Էջմիածինը:

Այնուհետև խորին հուզմունքով պատասխանում է Նորին Սրբություն Մելքսիսդէկ Գ. Կաթողիկոսը:

«Այնքան եմ հուզված, որ հագիվ թե կարողանամ իմ զգացմունքները արտահայտել: Կասեմ միայն, որ այժմ հոգեկան հրաշալի

վիճակի մեջ եմ և ինձ զգում եմ երջանիկ: Ձեր խոսքերը ունենին խորունկ նշանակություն և իմաստություն: Ամեն ինչ, իմ սրտին մտնիկ ու հաղազատ է:

Շնորհակալություն: Աստված յող Ձեզ երկար կյանք պարգևի»:

Այս փոխադարձ խոսքերով ավարտվում է հանդիպումը Վրաց Կաթողիկոսարանում: Այստեղից Վեհափառ Հայրապետը վերադառնում է հյուրանոց, Կես ժամ անց ինքնաշարժների շարասյունը շարժվում է դեպի կայարան:

Կայարանում ահադին թաղմություն է հավաքված: Վեհափառ Հայրապետի ժամանումը դիմավորվում է ծափահարություններով:

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար կայարան էին եկել Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը, միտրոպոլիտ Եփրեմը, վրաց բարձրաստիճան հոգևորականներ, Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետին առնթրելու Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի լիազոր պարոն Շալուտաշվիլին, Պրավոսլավ եկեղեցու գործերի խորհրդի լիազոր պարոն Մեքորիշվիլին, Թբիլիսիի բոլոր կրոնական համայնքների պետերը և մեծ թաղմությամբ ժողովուրդ:

Բազմաթիվ ծաղկեփնջեր մատուցվեցին Նորին Ս. Օծության, ողջերթի սիրազեղ խոսքերով:

Երեկոյան ժամը 8-ին գնացքը շարժվեց ծափահարությունների ու ողջերթի բարեմաղթությունների տակ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ
ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱՄԻՆ

Հուլիսի 11-ի առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը ժամանում է Երևան: Երևանի երկաթուղային կայարանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել

Մայր Աթոռի ողջ միաբանությունը և պաշտոնեությունը գերապատիվ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանի ղեխավորությամբ:

Վեհափառ Հայրապետին դիմավորում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առնթրելու Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Հրաչյա Գրիգորյանը:

Նորին Ս. Օծությունը անմիջապես մեկնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Վանքի դարբասի մոտ ժողովուրդը խոնված սպասում է Վեհափառ Հայրապետի վերադարձին:

Վեհափառ Հայրապետը, «Հրաշափառ» և «Ուրախ լեր» շարականների երգակցությամբ առաջնորդվում է Մայր Տաճարը, որտեղ ծնրադիր Ս. Իշման Սեղանի առաջ, Իր բարեհաջող վերադարձի համար աղոթք է ասում:

Նորին Վեհափառության բարի գալուստի խոսք է ասում գերապատիվ Տ. Վարդան սրբազանը՝ արտահայտելով ողջ միաբանություն և հավատացյալ ժողովրդի ուրախությունը Վեհափառ Հայրապետի ուղևորության լավագույն հաջողություններին համար:

Այնուհետև գոհունակության խոսք է ասում Նորին Ս. Օծությունը և համառոտակի կանգ է առնում Թբիլիսի Իր կատարած այցելության նպատակների շուրջը:

Ապա Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան «Այսօր Քահանայապետ» շարականի երգակցությամբ:

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է Նորին Ս. Օծության վրահայթեմին տված պատմական այս այցելությունը...

ՄԵՐՈՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱՐՅԱՆ





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՀԵՌԱԳՐԵՐԸ ՎՐԱՍՏԱՆ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՀԵՏՈ**

**ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐԺ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԵԼ-ՔԻՍԵԳԵԿ Գ-ԻՆ**

Ք Ր Ի Լ Ի Ս Ի

Ուրախ սրտով վերադառնալով տուն, Իջման Ս. Սեղանի առաջ ծունկի եկած, Ս. էջմիածնին հաղորդեցինք ողջույնը Ս. Մցխեթայի: Աղորդեցինք նաև Երկնային Տիրոջ՝ Ձերդ Սրբության փառաօղջության, արևշատության և աստվածահաճո գործերի հաջողության համար:

Թո՛ղ Աստված հաստատ պահի և ամրապնդի Վրաց և Հայ եկեղեցիների եղբայրական միությունը:

Մեկ անգամ ևս ընդունեցե՛ք Մեր խորին շնորհակալությունը՝ ջերմ, եղբայրական ընդունելության համար, մինչև Մեր նոր հանգիստը Ս. էջմիածնում:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԵՐԱԳՈՒՑՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԶՈՒԲԻՆԻԶԵԻՆ**

Ք Ր Ի Լ Ի Ս Ի

Վերադառնալով էջմիածին, կամենում ենք մեկ անգամ ևս հայտնել Մեր շնորհակալությունը այն ջերմ ընդունելության համար, որ Դուք, Պարոն Նախագահ, ցույց տվեցիք Մեր նկատմամբ:

Միածնի Իջման Ս. Սեղանի առաջ աղոթում ենք առ Աստված՝ չճաղ Վրաստանի ծաղկման ու բարգավաճման, վրաց ազնիվ ժողովրդի երջանկության ու բարօրության, հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար:

Մաղթում ենք Ձեզ փառաօղջություն և Ձեր շինարար գործերին հաջողություն ի փառս Ձեր Հայրենիքի և Ձեր հարազատ ժողովրդի:

Անկեղծորեն՝

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ՎՐԱՑԱԿԱՆ ԹԱՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏՍՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ
ՊԱՐՈՆ ՇԱԼՈՒՏԱՇՎԷԼ ՈՒՆ

ԹՈՒԼԻՍԻ

Եղբայրական Վրաստանի մայրաքաղաքից էջմիածին վերադառնալով, կամենում եմ մի անգամ ևս անկեղծորեն շնորհակալություն հայտնել Ձեզ՝ Մեր նկատմամբ ցույց արված անկեղծ բնօրինելության համար:


Ձեր չճանաչ երկրից ստացված տպավորությունները երբեք չեն մոռացվի:

Թո՛ղ ծաղկի գեղեցիկ Վրաստանը և կեցցե՛ք՝ վրաց տաղանդավոր ժողովուրդը: Թո՛ղ անի ու ամրապնդվի Հայ և Վրաց եկեղեցիների եղբայրական միությունը:

Օրհնությամբ և բարեմաղբություններով՝

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ո.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ՀԱՅ ԵՎ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Եվ էն Երկու ժողովուրդները, որոնք իրենց պատմությունն սկսում են նրանով, թե Հայկոսը (Հայկը) և Քարթլոսը եղբայրներ էին, մնացել են ու մնում են անսասան՝ կապված իրենց փոթորկալից պատմական ճակատագրով և մեծագույն հիշատակներով, նրանք միաժամանակ են հնարել իրենց գիրը, միաժամանակ են ընդունել քրիստոնեությունը, միասին մշակել թե՛ հոգևոր թե՛ աշխարհիկ գրականությունն ու գիտությունը, միասին կովել իրենց ազատության և մշակույթի համար և միասին նույնիսկ իրենց մեծ տառապանքների մեջ և միշտ բախտակից։



Ժողովուրդների մեծությունը հայտնվում է իրենց հոգևոր կուլտուրայի մեջ, եվ ամեն մի ժողովրդի մեծության առաջին նշանը իր գրականությունն է։

Վրաստանը՝ թե՛ հեռավոր թե՛ նոր ժամանակներում՝ իր գրականությունով միշտ եղել է հառաջադեմ ժողովուրդների շարքում։

Վրաստանի ամեն մի ուրախ տունը կենդանի արձագանք է տալիս եղբայրակից Հայ ժողովրդի սրտում և վրացի գրողի հաղթանակի տունը ուրախության օր է հայ գրողի համար։



Վրացի գրողների համագումարը որոշել է մայիսի 7-ը դարձնել վրաց բանաստեղծության և գրականության ազգային տոնի օր։

Մի վսեմ տոն, երբ մի ժողովուրդ տոնում է իր սիրտն ու հոգին, իր ցեղի հանճարը։

Եվ վրացի ժողովուրդին յատ է սազում էդ տեսակ ազգային տոն ունենալը, նա մի բանաստեղծական ժողովուրդ է, համակված գեղեցիկի քնածին զգացումներով։

Թե՛ ժանոթ ժողովուրդներից և ոչ մեկի մեջ երբևէ նկատելի չեն Երևույթը, ինչ որ տեսնելիս վրացիների մեջ, նրանց գործիչներից շատերը հանկարծ կհանեն իրենց որևէ բանաստեղծի ոտանավորը, որ պահում են իրենց գրպանում և կամ կարտասանեն անգիր, նրանք մինչև վերջին ժամանակներս իրենց ազգիկների բաժինը ու Ռուսավերուսյոնն էին տալիս։

Էսպես է գեղեցկուհիների ու քեֆ ամողների հայրենիքը, էսքան բանաստեղծական ու կենսուրախ, ինչպես միշտ հայտնի էր, և միաժամանակ էսքան լուրջ ու խիզախ, ինչպես երևաց այժմ, երբ հնար ունեցավ։

Սա ամեն անգամ հրճվանքով եմ վերադառնում հայ և վրացի ժողովուրդների դարավոր անօրինակ լավ հարեանությանը...

Եվ ահա, երբ վրացի մայիսի 7-ին տոնում է իր որդու տոնը, իր ազգային բանաստեղծության օրը, անկարելի է, որ հայը էն տեղ չլինի։

Եվ էնտեղ կլինի հայը, ու կլինի ամենից առաջ։

Յնանց էդ գեղեցիկ օրը մեր եղբայր ժողովրդին այցելելու և նրա պայծառ հանճարը հարգելու։

(«Թումանյանի Բնագրություն», Երևան, 1939 թ., էջ 442—445)

ԱՎԵՏԻՐ ԻՍԱՀԱԳՍԱՆ

...Հայերն ու վրացիները արյունակից եղբայրներ էին, ավելի քան 2000 տարվա եղբայրներ, վշտով ու հուսմամբ սրբագործված, միասին տառապել ենք, ստեղծագործել և պայքարել բռնապետությունների դեմ և միասին հաղթանակել:

Եվ այսօր հայ ժողովուրդը, իբրև հարավատ եղբայր վրաց ժողովրդի, բոլոր սրտով ինդակից է իր եղբոր ցնծությանը, հպարտ է նրա հպարտությամբ:

Շոթա Ռուսթավելին համաշխարհային այն եզակի հանճարներից է, որոնց մեջ ամփոփվում են ու բյուրեղանում մարդկության լավագույն իդեալներ, մաքառումները, երազները, իդեալները, որոնց մեջ մարդկությունը հասնում է իր արշալույսին, կատարելությանը:

Այն եզակի հանճարներից, որոնք ջարդ ու փշուր անելով անասնականությունը, եսամոլ ինքնզոհները, շահասիրությունը, եղբայրատենցությունը, տանում են մարդկությանը դեպի ազատություն, անձնվիրություն, սիրո և եղբայրության ներդաշնակ աշխարհը:

Այն դարում, երբ նվաճող քրիստոնեական դիմակի տակ սոսկ նյութական շահի համար շղթայակերծեց խաչակիրների արշավանքը... այդ զարհուրելի արյունարբությունում հնրում էր Շոթա Ռուսթավելու հումանիզմի մարգարեական ձայնը, նրա լայնախոհությունը, իմաստությունը, սիրո երգը: Թեև Շոթա Ռուսթավելին գլխի անցել է ազգային ցանկապատը և դարձել է համամարդկային սեփականություն, բայց և այնպես միշտ մնում է նա վրացական ազգային բանաստեղծ, որովհետև Շոթան ինքը Վրաստանն է, հին, նոր և ապագա Վրաստանը, հավերժական Վրաստանը: Շոթան այն աստղ-արևն է, որի շուրջը դարերով շրջան է արել վրաց բովանդակ կյանքը, նա Վրաստանի հոգեկան աթոռաֆերն է, որով դարեր շարունակ շնչել են վրացիները: Շոթայից ուսանել են հավատարմություն, սեր, քաջություն, ասպետություն: Սովորել են լեզու, ճաշակ, արվեստ, իմաստություն, բանաստեղծություն: Շոթան Վրաստանի հոգու ճարտարապետն է:

Շոթա Ռուսթավելի, Նիզամի, Պաշկին, Շեքսպիր, Հովհաննես Թումանյան, Սուբյեման Ստալսկի, Ջամրուպ, մեկ ներշնչում են հերոսություն, զոհաբերություն, հայրենասիրություն: Այս գեներով պիտի զինենք մենք մեր աշխատավորությունը, մեր երիտասարդությունը: Նրանց պատգամները մենք պիտի մասսայականացնենք մեր գրքով, մեր խոսքով:

(Ա. Իսախանյան, «Երկերի ժողովածու», Երևան, 1951 թ., 4-րդ կառ., էջ 102—104)



Չեմ կարող թաքցնել այն հպարտ զգացմունքը, որ ունեմ այսօր այն լարձր պատվի համար, որ թժախացնում է ինձ Սովետական Վրաստանի գրողների միությունը եղբայրական Վրաստանի այս շքեղ մայրաքաղաքում, ուր անցրել եմ երիտասարդության խանդավառ տարիներս և որը այնքան մոտ է, թանկագին է և միշտ կենդանի է իմ սրտում:

Այս մեծարանքը իմ գրական համեստ գործի հանդեպ և ի դեպս որոշ շափով նաև հայ մեծ գրականության հանդեպ լավամարմի և լավամարմի խոշոր ու մանր փաստերից մեկն է երկու հնադարյան բարեկամ տաղանդավոր ժողովուրդների համակրության, սրտակցության, միմյանց հասկացողության:

Գալով իմ մասին, սիրելի բարեկամներու, ես պետք է խոստովանեմ, որ միշտ էլ իմ վրացի դրյի ընկերները եղբայրական սիրով ընդունել են ինձ, հարգել և հյուրասիրել և ավելին, նյատվել են ինձ, իմ գործերը ներկայացնելով վրաց հասարակությանը անդուհական Շոթայի սքանչելի լեզվով:

Ինչ անկշռելի բերկրանք էի վաշխում ես, երբ անցյալ ամառը շքնաղ Վրաստանում շրջագայելիս հանդիպում էի վրաց ուսանող ե ուսանողուհիների, որոնք ճանաչում էին ինձ և հատվածներ էին արտասանում իմ «Արու-լալա-Մահարի»-ից և «Սասմա Մհեր» պոեմայից, որ այնպես հմտությամբ և սիրով թարգմանել է մեր հարգելի ընկեր Միքել Պատարիձեն:

Ես էլ ունեմ բավական թվով հայացումներ վրաց հոյակապ գրականությունից և գեղեցիկ ֆոնիլորից, և ունեմ նույնպես ինքնուրույն գրվածքներ վրաց հին և նոր հերոսամարտի դրվագներից:

Համաշխարհային պրականություն մեջ եմ ունեմ իմ մշտական սիրելիագույն ուղեղույցները և խորհրդատուները— Հովհաննես Մանգի և Նիկաժի, Բալթոն և Շիլլեր, Գյոթե և Հայնե, Միցկևիչ և Լերմոնտով, և նրանց հետ միասին Շոթա Ռուսթավելի և Բարթալուչի: Նրանք թինք են հանել իմ հոգին և իրենց միջոցով անշափ սիրելի են դարձրել և անշափ հարազատ իմ սրտի համար իրենց հայրենիքները:

Սրբ ես իմ պրական նպատակների համար շրջում էի Կախեթիայում և Իմերեթիայում, տեղն ու տեղը, մայր հողի վրա, տեսնելու տիպեր, կենցաղ, լսելու ֆոնիլորն ու մկուսը— ինձ այնպես թվաց թե՛ վաղուց նայել եմ այդ վայրերում, վաղուց շնչել եմ նրանց հո-

պեկան մթնոլորտում, վաղ մանկությունից շատաչել են ինձ վրա այդ վայրերի դարավոր սոսիսներն ու կաղնիները:

Իհարկե, ամեն մի երկիր ու ժողովուրդ իր ուրույն գեմքն ու հոգին ունի, և այս շատ պնդեցիկ է: Բայց ինչու, ինձ, ոչ վրացու Դա-մար, այնքան ծանոթ և հարազատ էին նրանք: Դա բխում է ենթագիտակցական, խոր զգացական, հին և հնագույն խավերից, որոնք գնում, սուլվում են պատմական և նախապատմական ուշուշների մեջ: Հայ և վրաց ժողովուրդները դարերի սկզբներից՝ միջակայն Մհեր-Ամիրանի շրջաններից, եղել են բազմակիցներ, գործակիցներ: Միասին կերտել են յուրաքանչյուրը պահելով իր ինքնատիպությունը, այն փառավոր, զարմանալի կուլտուրան, որ բովանդակ Առվեստական Միության կուլտուրայի մեջ ամենահինն է անվերապահորեն վկայված:

Միասին գոյության արյունոտ, աննահանջ կռիվ են մղել օտարերկրյա նվաճողների դեմ: Եղել են դաժան ժամանակներ, երբ Հայաստանը վաճան է հանդիսացել մոնղոլական հրոսակների դեմ, իսկ Վրաստանը հրուրըն-

կայող եղրայրության տպավորումն հայերի համար:


Հայտնի է, որ զոյություն է ունեցել երկու ժողովուրդների միջև մի սրրագործված սովորություն. ազգերի պատմության մեջ մի հուզիչ եզակի տիմվու: Որպեսզի ավելի ամրապնդեն եղրայրությունը՝ շատ տեղերում, ուր խառն են ասլրել վրացի և հայ, վրացի մայրերը կաթ են տվել հայ երեխաներին, և փոխադարձը:

Անվերջ կարելի է թվել համագործակցական փաստեր հին, միջին և նոր դարերից... Կուլտուրական փոխադարձ ազդեցություններ և փոխառումներ, թարգմանություններ մեկը մյուսից, մեր երկու բարեկամ ժողովուրդների գիտնական վարպետների փոխադարձ ալցեբություններ:

Այսպիսի սերտ գործակցությամբ պահել են մեր ժողովուրդները իրենց ազգային նվիրակաժ զանձները՝ ոգի, ուժ, լիպու, ֆոյկոր, դրականություն:

(«Առվեստական Վրաստան», Թիֆլիս, 13 փետրվարի 1941 թ.)





ՊՐԱՅ.-ԴՈՒՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ՐԱԿ

(Գիտություն և վաստակավոր գործիչ)

ՀԱՅ-ՎՐԱՅՍԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄԱՌԹՅՈՒՆՆԵՐԸ



այլերի և վրացիների համագործակցությունը գրականության ասպարեզում նույնքան հին է, որքան հին է նույն ժողովուրդների պետականությունը (Բ—Ա. դ. դ. մ. թ. ա.) և քրիստոնեական, մշակութային կցվելը (Գ. դ.). Թեև գրական առանձին սյուժեների լուրջագիտությունը, իրեն հետևանք բառասանդեման և միջպատկերման միասնական պրոցեսի, տանում է մեզ հեռու՝ դարերի խորքերը, երբ հայ-արմենական և քարթվիրական (քարթվելական) ցեղերը դեռ նոր էին ձևավորվել (ի նկատի տանք Մասունցի Դավիթ-ի առանձին գծերը՝ համեմատությամբ վրացական Ամիրանիի պոեզիի հետ և այլն)¹։

Հայ մատենադրության այլևայլ նմուշները տարրեր ժամանակի, սկսած է—Թ. դ. դ. թարգմանվել են վրացերեն։ Այսպիսիք են Ագաթանգեղոսի, Փավստոսի, Փարպեցու, Խորենացու և Օրբելյանի պատմություններից թաղած գլուխները կամ պատմությունները, որոնք՝ իրաց առնելով Օրբելյանից՝ թարգմանվել են այսպես կոչված Տայք-Կոլարջյան քաղկեդոնիկ դպրոցի դործունեության գծով։ Միաժամանակ, այդ դպրոցի շնորհիվ է, որ վրաց գրականությունը հարստանում է փիլիսոփայական-բնագիտական գրվածքների թարգմանություններով հայերենից (Սյակիան Կիպրոսցի, Գրիգոր Նյուացի և այլն)։ Նույնը պետք է ասել և ուսուրի ու հայ ուրիերի և վկաների վարք-վկայությանությունների

մասին, որոնք մի ժողովածուի մեջ են ամփոփված Աթոնի Իվերոն վանքի հավաքածուում։

Հայ և Ղրաց քաղկեդոնիկ գրականության ազգակցության տեսակետից բնորոշ է, որ Խորենացին, ըստ Թ. դարու վրաց պատմիչի (Արսեն Սափարացու), քաղկեդոնիկ է ներկայացրած, իսկ Դավիթ Անհագթը, հայերից անարգվելով, ըստ Առաքել Այունցու ցուցմունքի, վրաստանում է գտնում աղաստան, որ և մնում է ցմահ², Ի դեպ, նշենք, որ մյուս Դավիթն էլ՝ Սառունցին, անհագթ-նկրից անհագթը, ըստ հայ ժողովրդական վեպի, Գյուրջաստան—վրաստան է ուղևորվում իր փահլանների համար սիրուն հարսնացուներ որոնելու նպատակով։

Հայ-վրացական փոխհարաբերությունների պատմության յուրավոր էջերն է կազմում Հաղթա-Սանահինյան գրական-գիտական իրարից իր ճյուղավորություններով (Հաղարձին, Գևորգ, Դոշափանք, Խորանաշատ և այլն)։ Հայտնի է Հովհաննես Սարկավազ վարդապետի մեծ հոշակը վրաց արքունիքում՝ Դավիթ Շինոզի օրոք, երբ նա մասնակցում է Թրիխսիում 1123—1125 թվականներին գումարված վրաց-հայկական եկեղեցական ժողովին՝ իրեն պարագլուխ «Հայ եպիսկոպոսների ու վարդապետների, որոնց պարծենում էին նրանով, թե ինչպես իրենք «ասել են ուսման և գիտությանը դադաթնակետին» (ըստ վրացական աղբյուրի)։ Մասնավորապես Սարկավազի գործերից

¹ Տե՛ս մեր «Արամավազ և Մհերի հետքերը վրաստանում», «Քաների էջմիածնի գիտական ինտախուսի», I—II, 1921—1922 թ. թ., էջ 93—104։

² Տե՛ս մեր «Դավիթ Անհագթի վրաստանում լինելու հարցի շուրջը», «Գրական-բանասիրական հետազոտություններ», I, Երևան, 1946 թ., էջ 243—267։

հայտնի է սվասն շարժման և սասանու-
թեան երկրի՝ Երկասիրույթունը, որ նա գրել
է վրաց մի եպիսկոպոսի խնդրով (ի նկատի
ունենց ժառանգութեան վրաց եպիսկոպոսի
Սարկիսի վարդապետէն՝ Գրիգորով յազգս
ամենալաւ, եթէ զիս՝ որ ունի երգ սաղմոսի
ասացեալ... Դու խորտակեցեր գգուիս վիշա-
պաց և այլն, որ հասել է մեզ նրուապիսի
Ս. Հակոբյանց մատենադարանի մի հազվա-
գյուտ ձեռագրում³։ Սարկիսի վրաց, անշուշտ,
ծանոթ պիտի լիներ հիշյալ ժողովի մասնա-
կից՝ վրաց աստվածաբան և փիլիսոփա
Արսեն Իղալթոյեցու հետ։

Նույնպիսի հույսի թամար թագուհու օրոք
(1184—1213 թ. թ.) ստացել է Մխիթար Գո-
շը, որի «Դատաստանագիրք» Հայոցը-ն ու
«Գծագրութիւն... յազգս վրաց» երկերը վրաց
լեզվին և գրականութիւն քաղաքանոթ հեղի-
նակի գրչից ելած գործերի տպավորութիւն
են թողնում։

ԺԲ դարում վրացերենից հայերեն է
թարգմանվում վրաց տարեգրութիւն (Թարթ-
իս-ցխովերբաս-յի) հնագույն խմբագրու-
թիւնը⁴։ Հայերեն թարգմանութիւնը ծանոթ
է ԺԲ դարու հայ պատմիչ Մխիթար Անեցիին,
իսկ վերջինիս միջնորդութիւնով նաև ԺԳ
դարու պատմիչներ Վարդան Արեւելցին,
Մխիթար Այրիվանեցիին և Ստեփանոս Օր-
բելյանը, որոնք միաբերան (բացի Այրի-
վանեցուց) տալիս են Թարթիս-ցխովերբա-
նունը հայատառ գրութիւնով։

ԺԲ—ԺԳ դարերում Հայաստանում ծաղ-
կում էր Պղնձահանքի (այժմյան Ախտալան
կամ Միղրաձորը) գրական-գիտական դպրո-
ցը, որի կարկառուն ներկայացուցիչն էր
Միմեոն Պղնձահանքեցի⁵։ Վերջինիս աշ-
խատասիրութիւնով, խմբագրութիւնով և, առ-
հասարակ, ղեկավարութիւնով կատարվում
էին փիլիսոփայական բնույթի գրվածքների
թարգմանութիւնները վրացերենից՝ ԺԱ—ԺԲ
դարերի վրաց հռչակավոր փիլիսոփա Իոանն
(Հովհան) Պետրիժի գրական ժառանգու-
թիւնից։

³ Հրատարակել ենք մենք «ՍՍՐՍՄ Գիտութիւնների
ակադեմիայի հայկական ֆիլիալի հեղինակութեամբ», 1943
թ., № 1, էջ 78—80։ Տե՛ս նաև Գաբրիել Ա. Կաթողի-
կոսի «Հիշատակարանը ձեռագրաց-ի մեջ, Անթիոք»,
1950 թ.։

⁴ Հրատարակվել է երկիցս՝ Վենետիկում 1884 թ.
Աթանաս վարդապետ Թրդուանի խմբագրութիւնով և
Թրիլիսիում 1953 թ. պրոֆ. Իլիա Արուսեանի աշխա-
տասիրութիւնով։

⁵ Այս Սիմեոնի մասին մանրամասն տե՛ս Ներսէս
վարդապետ Ակինյան, «Սիմեոն Պղնձահանքեցի և իր
թարգմանութիւնները», «Հանդէս ամսօրեայ», 1947—
1949 թ. թ.։

ԺԷ—ԺԸ դարերում վրաց քերականագի-
տական և բառարանային գրականութիւն
վրա որոշ ազդեցութիւն է ունեցել համա-
պատասխան հայ գրականութիւնը, ինչպես
այդ վաղուց ապացուցել է պրոֆ. Ա. Յագա-
րեխին։ Վրաց հռչակավոր առակախոս և
բառարանագիտ Սուխան-Սարա Օրբելյանին
իր «Բառարան»-ի առաջաբանում ճշտում է,
որ ի թիվս այլ աղբյուրների՝ նրա ձեռքի
տակ է եղել հայերեն «Բառգիրք»-ը Պրոֆ.
Իլ. Արուսեանի հետոգոտութիւնով ստուգվեց,
որ Սարա Օրբելյանի այդ աղբյուրը եղել է
1666 թվականին Ամստերդամում հրատա-
րակված հայերեն Աստվածաշնչին կցված
ցանկը։

ԺԷ—ԺԸ դարերում վրաց գրականութիւն
բարգավաճման որոշ լսելով նպաստել են
մի շարք հայազն գործիչներ, օրինակ Գեորգի
ԺԱ թագավորի դիվանագիր Քեղթարեզը, որ
հայտնի է իբրև բանաստեղծ և սվազերնա-
վոր՝ ի արտագրող. Քիթը կտրած՝ Փեղանդ
Փաշվի-Քերտաձե (Քիթարով), որ հեղի-
նակն է երկու պոեմի՝ «Շահնավապիանի»-ի
և «Փիրմալիանի»-ի (վերջինս, դժբախտաբար,
մեզ չի հասել)։ Վրացախոս և մահմեդակա-
նացած Փարսադան Գորգիլանիձե, որ կազ-
մել է ստույգ Վրաստանի պատմութիւնը և
համեմատական բառարան. Գեորգ վարդա-
պետ Կակարենց, որ, լինելով Կտուց անա-
պատի (Վասպուրական) միաբան՝ վրացերեն
է թարգմանել Գրիգոր Տաթևացու և Ղազար
Ջահկեցու երկերից քաղած առանձին գլուխ-
ներ, նաև գրել է մի շարք բանաստեղծու-
թիւններ վրացերեն և հայերեն⁶։

ԺԸ դարու սկզբներին Վախտանգ Զ թագա-
վորի հրամանով հայերենից թարգմանվում
է վրացերեն այսպես կոչված ասորա-հոռ-
մեական դատաստանագիրքը, ինչպես և Մխի-
թար Գոշի «Դատաստանագիրք» Հայոցը-ը,
որոնք կազմելով միաձուլ «Հայոց օրենս-
գիրք»-ը⁷, մուծվում են նույն Վախտանգի
օրենքների ժողովածուի մեջ։

Սույն ԺԸ դարի ընթացքում վրացերեն են
թարգմանվում Վենետիկի Մխիթարյանների
առանձին գործերը, օրինակ՝ Մխիթար վար-
դապետ Սեբաստացու քերականութիւնն ամ-
բողջապես (նույնի «Հայկազեան Բառա-
րան»-ն ևս թարգմանված է, սակայն շատ ուշ՝
ԺԹ դարի վերջերք), այլև նույնի քերակա-
նութիւնն կցված ցանկը՝ վերածվելով հայ-
վրացերեն բառարանի, որից մի քանի ձեռա-
գիր օրինակ է հասել մեզ, ապա Միքայել
վարդապետ Զամյանի «Պատմութիւն Հա-

⁶ Տե՛ս մեր «Վրաց աղբյուրները Հայաստանի և հա-
յերի մասին», հատ. III, Երևան, 1957 թ.։

⁷ Տե՛ս մեր հրատարակութիւնը Թրիլիսի, 1927 թ.։

յոց»-ը, որից մեզ հասել են միայն Բ հատո-
րի մի շարք գլուխներ, Ղուկաս վարդապետ
Ինճիճյանի աշխարհագրության դասագրքից
մի պատահիկ և այլն: Թարգմանությունների
նախաձեռնողներն են արքայազն Անտոն Ա
կաթողիկոսը, հայ քահանաներից Փրիլպատ
Հայթմադյանը, որ մի ժամանակ Թրիխսի
սեմինարիայի «սքոլապետ»-ն էր, այսինքն
ռեկտորը, Տեր Պետրոսը, Տեր Սամվելը և
ուրիշները, որոնց աշխատասիրությանը
թարգմանվում են նաև «Ախարադին», «Կա-
րարդին», «Զիարուժարան»-ներ և այլն:
Ինքն Անտոնը անձամբ ծանոթ է Ղազար կա-
թողիկոս Զահկեցուն ու վերջինիս «Դրախտ
ցանկալի» կոչված գրքին, որ հիշում է իր
գրվածքում, ինչպես նաև Կղեմես Գալանոսի
մի աշխատությանը, որի անունը չի տալիս:
Այսպես թարգմանվում է նաև Վարդան Այ-
դեկցու «Աղուէսագիրք»-ը:

Վերոհիշյալ վախտանգ Զ-ի արքունիքի
հետ էր կապված, ի միջի այլոց, նազաշ-
նովնաթանը, որը Թրիխսիումն էր հորինել
իր «Գյուրջատանա գողպներ» սքանչելի քա-
նաստեղծությունը: Իսկ Հերակլ Բ-ի պալա-
տական երգչին էր, ինչպես հայտնի է, մե-
ծագույն աշուղ-քանաստեղծ Սալաթ-նովան,
որը մի տեսակ շաղախ էր անդրկովկասյան
ժողովուրդների համերաշխության և եղ-
րայրության: Սալաթ-նովայի հնանորդն էր
Շամի-Մեկոն, որը քանաստեղծություններ է
հորինել թե՛ հայերեն և թե՛ վրացերեն:

Գալով նոր շրջանին և ԺԹ—ի դարերին,
պետք է նշել, որ հայ-վրացական գրական
կապերի հաստատման գործում որոշ առա-
ջադիմական դեր է խաղացել, նախ, Ներսիս-
յան դպրոցը, ուր մի ժամանակ, ի թիվս այլ
առարկաների, դասավանդվում էր և վրացե-
րենը և ուր, ի միջի այլոց, մի քանի տարվա
ընթացքում ուսուցչություն են արել վրաց
հայտնի պատմաբան-հնագետ Պլատոն Խո-
սելիանին և Սուխանովը: Ապա նշելու է
հայ և վրաց մամուլի, գրական հաստատու-
թյունների և թատրոնի դերը:

Խ. Արովյանի հանճարը ծաղկեց ու րաց-
վեց Թրիխսիում, ուր գրվել են նրա «Վերք
Հայաստանի»-ն, «Օմսանա»-ն, «Թուրքի
աղբիկ»-ը և այլն: Սրանցից վերջինի սյու-
ժեն րացարձակապես Թրիխսիի կյանքից է
վերցրած: Իսկ Արովյանի վրացի ընկերնե-
րից Զուրաբաշվիլու անունը Ենթադրի
օրինակ և Զուլիֆտա»-յի վրացերեն թարգ-
մանությունն հրատարակության հետ է կապ-
ված:

Այլ Խավճավաձեի «Գրուկչա»-ն, որ ի նկա-
տի ունի Սեանա լիճը, և Ն. Բարաթաշվի-
լու «Թարթիլի ճակատագիրը», անշուշտ,
ձայնակցում են Արովյանի «Վերք»-ին, ու-

րոնք միապիս վերցրած՝ միևնույն դարաշրջ-
անին նվիրված ու միանման ցավերը ցու-
ցաբերող գրվածքներ են:

ԺԹ դարի գործերի հայերից հայտնի է Ստե-
փան Փերշտանովը, իրեն վրաց քանաստեղծ,
և Զուրաբ Անտոնովը, իրեն վրաց շնորհալի
գրամատուրգ, որի «Արևի խավարումը» կա-
տակերգությունը արտացոլում է նույն մի-
ջավայրի, որը մի քիչ հետո տևեց Գ. Սոմ-
գուկյանի և Ա. Ցաղարեղի պիեսների շար-
քը: Սակայն Սոմգուկյանն, իրեն հայ թու-
տերագիր, նույնպես սիրելի է և վրացիե-
րին, որոնք ժամանակին թարգմանել են
նրա գրեթե բոլոր պիեսները:

Առանձին սիրով և խնամքով թարգման-
վել են արձակագիրներից Բաֆֆին, Եր-
վանդադեն, իսկ քանաստեղծներից Թու-
մանյանը, որի Վրաստանին նվիրված տ-
տանալիորները, սրտեմ-բալլադները, հե-
քիաթները և այլն վրաց թարգմանական
գրականության զարդն են կազմում:

Նմանապես հայ ընթերցողին սիրելի են
վրաց կլասիկների երկերը՝ Ա. Ղազրիդի,
է. Մինոշվիլու, Վաթա Փշավելայի և ուրիշնե-
րի, որոնց հայերեն թարգմանությունները
մասամբ հրատարակված են:

Նախապատերազմյան և հետպատերազմ-
յան տարիների ընթացքում տեղի ունեցած
հույսերնական տոնակատարությունները
վզալի լափով նպաստեցին հայ և վրաց
գրականությունների մերձեցմանը:

1937 թվականին Շոթա Ռուսթավելու հո-
բելյանի կապակցությամբ հայ հասարակու-
թյունը ստացավ «Կարենավոր»-ի ամբող-
ջական թարգմանությունը (Գ. Ասատուրի):
Նույն թվականին Իլիա Ժավճավաձեի հո-
բելյանի առնչությամբ հրատարակվեցին
հայերեն նրա ընտիր երկերի ժողովածու-
ները Թրիխսիում և Երևանում: 1940 թվա-
կանին, Ակակի Մերեթիլու հոբելյանի առ-
թիվ, հրատարակվեցին հայերեն նրա ընտիր
երկերի ժողովածուները Թրիխսիում և Երե-
վանում: 1945 թվականին, Ն. Բարաթաշվի-
լու հոբելյանի առթիվ, Թրիխսիում հրատա-
րակվեց հայերեն նրա «Հաղորդություն»-ը, իսկ
1848 թվականին Երևանում՝ Այ. Ղազրեղի
«Պատմվածքներ»-ը, ապա 1941, 1951 և
1956 թվականներին՝ հաջորդաբար Ի. Գրի-
շաշվիլու «Հատընտիր»-ը, նվաճապես շա-
րունակ նաև ուրիշ գրողների երկերը:

Մյուս կողմից, 1939 թվականին, Թուման-
յանի հոբելյանի կապակցությամբ լույս ըն-
ծալվեցին նրա «Ընտիր երկեր»-ի, «Թմկա-
քերդի առում»-ի և «Հեքիաթներ»-ի վրացե-

Յ ՏՏ՝ Ի. Գրիշաշվիլու խմբագրությանը լույս տե-
սած միահատորակը, Թրիխսի, 1950 թ.:

րեն թարգմանությունները, ինչպես և Գ. Դոդոխյանի երկերի առաջին հատորը հայերեն և վրացերեն (վերջինս՝ այժմ հանգուցյալ պոետ Ի. Բեգլարովի աշխատությունը), Նույն թվականին, «Սասունցի Դավիթ»-ի հորելյանի օրերին, վրաց հասարակությունն ստացավ հայկական վեպի ամբողջական թարգմանությունը՝ կատարված տասնամյակների կողմից, նմանապես պոետին ու նրա էպոսային նվիրված հատուկ ժողովածու Թրիլիսի Պետհամայնական հրատարակությամբ, որ, ի միջի այլոց, դետեկտիվ է Լ. Թումանյանի «Սասունցի Դավիթ»-ի և Ա. Իսահակյանի «Սասնա Մհեր»-ի թարգմանությունները:

Վերջին տարիների ընթացքում վրաց ընթերցող հասարակությունը ստացել է վրացերեն թարգմանությամբ Լ. Թումանյանի և Ա. Իսահակյանի «Հատընտիլ»-ները (առաջինի՝ 1924, 1930, 1938, 1946 և 1956 թ. թ., երկրորդի՝ 1955 թ.), Ա. Շիրվանզադեի «Նամուս»-ը (1931 և 1948 թ. թ.) և «Քառս»-ը (1953 թ.), Երուն Թորգոմյանի «Հատընտիլ»-ը (1948 թ.), Գարեգին Սեփուրի «Թեհրան»-ը (1955 թ.), Վախտանգ Անանյանի «Սեփուրի ափի»-ը (1956 թ.) և այլն:

Վրաց ընթերցողը առանձին սիրով է վերաբերվում Գ. Բաշինջաղյանին, որի ծնունդ-

յան հարյուրամյակը նշվելու է սույն տարվա սեպտեմբեր ամսին:

Հայաստանի Ստալինական գրողների միության օրգան «Գրական թերթ»-ը (ներանք) և վրացական «Գրական թերթ»-ը (Թրիլիսիում) պարբերաբար նվիրում են իրենց էջերը՝ առաջինը վրաց գրականության խնդիրների տեսությունը և վրաց գրողների գոհարների ժողովրդականացմանը հայ հասարակության մեջ, իսկ երկրորդը՝ հայ գրականության խնդիրների լուսարտնմանը և հայ գրողների գոհարների ժողովրդականացմանը վրաց հասարակության մեջ: Բացի դրանից, փոխադարձ համաձայնությամբ, 1953 թվականին «Սովետական գրականություն» և «Իրավաստ» ամսագրի № 8-ը ամբողջապես նվիրվեց վեպ վրաց սովետական գրողներից թարգմանված նմուշներին, ինչպես և «Մնաթուխ» ամսագրի № 8-ը ամբողջապես նվիրվեց սովետահայ գրողներին:

Այսպիսով վրաց գրականության գոհարները հետզհետե մտնում են հայ գրականության փանծարանի մեջ, ինչպես և հայ գրականության դուռները՝ վրաց գրականության զանազան, նպաստելով ժողովուրդների բարեկամության և համերաշխության վեհ դադափարին:





ՆԵՂԻՇԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԴԱՅԱՆ

ԳՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՎՐԱՍՏԱՆ



Երանց Նեղիցիին արեւելյան քրիստոնէութեան հնադուին եկեղեցիներէից մեկն է։ Ըսա վրաց պատմական աղբյուրներէ, Վրաստանում քրիստոնէութեան քարոզութեանը և պետական կրօն հռչակվելը կապված է Ս. Նունե կույսի անվան և քարոզութեան հետ։

Գրաւում Ս. Նունե կույսի առաքելութեամբ և քարոզութեամբ, քրիստոնէական կրօնի լույսը ծագեց նաև վրացական հողի վրա։

Գրաի սկզբին, կոր Հայաստանում քրիստոնէութեանը պետական կրօն հռչակվեց Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռամբ, Տրդատ Գ-ի օրով, Վրաստանում նույնպէս կային քրիստոնէական դաշտերի համայնքներ։ Մինչև այդ պատմական մեծ եղելութեանը, ինչպէս ասուտ կերպով մեզ վկայում են հայոց և վրաց աղբյուրները, Հայաստանում գործում էին, Ս. Հռիփսիմյանց և Ս. Գայանյանց անուանով, 70 քրիստոնէա կույսեր, որոնցից 37-ը հայոց Տրդատ Գ թագավորի հրամանով մարտիրոսության պատկ ընդունեցին, իսկ մնացածները ցրվեցին հարևան երկրներ քրիստոնէութեան քարոզելու նպատակով։ Վերջինների մեջ էր Ս. Նունե կույսը, որը Վրացապետից անցավ Վրաստան և քարոզեց, ապա նահատակվեց և կոչվեց իրավամբ Վրաստանի լուսավորիչ։

Հայաստանում քրիստոնէութեան մուտքն ու պետական կրօն հռչակվելը, այլ խոսքով «Հայոց դարձ»-ի պատմութեանը մեզ ավանդել է Ագաթանգեղոսը իր պատմութեան մեջ։ «Վրաց դարձ»-ի պատմութեանն էլ մեզ է հասել վրացերեն «Մարցկալ Քարթլիսայ» կամ «Քարթլիս Մարցկալ» կոչված երկու տաշրերակներով, Վրաց դարձի պատմութեան ա-

ռաջին տարբերակը՝ «Շատրերդի վարիան»-ը՝ խմբագրված է 973—976 թվականներին Շատրերդ վանքում, իսկ երկրորդը՝ Ճելեշի վարիանը՝ համանուն վանքի ձեռագրում ավելի ուշ շրջանում։

«Վրաց դարձ»-ի պատմութեան երկրորդ տարբերակը հատկապէս խոսում է Ս. Նունե կույսի վարքի և քարոզութեան մասին։

«Այն օրվանից (Կոստանդիանոս կայսեր պարտվելուց, 310 թ.) տասներորդ տարին գնաց Հեղինե (կայսրուհին) նրուսաղեմ [Քրիստոսը] պատվական խաչը փնտռելու, և տասնչորսերորդ թվականին մի ինչ-որ պատճառով փախուստի դիմեց արքունի կանանցից մեկը՝ անոճով Հռիփսիմե, իր դայակով հանգերձեմ նրա հետ գտնվում էր ոմն գեղեցիկ գերուհի, անունով Նունե (նինո), որի գործունեութեանը հետադուտ էր Հեղինե թագուհին և էր նա (Նունեն) իշխանուհի Հոռմից, որը ինքն էր սկսել իր ճանապարհորդութեանը՝ բուժելով [հիվանդներին] և հասել Հունաստան. նա (ինքը) յուսուցանում էր իր իշխանուհի Հռիփսիմեին։

Անցնելով ծովով՝ Հռիփսիմե, Գայանի, Նունե և նրանց ուղեկիցները մտան Հայքի (Սումխիթի) սահմանները [Տրդատ] թագավորի բնակատեղը և բոլորը՝ մարտիրոսացան այնտեղ։ Մնաց միայն Նունեն, որն ուղեորվեց հյուսիսային լեռների ուղղությամբ։

Նունեն Տրդատի հալածանքների ժամանակ մնում է «Վարդենիի փշերի մեջ... և չորրորդ ամսին անցա [Ջավախիթի] լեռների կողմը, որպիսով տեղեկանամ, թե ո՛ւր է Մցխեթան...»։

1 Տե՛ս այս մասին պրոֆ. դոկտ. Լ. Մելիքսեթ-բեկի «Վրաց տղայութեանը Հայաստանի և հայերի մասին», 1 հատ., Երևան, 1931 թ., էջ 18։

Ս. Նունեն կույսի քարոզության կենտրոնն էր վրացական մայրաքաղաք Մցխեթան, որտեղ հին աստվածներն էին տիրապետում և թագավորներն էին իշխում։ Ս. Նունեն կույսը հաստատվելով թագավորանիստ Մցխեթայում, քարոզում և բժշկություններ է կատարում, Վրաստանում իր առաքելության առաջին շրջանում նա բժշկում է վրացական ամենաազդեցիկ բզեշխերից մեկի՝ Մցխեթայի Միհրան իշխանի կնոջը, որով իր վրա է հրավիրվում այդ ազդեցիկ բզեշխի ուշադրությունը և հետաքրքրությունը։

Ահա թե ինչ է գրում վրացական ազբյուրը պատմական այդ եղելության մասին.

«Կին ոմն, անուն Նունէ, լընկերաց Սրբոց Հոհիսիմեանցն ի ցրուելոցն, փախստեամբ հասեալ յաշխարհն Վրաց ի Մցխեթա, ի նոցա քաղաքն նախագահ, յոյժ ճգնութեամբ սաացեալ շնորհս բժշկութեան, որով և րազում անտառէտս բժշկեալ, և պիտվին զկին Միհրանայ առաջնորդին վրաց...»

Երևի երանելոյն Նունէի խնդրեալ արս հաւասարիմս յղեաց առ Ս. Դիդգու, երբ զինչ հրամայեցէ նմա գործել այնուհետև (ընդգծումը մերն է— Ս. Վ.)։ Քանզի յօժարութեամբ ընկալան Վիրք գաղտնաբերին Անտարանին, Եւ հրաման ընդունի՝ կործանել զկուռսն, որպէս ինքն արար և կանգնել զպատուական նշան խաչին մինչև ցօր տալոյ Տեառն հովիւ յառաջնորդութիւն նոցա։

Քրիստոնեական գաղափարների վերջնական հաղթանակից հետո, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Վրաստանի և Աղվանից աշխարհի համար, որպես հովիվ ուղարկում է Պահլավունիների տոհմից պատանի ամենաանձնաճիւղի Գրիգորին։

«Երանելի հնգետասանամեօց ձեռնադրեալ յնախկնպոսութիւն զմանուկն Գրիգորիոս Վրաց և Աղուանից աշխարհին (ընդգծումը մերն է— Ս. Վ.) և կրթեալ լուսաւորէր զերկոսին զաշխարհսն և հաստատէր քրիստոնէական հաւատովն զնալ, շինէր և եկեղեցիս ըստ կարգաց և քաղաքաց և ձեռնադրէր զերիցունս, յորդորէր ի պաշտօն սրբութեան և իշխանակ սրբոց կանխել հանապազմ»։

Այսպես ուրեմն, Վրաստանը պաշտոնապես և պետականորեն լուսավորվեց քրիստոնեական ճշմարիտ լույսով Ս. Նունեն կույսի ջանքերով և քարոզությամբ։

2 Մովսես Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Վեներտի, Գիրք Բ, գլ. 22, էջ 334—336։

3 Մովսես Կաղանկատվացի, «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1880 թ., գիրք Ա, գլ. ԺԳ, էջ 29։

Այդ երջանիկ որերից սկսվում է Հայ և Վրաց եկեղեցիների սերտ համագործակցությունը, որը շարունակվում է մինչև Կյուրիոնի Կաթողիկոսի օրերը, 608 թվականին երբ «Կյուրիոն վրաց կաթողիկոսը, թեև Հայոց Հայրապետանոցին մեյ սնած ու հասունացած, Հայոց Աթոռն բաժնվելու գաղափարը ունեցավ... Վրաց եկեղեցին, Կյուրիոնի զբլխավորությամբ, քաղկեդոնական դավանության աշակերտեցավ և հունական եկեղեցվուն խառնվեցավ»։

Մինչ այդ երկու եկեղեցիների միջև հաստատվել էին սերտ համագործակցություն և սիրալիր բարեկամական հարաբերություններ։ Վրացիք աստվածաբանական հարցերում միասին էին Հայ եկեղեցու հետ, մասնակցում էին միջ-եկեղեցական բարեկարգչական ժողովների՝ որպես մի և նույն Ընդհանրական, Առաքելական եկեղեցու անդամներ։ Վրաց կաթողիկոսները ձեռնադրվում էին Հայոց կաթողիկոսից։

Վրաց ժողովրդի համար Ս. Էջմիածինը նույնքան նվիրական և սրբազան էր, որքան Մցխեթայի իրենց կաթողիկոսանիստ Մայր եկեղեցին։ Ամեն տարի երկուստեք (Հայոց և վրաց կողմից) ուխտագնացություններ էին տեղի ունենում Ս. Էջմիածին և Մցխեթայի կաթողիկոսանիստ Մայր եկեղեցին։ Այսպիսով երկու հարևան եկեղեցիների և ժողովուրդների միջև հաստատվեց էր սերտ բարեկամություն և միասնություն։

Ոչ միայն այսքան, Երկու ինքնուրույն ջուրը եկեղեցիների բարեկամությունը այնօրեան սերտ է եղել և այնքան խորը, որ 506 թվականին, երբ Հայոց Քարգեն կաթողիկոսը եկեղեցական ժողով է գումարում Դվինում նգովելու համար Լևոնի տոմարը, Հայոց Հայրապետի կողքին հավասար դիրքով նստած է լինում նաև Համայն Վրաց Գարբիել կաթողիկոսը իր 23 արքեպիսկոպոսներով և եպիսկոպոսներով։ Այս բոլորը գալիս են լավագույն կերպով հաստատելու, որ երկու դրացի ժողովուրդները եկեղեցական խնդիրներում էլ ժի բանա հաւատոյ, յաւանդութեան ուղղափառ եկեղեցւոյ ի միութեանն էին։

Հայ և Վրաց եկեղեցիների այս մտերմ բարեկամությունը շարունակվեց մինչև 608 թվականը, երբ Վրացական եկեղեցու գահի վրա բարձրանում է Կյուրիոն Կաթողիկոսը, որը Դվինի հայոց Մայր եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից էր և շատ լավ դիրք հայոց լեզուն ու հայոց պատմությունը։ Այս նույն հայրապետի ժամանակ քաղ-

4 Օրմանյան, «Հայոց եկեղեցի», 1911 թ., էջ 833։

կեդոնական ազդեցությունը ուժեղանում է Վրաստանում և Վրաց Եկեղեցին քաղկեդոնականություն ընդունելով միանում է Հույն Օրթոդոքս Եկեղեցուն, բայց որպես եկեղեցի կառավարվում է իր ներքին օրենքներով, պահելով իր վարչական-կազմակերպական ինքնուրույնությունը:

Վրաց ժողովրդի և Վրաց Եկեղեցու գլխավոր անցնում են դարերի փոթորիկները: Վրաց Եկեղեցին էլ Վափասար չափով և հերոսությամբ բաժանում է իր ժողովրդի վաշտներն ու սակավ ուրախությունները: Վրաց լեզուն ու գրականությունը, մշակույթն ու արվեստները պարզանում են Վրացական եկեղեցու հովանու տակ: Վրաց Եկեղեցին նախախնամական դեր է կատարում վրաց ժողովրդի կյանքում: Այսպես անցնում են դարեր:

Մինչև ԺԴ—ԺԵ դարերը Վրացական Եկեղեցին պաշտոնապես ուներ եկեղեցական մի Գլուխ և Աթոռ, որը կառավարում էր Վրաց Եկեղեցուն: Սակայն երբ Վրաստանում սկսվեց մասնատվել և քայքայվել քաղաքական կենտրոնաձիգ իշխանությունը, այդ իսկ պատճառով մասնատվեց նաև Վրաց Եկեղեցին: Ստեղծվեցին երկու Աթոռներ, որոնցից մեկը՝ Քարթլիի կամ Մցխեթայի Աթոռը՝ Մցխեթայում, իսկ մյուսը՝ Ախթալ-Իմերեթիայի Աթոռը՝ Պիցունդա-Պիցմիդայում, Սև ծովի ափին, ներկա Գագրի քաղաքի և Գաղսթայի միջև:

Կազմակերպական տեսակետից Վրաստանում չափվում էին 13 եկեղեցական մեծ թեմեր: Այս վիճակը շարունակվում է մինչև 1801 թվականը, երբ Վրաստանն անցավ ռուսական տիրապետության տակ և Վրաց Աղաթին Եկեղեցին այլևս առանձին գոյություն չունեցավ:

1811 թվականին վերացվեցին վրացական ղույգ Կաթողիկոսական Աթոռները և ստեղծվեց Ռուսական Պրավոսլավ Եկեղեցու Սինոդի անմիջական հսկողության տակ Վրաց Եկեղեցու էկզարխություն, էկզարխը միաժամանակ համարվում էր Սինոդի մշտական անդամ և Քարթլիի և Կաթեթի արքեպիսկոպոս կամ միսրոպոլիտ: 1811 թվականից հետո Վրաց Եկեղեցու առաջին արքեպիսկոպոսը Նդել է Ախթալայի արքեպիսկոպոս Վաղյամը: Այդ օրերին Վրաստանը բաժանված էր եկեղեցական հինգ մեծ թեմերի, այն է՝ Վրաստանի, Իմերեթիայի, Սուխումիի, Գուրես-Մենգրելիայի և Վրդիկովկասի:

1917 թվականի մարտի 12-ին (25-ին) վերականգնվեց Վրացական Եկեղեցու ինքնա-

գրիտությունը (ափսոսանքալիությունը) և Վրաց Եկեղեցու գլուխ Իշակվելը Համայն Վրաց Կաթողիկոսը, որը միաժամանակ Մցխեթա-Քրիլիսիի Եպիսկոպոսապետն է, աթոռախոսունենալով Քրիլիսի մայրաքաղաքը, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Սերգեյը 1943 թվականին պաշտոնապես ճանաչեց Վրաց Եկեղեցու ինքնագլխությունը:

Վրացական Եկեղեցու ինքնագլխությունը վերականգնվելուց հետո, Վրաց Եկեղեցու կաթողիկոս-պատրիարքներ են եղել Կյուրիոս Դ-ը (1917—1918 թ. թ.), Լեոնիդ Ա (1918—1921 թ. թ.), Ամբրոսի Ա (1921—1927 թ. թ.), Քրիստաֆոր Բ (1927—1932 թ. թ.), Կալիստոս Ա (1932—1952 թ. թ.) և Մելքիսեդեկ Գ (1952 թվականից):

Աշխարհի մեծ Փրկչի Ավետարանի լույսը հայ և վրաց ժողովուրդները գրեթե միասին ընդունեցին, մեկ սրբազան ավազանի մեջ մկրտվելով և 300 տարի միասին ապրեցին ու զորեցին Հայ և Վրաց Եկեղեցիները, որից հետո, քաղաքական և պատմական հարկադրանքների տակ, Վրաց Եկեղեցին հեռացավ իր 300 տարվա սրբեզրած դավանարանական սկզբունքներից՝ տարբեր ձևով հասկացալով ու բացատրելով Քրիստոսի երկու լուսնային վարդապետությունը:

Հակառակ այն փաստի, որ երկու Եկեղեցիների միջև տարակարծություններ ծագեցին դավանարանական խնդիրների շուրջ, այնուամենայնիվ երկու հարևան ժողովուրդներն էլ մնացին բարեկամներ, լավ հարեկաններ, այն ճշմարիտ ավանդության հիման վրա, թե վրացիներն ու հայերը երկու արյունակից եղբայրների՝ Հայոսի և Քարթլոսի որդիներն են: Այս մոտիկությունը անշահախնդիր կերպով մեր արյունոտ բայց հերոսական պատմության մեջ արձանագրվել է Ս. Վարդանանց անմահ հերոսամարտից մինչև Դավիթ-բեկ ու մինչև Հայրենական Մեծ պատերազմը, երբ երկու նղրայր ժողովուրդների հերոսածին զավակները ուսուսի տված իրենց կյանքը զոհեցին՝ պաշտպանելով Կովկասն ու մեր Մեծ Հայրենիքը: Եկեղեցական ասպարեզում նույնպես բարեկամությունը և համագործակցությունը Հայ և Վրաց Եկեղեցիների միջև դարավոր է եղել և թե պատահել են շրջաններ, երբ սառնություն է տիրել երկու քույր Եկեղեցիների հարաբերությունների միջև, այդ ոչ թե տիրող կարծիք ու պահանջ է եղել, այլ հասնողամանքների ստիպում: Բարեկամության և համագործակցության լավագույն փաստ է 1950 թվականին Քրիլիսիում գումարված երեք քույր Եկեղեցիների՝ Ռուսական, Վրացական և Հայկական Եկեղեցիների ժողովուրդ:

Այդ ժողովում երեք քայլը Եկեղեցիների Պետևրը հանգես եկան միակամ և միասիրտ հանուն խաղաղության պաշտպանության: Պատմական այդ ժողովն ավարտվելուց հետո, երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի սրտագին հրավերով, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարավոր կենտրոն Ս. Էջմիածին ուխտի եկան Ռուսական և Վրացական Եկեղեցիների Պետերը Իրենց շքախմբերով, որպես հյուրերը Ամենայն Հայոց Հայրապետի, մի սրտագին էջ ևս ավելացնելով Հայ, Վրաց և Ռուս Եկեղեցիների դարավոր բարեկամության պատմության վրա:

Ահա ինչ է ասում այս դարավոր բարեկամության մասին իրլանկոհիշատակ Գևորգ Զ Հայրապետը Իր բարի գալստյան խոսքի մեջ, խոսված Մայր Տաճարում 1950 թվականին երկու քույր Եկեղեցիների Պետերի Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հանդիպման ժամանակ:

«Վերջին տասնամյակների ընթացքում սերտացել և խորացել է նաև մեր Եկեղեցու բարեկամությունը դրացի և բախտակից Վրաց Եկեղեցու հետ: Բնականաբար հարց է՝ ի՞նչպես հասկանալ, ի՞նչպես քացատրել այս երևույթը:

Տարեկան Ռուսաստանը մի սարսուխիկ դաքականություն ունի— Ռուսաստանում ապրող ժողովուրդներին կովեցնել միմյանց հետ, որպեսզի ինքը ապահով զգալ նա զրժտություն էր սերմանում նաև քրիստոնյա Եկեղեցիների միջև»:

Անխախտ բարեկամության լավագույն պացույցը եղավ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ի սրտագին հրավերը՝ ուղղված նորին Ս. Օծություն Տ. Տ. Վաղգեն Ա Հայրապետին այցելելու Վրաստան, է՛լ ավելի խորացնելու և ջերմացնելու համար Հայ և Վրաց Եկեղեցիների հարաբերությունները:

Ամենայն Հայոց Հայրապետի պատմական այս այցելությանմբ ավելի ևս ամրապնդվիլու ծաղկեց այն հաղարամյա բարեկամությունը, որն արդեն իսկ զոյություն ունի երկու ժողովուրդների և երկու քույր Եկեղեցիների միջև:

Աղոթենք առ Աստված, որ անասան միտ հայ և վրաց ժողովուրդների և Եկեղեցիների միջև զոյություն ունեցող դարավոր ճշմարիտ և անկեղծ եղբայրությունն ի Քրիստոս:

6 «Էջմիածին», 1950 թ., հուլիս-օգոստոս, էջ 15:






ՊՐՈՑ.-ԴՈԿՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵՅ-ՔԵԼ

(Գիտություն վաստակավոր գործիչ)

ՄԵԼԻՔՍԵՅԻ ՄՈՅՐ ՏԱՃԱՐԸ

(Պ ա տ մ ա կ ա ն ա կ ն ա ռ կ)



եր թվագրության և դարից է, որ Թրիխսին (Տիդիսը) ջառհարում է Վրաստանի մայրաքաղաքը, Իսկ մինչ այդ վրաց մայրաքաղաքը Մցխեթումն էր, Կուր և Արագվի գետերի միախառնման անկյունում, որի գիմացը մեր օրոք ստեղծվեց Սոփեական Վրաստանի անդրանիկ հիդրոկայան Զահար Վրաստանի քաղաքներից՝ Նագուլի՝ քաղաքամոր՝ անունը թին հայոց մեջ և, մասնավորապես, հայ մաաենագիրներից մի երկուսի մոտ (Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի) հիշվում է Մցխեթ ձևով, սակայն այդ սխալմամբ է, որ, անշուշտ, պիտի ուղղել այնպես, ինչպես այն սովորաբար դարձավում էր և դորձավում է թե՛ վրացիների մոտ և թե՛ հայ մատենագրության մեջ։

Մենք ի նկատի ունենք, մի կողմից, «Գիրք թղթոց»-ը, իր սկզբնական հնագույն մասում, որ Ե—է՝ դարերին է պատկանում, և մյուս կողմից՝ Ժ՝ դարի պատմիչներ՝ Ուստանես եպիսկոպոս Ունայեցու (եղևացու) պատմության երկրորդ գիրքը և Ահարոն երեց Վանանդեցու «նունեի խաչի պատմությունը», որ դորձավել են Մծիխիա, Մցհիթ և Մրց-խիթա ձևերը, որոնք համապատասխանում են ավելի շուտ վրացական «Մցխեթ»-ին, քան թե անգո «Մցխեթ»-ին։

Իսկ «Մցխեթ»-ն, որ կազմված է ըստ մասնիկով, այն է տեղանունների ցուցիկ՝ վերջածանցով, ինչպիսիք են, օրինակ, Բիճվիսրա Իկորրա, Չխիկվրա և ուրիշ, բնագրիում է իր

մեջ մղվել արմատը, որը հանդես է գալիս նաև «Սա-մցխե» երկրամասի անվան մեջ, Դա՛ նույն մասի ցեղն է (աղգակից՝ Հայքի մոխ և մուր ցեղերին), որից առաջացել է «Մեխեթ» աշխարհագրական անունը և որի հնագույն ձևը՝ Մեղիս կամ Մոսիս՝ պահպանված է Աստվածաշնչի մեջ (Մենգոց, Ժ 2, 23, Ա Մնացորդաց, Ա, 4, 17, Մարգարէություն եսայիայ, Կ2, 19, Մարգարէություն եղիկի, ԼԲ, 26, ԼԸ, 3)։

Այսպիսով, Մցխեթ տեղանունը, որ կազմված է ըստ վերջածանցով, ինչպես և Սամցխե-ն, որ կազմված է սա ճախածանցով (որոնցից ըստ աշխարհագրական կետ է նշանակում, իսկ սա-ն՝ երկիր կամ երկրամաս)՝ ինչպիսիք մեղիս կամ մասիս ցեղի անունից՝ տանում է մեղ պեպի հետավոր անցյալը, երբ Կուր և Արագվի գետերի միախառնման տեղում ու նրա շրջակայքում ապրում և գերիշխում էր այդ ցեղը, որը հետագայում ձուլվեց քարթլիկների կողմի մեջ, երբ հիմք դրվեց Խվերիայի (Վերիայի, Վիրքի) կամ Փարթիի, ուսիսին Արենիյան Վրաստանի պետությանը, հավանական է Բ—Ա դարերին մեր թվագրությունից առաջ։

Դ՝ դարի 30-ական թվականներին Արենիյան Վրաստան մուտք է դրածում քրիստոնեությունը, որ շուտով դառնում է պետական կրոնը՝ Վրաստանում քրիստոնեության մուտքով սկսվում է եկեղեցական շինարարությունը, առաջին հերթին, իհարկե, քաղաքամայր Մցխեթում, որը դառնում է

Վրաց Եկեղեցու Աթոռ, կաթողիկոսանիստ վայր և հոգևոր կենտրոն:

Մցխեթայի եկեղեցական շինարարությունը սկզբնական շրջանում շատ նման է եղել Հայաստանի քաղաքամայր Նոր-քաղաքի (հունարեն, Կայնեպոլիսի), հետագայում Վաղարշապատի, ինչպես նաև մարդպանական Դվինի շինարարությանը:

Ինչպես Վաղարշապատի կաթողիկեն (Միածնի Իշման Մայր Տաճարը) Դ— է դարերի ընթացքում շրջապատվում է Ս. Գայաննի, Ս. Հռիփսիմի, Ս. Շողակաթի (Մարիաննի) և Արապարի Զվարթնոց տաճարներով, նույնպես և Մցխեթայի կաթողիկոսանիստ Մայր Տաճարի շուրջը նույն դարերում կառուցվում են այսպես կոչված «Անտիոքի» եկեղեցի-վանատներ, «Զվարթն» (բլրի Ս. Խայր), իսկ ԺԱ դարից՝ Սամթավ-րոն, լհաշված, Կհարկե, քիչ հեռու գոմեղ վանքերը (Զեղաղենի, Շիրմեղվածի՝ Զ. Գ.):

Ինչպես Վաղարշապատի կաթողիկենի կառուցումը կապվում է Միածնի իշման տեսլան հետ՝ ըստ Հայոց դարձի պատմության, որի կապակցությամբ նրա (Կաթողիկենի) կենտրոնում ամփոփվում է Իշման սեղանը, նույնպես և Մցխեթայի Մայր Տաճարի սրբություն սրբոցն է կապում այսպես կոչված «Սվետի ցխովեի»-ն, այսինքն կենդանի, կենաց, կենալու սյուրն՝ համաձայն Վրաց դարձի պատմության: Այդ սայան տակ, որն իրենից ներկայացնում է քառակուսի և քառասյուր պատկերազարդված բավականին բարձր կերտված Տաճարի հարավային զույգ մուկների միջև և նրանց շարքում՝ լստ ավանդության թաղվել է Քրիստի շապիկը¹. Ուստի և եկեղեցին կոչվել է «Սվետի ցխովեի», ինչպես այն հայտնի է մինչև մեր օրերը: Այս սայան կապակցությամբ Տաճարի տունը սահմանվում է հովտների 1-ին հին ստամարով, որ համընկնում է Ս. Կույսի «Գիւտ զատույն» տոնին, ընայած այն հանգամանքին, որ սույ միջնադարում, երբ տեղի են ունեցել Տաճարի վերանորոգումները, եկեղեցին նվիրվել է Տերկոտասան առաքելոց անվան (ի դեպ, նշենք, որ Տաճարի ավագ խորանում—քեմում կլորաձև պատի ամբողջ երկարությամբ ձևավորված է 13 փորը՝ Քրիստոսի և 12 առաքյալների խորհրդանշելով, իրականում՝ նստոցներ կաթողիկոսի և հանդիսավոր դեպքերին նրան սպասարկող 12 եպիսկոպոսների համար):

Մցխեթայի Մայր Տաճարը, ինչպես և Վաղարշապատի կաթողիկեն սկզբում՝ Դ դարում՝ եղել է փայտաշեն. ապա Ե դարի երկրորդ կեսին, Վախտանգ Գորգասալ թագավորի (Վահան Մամիկոնյանի ժամանակացի) օրոք, այն վերածվել է քարակերտ հսկայական քաղիկայի (եռունավ անցքներով՝ երկարածի դռնի), որ նման է եղել Դվինի քաղիկայի նախնական կառուցվածքին:

Մցխեթայի և էշմիածնի ու Դվինի կաթողիկոսանիստ Մայր Տաճարների սկզբնական կառուցվածքների հանգամանքները և նրանց նմանությունը, իհարկե, պատահական չէր, այլ առնչվում էր ժամանակի ոգուն, որի ցայտուն արտահայտություններից մեկն էր մարդպանական Հայաստանի ոստուն Դվինում 506 թվականին, հայոց Բագրե Մե և վրաց Գագրիկ Ա կաթողիկոսների գլխավորությամբ գումարված միասնական՝ հայոց, վրաց, աղվանից և սյունյաց եկեղեցական ժողովը²:

Ձ դարում արդեն Հայոց և Վրաց աշխարհների միջև, ըստ Քիթրթ թղթոց—ի և Ուխտանես պատմիչի, «սէր և խնամությունը մարմնաւորականք և հաղորդութիւնք հոգեւորականք կատարէին ցնծալից ուրախութեամբ» աստի (ի Հայոց) ի Մծխիթայի ի Խայն գալով և այտի (ի Վրաց) և Սուրբ Կաթողիկէն³, Այլև՝ «Ակառ մարդիկն, որ ի Հայոց, ի Վիրս խնամութիւն արարեալ էր, ի Սրբոյ Շուշանկայ պաշտօնն գային և ի Սուրբ Խայս Մծխիթայի ազօթն և օրինաց հաղորդէին: Նոյնպէս և որ աստի (ի Վրաց) այգր (ի Հայս) գային ի Սուրբ Կաթողիկէ և յայլ եկեղեցիսդ ազօթն»⁴:

Հայերն ու վրացիները, ըստ նույն «Քիթրթ թղթոց»-ի, Ուխտանեսի և Մովսես Կաղանկատվացու, միասին էին ժաղոթս, ի կերակուր և յրմայիս, ի քարեկամութիւն, ի դայեկութիւն, ազօթիք երթալով ի Խայն. որ ի Մցխիթայի տեղոքն ճամբաւի, և ի Մանգլեաց խայն...⁵:

Ժ—ԺԱ դարերը տնտեսական և քաղաքական մեծ վերելքի ժամանակաշրջանն էր

² «Քիթրթ թղթոց», Քիթիսի, 1901 թ., էջ 180—184:

— Կնիք հաւատոյ... յատուր Կոմիտաս կաթողիկոսի համահաւանքեալ, հրատ. Կարապետ եպիսկոպոսի (Տեք-Մկրտչյան), էշմիածին, 1914 թ., էջ 180—182:

³ «Քիթրթ թղթոց», էջ 164 (ընդգծումները այստեղ և աստեղծ են—Լ. Մ.-Բ.):


⁴ Նույն տեղում, էջ 178:

⁵ Նույն տեղում, էջ 184:—Մովսես Կաղանկատվացի, «Պատմութիւն Աղուանիք», Բ, 48:

¹ Այս խնդրի շուրջը տե՛ս Н. Марр. «Хитон Господень в книжных легендах армян, грузин и сирийцев». «Сборник статей учеников барона В. Г. Розена». СПб. 1897, стр. 67—96:

թե՛ Հայաստանի և թե՛ Վրաստանի համար Վրաստանում այդ շրջանից սկսվում է շինարարական բուռն գործունեություն, հռչակալ և երկնասլաց տաճարների կառուցումով:

«Ճեփամեծ վանորայց վրաց ի դիպն հախովլ», Ռշկ և Իշխան, որ յար և նման տչ գոյնոցա, բայց թէ լինի միայն Աուրբ Աուփի ի Կոստանդնուպոլիս»⁶:



ՄՅԵՆԹԱՅԻ ԿԱՌՈՂՎՈՍԱՆԻՍ ՄԱՅՐ ՅԱՃԱՐԸ

Անիի Կատրամիդե հարց թագուհու ծախրով կառուցված Կաթողիկեի (Մայր Նկեղեցու) և Զվարթնոցի նմանողությամբ կառուցված Գազկաշեն տաճարին հասակակից է վրաց Բագրատ Գ թագավորի կառուցած Մայր Տաճարը Քութայիսում. նմանապես՝

«Ըստ ժե դարի նշանավոր հայ ուղեգիր Հակոբ Կարենցու, «Տեղագիր Վերին Հայոց», հրատ. Կ. Կոստանյանց, Վաղարշապատ, 1903 թ., էջ 17:— «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դ. դ.», հատ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956 թ., էջ 554:

ԺԱ դարի առաջին կեսին սկսվում է ավարտվում է զուլգ հոյակապ Մայր Տաճարների կառուցումը Արևելյան Վրաստանում, մեկը՝ Մցխեթայում, Վախտանգ Գորգասալի ժամանակ (Ն դ.) շինված։ Բաղրիկայի հիմքերի վրա, մյուսը՝ Կախեթում, Ալադանի գետի աջ ափին՝ Ալավերդիում⁷։

Մցխեթայի Մայր Տաճարի վերակառուցումը, այսինքն՝ ավերված Բաղրիկայի հարմարեցվելը զմբեթակիր Տաճարի, ընդարձակելով առն դեպի արևելք և արևմուտք, 5 զուլգ մուլներով, կատարվում է Մելքիսեդեկ Ա կաթողիկոսի 1012—1030, 1039—1045 թ.թ.) ձեռնհրեցությամբ և ճարտարապետ Արսուկիսեթի ղեկավարությամբ, որոնց անունները փորագրված են Նույն Տաճարի և Տաճարին կից Կաթողիկոսարանի մուտքի ԺԱ դարի առաջին կեսի երկաթագիր վրացերեն արձանագրություններում։ Ահա այդ արձանագրություններից մեկը, Տաճարի արևելյան պատի վրա (մեր թարգմանությամբ)։ Մատարանի, Աստված, Քրիստոսով Քարթլիի Մելքիսեդեկ կաթողիկոսին. ամեն, Կառուցվեց այս սուրբ եկեղեցին ձեռամբ նոցա տրուպ ծառայի՝ Արսուկիսեթի։ Աստված հանդիստ պարգևի նրա հոգունս։

Մյուս արձանագրությունը փորագրված է հյուսիսային պատի վերին մասում, լուսամուտից բարձր, ճարտարապետի աչի և անկյունաշարի խորհրդանշող արտահայտող բարձրաքանդակի կողքին, աչից, այսպիսի քաղաքակրթությամբ (մեր թարգմանությամբ)։ Օձեռն ծառայի [Աստուծոյ] Արսուկիսեթի. ողորմի [ապացւէք]⁸։

Պատմա-մատենագրական տվյալներով այժմ ապացուցված է, որ Տաճարի վերակառուցումը ավարտվել է 1029 թվականին։

Մցխեթայի Մայր Տաճարը հետագայում վնասվել է մոնղոլական և մանապանդ լանդ-թեմորի արշավանքների ժամանակ և հիմնովին վերանորոգվել է Ալեքսանդր Ա Մեծ արքայի (1412—1443 թ.թ.) հոգատարությամբ։ Նմանապես, մի քիչ ուշ վերականգնվել է փուլ եկած գմբեթը, թեև ավելի փոքր չափով (ցածր), քան պիտի այն լիներ ԺԱ դարում։

7 Այս Ալավերդին լիպտք է շփոթել Հայաստանի Ալավերդի (քաղաքի, կայսրանի, պղնձահանքի) հետ։

8 Արձանագրությունների վրացերեն թնագրերը տե՛ս Լ. Մուսխիշվիլի, «Մցխեթայի Սվետի ջրովելի Տաճարի հնագույն արձանագրությունները և նրանց առևտրությունը Մելքիսեդեկ կաթողիկոսի կողմից հետք»։ «Ara Georgica», 1, Քրեյխի, 1942 թ., էջ 136—137 (վրացերեն)։

Վերջին ժամանակներում Տաճարի նորոգողներից մեկն է հանդիսացել Դոմենտի Գ կաթողիկոսը (1660—1676 թ.թ.), որի մասվան թվականը՝ 1676 թ. սկսվածների 23^{րդ} արձանագրված է Տաճարի արևմտյան սրահի հարավային պատի վրա փորագրված հիշատակարանում վրացերեն բոլորագիր տառերով ոմե զուլգ մեղապարտ Ասլամազ Գարաշվիլու ձեռքով, տարեթվի նշումով հայտատու գրությամբ և ըստ հայկական տոմարի՝ ՌՃԻԵ (1676)։

Նրկար դարերի ընթացքում կրած փոփոխություն-վերակառուցումներից հետո Մրցխեթայի Մայր Տաճարը, որը հիացնում է այցելուին իր բազմազան և հարուստ քանդակագործությամբ, իր այժմյան վիճակում տևի 58 մետր երկարություն, 25 մետր լայնություն և 65 մետր բարձրություն։

ԺԱ դարի առաջին կեսին Մցխեթայի Մայր Տաճարի վերակառուցման աշխատանքներին ղուգահեռաբար Տաճարի բաժնում՝ արևմտյան կողմից՝ կառուցվել է երկհարկանի Կաթողիկոսարանը (Վեհարանը), որից մեկ հասել են միայն կիսավեր պատերը, Կաթողիկոսարանին կից եղել է Տաճարի բակի մուտքը։ Ախտվել կամարի վրա նկատվում է վրացերեն երկաթագիր տառերով փորագրված արձանագրության մնացորդը, որ կարդացվում է Տաճարի վերակառուցող Մելքիսեդեկ կաթողիկոսի անունը, ուրի գերեզմանը գտնվում է Մայր Տաճարի ներսում՝ հարավային պատին կից։ Այս դամբարանի մոտեցրած կա նաև մի այլ դամբարան, որը ենթադրվում է լինել Դոմենտի կաթողիկոսի դամբարանը։

Տաճարը շրջապատված է պարսպով, որի ունի քառակուսի հստակագիծ, անկյուններում դամաձև աշտարակներով, որ ԺԸ դարի գործ է համարվում։

ԺԱ դարի կեսին կամ երկրորդ կեսին Նույն Մցխեթայում, երբեմն Ս. Նինոյի (Նանիի) ապրած վայրում, պարսեդի և աղոթատուն-մատուռի կից (որը Վրաստանի առաջին Լիկեդեցին է համարվում և վերանորոգված ձևով է հասել մինչև մեր օրերը), վրաց առաջին քրիստոնյա թագավոր Միրիանի (Միհրանի՝ «առաջնորդին վրաց» — ռուս հայ պատմիչների) և նրա կողակից Նանայի դամբարանների վրա, հիշյալ մատուռից դեպի հարավ-արևմուտք, կառուցվում է քառասյուն քմեթակիր մի տաճար, որը կոչվում է Սամթավրո, այսինքն՝ Խյալառական։ Սա ևս դրսից դարձարված է լավակառույց ճոխ քանդակագործությամբ ճարավից, հյուսիսից և արևմուտքից կցված սրահներով, հարակից հետագա դարերին են պատկանում Տաճարի մեջ, հարավ-արևելյան անկյունում, ըստ ավանդության, զուլգ են տրվում հիշյալ թա-

յաժնորի և թաղուհու դամբարանները՝ ժամարտով նսրողված տապանաքարերով և տապանադիրներով: Տաճարի բակում, հրուսիսարևմտյան անկյունում, գտնվում է նուազարկ դանդակատունը, կառուցված ժՁ դարում, իսկ հարավ-արևմտքից՝ դանաձև աշտարակ-ամրոց, հավանական է նույն դարի:

Սամթավրոն և նրա շրջակայքը ժՁ դարի սկզբից վերածված է կուսանաց անապատի, որն իր դոյուքունը շարունակում է մինչև այսօր: Տաճարը կրում է Պայծառակերպության Տառնի անունը:

Մցխեթայի Սվևիսի ցխովելի Մայր Տաճարի և Սամթավրո տաճարի կառուցման շուրջը վրաց բանահյուսության մեջ կա շատ հեռաքրքիր և հատկանշական մի ալիանդություն, ըստ որի Մայր Տաճարը կառուցել է վարպետի աշակերտը, իսկ Սամթավրոն՝ ինքը վարպետը: Կառուցումից հետո Մայր Տաճարը՝ համեմատությամբ մյուս տաճարի, ստացվել է ավելի շքեղ ու հույսկապ, և գրանից դառնացած վարպետը կրտսերն է իր աշակերտի ձեռք, որ և ամփոփել է Տաճարի հյուսիսային պատի վերևի մասում, յուսամուտից բարձր, ուր ճարտարապետի խորհրդանիշն է դիտվում, այսինքն ձեռքի և անկյունաշաղկի բարձրաքանդակը, համապատասխան արձանագրությամբ հանդերձ:

Ծավոց սրտի պիտի արձանագրել, որ Կուլյո Տաճարների հին պատկերադրությունից շատ քիչ բան է հասել մեզ, որովհետև նրանց պատերը ներքուստ ծեփվել են ժՄ դարի 40-ական թվականներին: Խորանի հիմն խաչկալներին էլ մնացել է միմիայն Սամթավրոյինը՝ ժԴ—ԺԵ դարերից:

Մցխեթայի պատմական հուշարձաններից ամենահինն է այսպես կոչված «Անտիոքի» եկեղեցին, քաղաքի ծայրին, Արագվի գետի

աջ ափին: Դա՝ Ջ դարի եռամասվ բազիլիկայի մնացորդ է (քանի որ մեկ հասել է շենքի միմիայն մի երրորդական մասը): Եկեղեցին ուղիահայաց դժով կապված է եղել լլլրի Ս. Խաչի հետ, այնպես որ այստեղի ժամարարը միշին խորանի պատահանից դիտելիս է եղել Ս. Խաչը, Եկեղեցին համարվել է Անտիոքի Պատրիարքարանի վանատունը:

Զ—է դարերում կառուցվել է լլլրի (ըստ Մ. Խորենացու և Ա. Վանանդեցու)՝ «Ջվարի»-ն, այսինքն Ս. Խաչ կոչված կոմպլեքսը, որ բաղկացած է մեծ և փոքր տաճարներից, ինչպես նաև ուրիշ շինություններից, որոնք այժմ կիսավեր են ու ամայի: Դրանցից մեծը, որի սեղանը (քիմը) եկեղեցու կենտրոնումն է եղել և է, զրմբի տակը, հիշեցնում է Ս. Էջմիածնի իշման Սեղանը՝ Տաճարի կենտրոնում¹⁰: Այն կառուցվել է Ս. Հոփիսիմի տաճարի հետ միաժամանակ և միանման հատակագծով, իրեն կենտրոնադրված խաչի և արակոնիս, միայն այն տարբերությամբ, որ Ս. Հոփիսիմի հատակագիծը սկզբից քառանկյունի է՝ մեքը տեղավորված քառաբիգ խաչով և չորս ավանդատներով անկյուններում, մինչդեռ Ջվարին ներկայացնում է իրենից սկզբից քառաբիգ խաչ, անկյուններում չորս ավանդատներով, որ շրջապատված է քառանկյունով: Այսպես թե այնպես, երկուսն էլ հայ և վրաց արվեստագետների միասնական ստեղծագործության արդյունք են, երկու աղգակից ժողովուրդների մշակութային հանճարի արգասիք¹¹:

Մցխեթայի Մայր Տաճարը մեծ դիր է կատարել վրաց ժողովրդի պատմության և մշակութի դարդացման գործում, ինչպես Ս. Էջմիածինը հայ ժողովրդի կյանքում: Վրաց ազնիվ և տաղանդավոր ժողովուրդը, իր հոգու բովանդակ շերտությամբ, սիրել է Մցխեթան և կապված է մնացել իր համալգային ամենահին ու պատմական այդ սրբալավայրի հետ:

¹⁰ Այս մասին տե՛ս մեր հոդվածները «К вопросу об устройстве алтаря в древней Грузин», «Христианский Восток» (Петроград), т. IV, стр. 310—312: «Վեմքար», «Հոփիս», (Թիֆլիս), 1918 թ., № 3:

¹¹ Հմմտ. Ռ. Աղաբաբյան, «Վրաստանի և Հայաստանի զմբխավոր շենքերի կոմպոզիցիան», Երևան, 1950 թ. (ռուսերեն):

⁹ Կարևոր է նշել, որ ճարտարապետի բարձրաքանդակ խորհրդանիշը ձեռքի (աչի) փորագրությամբ առկա է ոչ միայն Սվևիսի ցխովելի տաճարի պատի վրա, այլև այլուր, օրինակ, Իմերեթի Գուլրանդիանի, Էնկլոմի Մցխեթայի, Հարավ Օսեթի Լարգվիսի, Հյուսիսային Օսեթի Թխաբա-Երգիի և այլ եկեղեցիների պատերի վրա: Մանրամասն տե՛ս մեր ուսումնասիրության մեջ՝ «Рельефы руки на памятниках материальной культуры феодальной Грузии», Վրացական Գիտությունների ակադեմիայի հրատարակություն, Թբիլիսի, 1952 թ., էջ 109—130 և նկարները՝ 8, 10—13:





ՎԱՐԱՋԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Մարտաբազմաբայան քեկեանո,
դոցեհե)

ՄՅԻԵԹԱՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱՆ-ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ



յս անունը նույնքան նմիրական է վրացիների համար, որքան Վադարձապատ-էջմիանինը՝ հայերի, Հինավորոց այդ քաղաքը հանդիսացել է վրաց ժողովրդի պատմության կարևորագույն օրրաններից մեկը:

Մցխեթա անունը ենթադրաբար կապվում է վրացական Մոսխի կամ Մեթիսի կոչվող ցեղի անվան հետ, փակ թևակավալրի առաջացման ժամանակը պարտադրում է պատմության մշուշով:

Պատմական և հնագիտական տվյալները, որոնք լափազանք առատ են Մցխեթայի վերաբերյալ, վկայում են նրա մեծ դերն ու նշանակությունը ոչ միայն Վրաստանի, այլև Դեռևս մեր թվագրությունից առաջ Մցխեթան մարդաշատ բնակավայր էր: Դառնալով (Ռ. զ. մ. թ. ա.) Վիրքի (Իգերիայի) թագավորության մայրաքաղաք, նա սկսեց քարգտնվել և քարգտնալ, իսկ երբ Վրաստանում Քրիստոնեությունը տարածվեց որպես պետական կրոն (337 թ.). Մցխեթան թիառժամանակ հանդիսացավ նաև երկրի հոգևոր կենտրոնը, իր այդ նշանակությունը նա պահպանեց նաև Զ դարից հետո, երբ երկրի վարչական կենտրոնը փոխադրվեց Թբիլիսի:

Այսպիսով, Մցխեթան հանդիսացել է վրաց ժողովրդի պետականության և վրացական նկեղեցու օրրանը, այն նշանավոր կենտրոններից մեկը, որտեղ կազմակերպվել է վրացական ազգային սշակույթը, մասնավորապես ճարտարապետությունը: Հիմնադրված լինելով Կուր և Արաքսի գետերի խառնարանի մոտ տարածվող ընդարձակ հարթավայրի վրա, նա երկու կողմից սահ-

մանադժվում է հիշատակած գետերով, որոնք ցամաքի կողմից եղած պաշտպանական կառուցվածքների հետ միասին կարեւոր դեր էին կատարում քաղաքի անառիկությունն ապահովելու գործում:

Մցխեթան հանդիսացել է առևտրական ճանապարհների աչքի ընկնող հանգուցակետ և դեռևս շատ հեռուց ընդգրկված էր միջազգային առևտրում: Բացի դրան տնտեսական նշանակությունից, Մցխեթայով անցնող պիսավոր ճանապարհը, որը պահպանել է իր նշանակությունը նաև այժմ և կոչվում է ռազմավորական ճանապարհ, ուներ ռազմավարական լափազանք կարևոր նշանակությունը վրաց ժողովրդի կյանքում: ամբողջ Անդրկովկասի համար:

Հնագիտական պեղումներն ու տեսմանսիրությունները պատմական Մցխեթայի շրջակայքում և նրա արվարձաններում, որոնք զգալի ծավալ ատացան հասակապես վերջին 10—15 տարիների ընթացքում, լափազանք հարուստ նյութեր բնօրինակ վրաց ժողովրդի պատմության, առհասարակ, արվեստների ու ճարտարապետության վերաբերյալ:

Մասնավորապես խիստ հետաքրքիր են Արմազեի և Բագինեթի պեղումները: Արմազեի (որը գտնվում էր Կուր քեոի աջ ափին, այժմյան Մցխեթա վայրանի մոտ), հանդիսացել է Վրաստանի հին մայրաքաղաքը, իսկ հետագայում՝ կարևոր ռազմավարական հենակետ Մցխեթայից դեպի հարավ: Նրա անունը հանդիպում է վրացական, հայկական և անտիկ պատմական աղբյուրներում նաև որպես հիթանոսական սրբատեղի: Դեռևս 1867 թվականին այստեղ քարվել է մեր թվագրության 75 թվա-

կանին վերաբերող մի հումարեն արձանագրություն, նրանում հիշատակված են տեղեկություններ հումանացիների կողմից պարսպներ վերանորոգելու վերաբերյալ:

Հնագիտական պեղումները, որոնք այստեղ սկսվել են 1937 թվականից, հայտնաբերել են հեթանոսական տաճարի, միջնաբերդի պարիսպների ու բուրգերի մնացորդներ: Վրաստանի և Անգրկովկասի հնագիտության պատմության համար առանձնապես արժեքավոր են միջնաբերդից ներքև, կուր գետի ափին հայտնաբերված վրացական լուսնաբերդի պատկանող դամբարանները: Սրանցից հանված զենքերը, դրամները, զարդերը և զեղարվեստական այլ իրերը, որոնց վրա ակներև է հունա-հռոմեական մշակույթի բարերար ազդեցությունը, վկայում են ստրկատիրական շրջանի Վրաստանում նյութական մշակույթի բարձր մակարդակի մասին:

Նույն վայրում պեղված Բագինեթի կուլտուր միջնաբերդը իր կառուցվածքներով և դամբարանային իրերով վերաբերում է մեր թվագրությունից առաջ 7 դարին, վկայում է շինարարական արվեստի և ճարտարապետության բարձր մակարդակի մասին և հարուստ լույս է սփռում Վրաստանի հնագույն շրջանի պատմության վրա:

Մցխեթայի վարչերազույն հնավայրերից է նաև Սամթավրոյի ընդարձակ գերեզմանատունը: Այն տարածվում է քաղաքից դեպի հյուսիս, Սամթավրոյի վանքի շրջակայքում, ռազմավիրական ճանապարհի ուղղությամբ: Այստեղ գնդես 1869 թվականին պատահականորեն բացվեցին հին դամբարաններ, որոնք իրենց վրա դրավեցին դիսանակների ուշագործությունը: Սամթավրոյի դամբարանները առաջին անգամ պեղվան ենթարկվեցին 1871—1875 թվականներին հնագետ Յ. Բայերնի կողմից, իսկ սկսված 1938 թվականից պեղումները սխտեմատիկ քննվեցին սաացան: Պեղված և ուսումնասիրված մեծ թվով դամբարաններ, որոնք վերաբերում են պատմական չափազանց ընդարձակ մի ժամանակաշրջանի՝ մեր թվագրությունից առաջ 8 հազարամյակից մինչև մեր թվագրության թ հարյուր, ուշագրավ են թաղման քաղմազան տեսակներով և դամբարանային խիստ հարուստ նյութերով:


Մցխեթան և Շրա շրջակայքը առանձնապես հարուստ են վրացական ճարտարապետության աչքի ընկնող հուշարձաններով: Արաբվի գետի աջ ափին, սարի բարձր գագաթին վեր է խոյանում Զվարիի (Ս. Խաչի) տաճարը: Վրացական ճարտարապետության անկուգական այս գոհարը, որը կանգնեցված է է դարի սկզբին, իր կոմպո-



ՍԱՄԹԱՎՐՈՅԻ ՏԱՆԱՐԸ (ԺԱ Դ.)

զիցիոն-տարածական լուծմամբ հանգիստնում է վրացական կենտրոնադրեթ խաչածե տաճարների լավագույն նմուշը և հայրում է հայկական նույնատիպ (Ավանի, Ս. Հոփիսիմի և այլ տաճարների) կառուցվածքներին: Հսկայական և վրացական այս կառուցվածքներով հիանալիորեն մարմնավորվել է ստեղծագործական այն ընդհանրությունը, որ հատուկ է եղել երկու եղբայր ժողովուրդների պատմական ճաշտարապետությունը:

Այդ ընդհանրությունը, բացի մի շարք պատճառներից, գտնում է իր բացատրությունը նաև այն սերտ կապերով, որոնք գոյություն ունեին Հայ և Վրաց եկեղեցիների միջև քրիստոնեությունն ընդունելու սկզբնական շրջանում: Այդ առթիվ հայկական և վրացական պատմական աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ վկայություններ: Ավելորդ չէր լինի այստեղ մեջբերել այդպիսի վկայություններից մեկը՝ մի կտոր Արքահայր կաթողիկոսի նամակից՝ սղղված վրաց կաթողիկոս Կրտիկոնին: Նամակում ի միջի այլոց ստված է Ե... Միատրություն հաւատոյ և դասպնջականութիւն զիկոցունց աշխարհացս Յուրտաւոյ եկե-



ԱՎԵՏԻ ՅԻՈՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ՀԱՏԱԿԱԳՈՒԾԸ
(քառ աքոֆ. ն. Սևերոսի)

ղեցին անշաքժ միջնորդութեամբ պահէր, ուստի սէր և խնամութիւնք մարմնաւորականք և հաղորդութիւնք հոգեւորականք կատարէին ցնծայից ուրախությամբ: Աստի ի Մճխիթայի ի խաչն գալով և այտի ի Սուրբ Կարողիկէ՝ (ընդգծումը մերն է—Վ. Հ.): Մեքքեոված վկայության վերջին մասից երևում է, որ հայ համատաղայնների համար Մցխեթայի Ս. Խաչը հանդիսանում էր նույնպիսի նվիրական արքատեղի, որքան Ս. Էջիածինը՝ վրացիների համար:

Ջվարիի տաճարի տարածական հարուստ ուրվանկարը հարադասութիւն վստայում է սարի ուրվանկարի հետ, վարժես բխելով նրանից ու պսակելով նրան, իշխում է Կուր

և Արագձի դետերի բնդարձակ հովտի համառնապատկերում: Ջվարիի տաճարը ճարտարապետական իր բարձր արժանիքների հետ միասին, հանդիսանում է այն եղակի հուշարձաններից մեկը, որի կառուցողները այդքան մեծ վարպետությամբ նշանավորել են բնության և ճարտարապետության կապը, անմահացնելով և՛ իրենց և՛ սեփական ժողովրդին:

Ուշագրավ հուշարձաններից է նաև Սամթավրոյի տաճարը (ԺԱ դ.): Նա գտնվում է Մցխեթայի հյուսիսային ծայրամասում և բոլոր կողմերից շրջապատված է պարիսպներով: Բակի կենտրոնում վեր է խոյանում տաճարն իր բարեկեց ծավալներով ու ճարտարապետական նուրբ դրվագներով: Սամթավրոյի տաճարը արտահայտում է գեղարվեստական այն ձգտումները, որոնք ընդորոշէին հառուն միջնադարի վրացական ճարտարապետությանը: Ճակատների պլաստիկական հարուստ մշակումը բարակ սյուների վրա հենվող գեկորատիվ կամարաշարերի և վարդաքանդակների միջոցով ԺԱ դարից սկսած դառնում է վրացական, ինչպես նաև հայկական ճարտարապետության արտահայտական հիմնական և շատ տարածված մոտիվը: Նույն կարգի ճարտարապետական լուծում կարելի է տեսնել Անիի Մայր Տաճարի, Եւրմաշինի, Սանահնի գլխավոր եկեղեցու և Հայաստանի ԺԱ դարի մի շարք ուրիշ հուշարձանների պատերի վրա:

Մցխեթայի ուշագրավ հուշարձաններից է նաև հինավուրց կամուրջը՝ Կուր գետի վրա, որի կառուցումը վերաբերում է մեր թվագրության սկիզբներին: Դժբախտաբար այս հետաքրքիր կառուցվածքը այժմ մատչելի չէ հետազոտության համար, որովհետև նրա մնացորդները ծածկվեցին Կուրի ջրերով: Հիդրոկայանի մամարտակի վառուցման հետեանքով:



Որքան էլ արժեքավոր լինեն հիշատակված հուշարձանները և հատկապես Ջվարիի տաճարը, որը հանդիսանում է վրացական ֆեոդալական ճարտարապետության առաջին ծաղկման (որը ինչպես և Հայաստանում տեղի է ունեցել Ե—Է դ. դ.) գլուխգործոցը, այնուամենայնիվ Մցխեթայի դյուխավոր սրբավայրում համարվել է Սվետի ցխովելի (Կենարար սյուն) Մայր Տաճարը:

Համաձայն պատմական աղբյուրների, առաջին քրիստոնեական եկեղեցին այստեղ կառուցված է եղել դեռևս Ե դարում, Քարթլիի թագավոր՝ Վախտանգ Ա Գորգասալի (Դալապղխի) ժամանակ: Ընթացում է, որ

1 «Դիքա թղթոց», Թիֆլիս, 1901 թ., էջ 104:


այդ առաջին տաճարը թաղիլիկատիպ է, եղել, փնշպես Բույնիսի տաճարը, որը համեմատական է վրացական թաղիլիկատիպ կառուցվածքների լավագույն ներկայացուցիչը: Հայտնի է, որ Հայաստանի վաղ քրիստոնեական շրջանի եկեղեցիները նույնպես ներկայացված են թաղիլիկատիպ կառուցվածքներով, ինչպիսիք են Նրերույրի, Տեղորի, Քասաղի, Աշտարակի, Նզվարդի և այլ թաղիլիկոնները, Այս հանդամանքը պարզորոշ կերպով վկայում է աթո մասին, որ նույնական ու վրացական վաղ քրիստոնեական շրջանի ճարտարապետությունները ունենցել են ընդհանուր ակունքներ, ապրել են կազմավորման միատեսակ պրոցես և հանդես են բերել ստեղծագործական սկզբունքների միասնություն:

Մայր Տաճարի այդ հնագույն շենքը հնթարկվել է հիմնական վերանորոգման վրաց կաթողիկոս Մելքիսեդեկի օրոք 1010—1029 թվականներին: Համաձայն շինարարական արձանագրության, որ պահպանվել է Տաճարի հյուսիսային պատին, վերակառուցման աշխատանքները իրականացվել են ուսպանդավոր ճարտարապետ Արսուկիսձեի գեղարվեստով:

Թեև կատարված վերակառուցումը հիմնովից փոխել է Տաճարի նախնական կոմպոզիցիոն և տարածական մտահայացումը, սակայն հին տաճարի առանձին հատկանիշները որոշակի կերպով պահպանվել են և արտահայտվել Սվետի ցիտվելիի մեղ հասած շենքում: Այդ մասին են մասնավորապես վկայում հատակագծի ձգվածությունը արևելքից արևմուտք, մույթների դասավորությունը Տաճարի ներսում, հատկանիշները, որոնք անձխտելի կերպով կապվում են նախնին եղանակ (եղանակ) թաղիլիկի հետ:

Հետազոտողներից մեկի՝ Դ. Գորգենի կարծիքով ճարտարապետ Արսուկիսձեի ձեռնարկելով Տաճարի վերականգնման աշխատանքները, վերացրել է հոսանքի թաղիլիկային ներքորդ և չորրորդ (հաշված ընմից) գույք մույթները և առաջին ու երրորդ գույքերը ամրացնելով, վեր է ածել նրանց դմբեթակի մույթներ:

Հաստահանված այդ չորս հենարանները իրար են միացվում հզոր կամարներով, առաջացնելով դմբեթատակ քառակուսին, որի նակունքներում տեղավորված առադոստների օգնությամբ կատարվում է անցումը քառակուսի ձևից դեպի դմբեթի թմբուկի շրջանաձև հիմքը: Այդ հիմքի վրա վեր է խոյանում դմբեթի բարեկազմ և սլացիկ թմբուկը, որը պատկերվում է դմբեթի ծածկալ սրածույր վերջավոր:



ՍՎԵՏԻ ԹԵՈՎԵԼԻ ՏԱՃԱՐԻ ԱՐՏՈՎԵԼԻՍԻ ԱՐԽԵԼԻՍԻ (ըստ պրոֆ. Ն. Մելքոնի)

Գմբեթատակ տարածությունից դեպի արևմուտք գտնվում են գույք մույթներ, որոնց միջև հետավորությունը անհավասար է՝ վերակառուցման հետևանքով: Տաճարի բլմբ, երկու կողքերի կրկնահարկ խորաններով գտնվում են դմբեթատակ տարածության արևելյան կողմից և թավականաշափ խորն են: Դեպի երկրորդ հարկի խորանները բարձրացող աստիճանները տեղավորված են ընմի հարավային պատի հաստության մեջ: Երկրորդ հարկի խորանները տունն գեպի արևմուտք և Տաճարի միջին նախն օղղված բացվածքներ, թաղիկացած կամարային դույզ պատահաններից: Ընմի և կողքի խորանների բաժանումը որոշադուստ արտահայտված է պատի հաստության մեջ տեղավորված խորշերով, որոնք, ինչպես և ներսի կողմից ընմի կիսաշրջան պատի վրա տեղավորված կիսաշրջանաձև խորշերը, լափազանց բնո-

րոշ են հայկական և վրացական ճարտարապետության համար:

Տաճարի արևմտյան մասում մույթների քայլին համապատասխան, երկայնական պատերի վրա գոյություն ունեն որմնամույթներ, որոնք բավականաչափ դուրս են շեշտված պատերից դեպի կողքերը: Երկայնական պատերի ուղղությամբ, որոնք միացված են խորունկ կամարներով կամ թաղերով, որոնց վրա դրսի կողմից հետ են րնկնում Տաճա-

Տաճարի արտաքին ճարտարապետական ձևերն ու ծավալները թեև վերականգնումների հետևանքով որոշ չափով կորցրել են իրենց երբեմնի անաղարտությունը, այնուամենայնիվ նույնիսկ այդ վիճակում նրանք հարազատորեն արտահայտում են վրաստանի հասուն ֆեոդալականության շրջանի (երկրի է ունենում վրացական ազգային ճարտարապետության երկրորդ ծաղկումը) բնորոշ հատկանիշները:



ՄԹԻՆԹԱՆ ԽՎ ՍՎԵՏԻ ՅԵՈՎԵԼԻ ՏԱՃԱՐԸ ԳԻՏՎԱԾ ԿՈՒՐ ԳԵՏԻ ԱՋ ԱՓԻՈ

րի արևմտյան մասի երկայնական սյուսերը, արտաքուստ առաջացնելով լողիաներ: Արևմտյան ծայրում գոյություն ունի դաս, որի հռակամար րացվածքը ուղղված է դեպի արևելք՝ եկեղեցու բեմը: Տաճարի պատերը ներսից ամբողջովին ծեփված են կրաշաղախով, որոնք պատած էին արժեքավոր որմնակարներով: Դրանք զգալի չափով ավերված են և չնչին մնացորդներն են պահպանվել:

Թվարկված ճարտարապետական-գեղարվեստական միջոցների շնորհիվ Ավեսի ցիտվիի Տաճարի ներքին տարածությունը ընկալվում է միասնական և հանդիսավոր, այն տպավորիչ է կազմակերպվածությամբ և ներդաշնակ համաչափություններով:

Դրանց թվում նախ և առաջ պիտի նշեն Տաճարի ընդհանուր առմամբ վերասլաց համաչափությունները և արտաքին ծավալների ու հարթությունների գեղազարդող մշակման միջոցները: Այդ տեսակետից առանձնապես բնորոշ է արևելյան ճակատը, որն ի դեպ համեմատաբար ավելի անաղարտ է պահպանվել և զերծ է էական աղավաղումներից: Ուստի և կարող է լիարժեք պատկերացում ստալ Տաճարի նախնական ձևերի մասին: Արևելյան ճակատի տղջ հարթությունը մշակված է դարաշրջանի համար խիստ բնորոշ ճարտարապետական մոտիվով, որը վրացական եկեղեցական ճարտարապետության մեծ սկսվում է տարածվել ԺԱ դարից: Այդ մոտիվը կայանում է պատի հարթության պլա-

տիկական հարուստ մշակման մեջ, ունենալով սյուեռնականների և նրանց վրա հանգչող ունենալով կամարադեղների միջոցով, Դրանք միասին պատի հարթության վրա առաջացնում են հինգ ղեկորատիվ կամարներ, որոնցից կենտրոնականը առավել լայն է և բարձր մյուսների համեմատությամբ, Սրա երկու կողմի ավելի փոքր կամարները իրենց մեջ են ամփոփում Տաճարի թմբի և խորանների յաժանումը ընդգրկող եռանկյունի խորշերը, իսկ հաջորդ զույգ կամարները ավելի փոքր են և իրենցով ձևավորում են հարթ պատը:

Կենտրոնական կամարը և խորշերը պատկող կողքի կամարները ունեն նյութակերտ դրվաքներ, որոնք նպաստավոր լուսավորության պայմաններում հնրում են առանձնապես արտահայտիչ կերպով և հարստացնում արևելյան ճակատը:

Տաճարի հարավային և հյուսիսային ճակատների մշակումը, եթե չհաշվենք վերակառուցումների հետևանքով մտցված փոփոխությունները, ընդհանուր առմամբ ճարտարապետական ամբողջությունն են կազմում արևմուտյան հետ:

Արևմտյան պատի կողմից կցված է մի նախասրահ, որը ներկայացնում է Տաճարի հանդիսավոր մուտքը, նախասրահը իր փոքր ծավալով առանձնանում է Տաճարի ընդհանուր ծավալից:

Դարաշրջանի համար ընտրող է նաև գմբեթի թմբովն իր ձևերով, Նրա բաղմանիստ ծավալի յուրաքանչյուր նիստի վրա տեղավորված է ավելի ունենալով երեսակալով շրջապատված մեկական երկարավուն պատուհան:

Սվետի ցիտվելի Մայր Տաճարի պատմական բախտը շատ գծերով հիշեցնում է էջմիածնի Մայր Տաճարին, Նա ևս իր գոյության երկար ժամանակի ընթացքում շատ անգամներ ավերվել ու վերակառուցվել է, որպիսի հանգամանք իր կնիքն է դրել տաճարի կոմպոզիցիոն ու ճարտարապետական ձևերի վրա: Առաջին յուրյ հարվածը նրան հասել է ԺԴ դարում, Լենկթիմուրի արշավանքների ժամանակ, Սակայն այդ արհաւիրքներից աղատվելուն պես, արդեն հաջորդ դարում, վրացական Ալեքսանդր թագավորի ժամանակ նա հիմնովին վերանորոգվել է: Մտտավորապես ժն դարում վերանորոգվել

է Տաճարի ծածկի թաղերի և դմբեթի թմբուկի մի մասն ու ամբողջ գմբեթը, Նշված վերանորոգման աշխատանքների ժամանակ զգալի փոփոխություններ է կրել հատկապես Տաճարի արևմտյան մասը:

Տաճարի հետևյալ վերանորոգությունը տեղի է ունեցել ԺԷ դարում: Այն ժամանակ նորից վերակառուցման են ենթարկվել թմբուկը և վեղարը, ինչպես և մի շարք յուրյ մասեր: Անցած դարի կեսին կատարված վերանորոգությունների ժամանակ նոր փոփոխություններ են մտցվել Տաճարի նախնական կոմպոզիցիայի մեջ: Քանզվել հեռացվել են Տաճարի հյուսիսային և հարավային կողմից կցված կիսավեր գավիթները, որոնց տեղի հետքերը հիմա էլ զգալի չեն կատարել հիշատակված պատերի վրա: Այսպիսին են Մցխիթայի Սվետի ցիտվելի Մայր Տաճարի պատմական և ղեկավարվածության արժանիքները, այսպիսին է նրա դարավոր կյանքի փառավոր ուրվագիծը:

Սվետի ցիտվելի Տաճարի հաղթական ուրվականները այնպիսի առաջ քաջվում է դեռևս մեծ հեռավորությունից, Իր հսկայական և բարեգիծ տարածական ձևերով ու հանդիսավոր ծավալներով նա իշխում է ողջ շրջակայքի նկատմամբ և կարծես արձագանքելով սարի վրա հաղթ կանգնած Զվարթի փոքրիկ տաճարին, նրա հետ միասին դարդարում Կուր և Արազի գետերի հովտի համայնապատկերը: Տաճարն իր ընդարձակ թակով և այն թուրք կողմերից շրջապատող բրգավոր և աշտարակավոր հինավուրց պարիսպներով ընկալվում է որպես միասնական և ներդաշնակ ճարտարապետական ամբողջություն:

Վրաստանի միջնադարյան ճարտարապետությունը հետարարական շրջանում անցնելով զարգացման որոշ նախապատրաստական շրջան, ԺԱ դարի առաջին կեսին նշանավորվեց երեք խոշոր կաթողիկոսների՝ Բագրատի (Քութայիսիում) Սվետի ցիտվելի (Մցխիթայում) և Ալավերդու (Կախեթիայում) տաճարների շինարարությամբ: Այս երեք հույկապ կառուցվածքները իրենցով մարմնավորեցին վրացական ֆեոդալական ճարտարապետության գերագույն ծաղկումը, լիարժեք կերպով արտահայտեցին քաղաքական, տնտեսական և մշակութային այն հզոր վերելքը, որն ապրեց Վրաստանը պատմական այդ ժամանակաշրջանում:





Ս. ԲԱՂԻՐՅԱՆ

ՀՈՒԾԵՐ ԿՈՄԻՏԵՍ ՎԵՐԴՆՊԵՏԻ ՄԵՍԻՆ

(1902—1906 թ. թ.)



ազար ինը հարյուր երկու թվականին իսկ նոր էի ընդունվել էլ-միածնի Գեորգյան Ճեմարանը։ Ըստ սովորության, խորը նոր ընդունվածները պետք է ենթարկվեին նաև ձայնափորձության՝ երգեցիկ խմբի մեջ ընդունվելու համար։

Պետք է ասել, որ Ճեմարան ընդունվելը այնքան էլ հեշտ չէր այն ժամանակ. ամեն կողմից, թե՛ Ռուսաստանից (Կովկասից) և թե՛ արտասահմանից դալիս էին հայ պատանիներ Ճեմարանում սովորելու համար։ Բնական է, որ դիմողների թիվը մի քանի անգամ ավելի էր լինում ամեն տարի, քան ընդունվածների թիվը։ Ձայնավորների գերադասություն էին տալիս քննության ժամանակ այն հասկանալի պատճառով, որ Ճեմարանը ավարտողները կա՛մ հոգևորականներ էին դառնում կա՛մ ուսուցիչ-մանկավարժներ հայկական դպրոցների համար։ Երկու դեպքումն էլ անհրաժեշտ էր երաժշտական կրթությունը, հատկապես երգեցողության ուսմունքը, որը դրված էր Ճեմարանում շատ լուրջ հիմքերի վրա, մանավանդ Կոմիտասի վարդապետի օրով։ Բացի հայկական և եվրոպական ձայնանիշներով երաժշտության դասերից՝ Ճեմարանը ուներ քառաձայն երգեցիկ խումբ, որը ելույթներ էր ունենում տոնական հանդեսների ժամանակ թե՛ Ճեմարանում և թե՛ էլ միածնի Մայր Տաճարում։ Ահա այդ խմբի մեջ ընդունվելու համար Ճեմարանի հանդիսասրահում նշանակված էր նորեկների ձայնափորձը։ Ճեմարանի երկրորդ հարկի միջնացում, հանդեսների գալիսի մուտքի առաջ հավաքվել էին մոտ երեսուն հոգի նոր ընդունվածներ, որոնց մեկ-

մեկ ներս էին կանչում ձայնը փորձելու համար։

Հերթը հասավ ինձ, ներս մտա։ Դաշնամուրի առաջ նստած էր Կոմիտաս վարդապետը, իսկ մի քիչ հեռու, ցուցակը ձեռքին կանգնած էր վերակացու Հ. Գրիգորյանը։

— Ո՛րտեղացի ես, — հարցրեց Կոմիտաս վարդապետը։

— Զանգեզուրցի, խնձորենկ դպրուցի, — համարձակ պատասխանեցի ես։

— Ապրես, Երգել գիտե՞ս։

— Այո՛, հայր սուրբ, գիտեմ։

— Հապա մի երգիր տեսնեմ. որը լավ դիտես՝ այն երգիր։

— «Ձայն տուր, ո՛վ ծովակա՛ն»-ը երգեմ։

— Երգի՛ր, երգի՛ր։

Ու երգեցի այնպես, ինչպես սովորել էի դպրուստ պատահական երգողներից, հարսանիքների կամ խնջույքների ժամանակ։ Երգելուց հետո անհամբեր սպասում էի իմ «հաղթական» ընդունելությանը։ Բայց Կոմիտաս վարդապետը մի պահ ուլիղ հայացքով դիտելով ինձ, մի երկար «հը՛մ» արեց, ապա հարցրեց.

— Գլուղում շա՛տ ես երգել։

— Այո, հայր սուրբ, — ավելի ընկճված տրամադրությամբ պատասխանեցի ես։

— Ձայնդ փչացրել ես, երեի զուռնայիների հետ ես երգել։

— Այո, հարսանիքներում։

— Եվ գինի, օղի էլ խմել չէ՞ս։ Ա՛յ դու զուռնաչի՛։ Հիմա գնա՛, մի ուրիշ անգամ կկանչեմ։ — Ու ավելացրեց. — Երկու շաբաթ ոչ պանիր, ոչ ընկույզ, ոչ էլ թթու-կծու բաներ չտես և ոչ էլ րաց օղում երգես, հասկացա՞ր, դե գնա՛։

Քնչպիսի ասում են՝ «խորտակված» հույսերով դուրս եկա դռնիցից ու միացա երգեցիկ խմբի մեջ շրջանավաժների խմբին։ Իսկ ընդունվածները մնացին դռնիցից մտնելու փորձությունների համար։

Պետք է ասել, որ երգեցիկ խմբի անդամ լինելը մեծ պարծանք էր Ճեմարանի ուսանողի համար, որովհետև երկիրը հատուկ պատիվ ու հարգանք ուներ շրջապատում և վաղելում էր Ճեմարանի վարչության համակրանքը։ Երգիչները դառնում էին Կոմիտաս վարդապետի հատուկ հոգատարության ներքո։

Վարդապետը հարցրել է իմ մասին և պատվիրել, որ միասին գնանք իրեն մոտ։

Շարաթ օր էր։ Երեկոյան ժամերգությունից հետո, աշխատանքային շրջերը գնալու պարտեզի բաղնիքում էին Կոմիտաս վարդապետի պարտեզի բաղնիքում ծաղիկներն ու ծառերը։ Նա նստած պարտեզում՝ իր ձեռքով շինած տապալարի մուտքի մոտ գրած գրասեղանի առաջ դրում էր, երբ ևս և Սուրենը ակնածանքով ներս մտանք պարտեզը և կանգ առանք մի տասը քաջ հետախույզան վրա։

— Հը՛, զուսնալինե՛ր, Էկե՛լ եք, — նկատ



ԿՈՄԻՏԱՍՈՎԱՐԴԱՊԵՏ

Անցավ մոտ մի ամիս։ Երգեցիկ խմբի ամեն անգամվա հավաքույթը խորը հուզում էր իմ սիրտը և պատանեկան մոտորումներով փոթորկում իմ հոգին։

Մի օր էլ իմ դասընկերներից Սուրեն Տեր-Գրիգորյանը հայտնեց ինձ, որ Կոմիտաս

տեղով մեկ, ասաց նա։— Ենկեք նստեք, հիմա ես կվերջացնեմ։

Երկար շապտանցինք, վերջացնելով աշխատանքը, Կոմիտաս վարդապետը դարձավ մեկ և հարցրեց։

— Էն ո՞վ էր երեկ գիշեր երգում լճի ափին: Զուտնաշիններ, չե՞մ ասել, թե բաց օդում չերգեք:

Մենք զարմացանք, որ նա իր սենյակում նստած, համարյա կես կիլոմետր հեռավորության վրա, կարողացել է իմանալ որտե՞ղ են երգում և ո՞վքեր են երգում: Մենք չկարողացանք ծածկել մեր հանցանքը ու խոստովանեցինք ճշմարտությունը:

— Ձայնդ սկսվել է մաքրվել և գույնը տեղը գալ:— դառնալով դեպի ինձ ասաց Կոմիտաս վարդապետը և ավելացրեց:

— Պատվիրածներս կատարում են, այո:

— Այո, հայր սուրբ, կատարում եմ: Ոչ միայն աղի կծու բաներ չեմ ուտում, այլ վախենում եմ քաղցրն էլ ուտել,— քաշվելով պատասխանեցին:

— Հա՛ հա՛ հա՛, — իրեն հատուկ վարակիչ ծիծաղից հետո ավելացրեց.— Ա՛յ շատ ապրես, այդպես էլ կշարունակես, իսկ վաղվանից կսկսես հաճախել խմբի փորձերին: Հիմա սպասեք, ձեզ խաղողով հյուրասիրեմ:

Այս ասելով, տեղից վեր կացավ, որ տաղավարից խաղողը բերի: Մենք արագ ոտքի լիանք և շնորհակալություն հայտնեցինք ու ներողություն խնդրեցինք, որ չենք կարող մնալ, որովհետև շուտով ստերտոդոթյան դանդաղ կտան և մենք կարող ենք ուշանալ, ու «թեև արագ, ուրախացած, հեռացանք:



Միջահասակից քիչ բարձր, վայելուչ կազմովածքով, չուրք դիմագծերով, խաբարյալ աչքերով, խոհուն հայացքով, կլորած, ճաղատ գլխով, կարճամազ մուրուսով մի մարդ էր այդ ժամանակ Կոմիտաս վարդապետը: Քայլում էր ուղիղ կենցվածքով, աշխույժ, առանց այս ու այն կողմ նայելու: Խոսում էր զգացված տոնով, հակիրճ, թեթև հումորով, թավ, դուրեկան, կրծքի մախմուր ձայնով:

Համապատասխան իր հոգևոր կոլմանը՝ Կոմիտաս վարդապետը դուրսը, պաշտոնական ժամերին, հանգում էր սև սքեմ, գլուխը ծածկում վեղարով, իսկ քնակարանում՝ թեթև, կաթնագույն բեհեզյա սենեկազգեստ, առանց գլխարկի: Սենեկազգեստի երկու կողմից էլ ուներ ծոցազրպաններ, սուր միշտ կային սրածայր մատիտն ու ծոցատետրը, նշումների և գրառումների համար:

Կոմիտաս վարդապետն ուներ աշխատանքային ռեժիմ: Զրոսում էր օրվա խաղաղ ժամերին, երբ քիչ էր լինում շարժումը դուրսը, կամ վաղ առավոտյան ու երեկոյան խաղաղ ժամերին, միշտ էլ համարյա մեկուկուսուկուս 4—5 տարվա ընթացքում են չեմ հիշում մի դեպք, որ նա զրոսանքի դուրս եկած լինեի որևէ միաբանի հետ, ինչպես

անում էին էջմիածնի մյուս միաբանները: Ավելի շատ սիրում էր զրուցել Ժեմարանի աշակերտների հետ:

Հանդիսավոր կամ կիրակի օրերին, երբ Մայր Տաճարում վերջանում էր արարողությունը և հարյուրավոր մարդիկ գնում էին Ներսիսյան լճի ափին զրոսանելու, որոնց թվում և շատ միաբաններ, նա, ընդհակառակը, իր քայլերն ուղղում էր դեպի քնակարանը շտապողականությամբ: Նա չէր սիրում խորհրդած հասարակությունը և խուսափում էր նրանից, գերադասելով մենակությունը:

Կոմիտաս վարդապետը վայելում էր ամբողջ ուսանողության սերն ու համակրանքը: Բոլորը, մեծ թեև փոքր, առանձին պատկանաքով էին խոսում նրա մասին: Այդ բանի պատճառը նրա բարիհեղ բնավորությունն էր, խոհուն ընթացքը, պարզ ու սրտագին վերաբերմունքը դեպի շրջապատը:



Էջմիածնի Մայր Տաճարի հյուսիսային բակի արևելքից-արևմուտք ամբողջ երկարությամբ կառուցված էին միաբանների հնադարյան խուցեր, մենարանները: Այդ մենարաններում էին ապրում սարկավադները, արեղաները և վարդապետները: Մենարանների հետք հնադարյան, բարձր պարիսպներով պատած վանքի գլուխգործոց էր: Մենարան խուցերի արևմտյան կողմը վերջանում էր բարձր պարսպաքարեզրով: Այդ մասում դեռ պահպանվում էին հինավուրց վաղարշապատ բերդաքաղաքի արտաքին և ներքին պարիսպները: Արտաքին բերդապարիսպը վերջանում էր վանքի արտաքին դարբասով, որը բացվում էր քաղաքի կենտրոնական հրապարակի վրա: Այդ դարբասով մուսնելով արտաքին գավիթը, մոտ հարյուր քայլ զնալով պետք էր անցնել Տրդատա դռնով և ապա մտնել վանքի բակը: Հյուսիսային կողմից այգու պարիսպները, որոնց վերջն էր արտաքին մեծ դարբասը, հարավից վանական խուցերի շարքը, արևմուտքից Տրդատա դռան պարիսպը, արևելյան կողմից ներքին բերդապարսպից մնացած մի բարձր բուրդ պարիսպում էին իրենց մեջ մոտ 250 քառակուսի մետր տարածություն, բոլորովին անտեսանելի դրսի կողմից: Պարիսպներով պարիսպված այդ անտեսանելի բակը, միայն մի նեղ, այն էլ վերնածածկած, մուրց ուներ վանքի բակի կողմից, խուցերի արանքով: Այդ բակի արևելյան անկյունում կար մի երկհարկանի, պատշգամբով համեստ քնակարան, ծաղկապարտեզով: Այդտեղ էր ապրում Կոմիտաս վարդապետը: Միաբաններից ոչ ոք այդպես մեկուսացած առանձնարանակարան

լուներ, Խրիմյան Հայրիկի հատուկ հոգատարության հետևանքով, Կոմիտաս վարդապետին տրված էին բոլոր հնարավորությունները աշխատելու համար, Բնակարանն ու պարտեզը չէին երևում գետնի վրայից, Բարձր պահպանների ամփոփ գրկում, հեռու էր դրսի աղմուկից և հասարակության հայացքից:

Բնակարանը բաղկացած էր վարի և վերի սենյակներից: Վարին ցախատունն էր և սպասավորի կացարանը, իսկ վերևում ապրում ու աշխատում էր ինքը: Վերևի սենյակը բաղկացած էր ննջարանից ու աշխատանքի սենյակից: Այստեղ էր գրված ազգային բաերար Մանթաշյանից նվեր ստացած դաշնամուրը: Սենյակի կահավորությունը համեստ, պարզ ու վերին աստիճանի մաքուր էր: Պատերից կախված դիմանկարներից հիշում եմ Բեթհովենի, Շոպենի, Չայկովսկու, Բախի, Եկմալյանի, Հ. Թումանյանի, Խ. Արուստյանի, Մեսրոպ Մաշտոցի ու Խրիմյան Հայրիկի դիմանկարները: Գրասենյակի վրա գրված լուսանկարներից հիշում եմ իրեն՝ Կոմիտասի և զերասան Արելյանի լուսանկարները միասին, Արշակ Չոպանյանի հետ էլ առանձին՝ նկարված արտասահմանում: Կային և ուրիշ լուսանկարներ: Բացի լուսանկարներից, գրասենյակի վրա կար մի ալյուր, որի մեջ դեռևս կաժ էին հայկական, պանազան գավառների տիպիկ տարազով կանանց, աղջկանց, տղամարդկանց նկարներ և Գ. Բաշինջադյանի Անիի ավերակների տեսարաններից բացիկները: Գրքերի հատուկ պահպանի փոխարեն, հիշում եմ կարծիր փայտից գրակալը, որի աստիճաններում դարձված էին բավական գրքեր և երաժշտական տետրեր, մատյաններ: Աշխատանքի սենյակը միաժամանակ ծառայում էր որպես ընդունարան: Այդտեղ էլ նախաճաշում և թեյում էր հայր Կոմիտասը:

Բակը ներկայացնում էր իրենից արեելյան հեքիաթների մեջ նկարագրված մի ընաշխարհիկ պարտեզ-ծաղկանոց: Մեջտեղը սրբատաշ քարերով սալահատակած մի ավազան, ադրյուրաչրի շատրվանով, որի մեջ խալտում էին փոքրիկ ձկնիկներ: Ավազանի շուրջ բոլորը բազմավետ, բազմերանգ ծաղիկների թմրիկներ ու մարգեր, իսկ պարտեզի արևմտյան ծայրում՝ երկու նոնենի, երկու ծիրանի և մեկ տանձենի ծառեր, Կոմիտասի ձեռքով տնկած: Հյուսիսային ու հարավային կողմերում վարդաթփերի շարքերն էին, իսկ արևելյան մասում, որ ընակարանն էր, նրա դիմացը, պարտեզի ծայրում, մանրաթերթիկ, հոտավետ վարդաթփերով չրջապատված մի տաղավար, ուր գրված էր մի փայտե թախտ մաքուր սավանով ծածկած, թախտի վրա մի փոքրիկ գլխարարձ, դիմացն էլ մի փոքրիկ գրասենյակ: Տարվա տաք եղանակներին Կո-

միտաս վարդապետը այստեղ էր անցկացնում օրվա մեծ մասը: Պարտեզ-ծաղկանոցի կենտրոնական տարածությունը բոնում էին բազմապիսի ծաղիկները: մախմուրաթներ ծրքայական վարդը, պարսկական նարգիզը, եգիպտական շուշանը, հնդկական կակտուսը, հայկական մեխակը և այլ ծաղիկներ վարդարում էին պարտեզը և դարձնում այն մի հմայիչ բուրաստան: Ծվ այդ պատահական չէր. Կոմիտասը սիրում էր ծառ ու ծաղկունքը, նրա հոգին ու սիրտը խոսում էին բնության հրաշալիքների հետ: մայրական հոգատարության մեջ խնամում, դուրգորում էր մինչև մի ծաղիկ իր պարտեզում: Ամեն մի ծաղիկի մեջ հոգի էր նրա համար, ամեն մի ծաղիկի մեջ իմաստ էր գտնում նա: Երգ ու ծաղիկ— ահա նրա ստեղծագործության էությունը:



Ընամարանի երկրորդ դասարանումն ենք Դասի զանգը տվել և և վերակացու Հ. Գյուրյանը շտապեցնում է աշակերտներին դասարան գնալու: Մեր դասարանում երաժշտության-երգեցողության դաս է. անհամբեր սպասում ենք դասատուին: Մանում է Կոմիտաս վարդապետը, իրեն հատուկ լրջությամբ, աշխույժ քայլերով մոտենում է սուրիոնին և մի պահ հայացք գցելով ոտքի ելած դասարանի վրա, մեղմ ձայնով ասում է.

— Նստե՛ք:

Անշշուկ նստում ենք բոլորս: Կոմիտաս վարդապետը բաց է անում մատյանը ու առանց ստուգում կատարելու կանչում է.

— Տե՛ր Գրիգորյան Սուրեն, Ի՛նչ եք պատրաստել այսօրվա դասի համար:

— «Մոկաց Միրզին» երգը՝ ձայնախմբով, — պատասխանում է Սուրենը ոտքի կանգնելով:

— Հապա երգիր:

Սուրենը, որ երաժշտության մեջ ուժեղ աշակերտներից էր, համարձակ ու անսխալ երգում է դասը:

— Շատ ապրես, նստիր, — ասում է նա և գնահատական նշանակում:

Այնուհետև մի երկու հոգու ևս ստուգելուց հետո, անցնում է նոր դասի քաջատրություն:

— Այժմ ծանոթանանք ժողովրդական երգերի մի այլ տեսակի հետ, որով մեր ժողովուրդը առաժական ձևով իրեն ծաղրն է անում խորամանկ շահամուլ մարդկանց հասցեին, — ասում է Կոմիտաս վարդապետը ու կավիճը վերցնելով գրում է գրատախտակի վրա.

Վեղվես դնաց մտավ ջրաղաց,

Թաթեր վերուց մի բոլ խաղաց...»

նախ կանգ է առնում բառերի շեշտադրության, առողջանություն ու արտասանության վրա, երգելով, ինտոնացիայով արտահայտում ազգիս բնավորության գլխավոր հատկանիշները այնպես տպավորիչ կերպով, որ մենք պատկերացնում ենք ազգիս ջրազացում իր բոլոր արարմունքներով:

Մեր դասարանը, որ հայտնի էր Ճեմարանում իր շարաններով, շնչապահ լուծված ու լարված ուղարկության մեջ էր Կոմիտաս վարդապետին:

Մի անգամ էլ դասի ժամանակ Կոմիտասը բացատրում էր հայտնի մարտական երգ՝ «Լուսինի իմաստը», նրա պատմական ու ազգագրական ծագումը և թե ինչպես, ինչ տեմպով և պաֆոսով պետք է կատարել այդ հերոսական երգը: Ամբողջ դասարանով այնքան հմայվեցինք նրա ասմունքով, որ միաբերան խնդրեցինք մի բան արտասանել: Կոմիտասը զիջեց մեր թախանձանքին ու արտասանեց Ալիշանի «Հրազդան» ոտանավորը: Նրա դուրեկան, թավշյա, կրծքաձայնով և սրտաբուխ առողջանությամբ արտասանած «Հրազդան», «Գեասկո իմ հայրենի, Հրազդան, ցրի՛կդ իմ անուշիկն քառերը մինչև հիմա վշ հնչում են իմ ականջներում:

Կոմիտասն իր արտասանությամբ այնպես կախարդեց մեր հոգին, ինչպես կարող է հմայել ու կախարդել գեղարվեստական ասմունքի լավագույն վարպետը:



Ինչպես հայտնի է, Ճեմարանը գիշերօթիկ քաղաքացույց դպրոց էր: Մոտ երեք հարյուր հոգի տաանողությամբ կար այն ժամանակ Ճեմարանում: Աշխարհի բոլոր վոկալներից, տարբերակներ կային, ուղարկում էին տղաներ էլ միաձնում սովորելու: Սակայն մեծ տոկոսը կազմում էին Արևմտահայաստանից և Ռուսաստանից ու Կովկասից եկած տղաները, գլխավորապես յաշխատավոր ընտանիքի երեխաները:

Ճեմարանի սաներն ընդունվում էին մեծ մրցությամբ, որի հետևանքով էլ ավելի ընդունակ երեխաներին էր հաջողվում ընդունվել Ճեմարան. իսկ և՛ թե քննություն հանձնողը լավ ձայն տներ, նրա վերաբերյալ անում էին որոշ գիշերներ:

Այս հանգամանքը նպաստում էր Ճեմարանում ձայնեղ աշակերտների թվի աճին: Ուստի լղարմանալի չէ, որ 70—80 հոգուց ռադկացած բաղմանաձայն երգեցիկ խումբը միայն տղաներից լինելով, ուներ սոպրանո (գիսկանդ), ալտ՝ առաջին և երկրորդ, տենոր՝ առաջին և երկրորդ, քաթիտոն և բաս՝ առաջին և երկրորդ: Տարեքային տե-

սակետից Ճեմարանում սովորում էին 8—10 տարեկան երեխաներից մինչև 20—22 տարեկան երիտասարդներ (լսարաններում): Այն ժամանակ Ճեմարանն ուներ զուգընթաց դասարան, որը համարվում էր նախապատրաստական՝ առաջին դասարանը փոխադրվելու համար: Այդ և առաջին դասարանի աշակերտներից էլ երգում էին խմբի մեջ որպես առաջին ձայն դիսկանտներ և ալտեր: Այնուհետև՝ մինչև 2 դասարան, որից հետո էլ երեք լսարաններ՝ քաղաքացույցի ծրագրով: Այսպիսով Ճեմարանը ավարտելու համար զուգընթաց դասարանից մինչև 9 լսարանը, պետք էր առանց դասարանում մնալու, ամեն տարի փոխադրվելով, սովորել 10 տարի: Ուրեմն երգիչ ուսանողը այդքան ժամանակ մասնակցում էր թե՛ քառաձայն խմբին և թե՛ հոգեծր երաժշտությանը: Մայր հաճարում:

Երգեցիկ խմբի պարապմունքները տեղի ունեին շաբաթը երկու անգամ, Ճեմարանի հանդիսարանում, Կոմիտաս վարդապետի դեկավարությամբ: Երգիչներս առանձին հաճությամբ էինք հաճախում պարապմունքներին, որովհետև ոչ միայն սովորում էինք հոգեծր արվեստը, այլև մեծ քաջակամություն էինք ստանում:

Բացատրում էր անցնելիք երգի բովանդակությունը, բառերի արտասանման եղանակը, որ պալատի բարբառ լինելը, որ դարաշրջանին պատկանելը, կենցաղի որ կողմին վերաբերվելը և հետո սկսում էր մեթոդիայի ուսուցումը: Հաճախ երգի մեթոդիան կամ մայր եղանակը ինքն էր նվազում և կատարում՝ նախքան սովորեցնելու: Երգում էր գագաղած, թավ, կրծքի ձայնով, տրի ծավալը երկու և կես ությակից ավելի էր: Վարդապետներից մեկը, որը հայտնի էր էլ միաձնում իր կատակաբանությամբ, նրան անվանել էր ծավալների շտեմարան:

Կոմիտաս վարդապետը պարապմունքների ժամանակ շատ լուրջ և խստապահանք էր: Բայց երբ նկատում էր հոգեւածություն խմբի մեջ, մի հաճելի կատակով ծիծաղացնում էր լողորիս և կրկին թարմացնում խմբի տրամադրությունը:

Ամենից դարմանալին նրա լողորիսն էր և չափ տալը երգի կատարման ժամանակ: Ութուն հոգի միաժամանակ երգելիս մի փոքրիկ ախաճ անդամ չէր մյուսիսում նրա լողորիսներից. անմիջապես գաղաղացնում էր երգը և մատով ցույց տալիս երգողին, որը կես, նուրբիսկ մի քառորդ ուստի՛նք ցածր կամ բարձր էր վերցրել նուտան: Ուղիղ, զուգնալի՛ս ասելով, նորից կրկնել էր տալիս երգը: Չափ տալիս լարվում էր ամ-

բողջ մարմնով և հոգով: Այնպիսի երգեր, ինչպիսիք Ան «Լո լո»-ն, «Գուժանի երգը» և այլն, ուր կան արագ և դանդաղ շափեր, միաժամանակ բասերին, տենորներին, ալտերին, դիսկանտներին առանձին-առանձին նշան էր անում ձեռքերով, գլխի շարժումով և հայացքով: Օրինակ՝ աչ ձեռքով առիս էր կես բախում, ձախով մեկ ութերորդական, գլխի թեթև շարժումով մեկ ամբողջական և այլն, մանավանդ այն դեպքերում, երբ երգը կատարվում էր ոչ թե քառաձայն, այլ ութաձայն, մինչև իսկ տասներկու ձայնով: Այդպիսի բարդ ներդաշնակության հասնելը ամենահմուտ խմբավարներին էլ դժվարություն էր հաջողվում:

Խումբը ելույթներ էր ունենում բոլոր հանգիսավոր տոնակատարությունների ժամանակ Ճեմարանի համերգների դահլիճում և մեծ սրների ժամանակ Մայր Տաճարում:

Առանձին շքով ու ոգևորությամբ էր կատարվում Ճեմարանում Վարդանանց Տոնը և Ճեմարանի տարեկանը, որոնց ներկա լինելու համար դալիս էին քաղմաթիվ հյուրեր Թիֆլիսից, Նրեանից և այլ քաղաքներից:

Այդ տոնահանգներին կարգն էր Կոմիտաս վարդապետը իր երգեցիկ խմբով:



Աշնան օրերն էին: Թիֆլիսի համա-անդերկովկասյան երգեցիկ խմբերի ստուգատեսին փառավոր հաղթանակ տանելուց հետո Կոմիտաս վարդապետի խմբի անունը հռչակվել էր ամենուրեք: Նրեանից և Բաքվից նա հրավեր ստացավ համերգ տալու:

Նրեանի այն ժամանակվա լավագույն թատերասրահը այժմյա «Սպայի տան» թատրոնն էր, որը պատկանում էր Զան-փոյազյաններին: Համերգից երկու օր առաջ բոլոր տոմսերը վաճառված էին: Թատրոնի դահլիճը, պատշգամբը, միջանցքները լիքն էին տնկնդիրներով: Համերգն սկսելուց անկող ժամ առաջ էջմիածնից մեք խումբը հասել էր Նրեան և Կոմիտաս վարդապետի խիստ կարգադրության համաձայն, մենք հանգրստանում էինք բեմի հետևի սենյակներում: Կարգադրված էր սառը ջուր լիմել, հաց ու պանիր, մրգերեն, քաղցրեղեն չուտել: Համերգից սուաջ, այլ խմել մի-մի բուժակ եփած, բայց զուլացած կաթ, մեղր լցրած մի քանի կաթիլ կոնյակ: Նրեանյան ժամը 8-ին վարդապետը բացվեց և Նրեանի հասարակությունը բեմի վրա տեսավ 90 հոգույց

բազկացած Ճեմարանի երգեցիկ խումբը՝ Կոմիտաս վարդապետի ղեկավարությամբ:

Առաջին համարը երգեցինք «Գարուն ա ձուռն ա արևը»: մնացածների հերթականությունը՝ չլավ լիմ հիշում, բայց միտա է, որ երգեցինք «Ստեփան յարա», «Շողեր շանա Վալի արգը», «Ալադյազ սարն ամպիկ ա», «Խու-մար պատկե», «Գնա, դնա քսիկս եմ», «Կուժն առա, ելա սարը», «Իմ լինարի յարը», իսկ վերջը՝ «Լո լո»-ն:

Ամեն մի համարից հետո դահլիճը թրնդում էր ծափահարություններից: Իսկ «Լո լո»-ից հետո ծափերի ափսոսի փոթորիկ յարձրացավ դահլիճում, որ ստիպված եկանք երկրորդ, երրորդ անգամ կրկնել: Համերգից հետո Կոմիտաս վարդապետը կարգադրեց՝ չցրվել և մի քանի րոպե մնալ, որպեսզի կոկորդիսները, ձայնարարները հանգրստանան և դրսի սառը օդից լիտանդեն:

Սակայն դահլիճը շարունակում էր թնդալ ու լավում էին բացականչություններ: Մի երկու րոպե լանցած, երեք հոգի, հանձնա-ժողովի նախագահի ղեկավարությամբ, մտան բեմ և պատկառանքով մոտենալով Կոմիտասին, ասացին հետևյալը:

— Ամբողջ հասարակությունը խոնարհաբար խնդրում է հայր Կոմիտաս վարդապետից երգել մի երգ:

Նրկար թախանձանքից հետո, Կոմիտասը ավելց իր համաձայնությունը:

Վարդապետը քաշեցին, բեմը բացվեց: Ամբողջ թատրոնը շնչապահ ուշադրությամբ հետևում էր Կոմիտասի շարժումներին: Նա մոտենավ դաշնամուրին, նստեց աթոռի վրա և ձեռքերը զրեց ստեղծիկի վրա ու մի պահ տիրեց հանդիսավոր լուծություն... Այդ մի վայրկյան էր, երբ բոլորս էլ կախարդվել էինք այդ մեծ մարդու հմայքով:

Ահա հնչեցին դմայիլ սկիզբները և Կոմիտաս վարդապետն սկսեց «Անտու-նի»-ն: Ինչպիսի՞ թավջութն փափկություն ձայնի, ինչպիսի՞ խորություն ապրումների, ինչպիսի՞ զրսնորում վշտի, կարտաի ու տենչանքի... Մինչև վերջին «Տո յաճ, տնա-վեր»-ը, էլիկտրականացել էր բեմն ու դահլիճը...

Վարդապետն իջել, Կոմիտաս վարդապետն ու խումբը գնացել էին արդեն բեմից: Իսկ դահլիճում դեռ շարունակում էր ծափերի որոտը:

(Շարունակվի)

ԳԼԵՁՈՐԻ ԴՊՐՈՑԻ ԿԵԺ ՄԱՆՐԱՆԿԱՐԴՈՒՄ ԹՈՐՈՍ ՏՆՐԱՆՍԻՆ



որոս Տարոնացին, կամ ինչպես երբեմն անվանել են նրան՝ Մշեցին, ԺԴ դարի առաջին կեսի Գլաձորի մանրանկարչության դպրոցի խոշորագույն ներկայացուցիչն է։ Նրա կենսագրության վերաբերյալ ընդհանրապես լայն տեղեկություններ չունենք։ Հիշատակարաններից դիտենք միայն, որ նա ծագմամբ Տարոնի Մուշ քաղաքից է։ Սարգիս երեցի որդին։ Մոր անունը եղել է Մարիամ, իսկ պապինը՝ Սիարի։ Սովորել է Գլաձորում, հայտնի գիտնական վարդապետ Ծսայի Նշեցու մոտ։

Թորոս Տարոնացին եղել է ոչ միայն խոշորագույն մանրանկարիչ, հրաշալի գրիչ, այլ նաև լայնորեն կրթված ու զարգացած մարդ։ Ահա թե ինչ է գրում նրա մասին իր ժամանակակից բանաստեղծ և գրիչ Մխիթար Նրպրենկացին 1314 թվականին, որը հատկապես եկել էր Գլաձորի համալսարանը՝ բարձրագույն կրթություն ստանալու համար։

«Ծն նուաստանուն Մխիթար կոչեցեալ Նրպնկայեցի, զնալով ի մայրն իմաստից Գլաձոր առ ոռոս Ծսայեայ վարդապետի ի վարժումն աստուածիմաստ գրոց... և հասնդիպեալ բարեմիտ և քաղցրատեսակ եղբօր՝ յցեալ ամենայն իմաստութեամբ, ևս առաւել

գրականութեամբ² և ծաղկողութեամբ անուն կոչեցյալ Թորոս՝ ի Տարոն դաւառէ³։

Թորոս Տարոնացու ասպարեզ իշած ժամանակ Գլաձորում արդեն կար բավականին զարգացած մանրանկարչական դպրոց, որտեղ աշխատում էին այնպիսի նշանավոր վարպետներ, ինչպիսիք են Մոմիկը, Պողոսը և ուրիշները։

Մանրանկարիչ Թորոսի նկարազարդած մեզ հայտնի առաջին ձեռագիրը «Ծսայի Նշեցու Ավետարան»-ն է 1307 թվականի գորչովթյամբ (Վենետիկ, № 1917)։ Ինչպես հիշատակարանն է տեղեկացնում, այն գրվել է Գլաձորյան համալսարանի ղեկավար Ծսայի վարդապետ Նշեցու և նրա օգնական Գալթի համար։ Այս Ավետարանը իր նկարազարդումների համեմատությամբ, 18 ամբողջական էջերի մանրանկարներով հանդիսանում է մանրանկարչի ճշանավոր ստեղծագործություններից մեկը։ Թորոս Տարոնացին իր ստեղծագործության այդ վաղ շրջանում շատ թե քիչ դեռ հեռու է կիլիկյան արվեստի ազդեցությունից և նրա այդ աշխատանքը տոգորված է, եթե կարելի է այնպես ասել, լուրն Հայաստանի արվեստի ոգով։ «Ծսայի Նշեցու

2 Մեր կարծիքով, տվյալ ղեկագրում «գրականութիւն» բառը հոմանիշ է «գրչութեան» արվեստին, այդ հասկացության մեջ են մտնում ինչպես գրչությունը, այնպես և շարահյուսությունն ու ուղղագրությունը։

3 «Պատճառ սահմանաց գրոց», 1314 թ.։ Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները, էջ 104։

1 «Վարդապետ Ննիսէս, չիւնա յաղօթս զԹորոս ծաղկող, և զպապն իմ Սիար, և զհայրն իմ Սարգիս, և զմայրն իմ Մարիամ՝ ի քաղաքէն Մշու։ Աստվածաշունչ 1332 թ., Վենետիկ, № 1007/12։ Տե՛ս Լ. Ս. Խաչիկյանի կազմած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Նրևան, 1950 թ., էջ 247։

Ավետարան»-ի մանրանկարները աչքի են ընկնում մեծ գեղանկարչականությամբ և ներդաշնակորեն ընտրված գույների թարմությամբ:

Այնուհետև, 1311 թվականին, Թորոս Տարոնացին նկարազարդել է, ինչպես կարելի է ենթադրել, ձեռագրի Հիշատակարանից¹, ևս մի Ավետարան, որանից 22րդ էջում կարգում ենք հետևյալ հիշատակությունը. «պանպիտան Թորոս սարկաւագ՝ զնկարող սուրբ պատկերացս, աղաչեմ յիշեա ի Տէր Յիսուս Քրիստոս»:

1314 թվականին Թորոսը նկարազարդել է մի այլ ձեռագիր՝ գրված վերը հիշված Մխիթար Նրզնկացու կողմից:

Վերջին անգամ Թորոս Տարոնացու անվանը հանդիպում ենք իր ձեռքով գրված 1316 թվականի մի ձեռագիր-հավաքածուի մեջ (Մատենադարան, № 2187):

Թե երբ է Թորոս Տարոնացին ավարտել Գլաձորի համալսարանը՝ հայտնի չէ, բայց որոշ է, որ 1317 թվականին նա արդեն վարդապետ էր: Ինչպես այդ, նույնպես և հաջորդ տարիները եղան մանրանկարչի ստեղծագործության ամենարեզուն տարիները:

Դժվար է ասել, թե ընդամենը քանի ձեռագիր է ձեռավորել ու գրել Թորոս Տարոնացին: Նրա գրչին կամ վրձինին պատկանող ձեռագրերից մեկ հայտնի են շուրջ քսանը²:

1) Տե՛ս «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 81:

2) Այս՝ այդ ձեռագրերը:

1) «Եսայի նշեցու Ավետարան», 1307 թ. (Վենետիկ, X 1917):

2) Ավետարան 1311 թ. (Թավրիզ, Բերդաբայի Ս. Աստվածածին եկեղեցի, Տե՛ս է. Ս. Խաչիկյանի կողմած «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 80, ենթագրում ենք, որ հիշատակարանում հիշված նկարիչ Թորոսը մեկ ժանոթ Թորոս Տարոնացին է, որը այդ տարիներին սարկավագ էր, իսկ Ավետարանը, ինչպես երևում է, նկարազարդվել է Գլաձորում):

3) «Պատմառ սահմանաց գրոց», 1314 թ. (Տե՛ս «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 102, Գարեգին արքեպիսկոպոս Լուսինյան, «Խաղաղական կամ Պոռչյանք հայոց պատմության մեջ, մասն Բ, Երուսաղեմ, 1944 թ., էջ 220: Սիրարփի Տեր-Ներսեսյանի մոտ այդ ձեռագիրն անվանված է «Գիրք լուծմանց»: Տե՛ս նրա աշխատությունը՝ «Վենետիկի Մխիթարյան հայրերի մատենադարանի ԺԲ, ԺԳ և ԺԴ դարերի նկարազարդ հայերեն ձեռագրերը», Փարիզ, 1936 թ., էջ 110 (Ֆրանսերեն):

4) «Թուղթը ներսիս Ենորհարույս», 1317 թ. (Տե՛ս Զ. Դ. Մ. Ալիբաև, «Սիսական», էջ 133, 136 և Գարեգին արքեպիսկոպոս Լուսինյան, «ձեռագրակցանք կամ Պոռչյանք...», մասն Բ, էջ 222: Զեյնալդար

Դրանք, հաշված վերջին ձեռագիրը, 1307—1332 թվականների գրչության են և բոլորն էր կատարված են Գլաձորում:

Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Վենետիկի Մխիթարյան հայրերի մատենադարանի ԺԲ, ԺԳ և ԺԴ դարերի նկարազարդ ձեռագրերը» խորագրով ֆրանսերեն արժեքավոր աշխատության մեջ Թորոս Տարոնացու ձեռագրերի մեծ թվից հանգամանորեն նկարազարդված և րավականին հաջող հետազոտված է 1307 թվականի Եսայի նշեցու Ավետարանը, Մենք կքննենք այսպես կոչված 1318 թվականի Եսայի նշեցու Աստվածաշունչը, որը հանդիսանում է Թորոս Տարոնացու լավագույն ստեղծագործություններից մեկը: Այդ ձեռագիրը հնարավորություն է տալիս մեկ դեհահատելու ինչպես նկարչի գեղարվեստական և հասարակականությունը, այնպես և նրա նշանակությունը Գլաձորյան դպրոցի մանրանկարչության պատմության մեջ: Ահա թե ինչ է գրում այդ Աստվածաշունչի մասին միջնադարյան հայկական մշակույթի հմուտ, մեծ գիտնական Գարեգին վարդապետ Լուսինյանը. «Ձեռագիրս ԺԴ դարու և Գլաձորի դպրոցի գրչության արվեստի գլուխ-գործոց»:

րացականում է «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ում:

5) Հավաքածու 1317 թ. (Վենետիկ, X 6897):

6) Ավետարան 1317 թ. (Մատենադարան, № 8336): Քվազրված է մեր կողմից, ձեռագիրը րացականում է «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ում):

7) Աստվածաշունչ 1317 թ. (Մատենադարան, № 253): Իրավացի չէ Թորոսը Դրամբյանը՝ ձեռագիրը թվագրելով 1313, Տե՛ս Եսայի նշեցու «Армянская миниатюра и книжное искусство» («Очерки по истории искусства Армении», Сборник статей, М.-Л., 1939 г., стр. 24):

8) «Ոսկեփորիկ» 1317—1318 թ. (Վենետիկ, № 265/1108): «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ում նշված է 1317 թ., այդ այն դեպքում, երբ նույն տարում սկսվել է ձեռագիրը, իսկ այն ավարտվել է 1318 թվականին: Տե՛ս Սիրարփի Տեր-Ներսեսյանի հիշված աշխատությունը, էջ 111):


9) «Եսայի նշեցու Աստվածաշունչ» 1318 թ. (Մատենադարան, № 206): Բ. Գ. Դրամբյանը այդ ձեռագիրը իրավամբ թվագրում է 1317 թվականին: Տե՛ս նրա «Армянская миниатюра и книжное искусство», стр. 24):

10) Ավետարան 1321 թ. (Քրիստանական Թանգարան, 14, Add. 15.111):

11) Ավետարան 1321 թ. (Երուսաղեմ, № 2300):

12) Ավետարան 1323 թ. (Մատենադարան, X 6282):

13) «Յաղագս և թե խորհրդաց եկեղեցույ Յրո Թմույի», 1325 թ. (Մատենադարան, № 560): «ԺԴ դարի



Նկար 1

հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ճիշտ չէ թվագրված՝ 1331 թ. Տե'ս Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի «Խաղրակյանք կամ Պոռչյանք...», մասն Բ, էջ 236)։

14) Աստվածաշունչ 1327—1328 թ. թ. (Բաղեշ, Ս. Կարապետ Ամրդուլու (Ամրդուլու) վանք, Տե'ս Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի «Խաղրակյանք կամ Պոռչյանք...», մասն Բ, էջ 236—237։ Ձեռագիրը բացակայում է ԵՊՀ գրադարանի հիշատակարաններում)։

15) Ավետարան 1329 թ. (Տե'ս ԵՊՀ գրադարանի հիշատակարաններում, էջ 215)։

16) Ավետարան 1330 թ. (Փիրղալիմյան, Վերջին, թ. 36։ Տե'ս Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի «Խաղրակյանք կամ Պոռչյանք...», մասն Բ, էջ 236։ Ձեռագիրը բացակայում է ԵՊՀ գրադարանի հիշատակարաններում)։

17) Աստվածաշունչ 1330 (1332) թ. թ. (Վենետիկ, Մ 1007։ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի այս ձեռագիրը թվագրվում է 1330 թ.։ Տե'ս Նրա «Խաղրակյանք կամ Պոռչյանք...», մասն Բ, էջ 238, իսկ Միքայիլի Տեր-Ներսիսյանի Նոր հիշված աշխատությունները է։ թե' դրի գեղեցկությամբ և թե' մանրանկարների, ծաղկազարդների ճոխությամբ)։

Ուսումնասիրելով Թորոս Տարոնացու մանրանկարները, մենք ծանոթանում ենք Գլաձորի գեղարվեստական դպրոցի նշանավոր ներկայացուցիչներից մեկի ստեղծագործությանը, որի համարվի, եռանդի ու ընդմեջ վերության հետ չի կարող մրցել Մեծ Հայքի ոչ մի նկարիչ։ Մանրանկարիչ Թորոս Տարոնացուն կարելի է համեմատել միայն Կիլիկյան Հայաստանի իր ժամանակակից հույանկված վարպետ Սարգիս Պիծակի հետ։

Թորոս Տարոնացին աշխատել է համեմատաբար ավելի բարենպաստ պայմաններում։ Նրա նկարազարդած «Նսայի Նշեցու Աստվածաշունչ»-ը 1307 և 1323 թվականների ավատարանները՝ Գլաձորի մյուս հուշարձաններից տարբերվում են նրանով, որ հեղինակը կանգնած չի եղել դժվարին դրության առաջ՝ տեղի նեղվածություն կամ թե մանրանկարների նյութերի անորակության տեսակետից, որպիսի դրության մեջ գտնվել են Գլաձորյան մյուս վարպետները։ Թորոս Տարոնացին, որպես «Գլաձորի մեծ մանրանկարիչ», ամենալայն հնարավորություններն է ունեցել ձեռագրերի նկարազարդման համար։ Սակայն, ինչպես երևում է Նրա նկարազարդած ձեռագրերից, միշտ չէ, որ նա հաշոգ կերպով է օգտագործել իրեն ընձեռված այդ հնարավորությունները։ Դրա մասին է վկայում, օրինակ «Նսայի Նշեցու Աստվածաշունչ»-ը, որտեղ մեծ ուղադրություն է դարձված աստվածաշնչական տեսարանների փոքրիկ մանրանկարներին և մյուս գեղարվեստական լեզուներին։

18) Ձեռագիր 1334 թ. (Մատենադարան, Մ 1373)։

19) Հավաքածու 1346 թ. (Մատենադարան, Մ 2187)։ Մինչև այժմ Թորոս Տարոնացուն պատկանող ձեռագրերի լրիվ թվագրումը հետազոտողների կողմից չի տրված։ Մեզ հայտնի չէ, թե ինչու հետագոյն ժամանակներում նշել են մի շարք ձեռագրերում մասին ուրիշ հետազոտողներ լուրս են Թե' մայի ուսումնասիրության ընթացքում մենք ձգտել ենք ի մի հավաքել ձեռագրերի անվանումները, որոնցից մեծ են տարբեր սկզբնաղբյուրներում, կազմել վերահիշյալ ցուցակը, որը, իհարկե, հավանություն չունի սպառելու ու ամբողջական լինելու։

6 Տե'ս Գարեգին վարդապետ Հովսեփյանի «Գրությունների արվեստը հին հայոց մեջ», մասն Գ, «Քարտեզ»։ Հայ հնագրության (Հայ գրի գյուտի 1500-ամյակի առթիվ), Վաղարշապատ, 1913 թ., էջ 46։

7 Տե'ս Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի «Խաղրակյանք կամ Պոռչյանք...», մասն Բ, էջ 223։

զազարդումներին (մեծ մասամբ լուսանցքներում) և համեմատաբար քիչ ուշադրություն է դարձված ավետարանական շարքերի սյուժետային պատկերմանը:

Շնաայի նշեցու Աստվածաշունչ-ը գրվել և նկարազարդվել է 1318 թվականին, Ձեռագրի ընթացական գրությունը խոսում է ոչ միայն աթ մասին, որ ձեռագրի պատվիրատուն ու սեփականողը եղել է Գլաձորյան համալսարանի պատվոգրը, այլ նաև ընդգծում է ձեռագրի՝ Գլաձորի մանրանկարչության դպրոցի գեղարվեստական լավագույն ստեղծագործություններից մեկը լինելը:

Ձեռագրի նյութը նուրբ մշակված առաջնակարգ որակի մագաղաթ է՝ $18,8 \times 26,2$ սմ., ընդամենը 589 թերթ: Գրիչներն են եղել րահաստեղծ Կիրակոս Երզնկացին և նրա եղբորորդին՝ «Գլաձորի ամենաշնորհալի գրիչներից մեկը»՝ Հովհաննեսը⁸: Ձեռագրերի գիրը շատ գեղեցիկ ու մանր բոլորագիր է, գրված սև թանաքով, ինչպես սովորաբար բնդունված է, երկու սյունակի վրա, ամեն մի սյունակը $6,5 \times 20,5$ սմ.: Կազմը ամուր է և գեղեցիկ, դարձնագույն կաշվով պատված և դրոշմվածքով (կազմի երեսին դրված է խաչ, իսկ հետևի կողմը՝ երկրաչափական բնույթի զարդանկար), ենթադրում ենք նույն ժամանակին պատկանող, ինչ որ ձեռագիրն է:

Ձեռագիրը պահված է բավականին լավ վիճակում, միայն տեղ-տեղ մանրանկարների և լուսանցազարդերի վրա կան ներկի շերտի թափվածքներ:

589ր էջի հիշատակարանում կա շատ հետաքրքիր, բայց դժբախտաբար անավարտ մի վկայություն այդ ձեռագրի «շարժման» մասին, Ձեռագիրը եղել է գերության մեծ օսնհավատներ-ի մոտ և ապա փախցվել է Տեր Մկրտիչ երեցի որդի Սպարշահի կողմից և նվիրվել իր նախնիների տիրոջը՝ Հովհաննեսին: Դժբախտաբար հիշատակարանում չի նշված, թե երբ է այդ տեղի ունեցել:

Դիտողին ամենից առաջ զարմացնում է ձեռագրի նկարազարդումների հարստությունը, գրեթե ամեն էջի վրա կա մի որևէ նկարազարդում, լուսանցքների բազմաթիվ զարդանկարները մեծ մասամբ կնդմված են յուսական մոտիվներից (բաժակաթերթից ու կիսաարմավից և այլն), Գլուխների սկզբի գլխագրերը տարբեր մոտիվներով են՝ մարդկային մարմիններ, թռչուններ, կենդանիներ, բուսական և երկրաչափական զարդարանքի ձևեր, ըստ որում Ավետարանների անվանաթերթերի առաջին տառերը



Նկար 2

կազմված են ավետարանիչների խորհրդանշաններից:

Աստվածաշնչի սկզբում, 3ր էջում, կան երկու մանրանկարներ. (Նկար 1), որոնք էլք բաժանում են երկու հավասար մասի: Վերին կեսը բռնած է «մարգարե-թագավորներ»-ի՝ Դավթի ու Սողոմոնի՝ հոր ու որդու կողք-կողքի կանգնած նկարը: Դավթի մարդարև ներկայացված է հին հրեական զգեստով, ձախ ձեռքով բռնել է մի ուրված մագաղաթ, իսկ աջով՝ եռատամ մովսիսական գավազան, Ձախից (դիտողի կողմից) դրված է Սողոմոնը: Հանդիսականին նայող նրանց դեմքերը արտահայտիչ են— Դավթի՝ սպիտակ մորուքով, դեմքի վրա խիստ արտահայտված կնճիռներով, իսկ Սողոմոնը՝ շատ երիտասարդական դեմքով, առանց մորուքի: Թորոս Տարոնացին Սողոմոնի գլուխը պատկերացրել է լուսապսակի մեջ, Դավթի և Սողոմոնի կերպարները կան նաև «Քրիստոսի ծննդարանությունը» մանրանկարի մեջ, էջ 259ր, որտեղ, սակայն, Դավթի գլուխը նույնպես առնված է լուսապսակի մեջ:

Ներքևում, նոր քննված մանրանկարի տակ դրված է «Ադամն ու Նվան իմաստություն ծառի մոտ» տեսարանը: Ադամի և Նվանի մերկությունը ծածկված է կեղտոտ մոխրա-

⁸ Տե՛ս Գրեգորի արքեպիսկոպոս Հովսեփյան, «Խորհրդակցությունը կամ Պատշաճություն», մասն Բ, էջ 223:



Նկար 3

դույն քսմաված ներկով, նրանգապանակը աչքի չի ընկնում գույների հարստությամբ. հիմնականում օգտագործվել են լաջվարդը, կարմիր և մուգ շուշանագույնը, շատ օգտագործված է և ոսկին:

4-ա էջում տրված է Մենդոց գրքի առաջին էջը (Նկար 2): Մեծ Ո-ի նման գրված խաղարդ է, որի ներքևի աղառ մասում ներդրաված են սիմետրիկ տեղադրված երկու հուշկապարիկներ, Այդ զարդարանքը գրվում է թերթի գրեթե կեսը, Գլխազարդի վերևը տրված են երկու թռչուններ, կանգնած իրար դիմաց, Գլխազարդին ձախ կողմից միանում է Ն գլխագիր տառը, դրված գրեթե ամբողջ էջի բարձրությամբ, որն ամփոփում է իր մեջ փոքրիկ մանրանկարներ ամստուծո արարչագործությունը՝ շարքից, Ն գլխագիր տառի փոքր մասնիկը պատկերում է գրչի կերպարանք, որին օրհնում է ձեռքը՝ դրված նրա դիմավերելով, Ավետարանի տեքստի մյուս չորս օտոդերը գրված են թռչուններով և զարդանկարներով, Լուսանցքներում կան բուսական մոտիվներով հրաշալի և բարդ զարդանկարներ, որոնք խաչով են ավարտվում:

Գունային նրբերանգն ալսուեղ արդեն համամատարար ավելի հարուստ է, Ամբողջ աշխատանքը, շնայած այսպես ասած մանրատվածությանը, իր ամբողջության մեջ թողնում է հույանապ տպավորություն:

Գրեթե նման անվանաթերթ ունի 1317 թվականի Աստվածաշունչը (էջ 8ա), որտեղ նույնպես տեսնում ենք Ո-ի նման մեծ գլխազարդ, բուսական զարդանկարների նույն մոտիվներով, որոնք պատկերում են խաչեր, գազաթներին երկու թռչուններով, Ձախ կողմից նույնպես կցված է ամբողջ էջով մեկ ձգված Ն գլխագիր տառը, 7 մանրանկար-տեսարաններով, Ամբողջ անվանաթերթը պահպանում է նույն գունային նրբերանգը:

Այդ երկու անվանաթերթերի համեմատությունն ինքնին խոսում է այն մասին, որ նորը՝ 1318 թվինը, հանդիսանում է նախկինի՝ 1317 թվականի կրկնությունը: Բայց դրա հետ մեկտեղ, պետք է նկատել, որ մանրանկարիչը կուրորեն չի պատճենահանել իր նախկին աշխատանքը, այլ մտցրել է մի քանի փոփոխություններ՝ հուշկապարիկներ, թռչուններ և այլն: Տարբերությունը նկատվում է նաև լուսանցազարդի մեջ:

Ընդհանրապես պիտի ասել, որ վերջին սշխատանքի անվանաթերթի մեջ նկատվում է հակում դեպի մանրատվածություն և նրություն, մի ոճ, որը հետզհետե ընդորոշ է դառնում մանրանկարչի հետագա շրջանի աշխատանքների համար:

Պետք է նշել, որ եթե 1317 թվականի ձեռագրի անվանաթերթի վրա առկա է Ն տառի և լուսանցքի զարդարանքի և բոլոր մասերի հավասարակշռությունը, ապա այդ նույնը չի կարելի ասել քննարկվող Աստվածաշունչի անվանաթերթի կապակցությամբ:

Ի միջի. այլոց պետք է կանգ առնենք 1317 թվականի Աստվածաշունչի ևս մի մանրանկարի վրա, որը տրված է անվանաթերթի դիմացը, (էջ 7բ (Նկար 3): Դա լրիվ մի էջ է, որտեղ մենք տեսնում ենք Մովսես մարգարեի պատկերը⁹, Մովսեսը ներկայացված է կանգնած, ձախ ձեռքում կա բացված մագաղաթ, իսկ աջը բարձրացված է վեր՝ երկնքի հատվածից երևացող օրհնող Ալի կողմը: Մանրանկարը հետաքրքրական է իր յուրահատկությամբ և հիշեցնում է որմանկար:

Անձամբ տեսած չլինելով 1317 թվականի Աստվածաշունչը, Սիրադիի Տեր-Ներսեսյանը հենվում է Մուրիհի հետազոտության

⁹ Ներքևում, պատկերի ոտքերի մոտ, կա մակագրություն՝ «Մովսես ա|ստու|ածա|յա|ս մարգ|ա|թ|ն», որը, ամենայն հավանականությամբ, ուշ շրջանի գործ է:

վրա¹⁰։ Մուրիկն այդ ձևադիրը մանրամասնորեն նկարագրել է և Մովսես մարգարեի մանրանկարը վերագրում է Թորոս Տարոնացուն։ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, լավ ծանոթ լինելով ինչպես այդ ձևադիրն, նույնպես և ընդհանուր առմամբ մանրանկարին Թորոս Տարոնացու աշխատանքի եղանակին (ոճին), ինչ որ պատճառով լուծւմ է, ոչինչ չի ասում այդ մանրանկարի մասին։ Մեր կարծիքով, Մովսես մարգարեի պատկերը Թորոս Տարոնացու վրձինի արդյունքը չէ։ Իրոք, եթե համեմատենք այդ մանրանկարի սճը, Թորոս Տարոնացու ինչպես այդ ձևադիրների, նույնպես և այլ ձևադիրների մարդկային կերպարանքների պատկերման հետ, մասնավորապես Հովհաննես ավետարանչի պատկերի հետ, ապա զգալի չի լինի համոզվել՝ դրանում։ Որպես Թորոս Տարոնացու վրձինին ոչ հատուկ տարրերություն Մովսես մարգարեի պատկերում աչքի է զարնում գլխի մազերի սանրվածքի հաջորդական եղանակը՝ դանդուր մազերը և, որ հիմնական է, գծային խիստ ուղիղությունը՝ հազուստի ծալքերի պատկերման մեջ։ Այնուհետև, կարելի է ցույց տալ նաև այլ տարրերով մանրամասնություններ, ինչպես, օրինակ, հոնքերի, քթի ձևերի հաղորդումը, ոտքերի գծազրկը, երկնքի հատված-խորհրդանիշը։ Եվ վերջապես կարելի է հենվել նաև մի էական տարրերության վրա—դա դույնների օգտագործման հարցն է։ Մովսես մարգարեի պատկերում ներկերը խամրած են, ոսկի չի օգտագործված։ Ոսկին փոխարինված է դեղին ներկի հաստ շերտով (օրինակ՝ լուսապսակի մեջ), մինչդեռ, ինչպես հայտնի է, Թորոս Տարոնացու մանրանկարներում ոսկին առատորեն օգտագործվել է։

Ձևադիրի երկրորդ մասի՝ նոր կտակարանի նյութը տեղարաշխված է հետևյալ կերպ. էջ 437բ—438ա և 441բ—442ա տրված են բարդ և ճոխ խորաններ, այսինքն՝ վարդարանքների համարարանի համար։

Այնուհետև հաջորդում են Ավետարանները, սկզբում ավետարանիչների պատկերով և նրանց համապատասխանող անվանաթերթով.

էջ 443բ—Մատթեոս ավետարանիչ.

էջ 444ա—անվանաթերթ.

էջ 462բ—Մարկոս ավետարանիչ.

էջ 463ա—անվանաթերթ.

էջ 475բ—Ղուկաս ավետարանիչ.

էջ 476ա—անվանաթերթ.

էջ 497բ—Հովհաննես ավետարանիչ (Պրոխորիոսի հետ).

էջ 498ա—անվանաթերթ.

Մանրանկարին հատուկ պատկերագրական նյութը տեղարաշխված է հետևյալ կերպ.

Ա) Մատթեոսի ավետարան

1. էջ 445ա—Քրիստոսի ծնունդը.

2. էջ 446ա—Քրիստոսի մկրտությունը.

Բ) Մարկոսի ավետարան

Բացակայում է այստեղ որևէ տեսարան, չհաշված լուսանցքներում դրված աննշան, շատ փոքր տեսարանները, ինչպես, օրինակ՝ հիվանդ կնոջը բուժող Քրիստոսը (էջ 466 ա)։

Գ) Ղուկասի ավետարան

3. էջ 476բ—Մարիամի ավետումը.

4. էջ 478ա—Տյառնընդառաջ.

5. էջ 491բ—Մուտք Երուսաղեմ.

6. էջ 493բ—նորհրդավոր դիշեր.

7. էջ 496բ—Համբարձումն.

Դ) Հովհաննեսի ավետարան

8. էջ 504բ—Ղազարոսի հարությունը.

9. էջ 506ա—Ոսնալվա.

10. էջ 507ա—Հոգեղալուստ.

11. էջ 510ա—Քրիստոսի խաչելությունը.

Քննենք առաջին հերթին խորանները (եկար 4)։ Դրանք ձևադրում 6 հատ են, երեք զույգ, յուրաքանչյուրը կառուցվածքի մեջ



նկար 4

¹⁰ ՏԷ՝ս Սիրարփի Տեր-Ներսեսյան, «Վեհնակիկի Մխիթարյան հայրերի մասնագրանի մ.Ո. ժ. Ե և ժ. Դ դարերի նկարագրող հայերեն ձևադիրներ», էջ 110.

արված սիմետրիկ ձևով՝ մեկը էջի հետևի կողմը, իսկ մյուսը՝ հաջորդ էջի երեսին:

Ուղղանկյուն խորանները գրավում են էջի ամբողջ բարձրության $\frac{1}{3}$ մասը, բացառությամբ առաջինի, բավականաչափ սեղմված, նրանք տրված են անտարելմանով վրա, հենված սյուների, Առաջին խորանը, երկու շատ բարակ սյուների վրա հենված, պայտածն կամարի մեջ, պատկերում է նվաճիտի կիսանդրին, նրկորդ խորանը, այս անգամ տրված երեք հաստ սյուների վրա, նույնպես պայտածն կամարի մեջ, ընդգրկում է Կարպիանոսի պատկերը, Լուպես նվաճիտը, այնպես և Կարպիանոսը, դեմքերով մեկը մյուսին դարձած, ձեռքներին ունեն մարգարեություններից քաղած տեքստերով մագալաթներ, նրանցից երկրորդի մագալաթի վրա ներքևից, կա նկարի ստորագրությունը՝ «ԳԹՐՈՒՆ, ալսինքն՝ «ԳԹՐՈՒՆ»:

Խորանների հաջորդ գույքերից մեկի վրա տրված է ծառի նշանը դիմանկարը, մյուսի վրա մի այլ դիմանկար, որը մեզ թվում է հենց իրեն՝ նկարչի՝ Քորոս Տարոնացու ինքնանկարն է:

Խորանների վրա ամենից առաջ ուշադրություն է գրավում նկարի նրբությունը, թուլանների պատկերման մեջ նկարչի մեծ դիտողականությունը և բարձր վարպետությունը:

Եթե թուլանների և կենդանիների պատկերման մեջ զգացվում է նկարչի դիտողականությունը դեպի կենդանի աշխարհը, ապա նույնը չի կարելի ասել խորանի բաղկացուցիչ մասերի՝ սյուների, խոյակների և այլնի մասին, որոնք կրում են զուտ զարդարանքային բնույթ, ըստ որում սյուների ոչ սիմետրիկ տեղադրությունն ավելի է ուժեղացնում այդ տպավորությունը: Սակայն, սյուների, խոյակների կերտման նուրբ վարպետությունը, ճաշակով ընտրված գույների հրաշալի զարդացումը մոռացնել են տալիս տեղ գտած թերությունները:

Խորանների սյուների խոյակների համար նկարիչը հմտորեն օգտագործել է լոբս ավետարանիչների խորհրդանշանները, ըստ որում նա պահպանել է Մատթեոս ավետարանչից

սկսվող և Հովհաննես ավետարանչով վերջացող հաջորդականությունը: Առաջին սյուների համար իր խոյակ է ծառայել կանացի գլխի դիմակը, նկարչի նաև վաղ շրջանի ստեղծագործություններում հանդես եկող դիմակները հազվագյուտ չեն կրիկյան ձեռագրերում (օրինակ, № 1636—Վենետիկ, № 2027—Նրուաղեմ և այլն), ինչպես և Մեծ Հայքի

եկեղեցիների քանդակազարդերի վրա¹¹, Ընդհանրապես պետք է նկատել, որ նկարիչ Քորոս Տարոնացին, ինչպես և նրա ժամանակակից Պողոսը, ավետարանիչների խորհրդանշանները պատկերելու մեծ սիրահարներ են եղել: Այսպես, բոլոր անվանաթերթերի վրա և ուրիշ տեղերում, առաջին գլխագիր տառը կազմված է այդ խորհրդանշաններով:

Խորանների ուղղանկյուն գլխազարդեր, որոնցից մի քանիսը րաժանված են առանձին մասերի, ունեն զարդանկարներ, բաղկացած մեծ մասամբ երեք թերթանի ծաղիկներից և կիսաարմավներից, կամ թե հյուսվածքից, ծիածաններից, որ լափազանք բնորոշ է հայկական զարդարվածություն համար: Խորանների այդ զարդանկարները սերտորեն առնվում են ժԳ դարի կրիկյան ձեռագրերի խորանների զարդարանքների օրինակների հետ (ձեռագիր № 539—Բալթիմոր, № 1956—Նրուաղեմ, հատկապես № 2027—Նրուաղեմ և այլն): Իրավացի է նշում Լ. Ա. Դուռնովան, որ «Գլաձորի վանքի կապերը կրիկիայի հետ անդրադարձել են Քորոս Տարոնացու ստեղծագործության մեջ, դիսավարպետի ղեկորատիվ մասում»¹²:

Մանրանկարի Քորոսը լավ ծանոթ լինելով կրիկյան զարդանկարների նմուշներին, նրանց ազդեցությամբ ստեղծել է նոր, ինքնատիպ, հետաքրքիր և հրաշալի զարդանկարներ: Հարուստ, ինքնատիպ և կենդանի է Քորոս Տարոնացու երանգապանակը: Գույների ներդաշնակության մեջ նա հասնում է կատարելության: Խորանների գեղեցիկ նկարները այդ էջերը դարձնում են գրագրական արվեստի իսկական ստեղծագործություններ: Ահրարփի Տեր-Ներսեսյանը, ելնելով Քորոս Տարոնացու վաղ շրջանի միայն մի ձեռագրից՝ «Ծնայի նշանը Ավետարան-ից» (1307 թ.), ոչ ճիշտ հետևություն է անում նկարչի մոտ ընդհանրապես երևակայության թուլության մասին¹³:

11 Տե՛ս Միքարփի Տեր-Ներսեսյան, «Վենետիկի Միքիթարյան հայերի մատենադարանի ժԲ, ԺԳ և ԺԴ դարերի նկարազարդ հայերեն ձեռագրերը», էջ 114:

12 Տե՛ս «Էջի հայկական մանրանկարությունն ալբրումը» (45-րդ նկարի բացատրությունը), Հայպետհրատ, Երևան, 1952 թ.:

13 Միքարփի Տեր-Ներսեսյան, «Վենետիկի Միքիթարյան հայերի մատենադարանի ժԲ, ԺԳ և ԺԴ դարերի նկարազարդ հայերեն ձեռագրերը», էջ 114: «—Հաստատան և թյուզանդական կայսրությունը, Համառոտ ուսումնասիրություն հայկական արվեստի և քաղաքակրթության, Կեմբրիջ, Մասաչուսեթս, տպ. Հարվերդ համալսարանի (անգլերեն), 1947 թ., էջ 134—135:

ՄՈԶԱԻԿ ՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

ՄՈԶԱԻԿԱՆԵՐ ԱՆԻՈՒՄ

Անին հանդիսացել է Հայաստանի առե-տրական, արդյունաբերական և մշակութա-յին կենտրոններից մեկը:

Հայտնի չէ, թե ե՞րբ է հիմնվել Անին:

«Անիում գտնված առարկաները պատկա-նում են Կովկասի նախապատմական հնու-թյունների տիպին, — գրում է հնագետ Հ. Օր-բելին, — հնությունների, որոնց կարելի է համարել Քրիստոսից առաջ՝ 7—8-րդ դա-րերի գործ: Այդ ժամանակը Անիի կյանքի մասին մեզ հայտնի հնագույն թվականն է: Այդ շրջանից ուրիշ հիշատակարաններ չեն գտնվել ոչ Անիում, ոչ նրա մերձակա շըր-ջակայքում»¹⁷:

Անին պատմության մեջ, այնուհետև, հի-շտակվում է որպես ամբողջ մեր թվագրու-թյան 5-րդ դարում: Այդ ժամանակաշրջա-նում Անին եղել է Կասաբական իշխանների տիրապետության տակ: Սակայն Անին քա-ղաքի նշանակություն ստացավ, երբ նա ան-ցավ Բագրատունիների ձեռքը: Առաջին Բագ-րատունին, որ Շիրակի թագավոր հռչակվեց, դա իշխանաց իշխան Աշոտն էր 887 թվակա-նին: Հայոց թագավորին ճանաչեց բյուզան-դական կայսրը, իսկ խալիֆը իր փոխանորդի ձեռքով արքայական թագ ուղարկեց:

Գաղիկ Ա-ի ժամանակ (990—1022 թ. թ.) Անիի թագավորությունը հասավ ամենածաղ-կյալ վիճակի: Գաղիկ թագավորի շինարա-րության ամենալավ կոթողն է Անիի Բոյո-րակ եկեղեցին (1001 թ.):

* Շարունակված ամսագրի 1957 թվականի X, X-ի, Գ-ից, Դ-ից, Ե-ից և Ջ-ից:

¹⁷ Հ. Օրբելի, «Անվո ափերակներ», Վաղարշա-պատ, 1911 թ., էջ 7—8:

Հին Հայաստանի նշանավոր մայրաքա-ղաքներից մեկը, ինչպիսին էր Անին, կո-րո՞ղ էր չունենալ իր մոդաիկ հուշարձաննե-րը: Անիի եկեղեցական կամ քաղաքացիա-կան բաղմամբիվ հուշակավոր շինությունները կարո՞ղ էին չունենալ մոդաիկ հատակներ, որմեր կամ առաստաղներ՝ մանավանդ Զա-քարյանների տիրապետության դարաշրջա-նում, երբ Անին խաղաղ-ստեղծագործական, շինարարական աշխատանքով էր պրագմա-

Հայկական հին աղբյուրներում այս մա-սին գրեթե տեղեկություններ չկան: Անիի մոդաիկաների մասին հիշատակում է միայն վերջերս ճարտարագետ Ռ. Թորամանյանը:

«Առանձնապես Զաքարյան շրջանի վերա-ծնության սեփականություններն են դույնըդ-գույն քարերով մոդաիկ պատկեր, հորիզո-նական մոդաիկ առաստաղներ, դրանց սթա-լակոիտ շրջանակներ և պսակներ (corniche), նույնպես նաև սթալակոիտ քանդակներով սյանց խոյակներ: Սթալակոիտի և մոդա-իկայի ոճերը շատ բաղմակողմանի մշակված են Զաքարյան շրջանին և գրեթե առանց բա-ցառության տեղ գրաված են բոլոր ժամա-տուններու, անհատական և հասարակական շինարարություններու մեջ: ... Գալով մաս-նավորապես Անիի մեջ Զաքարյան շրջանի ճարտարապետական նմուշներ բաղմամբիվ են: Ժարտարապետության դուխ-գործոց է Անիի Առաքելոց եկեղեցիւ գավիթը, ամե-նայն հավանականությամբ 13-րդ դարու կի-սին մոտ շինված՝ Պահլավունի ցեղին պատ-կանող կղերականներու նախաձեռնությամբ, որն որ իրենց սեփական աթոռ լինելը դատ-նան այդ ցեղի հոգեդրականներու դամբա-րանն էր: Այս դավթին մեջ ցանկացողը կա-րող է այսօր իսկ տեսնել, թե անցել վար-

պետներ որ աստիճան ճարտարությամբ կարող էին գույնզգույն մեծ ու փոքր բաւերով մոզայիկ առաստաղներ շինել շրջապատված զեղեցիկ շրջանակներով: Զիրար խաչաձև ողկամարներու և աղեղներու ու անոնց խաչաձևում են գոյացող միջոցներ սթալակտիտ գմբեթավորելու կամ մոզայիկ առաստաղով ծածկելու ոճը զաղափարող ճարտարապետին տաղանդը իսպառ անպտուղ պիտի անցնեն, եթե Անիի մեջ չգտնվեն կիրթ ու մշակված ճարտարապետներու զաղափարները իրականացնելու կարող արհեստավորներ: ... 13-րդ և 14-րդ դարերուն շատ ընդհանրացած և հաճելի դարձած մի ոճ էր արտաքին դրանց ամբողջ ճակատները և առաստաղները աստղաձև մոզայիկներով զարդատել և այդ մոզայիկներու յուրաքանչյուր քարերը առանձին տեսակ քանդակել: Դրանց ճակատներ կան, որոնք հարյուրավոր աստղաձևերով, տարբանկյունի, բազմանկյունի, կամ քառակուսի հարյուրավոր քարերով են կազմված, և այդ քարերուն յուրաքանչյուրը առանձին տեսակ նուրբ և մանրիկ քանդակներով զարդարված է: Այս ոճի դռներն են

Բագրատունյաց պալատ կարծված շենքին դռերը: Գագկաշեն Բուրդակ Ս. Գրիգորի մոտ պեղումներով բացված մի դուռ, և մասնավորապես ուշադրության արժանի են վերջին տարիներու պեղումներով բացված դուռը մը վաճառատանց արտաքին դռերը: Այս վերջինս ոչ միայն իր արտաքին մոզայիկներով նորոթյուններ բերեց, այլև մեղ բավականին զաղափար տվավ վերջին շրջանի անեցիներուն շուկաներուն և վաճառատուներուն վրա¹⁸:

Ահա այն յուրորը, ինչ որ ասված է Անիի մոզայիկաների մասին: Իսկ թե այդ մոզայիկ առաստաղները ինչ ձևի են եղել, ինչպիսի պատկերներ են ներկայացնում,— այդ մասին ոչինչ չենք կարող ասել: Արդյոք այդ աստղաձև մոզայիկները, որոնք պատրաստված են եղել րնակա՜ն գույնի մեծ ու փոքր քառանկյունի, եռանկյունի քարերից, ճարտարապետական կառուցվածքի բաղկացուցիչ մասն են կազմել, թե վերադիր գեղազարդող զարդանկար են,— դա նույնպես անհայտ է մեզ: Բայց որ դրանք մոզայիկներ են եղել,— այդ անկասկածելի է:

ՀԱՆՃԱՊԱԿՑԱՆ ՄՈԶԱԿԻԱ

Կուտինան, կամ, ինչպես այն այժմ կոչում են՝ Քյոթահիան, եղել է հախճապակու արտադրության գլխավոր կենտրոնը Փոքր-Ասիայում: Երեք ու կես դար շարունակ Կուտինայի ճենապակու և հախճապակու ավելի քան 300 արհեստանոցներն ու գործարանները գեղարվեստական տեսլիք իրեր ու ծաղկանկար գեղեցիկ սալիկներ են արտադրել և արտահանել Փոքր-Ասիա, Եգիպտոս, Պոլիս և արևմտյան Նիքոպա, որտեղ շատ բարձր է գնահատվել հայկական Կուտինայի արտադրանքը:

Կուտինայի հախճապակյա արտադրությունը ունեցել է երեք ժամանակաշրջան: Առաջինը սկսվում է 1510 թվականից և երկրորդի հետ միասին տևում է մինչև 17-րդ դարի կեսերը ու համարվում է Կուտինայի հախճապակյա արտադրության ոսկեդարը: Հատկապես առաջին շրջանում են արտադրված ճենապակյա սկահակները, բաժակները, ըմպանակները, վաղերը, մոզայիկ երեսակները, գեղարվեստական թաղարներ և այլն: Ինչպես հայտնի է, ճենապակին ավելի դիմացկուն է ու թանկարժեք, քան հախճապակին: Ճենապակու պատրաստումը կապված էր ավելի բարդ արտադրական աշխատանքների հետ (ճենապակին պատրաստում են սպիտակ կավից, կաոլինի, մաքուր երկաթի, կալքարային ավալի ու շալա-

թի խառնուրդից, թրծման 2000⁰-ից ավելի ջերմության պայմաններում): Հին ճենապակյա գեղարվեստական իրերն ու առարկաները շատ բարձր էին գնահատվում: Ճենապակին գունավորում էին կապտավուն-կանաչավուն ջնարակով՝ սելուդոնով, որ ստացվում էր մեծ մասամբ Զինաստանից:

Կուտինայի հախճապակու արտադրության ոսկե շրջանում շատ թանկարժեք իրեր են արտադրվում, որոնց մասին հարուստ տրվյալներ կան հայ և օտար գրականության մեջ:

Հայտնի գիտնական ճանապարհորդ էվ. Զելեպին մանրամասն նկարագրել է Կուտինայի արտադրանքը: Կուտինայի ամենահին ճենապակյա արտադրանքը եղել է պատարագի մի սկիհ, որի վրա եղած արձանագրության մեջ գրված է ա՛ի յիշատակ ծառային Աստուծոյ Քեօթահացի Արրահամին, հայոց 950 թվականին:

Կուտինայի հախճապակյա արտադրության ոսկեշրջանին են վերաբերում 1560-ական թվականներին կառուցված՝ Կոստանդնուպոլսի Թահթա-Գալեի Ռուստամ փաշա, Սուլեյմանիե մզկիթների (որը կառուցել է հայազգի ճարտարապետ Մինան Մեծը) մոզայիկ

18 Թ. Թորամանյան, «Հայկական ճարտարապետություն», Երևան, էջ 347—350:

որմանկարները, որոնք մինչև այժմ էլ հիացմունք են պատճառում ամենաքծախնդիր արվեստագետներին, Այդ որմանկարները և զարդանկարները պատրաստված են Կուտինայի հախճապակուց և կուտինահայ նկարիչների կողմից, Այդ մզկիթների միհրաբները (որմախորշերը), հաստիքաձև սյուներները, որմերը զրվապված են բազմազույն ծաղկեման հախճապակիներով:

Բացի մի շարք մզկիթներից, Կուտինայի հախճապակյա մոզաիկաներով են զարդարված Կուտինա քաղաքի հայկական մայր եկեղեցին, որտեղ եղել է Կոստանդնուպոլսի առաջին հայ պատրիարք՝ Հովակիմ եպիսկոպոսը, Կուտինայի հախճապակյա մոզաիկաներով են կերտված Բրուսայի Ջելեպի Սուլթան Մեհմեդ Ա-ի նշիլ մզկիթի հատակը, Ինչպես հայտնի է, թուրքական արվեստի պատմության մեջ առաջին տեղը զբաղեցրել է Կուտինայի մզկիթը, որ ջանք չի խնայել այդ մզկիթը մոզաիկաներով զարդարելու գործում: Մզկիթի մոզաիկ հատակը կապույտ ու կանաչ ծաղկանկարների մի հիանալի ծաղկեփունջ է, իսկ մեհրաբների վրա ղուսերված են հախճապակյա մոզաիկայի այն բոլոր դժվարություններն ու վարպետությունները, որոնք կարելի է երևակայել արվեստի կատարելության համար, իսկ մզկիթի մուտքի երկու կողմերը զետեղված են արքայական միհրաբների հախճապակյա մոզաիկ ծաղկանկարները, գույների ներդաշնակությունը, տապակներով իրար միացնելու տեխնիկայի տեսակետից անգերազանցելի ստեղծագործություններ են: Մթնհիւ հունական նկարիչները այդ կատարել են բնական գույների քարե և ապակու քառակուսիներով և խորանարդիկներով, ապա Կուտինայի հայ արվեստագետները նույն քանի կատարել են հախճապակիներով՝ ավելի իսկառիկ ու գեղեցիկ:

Կուտինայի հայ մոզաիկ նկարիչները չկգրում մոզաիկաները կերտել են ամենիշխան մեթոդով, այսինքն քառակուսի հախճապակին հատակի կամ որմի նախանշված տեղի վրա փակցնելով: Սակայն դա դժվարին գործ էր, որովհետև նախ պահանջում էր փրիկն աստիճանի հմտություն և մեծ ժամանակի կորուստ՝ մոզաիկայի ներկաշափական ձևերը, հատկապես տերևների բեկյալ գծերը պատրաստելու և ծաղիկների զանազան գույները ներդաշնակելու տեսակետից: Մոզաիկ նկար կերտելու համար գունավոր հախճապակիները իրար մոտ բերելու, շարժելու ու փակցնելու տեխնիկան հետադադրում ավելի կատարելագործվեց: Կուտինայի նկարիչները դադարեցին այդ ձևի աշխատանք

կատարելուց: Վերջին հնարվեցավ ուրիշ դրություն մը,— գրում է Մեմալը (Համարձում Զորթյանը),— որ ոչ թե երկնքանդ հախճապակիները կորելով տեղավորելու մեջ կկայանար, այլ պահանջված զարդարանքը տապակներու վրա գույներովը նկարվելու և թրծելն և տք իր տեղը փակցնելու միջոցով: Զարդարանքի դյուրութեան համար, պնդելիք մակերեսովը կմասնաբաժնեին տեղի համեմատ կարգ մը ուղիղ և հորիզոնական գծերու, դորս կարելի կըլլար զանազանել, եթե զարդանկարը հայող ու նոր շինված ըլլար: Ծարտարապետական բոլոր մասեր միաժամ այս ձևով հախճապակված լազմաթիվ մեծ միհրաբներ, միհրաբներ, խաղաղանքի, մուտքեր, արձանագրություններ, խորանի ստորոտներ և կիսարդարակ կամարներ կառուցված են, որոնք արվեստի նորը գործերու մեջ թանկագին հրաշակներ են: Կուտինահայ վարպետները, հախճապակյա խճանկարի կիրարկումը յլքելով հանդերձ՝ այս վերջին ձևը մեծապես զարգացուցեր են—վկա Կուտինայի, Բրուսայի, Պոլսի և շրջաններու անհետ ընկործանողը⁴⁹:

Կուտինայի մոզաիկ նկարչությունը ներկառորդ շրջանում կորցնում է իր փայլը: Մեկ ու կես դար հետո, 16-րդ դարի երկրորդ կեսից փոխվում է Կուտինահայ հոյակապ արվեստը: Մոզաիկ հատակի գույների ու կառուցման արվեստի քնադավառում տեղի են ունենում զգալի փոփոխություններ— գույներն ավելի աղոտանում են, պակասում են մի շարք ծաղիկները: Այդ դարը մենք տեսնում ենք Ղալաթիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հախճապակյա մոզաիկ հատակում, Գաղատիայի Ս. Աստվածածին վանքի տաճարի ավազ խորանում (1756 թ.), Կեսաբիայի Ս. Կարապետ վանքի եկեղեցու ներք սեղանների վրա և որմանկարներում, Սեբաստիայի Ս. Նշան վանքի տաճարի որմերի և սյուների վրա⁵⁰:

18-րդ դարից հետո սկսում է Կուտինայի մոզաիկ նկարչության անկումը, որովհետև հետզհետե փակվում են հախճապակու արհեստանոցներն ու գործարանները: 19-րդ դարում համարյա անհետանում է Կուտինահայ հախճապակյա արտագրությունը: Մայն ժամանակաշրջանն է, որի մասին Այդյանը իր մի նշանավոր աշխատությունում մեջ գրում է հետևյալը.

«...Գլխաւոր ճարտարապետութիւն Կուտինայու և պարապումն է ապակարուտ կա-

49 Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1923, էջ 217:

50 Տրդատ Եպիսկ. Պալլան, «Հայ վանորայք և Բուրքիա», մասն Ա. էջ 4, 11, 17:

ւեղէն առօթոց, այլև նոթին այժմ նուազ-
ւալք⁵¹։

19-րդ դարի վերջին քառորդին փորձ է
արվում վերածնելու Կուտինայի հախճա-
պակյա արտադրությունը։ Այն ասպարեզում
զգալի հաջողությունների են հասնում Կ. և
Հ. Մինասյան եղբայրները, որոնց շնորհիվ
մասամբ վերածնվում է կուտինահայ հախ-
ճապակյա մոզաիկ արվեստը։ Վերականգն-
ված հախճապակու արհեստանոցների ծաղ-
կազարդ գույնզգույն հախճապակիներով են
զարդարված թուրքական պետական մի շարք
հաստատություններ (Կոստանդնուպոլսի
Կենտրոնական, Նամակատունը, Զափայի
վարժապետանոցը, Հարրիի Զերմիյի բաղնի-
քը, Բրուսա քաղաքի բանկը և այլն)։

Բրուսայի ցուցահանդեսում (1909 թ.) կու-
տինահայերի արտադրանքը արժանանում է
երկրորդ կարգի մրցանակի։ Սակայն առա-
ջին համաշխարհային պատերազմը կործա-
նում է ոչ միայն Կուտինայի, այլև թուրքիա-
յում գոյություն ունեցող հայկական արտա-
դրությունները, Արևմտյան Հայաստանի հայ
ժողովրդի հետ միասին։

Այժմ Սևուի թանգարանում պահվում են
յորս հախճապակյա անոթներ, որոնք Կու-
տինայի 19-րդ դարի առաջին կեսի արտա-
դրություն են։ Սևուում գտնված հախճապակ-
յա մոզաիկները դիմանկարներ են։ Ձր.
Մաքբերի մոտ գտնված հախճապակյա մո-
զաիկները սրբապատկերներ են շրջանակի
մեջ առնված։ Այդ մոզաիկաներից մեկի վրա
կա արձանագրություն։ Մոզաիկայի վերևում
գրված է. «Ողջույն Մարիամու, մնացյալ բա-
ռերը չեն կարողացում, Իսկ ներքևում գրված
են «Պողոթին մերոյն բառերը։ Մոզաիկա-
յում նկարված է երեք դիմանկար, որից մե-
կը՝ տղամարդու նկար է, խորանի տակ կանգ-
նած, ձեռքին բռնած եկեղեցու դմբեթի մու-
կետը, Գագիկ թագավորի արձանի նման։
Ամբողջ նկարը առնված է բարակ սև շրջա-
նակի մեջ։ Երուսաղեմի վաճառի նվիրված Ս.
Սվաճյանի ձեռագրերի մեջ կա Քյոթահիայի
պնակներից մեկը⁵²։

Կուտինայի մոզաիկայում գերակշռում է
ժողկանկարությունը, սակայն կան մարդ-
կային ու կենդանական նկարներ։ Կուտինա-
յի ժողկանգարող հախճապակյա սալիկներով
են երեսապատված բազմաթիվ եկեղեցիների
հատակներն ու որմերը։ Օրինակ, «Գաղատիո
Ս. Աստվածածին վանքի տաճարին Ավադ
խորանի, ներքին պատերն ու խորանը զար-

դարված են Քյոթահիո հին հախճապակյա
գեղեցիկ քարերով 1758 թվականին, որուն
հիշատակարանը արձանագրված է սյան մը
վրա⁵³։

Հախճապակյա մոզաիկաներ ունեն օԿեսա-
րիո Ս. Կարապետ վանքի եկեղեցիին 3 սե-
ղաններն ամբողջ, եկեղեցվո ներքին պա-
տերն ու սյուների հատակն 3 կանգուն
բարձրությամբ... և ունի հիշատակարան⁵⁴։
Արևմտյան Հայաստանի շատ եկեղեցիներ
ունեն մոզաիկ հատակներ ու որմեր, որոնք
հիշատակված են Տրդատ եպիսկոպոս Պա-
յանի աշխատության մեջ։

Զպետք է շփոթել դեղարվեստական խեցե-
ղործությունը մոզաիկ արվեստի հետ տեղ-
յալ զեպում։ Կուտինահայերի հախճապակ-
յա արտադրության սկզբնական շրջանում,
ինչպես նշեցինք, ճենապակուց և հախճա-
պակուց պատրաստվել են մոզաիկ հատակ-
ներ, որմեր և դիմանկարներ (երեսակներ),
որոնք մոզաիկայի սկզբունքներով ու արվես-
տով են կառուցված, այսինքն գույնզգույն
քարերը, նկարչական էսքիզի համաձայն, ի-
րար մոտ են շարել և ստացել են ժողկա-
նկարներ կամ դիմանկարներ։ Միայն տեղյալ
դեպքում շինանյութը նդել է գույնզգույն
հախճապակին, ոչ թե բնական քարը։

Ովքե՞ր են նդել Կուտինայի հախճապակ-
յա արտադրության սկզբնավորողները, որ-
տեղից են ստացել շինանյութը և ժառանգել
այդ հիանալի արվեստը։

Հայտնի է պատմությունից, որ կուտինա-
հայերը եկել են Պարսկաստանից (Սպահա-
նից), քաղաքական հանգամանքների բերու-
մով և այնտեղից էլ բերել են այդ արվեստը։
Ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Շար-
տենի⁵⁵ նկարագրություններից երևում է, որ
Սպահանի հին պալատի որմերը նկարազար-
դել է Մինաս անուամով մեծատաղանդ հա-
նկարիչը։ Թեհրանի մոտ վերջին տարիներու
կատարված պեղումները⁵⁶ ապացույցեցին, որ
պարսկական հախճապակյա մոզաիկաների
մեջ կան կենդանական նկարներ, որոնք հա-
կասում են Ղուրանի վարդապետության
Զպետք է կասկածել, որ դրանք պարսկահայ
նկարիչների ստեղծագործություններ են,
պարսկական արվեստի որոշակի ազդեցու-
թյան ներքո։

Փոքր-Ասիայի քաղաքներում հայկական
հախճապակյա մոզաիկ հատակների տեղ-
որմերը

⁵³ Տրդատ եպիսկ. Պալան, «Հայ վանորայր թուրքիա», մասն II, էջ 4։

⁵⁴ Նույն տեղում, էջ 11—12։

⁵⁵ «Անահիտ» ամսագիր, 1911, № 3—4, էջ 52—53։

⁵⁶ Նույն տեղում, էջ 77—80։

⁵¹ Ալիշան, «Քաղաքական աշխարհագրություն», Վենետիկ, 1853, էջ 550։

⁵² «Անահիտ» ամսագիր, Փարիզ, 1932, էջ 184։

մերի առատությունը արվեստի տեսաբաններ Ստրյկովսկուն, Տրիստան Լեքերին, Յր. Մաքսերին, Մեյնին ենթադրել է տալիս հախճապական մոզաիկայի գլուխը Փոքր-Ասիայում վերագրելու միայն հայերին:

Միաժամանակ գոյություն ունի այն ենթադրությունը, որ մեր մեծ պատմագիր Խոսեանցու հիշատակած Ճենազնյա Մամզուն ու իր սերունդը, որ հայ ժողովրդի պատմության մեջ նշանակալից դեր են կատարել, հախճապական մոզաիկ արվեստը Չինաստանից են լրերել Հայաստան և այդ հույակապ արվեստը վարպետել է այստեղ Միջագետքից անկախ:

Իժմար է որոշակի խոսք ասել ընդհանրապես հայկական հախճապական մոզաիկայի առաջացման, նրա զարգացման ու կրած ազդեցության մասին, քանի դեռ Փոքր-Ասիայում (Վանում, էրզրումում, Տիգրանակերտում, Կեսարիայում և այլն) հողի տակ են մնացել հնադարյան բազմաթիվ հուշարձաններ, որոնք դեռևս չեն հայտնաբերվել և ուսումնասիրվել: Սակայն փաստ է, որ Կուսիսան (ինչպես և Հոռոզոսը) հսկայական դեր է խաղացել հախճապական մոզաիկ արվեստի զարգացման գործում: Իսկ Կուտինան Երտեղից է ստացել այն հսկայական շինանյութը, որից պատրաստվել են խեցեգործական թանկարժեք իրերն ու առարկաները, այն պուլիզատույն հախճապական քարերը, որոնցով կերտել են մոզաիկ հաստակներն ու որմերը ին և կենդանիներում և իսլամական աղոթատեղիներում:

Պարսկական մանրանկարչության մասնագետ Սադրզյանը այս մասին արժեքավոր վկայություն է տալիս: Թրոթահիայի արտադրությունները, — գրում է նա, — կատարվում էին հայկական կավով: Այս կավախառն Փողը, որ նախապես Հայաստանն և Արևելքեն կրեթներ, մահմեդական աշխարհին մեջ կկոչվեր քիլ էրմենիս⁵⁷:

Հայ նշանավոր նկարիչ Փանոս Թերլեմեզյանը իր հուշերի մեջ խիստ արժեքավոր դիտողություն է արել Կուտինայի հայերի մաս. նա գիտություն մասին.

«Բյուրահիայի հայերը մի մասնագիտություն ունենին. քարերի մի տեսակ կար, որ նրանք մաշելով խմորի էին վերածում և

նրանցից վազեր ու ամաններ շինում (Ֆայանս): Այս ամանների վրա նրանք հարս ու աղջիկները նկարում էին այն գույներով: որոնք ստանում են բույսերից ու քարերից: Այդ բոլորը գաղտնիք էր, որ իրենց մեջ էին պահում: Ոչ ոքիչ տեղերի հայերին և ոչ էլ թուրքերին չէին հաղորդում: Նրանց գծագրության և գույների մեջ՝ ըստ իսլամական տարրերի կային⁵⁸:

Այստեղից հաստատվում է այն հնագույն պնդումը, թե Կուտինահայերը այդ արվեստը ժառանգել են պարսկահայ վարպետ նկարիչներից: Պարսկական արվեստի ողջ տարրերի անկախությունը Կուտինահայ գեղարվեստական խեցեգործության մեջ ու մոզաիկայում գալիս է 15-րդ դարից, երբ Թեհրանի, Թավրիզի և Պարսկաստանի այլ քաղաքների խեցեգործներն ու մոզաիկ նկարիչները Կուտինայում հիմք դրեցին հախճապակու արտադրությանը: Բանասեր Հ. Բյուրտյանն ևս հաստատում է, որ հախճապական մոզաիկայի (որ հայանի է նաև կեղծ խճանկար անունով) արվեստը զանազան ձևերով շատ վարպետել և հասարակ է դարձել Պարսկաստանում, մասնավոր Շահ Աբասի օրերից սկսյալ, հատկապես Սպահանում, թեև Թավրիզում և Թեհրանում դրանցից շատ կան⁵⁹:

Այսպիսով, Կուտինայում բարձր զարգացման հասած հախճապական գեղարվեստական իրերի ու մոզաիկայի մասին մեր խոսքը փակենք Կուտինային քաղաքանոթ մարդու խոսքերով. «Հայաստանից, հայաստանից և հայապահպան այս պանծալի ճարտարարվեստը, — գրում է Սոնակը, — զոր մեր նախահարձ հինգ դար առաջ թագապետության Հայաստանն իրր ավանդ բերած Կուտինա, հիմա նույն այդ հայ աշխարհին վերականգնումի արշալույսին՝ մեզ կպարտադրե օժանդակել ու ետ տանիլ հայրենի ջերմին բույներ⁶⁰:

Հայ հայրենասերի ցանկանում է, որ այդ հախճապական մոզաիկ արվեստը վերածնվի ու զարգանա Սովետական Հայաստանում, որ անցյալում ունեցել է մոզաիկ արվեստի հարուստ ժառանգություն:

⁵⁸ «Սովետական արվեստ» ամսագիր, Երևան, 1941, № 2-3, էջ 99.

⁵⁹ «Բազմավեպ», Վենետիկ, 1934, № 2-3, էջ 64.

⁶⁰ Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1922, էջ 227 — 228.

⁵⁷ «Բազմավեպ», Վենետիկ, 1935, № 4-5, էջ 143-148.





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՀՈՒԼԻՍԻ 2-ին, ԶՈՐԵԹՇԱՐԹԻ, Մայր Ա-
թոռ վերադարձավ հոգեշնորհ Տ. Հայրիկ
վարդապետ Ավետիսյանը, վերջերս Վեհա-
փառ Հայրապետի հրամանով տեպի Ռուսի-
նիայի և Բուլղարիայի հայ զաղութները կա-
տարած իր հովվական այցելությունից:



ՀՈՒԼԻՍԻ 6-ին, ՇԱՐԱԹ, Եփիառ նշխա-
րաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյս
Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա,
հանգիսավոր սուրբ պատարագ կատարեց
հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալստ-
դարյանը:



ՀՈՒԼԻՍԻ 7-ին, ԿԻՐԱԿԻ, «Զորորդո կիւ-
րակէ քկնի Հոգեպաշտեան», Մայր Տաճա-
րում պատարագեց Հոգեշնորհ Տ. Վահան
վարդապետ Գալստդարյանը:



ՀՈՒԼԻՍԻ 11-ին, ՀԻՆԳՇԱՐԹԻ, տոն «Սրբ-
րոց փարգանշացն մերոց Սահակայ և Մես-
րոփայն:

Առավոտյան ժամերգությունը պաշտվեց
Մայր Տաճարում:

Ժամը 11-ին ամբողջ միաբանությունը,
առանցողությունը, վանքի պաշտոնեությունը
ազգային-եկեղեցական մեծ տոնի կա-
պակցությամբ, ավտոմեքենաներով մեկնե-
ցին տփառի տեպի Ս. Մեսրոպի շիրիմը:

Յշականում հավաքվել էր հավատացյալ-
ների և ուխտավորների մի մեծ թաղամու-
թյուն Երևանից, Էջմիածնից, շրջաններից:
Բոլորը հաղնվել էին տոնականորեն, Բարձր
էր մանավանդ ոշականցիների տղերությունը:

Ժամը 12-ին սկսվում է հանդիսավոր
սուրբ պատարագը, ժողովուրդը, մոմ ի ձե-
ռին, աղոթքը շրթներին, իջնում էր լյուվստ
և յերկրպագութիւնս Ս. Մեսրոպի շիրիմին:
Պատարագի հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդա-

պետ Պետիկյանը քարոզեց ռեմանակ Մով-
սիսի շարականի բնագրանով, վեր հանելով
Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի
շնորհակալ աշխատանքը հայ դպրության
սկզբնավորության և զարգացման նախա-
կան գործում: Վերջում քարոզիչը հայր սուր-
բը մոշ արեց հավատարիմ մնալ Մեսրոպ-
յան Վեղվին, սիրել և տարածել հայոց մե-
ծասցանչ լեզուն:

Հավարտ սուրբ պատարագի Վահան Ա-
մատունի հայ իշխանի դամբարանի վրա կա-
տարվեց հոգեհանգիստ, ի հիշատակ հայ
գրի ու դպրության թուրք մշակների և մե-
կենասների:

Վերջում ամբողջ միաբանությունը հյու-
րասիրվեց Մեսրոպ Մաշտոցի անվան միջ-
նակարգ դպրոցում, ոշականցիների կողմից:
Երեկոյան միաբանությունը վերադարձավ
վանք:



ՀՈՒԼԻՍԻ 14-ին, ԿԻՐԱԿԻ, տոն գիւտի
տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի, Մայր Տա-
ճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հայրիկ
վարդապետը և քարոյեց ռի վերայ Աղոյն և
Էջմիածնի ամենայն Աղոն Հայոց կապեալ
կանն բնագրանով: Հայր սուրբը խոսեց վեր-
ջերս իր վատարած հովվական այցելության
մասին, ցույց տալով, որ հայ ժողովուրդը,
ուր էլ գտնվի, իր հոգու թուրք թելերով
իրեն վաւրված է զգում Ս. Էջմիածնի և Ամե-
նայն Հայոց Հայրապետության հետ:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը:



ՀՈՒԼԻՍԻ 21-ին, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճա-
րում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ
վարդապետ Պետիկյանը:



ՀՈՒԼԻՍԻ 28-ին, ԿԻՐԱԿԻ, Վարդապառ,
Պաշտականերպություն Տեառն մերոյ Յիսուս
սի Քրիստոսի:

Վարդապետի տոնի կապակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածին էր տեղի ունեցավորներին մեծ քաղմություն։ Վանքի բակում, շրջակայքում և ամեն տեղ տոնական հանդիսություն էր և ոգևորություն։

Առավոտյան ժամը 11-ին սկսեց հանդիսավոր սուրբ պատարագը։ Պատարագեց և քարոզեց Գերագույն Հոգևոր հորհրդի անդամ գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը ժերասցուց լերիս տաղաւարս, մի քեզ, մի Մովսիսի և մի Եղիայի քանարանով։ Սրբազանը ծանրացավ օրվա տոնի խորհրդի և նշանակության վրա և կոչարեց ժողովրդին հոգով պայծառանալ ամեն օր՝ աղոթքի և բարի գործերի կատարումով։



ՀՈՒԼԻՍԻ 29-ին, ԵՐԱՆԻՇԱՐԹԻ, հիշատակ մեռելոց։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ լիսան համօրէն նշեցեցելոց։



ՕԳՈՍՏՈՍԻ 4-ին, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։



ՕԳՈՍՏՈՍԻ 5-ին, ԵՐԱՆԻՇԱՐԹԻ, առավոտյան ժամը 8.30-ին Վեհափառ Հայրապետը Երևանի օդանավակայանից 15 օրվա հանգստի համար մեկնեց Ռիցա լճի ափը։ Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր դավազանակիր հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը։

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար օդանավակայան էր եկել Հայկական ՍՍԻ Միության տնօրէն Ստեփան Կարապետյանը։ Հայ նկերգու գործերի խորհրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանը։

Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին նաև Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնակատները։



ՕԳՈՍՏՈՍԻ 11-ին, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ապագ քահանա Մկրտչյանը, քարոզեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը ռիզորմթիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին քանարանով։



ՕԳՈՍՏՈՍԻ 15-ին, ՀԻՆԳՇԱՐԹԻ, Մոսկվայից Երևան ժամանեցին Գալուստ Կրուպենկոյան հիմնարկության ներկայացուցիչներ պրոֆ. Սեր Սիդնի Քեյնը և ճարտարապետ պարոն Նոյմարդ Ութոմյանը։

Երևանի օդանավակայանում, հանուն Վեհափառ Հայրապետի, հարգելի հյուրերին դիմավորեցին պերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, հոգեշնորհ Տ. Նդիշե վարդապետ Սարգսյանը և Մայր Աթոռի դիվանապետ պարոն Հայկ Առաքելյանը։



ՕԳՈՍՏՈՍԻ 16-ին, ՌԻՐԱԿԻ, Մայր Աթոռ ժամանեց Անթիպատի տվտապահ միաբանության անդամներից հոգեշնորհ Տ. Գեյլ ծալրագուլի վարդապետ Ճերենյանը։



ՕԳՈՍՏՈՍԻ 17-ին, ՇԱՐԱԿԻ, Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը, Գագրիում անցկացրած իր 15-օրյա հանգստից հետո։

Երևանի քաղաքային կայարանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Հայկական ՍՍԻ Միության տնօրէն Ստեփան Կարապետյանը, Հայ նկերգու պրոֆ. խորհրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանը, Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնակատները։

Սրտագին և շերտ ընդունելությունից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Էջմիածին, Վերաշինարանով մուտք գործեց Մայր Տաճար և Էջմիածնի անդամ անդամ հարանական աղոթք մատուցեց և օրհնեց միաբանությանն ու ժողովրդին։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Թրիլիսի թեմակալ առաջնորդ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը, Բաքվի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը և դավազանակիր հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը։



ՕԳՈՍՏՈՍԻ 17-ին, ՇԱՐԱԿԻ, ամեն Շողակաթի Սրբոյ Էջմիածնի ըստ տեսիլան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։



ՕԳՈՍՏՈՍԻ 18-ին, ԿԻՐԱԿԻ, օվերափոխում Ս. Աստուածածնի։

Համաժողովրդական տոնի կապակցությամբ Մայր Աթոռ Ռեյտի էր եկել հավատացյալների մի մեծ թաղամություն, շաքարավազի սկսած՝ Վանքում, շրջակայքում տիրում էր տոնական հանդիսություն և ոգևորություն, Տոնի առթիվ մորթվեցին բազմաթիվ մատաղներ:

Առավոտյան ժամը 11-ին սկսվեց հանդիսավոր սուրբ պատարագը: Օրվա պատու-

րագին էր հոգեշնորհ Տ. Գևել ծայրագույն վարդապետ Շիրեճյանը, որն իր գեղեցիկ քարոզում ծառայեցավ Ս. Կույսի մայրության զաղափարի վրա և կոչ արեց հավատացյալ կանանց՝ նմանվել Աստվածամոր, իրենց իղձերի սրբությանը և նվիրումով:

Հավատ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի ճախագահությամբ, կատարվեց ավանդական խաղողօրհնեքը:

ԱՅՑՆԵՆԻՔՈՒՆԵՐ

ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճար այցելեց Բաքվի Մ. Ավդոբեկովի անվան թատրոնի դերասանների խումբը, գլխավորությամբ ժողովրդական արտիստ Ա. Իսկենդրովի: Հյուրերը այցելեցին ճաշ եկեղեցի-հնագիտական թանգարանը:



ՀՈՒԼԻՍԻ 16-ԻՆ, ԵՐԵՎԱՆԻ, Մայր Աթոռ այցելեցին անգլիացի նկարիչներ Դերեկ Հարրի Քրիսթը և Արթուր Պատոկ Հոգարտը, որոնք խորապես հետաքրքրվեցին Մայր Տաճարի մանրանկարչական արվեստով:



ՀՈՒԼԻՍԻ 19-ԻՆ, ՈՒՐԱԿ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին տվաթի եկան բուլղարահայ և ֆրանսահայ ռուսփոստների խմբերը: Մայր Տաճարն առ եկեղեցի-հնագիտական թանգարանը այցելելուց և իրենց ոգիտը կատարելուց հետո, տարիստներն ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից:

Ջրույցի ժամանակ նորին Ս. Օժոթյունը հետաքրքրվեց բուլղարահայ և ֆրանսահայ զաղույթների ազգային-եկեղեցական և մշակութային կյանքով:



ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ, ՇԱՐԱԿ, Մայր Տաճար այցելեց Լեհաստանի էստրադային արտիստների խումբը, գլխավորությամբ Նոնի Միստոկեյի:



ՀՈՒԼԻՍԻ 26-ԻՆ, ՈՒՐԱԿ, Մայր Տաճար այցելեց չիլիական տաղանդավոր երգչուհի Մարգոտ Լոյալան, որը Նրեան էր եկել համերգներ տալու համար:



ՕԳՈՍՏՈՍԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճար այցելեց ֆրանսահայ տուրիստների երկրորդ խումբը, որը հանգամանորեն ծանոթացավ Մայր Տաճարի շինության և պատմության, և սրտի փորձով բավարարվեցին այցելեց եկեղեցի-հնագիտական թանգարանը, ուր բացատրություններ էր տալիս թանգարանի վարիչ հոգեշնորհ Տ. Հոսիկ արևդա Սոնթրյանը:

Վերջում ֆրանսահայ տուրիստների երկրորդ խումբը ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից, որը հետաքրքրվեց ֆրանսահայ թեմի ազգային-եկեղեցական կյանքով և ապա օրհնեց բոլոր ներկաներին:



ՕԳՈՍՏՈՍԻ 12-ԻՆ, ԵՐԱՆԻՇԱՐԱԿ, Մայր Տաճար այցելեց Բաքվի էստրադային նվագախմբի արտիստների խումբը:




ՕԳՈՍՏՈՍԻ 16-ԻՆ, ՈՒՐԱԿ, Մայր Աթոռ այցելեցին Սիրիայի պառլամենտի անդամներ պարոն Շուքրի Ռահմուն և պարոն Աբդու Համիդ Դուվալդերին:

Հյուրերը եղան Մայր Տաճարում և եկեղեցի-հնագիտական թանգարանում:

Հյուրերին ընդունեց և բացատրություններ տվեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը:

Հյուրերը մեկնեցին լավագույն տպավորություններով:





Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒՂՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՆԵՐԻ ԺԱՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒՂՊԵՆԿՅԱՆ հիմնադրւոյան ներկայացուցիչներ պրոֆես-
սոր Սըր Սիգնի Քեյն և հարտառապետ Նոլվարդ Ուրտոյան ժամանեցին Նրեան
օգոստոսի 15-ին և պաշտօնապես այցելեցին Մայր Արող կիրակի, օգոս-
տոսի 18-ին, Ս. Աստվածածնի օրը, երբ քաղմահագար հավատացյալներ
ուխտի էին եկել էջմիածին:

Հետ սուրբ պատարագի վեճափառ Հայրապետը ընդունեց քարծրաս-
տիճան հյուրերին Մաղկյա դահլիճում:

Փոխանակեցին ճառեր շերմ դւ խանդավառ մրնոյրտի մեջ:

ԴԻԼԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

26 օգոստոսի 1857 թ.
էջմիածին





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՅԻ ՏՎՋՈՒԹՅՈՒՆ

1956 թվականի հուլիս 15 թվակիր հայրապետական սրբատառ կոնդակով վարդապետական ակադեմիայի լանջախաչ կրելու իրավունք շնորհվեց Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդական փոխանորդ և Մայր Աթոռի երիտասարդ միաբան ՀՈԳԵՇՆՈՐԶ Տ. ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, նրա արդյունաշատ քրոջ՝ Նեոթյան համար, ի նշան հայրապետական գնահատանքի և սիրու:

ՄԱՂԱԿԱ ՓԻՆՈՆ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՐ

Վեհափառ Հայրապետի հուլիս 25 թվակիր սրբատառ կոնդակով ծաղկյա փիլոն կրելու իրավունք շնորհվեց Սուրաբայայի (Ինդունեդիա) հայոց Ս. Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԱՐԻՍՏԱԿԵՍ ՔԱՀԱՆԱ ՄԻՐՋԱՅԱՆԻՆ՝ «Տիրոջ տան մեջ հավատարիմ և անբասիր սպասավորությունը համար:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՅԻ ՏՎՋՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծովթյուն Վեհափառ Հայրապետը մայիս 6 թվակիր սրբատառ կոնդակով Ատրպատականի հայոց առաջնորդական տեղապահ արժանապատիվ Տ. Կարապետ

ավագ քահանա Մանուկյանի միջնորդությամբ, եկեղեցական երկարամյա մաքուր և արդյունավետ գործունեության համար, ի նշան հայրապետական գնահատանքի, Վեհապետական լանջախաչ կրելու իրավունք շնորհվեց՝

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ ՄԻՆԱՅԱՆԻՆ (Ատրպատականի Շահփուր գավառ, Իրան):

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԼԵՎՈՆ ՔԱՀԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ (Ատրպատականի Ռեզայե քաղաք, Իրան):

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿ

1957 թվականի մայիսի 24-ին և 25-ին հայրապետական օրհնության կոնդակի են արժանացել, Ատրպատականի հայոց առաջնորդական տեղապահ արժանապատիվ Տ. Կարապետ ավագ քահանա Մանուկյանի միջնորդությամբ, Ատրպատականի հայոց թեմական խորհրդին արած իրենց նվիրատվությունների համար՝

ՄԵՍԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՄԻՔԱՅԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ,
ՄԵՍԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՄԵՍՐՈՊ ԱՎԱԳՅԱՆ,
ՄԵՍԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՍՏԵՓԱՆ ՄԵԼԻՔԱՆՆԱՆՆԱՆ





Մ Ա Յ Ր Ի Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

Ա. ՕՂԱՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ



Ունեւորական Հայաստանի մայրա-
քաղաքի բազմաթիվ գրադա-
րաներից, միութենական նշա-
նակությամբ ունեցող խոշորա-
գույն ռեսպուբլիկական գրադա-
րանն է Հայկական ՍՍՌ Ալեքսանդր Մյաս-
նիկյանի անվան Երևանի Պետական ռես-
պուբլիկական գրադարանը:

Գրադարանն ունի հարուստ գրքային ֆոնդ
և գրքերի համալրման, մշակման, պահպան-
ման, սպասարկման, բիրտգրաֆիական,
նոտային, իլյուստրատիվ, հազվագյուտ գրա-
կանության, մեթոդական և տեխնիկական
գրականության բաժիններ:

Այսօր մեր Հայրենիքը ոչ միայն առաջա-
վոր գիտության, տեխնիկայի և ճարտարա-
վեստի երկիր է, այլ նաև դպրոցական և գրա-
դարանային ցանցերի և համատարած գրա-
գիտության երկիր:

Գրադարանները ժողովուրդների ինքնա-
կրթության, լուսավորության, մտավոր զար-
գացման և մշակութի պահպանման հիմնա-
կան ուղիներն են հանդիսանում: Ընդունա-
ված, որ գիրքը այն պլանավոր աղբյուրն է, ո-
րից ժողովուրդը գիտություն, լույս է քաղում:
Ահա այդպիսի արժեքավոր ու հայ մշա-
կութի պահպանման տեսակետից համազ-
գային նշանակություն ունեցող գիտական
գրադարան է Ալ. Մյասնիկյանի անվան Պե-
տական ռեսպուբլիկական գրադարանը:

Հայկական ՍՍՌ Ալեքսանդր Մյասնիկյա-
նի անվան Երևանի Պետական ռեսպուբլի-
կական գրադարանը հիմնադրվել է 1921 թվա-
կանին Երևանում եղած մի փոքրիկ գրադա-
րանի ֆոնդերի կորիզի վրա:

Անցած 36 տարիների ընթացքում գրա-
դարանի գրքային ֆոնդերը աճել են անհա-
մեմատ չափերով. այժմ հաշվվում է մոտ
չորս միլիոն միավոր: Յուրաքանչյուր տարի
մուտք է լինում երկու հարյուր հազարից ա-
վելի գրքեր, թերթեր ու հանդեսներ: Անցած
1956 թվականին մուտք է եղել 230.000 միա-
վոր գիրք:

Գրադարանի գրքային ֆոնդերի համալրու-
ման հիմնական աղբյուրը հանդիսանում
է այսպես կոչված ձրի պարտադիր օրի-
նակը: ՍՍՌԿ Կառավարության որոշմամբ
գրադարանը համարվում է երկրորդ կարգի
գիտական գրադարան ու այդ հիման վրա էլ
ստանում է հայերեն և ռուսերեն լեզուներով
Սովետական Միության մեջ լույս տեսնող
բոլոր գրքերից, օրաթերթերից, հանդեսնե-
րից և տպագրական այլ տեսակներից մեկա-
կան օրինակ ձրի պարտադիր: Բացի այդ
գրադարանը ստանում է նաև զնովի պար-
տադիր օրինակ: Գրադարանի գրքային ֆոն-
դերը կոմպլեկտավորվում են նաև գրադա-
րանային կոլեկտորից և մասնավոր անձան-
ցից կատարվող գնումների, գրքափոխա-
նակման, նվեր ստացված գրականության
միջոցներով:

Քիչ չէ թվեր նվեր ստացված այդ գրքերի
թիվ՝ մայր Հայրենիքի և թե՛ Սփյուռքի մեր
զրոյներից, որոնք իրենց ստեղծագործու-
թյունների հրատարակություններից առան-
ձին օրինակներ ինքնագրերով ուղարկում են
Պետական հանրային գրադարանին, նրա
անձնակազմի ֆոնդերը հարստացնելու,
լրացնելու, այն կատարյալ դարձնելու փա-
փագով: Այսպիսի ինքնագիր ունեցող նվեր-

ները գրադարանում պահվում ու պահպանվում են առանձին ուշադրությամբ ու հոգատարությամբ:

Գրքերի հայկական ֆոնդերը կատարյալ դարձնելու համար գրադարանը իր առջև խնդիր է դրել ձեռք բերել աշխարհում հայերեն լեզվով լույս տեսած և լույս տեսնող ամեն մի հրատարակություն, Այս շնորհակալ աշխատանքը գրադարանի ղեկավարությունից, կոլեկտիվից շատ աշխատանք, ճիգ ու նյութական մեծ միջոցներ է պահանջում:

Գրադարանի ղեկավարությունն ու կոլեկտիվը շատ լավ են պատկերացնում հայ ժողովրդի նկատմամբ իրենց ստանձնած այս հոյակապ ու պատվավոր խնդրի իրականացման ողջ լրջությունը, ծանրությունն ու զոհվարությունը:

Սակայն Սովետական Կառավարության տրամադրած միջոցների, պայմանների ու ճնարավորությունների, գրադարանի կոլեկտիվի ժրպշան, հետևողական ու կատարած սխտեմատիկ աշխատանքի և հայ ժողովրդի գրագետ ու գրասեր զավակների աջակցությամբ ու օժանդակությամբ այդ խնդիրը մաքսիմում հնարավորության սահմաններում կիրականացվի:

Կառավարությունը առանձնահատուկ ուշադրություն դարձնելով մեր գրադարանի գրքային ֆոնդերի համալրման վրա, վալյուտային գումարներ է տրամադրել, որոնք տարեցտարի աճում են, արտասահմանում լույս տեսնող հայերեն գրքերը ձեռք բերելու համար:

Գրքային ֆոնդերի պակասը լրացնելու նպատակով գրադարանը նաև մասնավոր անհատներից կանխիկ դրամով գնումներ է կատարում: Բացի այդ, կազմակերպվել է գրքափոխանակության ֆոնդ, որտեղ հավաքվում են մեր ռեսպուբլիկայում և առհասարակ Սովետական Միության մեջ լույս տեսնող հայերեն, ռուսերեն, եվրոպական և այլ լեզուներով բազմաթիվ գրքեր, փոխանակվելու համար թե՛ արտասահմանում, և թե՛ Սովետական Միության մեջ՝ մեր շունեցած գրականության հետ:

Սակայն պետք է ասել, որ դեռևս գրքափոխանակությունը, մասնավոր արտասահմանում հայերեն լեզվով լույս տեսնող տպագիր գրականության հետ, կանոնավոր կերպով չի կատարվում: Թույլ է կապը արտասահմանում եղած հայ տպագիր գրքի կենտրոնների հետ: Ժամանակն է, որ Միությունից հայրենակցական ու մշակութային կազմակերպությունները, գրական շրջանակները, որպես հայրենասիրական պարտք, հանուն հայ ժողովրդի մշակույթի պահպան-

ման, իրենց լուրջան բերեն՝ ամբողջացնելու Հայաստանի Պետական գրադարանի գրքային ֆոնդերը գրքերի փոխանակությամբ ու այլ միջոցներով:

Պետական գրադարանում պահվում են բազմաթիվ գրքային հավաքածուներ, առանձին գրադարաններ և ֆոնդեր: Հիշատակման արժանի են Ալեքսանդր Մյասնիկյանի գրադարանը, Սերբերյակյանի, Արզումանյանի, ակադեմիկոս Մանանդյանի, երաժշտագետ Ղորգանյանի անձնական գրադարանները, նախկին Լազարյան ճամբարանի, Ներսիսյան դպրոցի, Կովկասի հայոց հրատարակչական ընկերության հարուստ գրականությունը և ուրիշ ֆոնդեր:

Գրքային ֆոնդերի հայկական բաժնից առանձնացված են մեկական օրինակներ յուրաքանչյուր գրքից և տպագրական այլ նյութերից՝ և պահվում են որպես արխիվային ֆոնդ: Այստեղ քիչ չեն այն նյութերը, որոնք բացառիկ արժեք են ներկայացնում և համարվում են հազվագյուտ օրինակներ: Այս բաժնում է պահվում հայոց 961 թվականից, այսինքն 1512 թվականին Վենետիկում Հակոբ Մեղապարտի կողմից լույս ընծայված առաջին տպագիր գիրքը՝ «Պարզատու մարաբ», որից աշխարհում կա միայն 6 օրինակ:

Հետաքրքիր է 1695 թվականին Ամստերդամում լույս տեսած հայերեն առաջին քարտեզը, որը կոչվում է Աշխարհացույց:

Բացառիկ պատմական արժեք է ներկայացնում 1794 թվականին Հաղթություն քահանա Շմավոնյանի կողմից Հնդկաստանի Մադրաս քաղաքում լույս ընծայված հայերեն պարբերականը, որը կոչվում է «Ազգաբար» և այլն:

Այդ նույն արխիվային բաժնում կան այսպես կոչված «լիտայուտ» (թղուկ) գրքեր, որոնք հազիվ լուցկու տուփի մի քառորդի չափ են և միայն խոշորացույցի միջոցով հնարավոր է կարդալ: Կան նաև ռուսերեն, եվրոպական և այլ լեզուներով բազմաթիվ հնատիպ, հազվագյուտ և հատուկ արժեք ներկայացնող գրքեր:

Գրականության պահպանման և այդ միջոցով մեր բազմադարյան մշակույթի պատկերները հետագա հայ սերունդներին հասցնելու այս չափազանց կարևոր ու պատվաբեր խնդիրն իրականացնելուց բացի, գրադարանը կատարում է նաև գրականության սպասարկման, գիտա-բիրիկտորաֆիական և գրադարանագիտական-մեթոդական աշխատանքներ: Տարեցտարի աճում է գրադարան հաճախող ընթերցողների թիվը և նրանց

սպասարկող գրականության քանակը: Միայն 1956 թվականին գրադարանում գրանցվել են 8266 ընթերցողներ և գրադարանային բաժանորդներ: Գրադարան հաճախողների թիվը հասել է 225.000-ի: Սպասարկված է 693.000 գիրք, թերթ, ամսագիր և այլ նյութեր:

Գրադարանն ունի գիտաշխատողների երկու ընթերցասրահներ՝ բոլոր հարմարություններով, որոնցից օգտվում են տարրեր մասնագիտությունների 585 գիտական աշխատողներ, դասախոսներ, պրոֆեսորներ, ակադեմիկոսներ, ասպիրանտներ և այլն: Գիտաշխատողների ընթերցասրահներում եղել է 27.000 հաճախում և սպասարկված է 186.000-ից ավելի գրականություն: Իսկ գրախափոր, հասարակական-քաղաքական գրականություն և մամուլի ընթերցասրահներից օգտվելու համար գրանցվել են 6769 ընթերցողներ, որոնց սպասարկված է 450.000-ից ավելի գրականություն:

Անընդհատ աճում են պարբերական մամուլի պահանջները: Անցած տարի լացվեց թերթների և ամսագրերի առանձին սրահ: Այստեղ ստացվում են Սովետական Միության մեջ լույս տեսնող հայերեն և ռուսերեն բոլոր թերթներն ու ամսագրերը: Բացի այդ, ստացվում են նաև արտասահմանում լույս տեսնող հայերեն և եվրոպական լեզուներով թերթներ ու ամսագրեր, սակայն ավելի քիչ անուններ քան նրանք կան: Գրադարանը միջոցներ է ձեռք առնում բոլոր թերթերը ձեռք բերելու համար:

Չնայած գրադարանի գրքային ֆոնդերի՝ չարտօթյանը, երբեմն ընթերցողները պահանջում են գրքեր, որ մեր գրադարանում չեն լինում: Ընթերցողների պահանջը շմերժելու և մանավանդ այն բավարարելու համար միջգրադարանային քաժանորդագրության միջոցով այդ պահանջվող գրականությունը ստացվում է Վ. Ի. Լենինի անվան ՍՍՄՍՊ Պետական գրադարանից և միութենական ռեսպուբլիկական այլ գրադարաններից: Մեր Պետական գրադարանը միջգրադարանային բաժանորդագրական կապի մեջ է վրացական, ադրբեջանական, ուկրաինական, բելոռուսական, լատիշական և այլ ռեսպուբլիկական գրադարանների, Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան և մի շարք այլ մարզային գրադարանների հետ: Բացի այդ գրադարանը սերտ կապ է պահպանում նաև ռեսպուբլիկայի քաղաքային, գյուղական, շրջանային, տեխնիկական, մանկական և այլ գրադարանների հետ: Յուրաքանչյուր տարի այդ գրադարաններին է ուղարկվում 3000-ից ավելի գրականություն

և նրանցից ստացվում է մոտավորապես 100 գիրք:

Ռեսպուբլիկայի շրջանային, գյուղական և այլ գրադարաններին մեթոդական պրակտիկ օգնություն ցույց տալու նպատակով 1953 թվականին լացվեց գրադարանի մեթոդական աշխատանքների բաժինը:

Բաժինը կազմակերպում է սեմինար պալապմունքներ, կոնսուլտացիաներ, գրադարանավարների ուղակավորման կուրսեր և խորհրդակցություններ, հավաքում, ուսումնասիրում և ընդհանրացնում է լավագույն գրադարանների աշխատանքի փորձը, կազմակերպում և վարում է գրադարանագիտության գործնական հարցերի գիտական մշակում, կազմակերպում է մեթոդական օգնություն, հրատարակում է գրադարանագիտական ձեռնարկներ, մեթոդական նամակներ և այլն:

1954—1956 թվականների ընթացքում գրադարանի մեթոդական բաժինը մեթոդական օգնություն է ցույց տվել 507 գրադարաններին, այդ թվում 362 գյուղական և շրջանային գրադարանների: Հրատարակվել են 22 անուն տպագիր գրադարանագիտական-մեթոդական նյութեր:

Գրադարանի տեղեկատվությունը հարակից բաժինը հայերեն և ռուսերեն լեզուներով կազմում է հանձնարարական գրականության ցանկեր, թեմատիկ քարտարաններ և զանազան բիրիոգրաֆիաներ: 1956 թվականին հրատարակվել են 17 մամուլ ընդհանուր ծավալով բիրիոգրաֆիաներ: Բաժինը տալիս է նաև բանավոր և գրավոր տեղեկանքներ գիտության, գրականության, արվեստի, տեխնիկայի և այլ հարցերի վերաբերյալ:

Գրադարանն ունի մի շարք կոմպլեքսային բաժիններ, որոնք միաժամանակ իրականացնում են գրքային ֆոնդերի կոմպլեկտավորման, մշակման, պահպանման, սպասարկման և բիրիոգրաֆիական աշխատանքները: Նոտային-երաժշտական բաժնում պահվում են մեծանուն կոմիտասի, Նվմայանի, Կարա-Մուրզայի, Սպենդիարյանի, Զալկովսկու, Գլինկայի, Բեթհովենի, Շոպենի և բազմաթիվ այլ հայ, ռուս, ադրբեջանական և եվրոպական մյուս ռեսպուբլիկաների ու եվրոպական երկրների հռչակավոր արվեստագետների գործերը, նրանց կյանքի և ստեղծագործությանը վերաբերող գրականություն:

Նոտային-երաժշտական բաժինը 1956 թվականին հրատարակեց Կարա-Մուրզայի ծավալուն բիրիոգրաֆիան և տպագրության է պատրաստում կոմիտասի բիրիոգրաֆիան:

կերպարվեստի և քարտեզագրական նյութերի կարիննտում են պահվում իտալական վերածննդի շրջանից սկսած մինչև մեր օրերի կերպարվեստագետների ստեղծագործությունների ալբոմներ, վերարտադրություններ և բազմաթիվ այլ նյութեր, որոնց մասին մի քիչ ավելի հանգամանորեն խոսելու համար անհրաժեշտ կլինեին բազմաթիվ էջեր:

Արդեն երկրորդ տարին է ինչ փորձում է եվրոպական գրականության բաժինը: Այստեղ են հավաքված եվրոպական գրականության կլասիկների երկերի բազմաթիվ ժողովածուներ, արժեքավոր հրատարակություններ, թերթեր և ամսագրեր: Բաժինը այժմ իր գրքային ֆոնդերը համալրում է եվրոպական առաջադիմական գրականությամբ և գիտության ու տեխնիկայի վերջին նորություններին վերաբերյալ գրքերով:

Գրադարանի գրքային ֆոնդերը ընթերցող լայն հասարակության մատուցելու առ այժմ լավագույն միջոցն է ճանաչված գրքերի տասնորդական դասակարգման սխեմով: Այս սխեմով է դասավորված ամբողջ գրականությունը և համապատասխան քարտառանները, որոնք դրված են ընթերցողների տրամադրության տակ:

Օրավուր բարգավաճում, զարգանում և առաջ է ընթանում մեր սիրելի Հայրենիքի տնտեսությունը, գիտությունը, գրականությունը, արվեստի և մշակույթի բազմաթիվ այլ ճյուղերի առանձին քննադասումներ:

Գրվում ու հրատարակվում են բազմաթիվ անուն գրքեր, մենագրություններ, ժողովածուներ և այլն:

Գրադարանի քառահարկ, հիանալի շենքը, որը ճարտարապետ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի մտահղացումն է, օգտագործման է հանձնվել 1940 թվականին: Սակայն անցած 17 տարիների ընթացքում գրադարանի գրքային ֆոնդերն այնքան են աճել, որ շենքը եղած գրականությունն այլևս չի տեղավորում: Այժմ նախագծված է և հնգամյակի ընթացքում կկառուցվի գրադարանի շենքի նոր մասը, շարունակությունը, որը եղածի հետ կկազմի մի գեղեցիկ ճարտարապետական ամբողջություն:

Գրքերի պրոպագանդայի և ընթերցողների գրադարանի գրքային ֆոնդերին ծանոթացնելու նպատակով պարբերաբար կազմակերպվում են գրքային ցուցահանդեսներ նվիրված զանազան նշանավոր տարեթվերի, գրողների ու գրականագետների, գիտու-

թյան, արվեստի և մշակույթի գործիչների կյանքին ու գործունեությանը:

Գրադարանում կազմակերպվում են նաև գրական երեկոներ, կինոդիտումներ, դասախոսություններ և ընթերցողների կոնֆերանսներ:

Գրադարանի բազմաթիվ բաժիններում աշխատում են 150-ից ավելի գրադարանավարներ, որոնցից շատերը մասնագետներ են և ունեն գրադարանային քարձրագույն կրթություն, իսկ մի որոշ մասն էլ ունի երկար տարիների գրադարանային աշխատանքի հարուստ փորձ: Գրադարանավարը, ինչպես ուսուցիչը, գրողը, արվեստագետը, շրջապատված է հոգածությամբ և ուշադրությամբ:

Ամեն օր, առավոտյան ժամը 8-ից սկսվում է գրադարանի աշխատանքային օրը և շարունակվում մինչև գիշերվա ժամը 11.30-ը: Գրադարանը ունի աշխատանքի կայուն օրեր ու ժամեր, որոնք հայտնի են բոլոր բնթերցասերներին:

Ու գալիս են մայրաքաղաքի բանվորները, մտավորականները, դպրոցների, տեխնիկումների, քարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները այլևս առաջին ընթերցելու, պարապելու, գրադարանի ամեն հարմարություններով օժտված ընթերցասրահներում: Գալիս են երամ առևրամ մեր նոր սերնդի ներկայացուցիչները, մեր մանուկները՝ իրենց շնորհայի գլուխները հակելու գրքերի, ամսագրերի առաջ, լույս և գիտություն քաղելու, հարստացնելու իրենց մտքի փեթակները:

Պետական գրադարանը հանդիսանում է այժմ տպագիր հայատառ գրականության և պարբերականների հավաքման և պահպանման կարևորագույն, համազգային օջախներից մեկը, ուր աչքի լույսի պես պահվում ու պահպանվում են հայ մշակույթի տպագիր գանձերը:

Պետական գրադարանը նախապատրաստվում է կազմելու հայ տպագիր գրքի ամբողջական ու լրիվ մատենագիտությունը, սկսած 1512 թվականից մինչև մեր օրերը:

Այս շնորհակալ աշխատանքում ամեն մի գրասեր հայ մարդու հայրենասիրական պարտականությունը պետք է լինի օգնել գրադարանի ղեկավարությանը և կույեկտիվին՝ լրացնելու և ճոխացնելու Հայկական ՍՍՌ Ա. Մյասնիկյանի անվան Պետական ռեսպուբլիկական գրադարանի գրքային ֆոնդերը:





Ս Փ Յ ՈՒ Ռ Ք ՈՒ Մ

ԳԵՐԱԵՆՈՐՀ Տ. ՄԱՄՐԻԵ ԱՐՔԵԱԿՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱՅԻ ԵՎ ԽԱՐԹՈՒՄԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԻՆ

Եղիպտահայոց թարեջան առաջնորդ զե-
րաշնորհ Տ. Մամրիե արքեպիսկոպոս Սի-
րուսյանի՝ Վեհափառ Հայրապետին ուղղած
1957 թվականի մայիսի 8 և հուլիսի 3 թվա-
կիս զեկուցագրերից՝ քաղվածաբար հրատա-
րակում ենք նրա վերջերս Ադդիս-Աբեբայում
(Հաբեշստան) և Խարթում (Սուդան) կատա-
րած հովվական այցելությունից որոշ տեղե-
կություններ:



1957 թվականի փետրվարի 1-ին Ադդիս-
Աբեբայում վախճանվել է բազմամաստակ և
ձերոնազարդ հոգևոր հովիվ արժանապա-
տիվ Տ. Հովհաննես ավագ քահանա Կեհեր-
յանը:

Փետրվարի 4-ին, երկուշաբթի օր, օդի
ճանապարհով Ադդիս-Աբեբա է մեկնում
եղիպտահայոց թարեջան առաջնորդ գերա-
շնորհ Տ. Մամրիե արքեպիսկոպոս Սիրուս-
յանը՝ նախագահելու համար թաղմանական
արարողություններին և զբաղվելու նաև Ադ-
դիս-Աբեբայի հայոց ազգային-եկեղեցական
կյանքի կազմակերպչական հարցերով:

Փետրվարի 7-ին, հինգշաբթի օր, սրբա-
զանը մատուցում է հանդիսավոր սուրբ պա-
տարագ, կատարում է հանգուցյալ քահա-
նայի վերջին օծումը և դամբանական քա-
րոզով վեր է հանում արժանապատիվ Տ.
Հովհաննես քահանայի 34 տարիների ար-
դյունավետ և ազգօգուտ գործունեությունը:

Սուրբ պատարագին և թաղմանական հան-
դիսություններին ներկա են լինում հաբեշ
պետական ականավոր ներկայացուցիչներ,
հաբեշ հոգևորականներ, օտար եկեղեցիների
և կրոնական համայնքների ներկայացուցիչ-
ներ և ժողովրդի հոծ բազմություն: Ի հար-
դանս հանգուցյալ ժողովրդանվեր հոգևորա-
կանի, թաղման օրը փակվում են Ադդիս-
Աբեբայի հայոց դպրոցը, բոլոր վաճառա-
ւոներն ու գործատեղիները:

Եթովպիայի կամ Հաբեշստանի հայ գա-
ղութը շատ հին է: Գաղութի հիմնադիրներն
են եղել արարկիրցիներն ու վանեցիները.
որոնք պաղթել են Հայրենիքից և իրենց շա-
նասիրությամբ ու ձեռներեցությամբ հասել
են այս հյուրընկալ երկրում նյութական ա-
պահով դիրքի:

Գաղութը այժմ բաղկանում է 1.100 հո-
գուց, որոնցից շատերը կենտրոնացել են
առավելապես մայրաքաղաքում՝ Ադդիս-Աբե-
բայում:

Ադդիս-Աբեբայում կա հայկական եկեղե-
ցի Ս. Գևորգ անունով, կառուցված՝ բարե-
բարության մեծ հանգուցյալ Գևորգ Մուրատյա-
նի, եկեղեցու օծումը մեծաշուք հանդիսու-
թյամբ կատարվել է 1944 թվականին Մամր-
ի արքեպիսկոպոս Սիրուսյանի հանդիսա-
դրությամբ և Հաբեշստանի կայսր Նորին
Մեծություն Հայկ Սելասեի նախագահու-
թյամբ:

Ժողովուրդը կապված է միշտ իր եկեղե-
ցուն և ազգային ավանդություններին, նա

սիրում է իր Մայրենի իկեղեցին և հարդում ու մեծարում արժանավոր հոգևոր հովիվներին: Գաղութում կազմակերպված է նաև ուսումնա-դաստիարակչական կյանքը: Ազդիս-Արեքայի հայոց ազգային Գևորգոֆ վարժարանի ղեկնցիկ և փառավոր շենքում սովորում է 110 երկսեռ հայ աշակերտություն: Վարժարանը ունի նախակրթարանի յոթ դասարաններ (թերի միլեակարգ) և մանկապարտեզ:

Հարեշատանի հայ գաղութը ղեկավարվում է ժողովրդի քվեով ընտրված Գաղութային ազգային ժողովի կողմից, որը վավերացվում է Ոգիպտոսի ազգային առաջնորդարանից: Գաղութում գործում են նաև մարզական, մշակութային, ուսումնական կազմակերպություններ և տիկնանց երկու միություններ՝ Գաղութային ժողովի հսկողության տակ:

Հարեշատանի հայ գաղութի նյութական-տնտեսական կյանքը զոհացուցիչ է: Ճեղքատախնամ մարմին լուսինք, Վեհափառ Տեր,— գրում է Մամրեի սրբազանը,— վասնզի աղքատ լուսինք Եթովպիո մեք:

Հայերը Եթովպիայում դառնում են առևտրով, կաշվի, կոշիկի և մանածի արտադրությամբ: Կան նաև արհեստներով զբաղվողներ:

Եթովպիան հեռու ըլլալով եվրոպական ազդեցություն, անոնց ապականած վարքն ու բարքը տակավին թափանցած չէ մեր ընտանիքներին ներս... այնպես որ տակավին գաղութը կապրի իր համբավված պարկեշտությամբ,— գրում է սրբազանը:

Ազդիս-Արեքայում գտնված օրերին Մամրեի արքեպիսկոպոսն զբաղվել է նաև Հայ և Հարեշական իկեղեցիների հարաբերության հարցով: Ահա թե ինչ է գրում նա. «Ազդիս-Արեքա գտնված միջոցիս Եթովպական իկեղեցվո եպիսկոպոսները այցելեցին խձի և փափագ հայտնեցին մտերմական սերտ կապեր հաստատել Հայաստանյայց իկեղեցվո և Եթովպական իկեղեցվոյն միջև: Դարձյալ փափագ հայտնեցին, որ Հայաստանյայց իկեղեցվո համալսարանական կրթություն ստացած անգլիախոս վարդապետ մը կամ եպիսկոպոս մը տրամադրվի իրենց՝ իրենց նոր հաստատած կրոնական համալսարանին մեջ իբրև դասախոս աստվածաբանության և եթե հնար է այլ ճյուղերու: Իր հովվական այցելության ժամանակ նորին Սրբազնությունը ընդունվում է նաև Եթովպիայի կայսր նորին Վեհափառություն Հայր Սեվաստի կողմից:

15 օր մնում է սրբազանը Ազդիս-Արեքայում, պատարագում և բանին կենաց

քարոզությամբ մխիթարում է հայ ժողովրդին, կատարում է 13 մկրտություն և 1 պսակի օրհնություն:

Փետրվարի 17-ին, կիրակի օր, սրբազանը ինքնաթիռով մեկնում է Խարթում, այցելելու համար նաև Սուդանի հայ գաղութին:

Խարթումի Ծղանավակայանում սրբազանը խանդավառորեն դիմավորվում է Գաղութային ժողովի ներկայացուցիչների և ժողովրդի հոծ բազմության կողմից: Առաջնորդ սրբազանը ճշգրտափառով առաջնորդվում է Խարթումի հայոց իկեղեցին, ուր քարոզում է մխիթարում է ժողովրդին: Ապա կարճ հանգստից հետո սրբազանը նախագահում է հայոց վարժարանի կողմից ի պատիվ իրեն տրված բարի զալսության հանդեսին, ուր կատարվում են երգ ու արտասանություն, ուղերձ և ճառ: Վերջում խոսք է առնում սրբազանը և կոչ է անում ծնողներին և դասատուներին՝ հայ նոր սերունդը դաստիարակել ճշայն գրով, հայ կրոնքով և հայ նկարագրով:

Երեկոյան ժամը 9-ին Գաղութային ժողովի նախաձեռնությամբ կազմակերպվում է հանդես երեկո՝ ճշայնաստանյայց իկեղեցվո և Հայոց Հայրենիքին փառքին ու փառաբանությանը նվիրված: Երեկոյին խոսում են պարոն Գրիգոր Պոտուրյանը՝ սուղանահայ գաղութի մասին և առաջնորդ Մամրեի սրբազանը՝ Վիքայա Աշոյն և էջմիածնի ամենայն Ազգն Հայոց կապալ կանոնադրանով:

Փետրվարի 19-ին սրբազանը պաշտոնական այցելություն է տալիս Սուդանի ազատագրական շարժման ղեկավար կրոնապետ Արգել Ռահման էլ-Մահդին, նրա անձնական ավտոմեքենայով առաջնորդվելով սլալալ: Սրբազանը այցելում է նաև երկրորդ կրոնապետ Ալի էլ-Միրզանին, Սուդանի Հանրապետության վարչապետ պարոն Արդալա Խալիլին, ներքին գործոց նախարարին և Խարթումի կառավարչին:

Գերաշնորհ Տ. Մամրեի սրբազանը իր պաշտոնական այցելությունների ժամանակ ամեն տեղ արժանանում է չեքմ ընդունելության և լսում է պետական ղեկավարներից պատվարներ և սրտագին վկայություններ: Սուդանի հայ գաղութի մասին:

Փետրվարի 22-ին, շաբաթ օր, սրբազանը բանախոսում է Երիտասարդաց Միության ակումբի մեծ ալոում՝ Հայաստանի, հայրապետական վերջին ընտրության և օծման ու մեռնօրհներե մասին:

Երկրորդ անգամ սրբազանը խոսում է դարձյալ նույն ակումբում Վ. Բ. Բ. Միության կյանքի և գործունեության մասին:

Փետրվարի 28-ին սրբազանը նախագահում է վարդապետանց տոնի հանդիսություններին և քարոզում Խարթումի եկեղեցում:

Մարտի 3-ին, Բուն բարեկենդանի օրը, սրբազանը մեծ շքով և հանդիսությամբ կատարում է Խարթումի հայոց նորակառույց եկեղեցու օծումը: Խարթումի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է միա-նաբնակ հանգուցյալ Գրիգոր Սեֆերյանի բարերարությամբ:

Նույն օրը նորօծ եկեղեցում սրբազանը կատարում է 16 մկրտություն:

Մարտի 6-ին գերաշնորհ Տ. Մամբրե սըրբազանը այցելում է Խարթումի հայոց աղգային վարժարանը, ուր սովորում են 85 փոքրիկներ:

Հաջորդ օրերին սրբազանը նախագահում է եկեղեցում մեծ պահոց հատուկ Արևազայի և հսկումի արարողություններին և քարոզում:

Առաջնորդ սրբազանը Խարթումում եղած ժամանակ ընդունում է այցելությունները Սուղանի կաթուղի եկեղեցու արքեպիսկոպոսի, Ղպտի եկեղեցու եպիսկոպոսների և կրոնական այլ համայնքների ներկայացուցիչների:

Սրբազանը նրեք շաբաթ մնում է Խարթումում, խոսում ու մխիթարում ժողովրդին, նոր ոգի և շունչ հաղորդելով այդ փոքրիկ բայց հայրենասեր ու էջմիածնասեր գաղութին:

Սուղանի հայ գաղութը ունի կես դարի

կյանք: Գաղութի այժմյան թիվն է 850 հոգի, կենտրոնացած Խարթում և Սնդուրման քաղաքներում:

Խարթումում մինչև 1957 թվականը եկեղեցի գոյություն չի ունեցել: Գաղութի հոգևոր կարիքները հոգացվել են Եգիպտոսի հայոց առաջնորդարանից ուղարկված այցելու հոգևոր հովիվներով:

Խարթումում հայոց առաջին դպրոցը բացվել է 15 տարի առաջ, վարժարանը կառուցվել է ժողովրդական հանգանակությամբ, Եկեղեցու և դպրոցի հողը ձրի տրամադրվել է Սուղանի բարեխնամ կառավարության կողմից որպես նվեր հայ գաղութին: Սուղանի հայերի աղգային-եկեղեցական կյանքը ղեկավարվում է ժողովրդի կողմից ընտրված և 7 հոգուց բաղկացած Սուղանահայ գաղութային ժողովի կողմից: Խարթումում կան երիտասարդական մարզական միություն, կանանց միություն, հոգաբարձություն: Այստեղ էլ չկա ռադիոստանդարտ մարմին: Հայերը առավելապես զբաղվում են առևտրով և արհեստներով: Այստեղ էլ հայ ընտանիքի դավոր մաքրությունը պահվել է անաղարտ: «Հայաստանյայց եկեղեցին, հայ դպրոցը և հայ ընտանիքը հոս ևս Հայրենիքեն հեռու այս օտար ափանց վրա տակավին երկար տարիներ հայը հայ պիտի պահեն իր րոյուր բարեմասնություններով Սուղանական այս երկրամասին վրա՝ ի մեծ ուրախություն Ձերդ Վեհափառության և մեզի ամենուս», — գրում է Մամբրե սրբազանը:



ԱՆՆԵՏԱՅԱԾ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

(Ճամբորդի երթիւր)



մեն տարի բյուրավոր այցելուներ աշխարհի զանազան կողմերէն Հնդկաստանի Ակրա քաղաքը կենթան՝ գերահռչակ թաղ Մահալը տեսնելու:

Մարտ 9-ին ես ալ Դելհիէն հտն դացի: Իմ նպատակը սակայն մահմեդական արքայի մը իր կնոջ համար կառուցած կոթողական մահարձան մը տեսնել չէր, այլ հայկական բեկորներ, հիշատակարաններ ուրոնել, որոնք, ամա դ, բոլորովին մոռացութեան մատնված էին:

Ու հիմա՝ ակնարկ մը հայ Ակրայի պատմութեան: Հայեր, շատ հին ժամանակներէ ի վեր, Նուշիիսկ մահմեդականներու արշավանքներէն առաջ (Ժ դար) հարաբերութեան մէջ ձեռք բերած էին Հնդկաստանի հետ, բայց բնակութեան չեն հաստատած, այլ վաճառականութեան ըրած և վերադարձած են իրենց Հայրենիքը:

Աքրա հռչակավոր թագավորին որով (1556—1605) էր, որ հայերը ակսան գաղթել Հնդկաստան: Արքան, գնահատելով հայերու ընդոճիմ ուղիմովութունը և ձեռններն ցուցնելը, միջոցներ հայթայթեց, որ անոնք բնակին իր մարաքաղաքը Ակրա: Ան տեսնելով, որ հայերը ջերմեռանդորեն վաճառած են իրենց եկեղեցիքն, իր փսկ փափագով 1562-ին Ակրայի մէջ անտնց եկեղեցի մը կառուցանել տվաւ: Աքրայի օրով Ակրայի դիսավոր դատախազը Արդու, որ Միւր Ադլ ալ կոչված է, հայ էր աղագով: Արդու հայ դատախազին դուտորը, Աքրա թագավորի կարգադրութեամբ, 1590-ին ամուսնացաւ Իսկենդեր անուն լեզվագետ հայու մը հետ, որ հայկացի վաճառական մըն էր և Աքրա թագավորին մոտ լինելուական ծառայութեան մէջ մտած: Իսկենդերի անդրանիկ տղին՝ Միւրա՝ հնդկահայոց ամենէն նշանա-

վոր և անվանի հար հանդիսացաւ Ջիհանկիր և Ջեհան թագավորներու օրով, որոնք Աքրայի հաջորդեցին. ան Մուկու թագավորներու պալատի ամենէն ազդեցիկ մարդը կ'ըլլա: Իբրեւ կառավարիչ Ակրայի, Դելհիի և Լահորի, մեծ համբաւ թողուց Մուկու թագավորներու մոտ: Բարի և վրոնասեր ըլլալով, Նուշիիսկ լատին եկեղեցականներ հիացած են իր առաքինութեանց վրա և անվանած են զինք «առաքյալ երկրորդ Ս. Պողոս», ասովն քրիստոնեութեան, ասպովն տառապելոցն, «հայր քրիստոնեից», «լուսատու շահ քրիստոնեութեան»: Միւրա թե՛ Նուշիպահս և թե՛ Բարոյապահս սատար հանդիսացաւ լատին Հիսուսյան հայրերուն: Ինքն էր, որ Բոմբէյ և Ասսիսի թագաւորներուն մոտ հոգեւ զննց և նվիրեց անոնց, իր նշանակաւ օգնութեամբ Հիսուսյանները Ակրայի մէջ կոչելու բացին: Տիրեալ գացող առաջին միսիոնարներուն ծախքն ալ ինք հոգաց, իսկ երուսաղէմի հայոց Պատրիարքարանին վեց հազար ուսուցիչներ դրկեց:

Միւրա ոտանավորներ ալ դրած է պարակերներ լեզվով և հնդկերէն: 1648-ին Եահ Ջեհան իր աթոռը Ակրայէն Դելհի կփոխադրե, կիսնդրե Միւրային, որ Ներքոդական մը գրե փր մասին: Միւրա կկատարե թագավորին խնդրանքը, բայց ոչ թե Ջեհանը կփառարանե, այլ իրաւ թագավորը՝ զԱսոված: Սակայն պոռոզ արքան ոտանավորին մեծ գնանազան տնդոր հիշված Աստուծո անունը վերցնել կուտա և իր անունը կգնէ: Միւրա կմեռնի 1656-ին Դելհիի մէջ:

Աքրա թագավորի պալատին պաշտոնական թարգմանիչը՝ Դոմինիկոս Փերեզ, հայ մը եղած է, որ լատինացուցած է իր անունը:

1557—1559 թվականներուն Ֆրանսացի իշխան Ժան Ֆրիսկ Բոպրոն կայեցելի Աք-

բարի. թագավորը անոր կնուսթյան կուտա հայ օրիորդ մը՝ Հուլիանե, որ պալատին մեջ քծկուսթյուն կրնայ և ըստ ումանց՝ Աքրորի հայ կնոջ՝ Մարիամ Բեգումի քույրն էր։ Հուլիանե հիմնեց Ակրայի հայոց եկեղեցին 1562-ին. թն՝ ինք և թն՝ իր ամուսինը թաղված են աղյու եկեղեցիին մեջ, որ հիմա՝ լատիններու Ս. Պետրոս եկեղեցվո շրջափակին մեջ առնված է։ Շատ հարցուփորձերն ետք միայն լատին քույրեր ձեռնարկ խոստովանեին, որ հայկական է աղյու եկեղեցին. ժան. Բուրգոնի թոռան թոռ Հեռիանտանի նախարար քաղաքը կերթա և իր երեք հարյուր հետևորդներով հոն կրնակի. մատուտ մըն ալ կառուցանեյ կուտա, որ իր քահանայն կրնանա մինչև 1743։

Ակրայի հայ գերեզմանատան մեջ Բուրգոն ընտանիքն շատեր թաղված են. ամենցմե վերջինը Աննա խանումն է, մեռած 5-հունվար 1855-ին։

Անգլիո Ջեյմս Ա. թագավորը 1609-ին, զնդապետ Վիլյամ Հոկինսը Զեհանկիր կայսեր կղզին՝ Հնդկաստանի հետ առևտրական կապեր հաստատելու համար, Ջեյմսի պատգամավորը մեծ պատիվներով կրնողունի Ջիհանկիր. թագավորը տեսնելով, որ զնդապետը ամուսնով է, կամուսնացնե դայն հայ օրիորդի մը հետ, որում մասին Հոկինս իր հոշորուն մեջ կգրե. «Որիորդը հայ քրիստոնյա մըն էր և ամենեն հիմ քրիստոնյաներու ցեղին... և տեսնելով, որ ան պատգամավոր սերունդն էր, ամուսնացա հետըր։ Հոկինս և իր հայ կինը կմեկնեին Անգլիա. ճանապարհին Հոկինս նավում մեջ կմեռնի (1613 մայիսին) և կթաղվի Իռլանդա. Հաջորդ տարին զնդապետին այրին կամուսնանա անգլիացի. նավապետ Դովերսոնի հետ և 1617-ին երկուքը միասին Ակրա կուգան այցի։ 1623-ին Դովերսոն հոլանդացիներուն կապակցի. Այս հայ տիկինը առաջին անձն է, որ Հնդկաստանեն Անգլիա կայցեցին։

Ակրայի հայոց գերեզմանատան մատուռ ունի սա արձանագրությունը. «Ճանապարհ յայս տապանս Փրորաշին որդին մղտեսի Մարտիրոս Զուլայի, վաղճանեցաւ ի Ակրայ քաղաքի և ապրանքն ետ Աստուծոյ վասն իւր հոգոյն. թիվ հայոց ԻԿԶ։

Հնդկաստանի Պենդար նահանգի ամենեն հիմ քրիստոնեական արձանագրությունն է աչա և մատուռն ալ տաննեն հին կանգուն մնացած սրբավայրը։

Ակրայի մեջ հայ գերեզմանատունն և սուլին փոքր մատուռն դատ որեւէ հայկական հետք չգտանք. Գերեզմանատան մեջ կան հարյուրեւ ավելի դամբարաններ. ամենցմե ամենեն հին արձանագրությունը

1611 թվականը. կերեւ. Վերջին հայր, որ թաղված է Ակրայի հայոց գերեզմանոցը, գորավար Հակոբ Պետրոսյանի թոռն թոռն է. մեռած 5 հուլիս 1927 թվականին։

Աքրայ թագավորի օրով և հաջորդ դարուն հայերը ըստմացած են Ակրայի մեջ 1614—1675 թվականներուն 7 քահանայներ. Ասատուր, Մխիթար, Աուսիաս, Զաքարիա, Հովհաննես, Բաղդասար և Հարություն. հովված են Ակրայի հայությունը. ժէ դարուն հայերը քարվանսարայ մըն ալ տնեցած են այստեղ, որ ծառայած է իրեն կեդրոնատնի ճամբորդող հայ վաճառականներուն։

Ակրայի հայոց դերեզմանատան մեջ կա դամբարանը հալազգի Ասատ Եահնազար խանի, որ մեռած է 1784 ապրիլ 25-ին. նահազար խանը մեծ համբավ ունեցած է թուրանոթ շինելու արվեստին մեջ։

Ակրայն 24 մղոն հեռու կգտնվի Ֆաթիպուր. Սիկրին, որ Աքար թագավորի պալատը եղած է, հիմնված 1568-ին. Այստեղ դեռ կանգուն է ճեպ թագուհիի պալատը. Այդ պալատին մեջ ապրած է Աքար թագավորի թագուհին, որ ազգով հայ էր՝ Ասրիամ Զամանի Բեգում անունով. Հայ թագուհին պալատը գեղակերտ շենք մըն է, որուն դանադան մասերում մեջ կերևան հայկական խաչեր. ի պարու սկիզբը յուղաներկ պատկեր մը գտնվեցավ, որ կնեղկայացնե Աքար թագավորը իր հայ թագուհի Մարիամ Բեգումի. հետ և Հայ թագուհին հայկական սիրուն խաչ մը կնոն իր վրին վրա։

Ակրայն 126 մղոն հեռավորության վրա կգտնվի Հնդկաստանի մայրաքաղաք Դելիին, որ նույնպես հայեր ապրած մնանցային մեջ. Թաղարանին մեջ հիշատակարան մը կա, ըստ որում 1781-ին Դելիի մեջ հայկական եկեղեցի շինված է. 1715-ին Մոլոու կայսրը Դելիի Տ. Ստեփանոս հայ քահանային կհանձնե Կալկաթային Դելիի եկող անգլիացի պատգամավորները դիմավորելու պաշտոնը. Այդ ժամանակաշրջանին հայերը եկեղեցի ունեցած ոչպալու են. որ համանարար կործանած է 1739-ին, երբ Դելիին տարուգանդ եղավ նագիր Եահի զորքերն. Մինչև այսօր Դելիի մեջ կա միակ գերեզմանատուն մը, ուր կան 6 հայ գերեզմաններ. 1755-ին Դելիի ծնած է գորավար Հակոբ Պետրոսյան. Պետրոսյան 12.000 զորքի հրամանատար էր և իր պալատին 40-ը հայեր էին. Պետրոսյան մասնակցած է շատ ճակատամարտերու և մեծ համբավի տիրացած է իր քաջության համար. Ան մեռավ 1850-ին. Հնդկաստանի Փուլիոր քաղաքին մեջ. ի պատիվ իրեն թաղուան ժամանակ 95 թնդանոթ արձակած են՝ հավասար իր կյանքի տարիներու թվին. Զորա-

վար Պետրոսյան 70 տարի հավատարմությամբ և քաջութիւնով ծառայած է Հեղինակական Այս զորավարը Գուալիորի մէջ եկեղեցի կառուցած է և իր ծախքով քահանայաւորած է: Այդ քաղաքի մէջ 30 հայ ընտանիք ապրած են, ամենքն ալ իր ծառայության մէջ: Երբ հայերուն թիվը կնկազի, զորավարին բարեպաշտ կինը՝ Զելեն եկեղեցւոյ զգեստներն ու անոթները կակաթայի և ձուգիայի հայտը եկեղեցիներում կդրկն: Զորավարի որդին՝ Զովհաննես հորը օրինակին հետեւեցավ և անոր նման կտրիճ և անվանի զորավար մը նշան: Դժբախտաբար 1857-ին, Ակրայի ապստամբության ժամանակ, ան զոհ գնաց իր մահամեղական ծառաներու դավադրության և սպանմանով 43 տարեկան հասակին մէջ:

Ժէ դարում Դելհի ապրած է հայ նշանավոր բանաստեղծ Սարմազ, որ պարսկերէն լիզովով բազմութիւն զգեցներ և ռուսացիները գրած է Հոֆեզի և Օմար Խայամի հետեւողութեամբ: Սարմազ իբրեւ վաճառական Պարսկաստանէն Դելհի կուգա, բայց փոխանակ վաճառականութեամբ զբաղելու, հինգու ֆաթիր մը կըլլա: Կշահի Զեհան կարծր և անոր որդւոյն՝ Դարա Շիվոյի համակրութեամբ:

Մտտ 300 տարի անցած է Սարմազի մահէն, բայց տակաւին ան կհարգվի հինգուներէն և յահմեդականներէն, որոնք իր գերեզմանին վրա մտմ կվառեն, խունկ կծխեն և ծաղիկներ կսփռեն: այս բանին մենք ևս ակնատես եղանք: Սարմազ Հեղինակաւորի մէջ ճանչցված է իբրեւ տուրք և գիտնական:

ՋԵՆՍՈՒՐԱԸ, ԵՐԵՔ ՀՈԳԻՆՈՑ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Մարտ 20-ին, արժանապատիւ Տ. Պողոս քահանայի հետ կայցելեմ Զինսուրահ, Կակաթային 36 մղոն հեռու գլուղաքաղաք մը, որ կկոչվի նաև Զիչքա: Ժէ դարէն սկսելով բարգաւաճ հայ գաղութ մը նշան է այտեղ, որ վաճառականութեամբ զբաղած և իր գոյութիւնը շարունակած է մինչև Ժժ դարու կեսերը:

Զեռվեն կնշմարենք հայ եկեղեցւոյ զանգակատունը, որ կկոթողանա մոպ եթերին մէջ: Փողոցներուն անկյունները նշանատախտակներ կան, որոնց վրա անգլիներն «Արմինիքն չոր» (հայտը եկեղեցի) գրված է և նշանով մը ցույց կտրվի հայ եկեղեցւոյ ուղղութիւնը: Մեր ինքնաշարժը կանգ կառնէ եկեղեցւոյ պարիսպին մնծ դարձաւին առջև: Վար կիջնենք: Կարխենք դուռը, ոչ լսող կա և ոչ ալ բացող: Մեր մեքենավարը կհաջողի պարիսպին հյուսիս-արեւելան

որմին վրա բարձրանալ և լուր տալ ներսի բնակիչներուն:

Դուռը կբացվի. մեզ կդիմավորեն Զինսուրահի հայ բնակիչները, թվով երեք հոգի, իրենց հինգու ծառաներով: Ընդարձակ շրջափակի մը մէջն ենք. ամեն կողմ կանաչութիւն, տուններ, ծառեր և մարգագետին: Տ. Պողոսի հետ կմտնենք Ս. Հովհաննէս Մկրտիչ եկեղեցին աղոթելու, մինչ այլակրան սպասավորները կհնչեցնեն զանգակները: Ռոմանական սենով կտրկի, սիրուն տաճար մըն է այս, կառուցված 1695-ին. քրիստոնյա երկրորդ հին եկեղեցին Բենգալ նահանգին և հնդկահայ եկեղեցիներուն հնագույնը:

Մտտ հարյուր դարաբաններ կան Ս. Հովհաննէս եկեղեցւոյ ներսը և բակին մէջ, որոնցմէ 28-ը սրբավայրին ներսն են, մին «Պետրոսի Խաչիկի որդւոյ», կառուցված 1734-ին, նուրիսիս յմմին վրա է՝ սեղանին առջև: Բենին շուրթին մեջտեղը արուղի վրա հիշատակարան մը կա, որուն տապանադրոտ բառը խիստ ուշագրաւ է. ըսել կտրվի անշուշտ, որ Պետրոս Խաչիկի դամբարանը առաջնորդող գոտն է: Հայեր սովորութեամբ շունին եկեղեցւոյ մէջ մեծել թաղել: Հնդկաստանի հայ եկեղեցիները բացառութեամբ կկառուեն: Հյուսիսային դասին մէջ եկեղեցին կառուցողին, Խոջա Հովհաննէս Մարգարի դամբանն է: Մարգարային ընտանիքը մեծահարուստ և շատ ազդեցիկ եղած է ոչ միայն Զինսուրահի, այլ նաև ամբողջ Հնդկաստանի մէջ:

Զինսուրահի Ս. Հովհաննէս եկեղեցւոյ դամբարանքն Խոջա Զանգակատունը կառուցած է սոխկին Սոփիա Բագրամ 1822-ին: Անոր ներքև կգտնվին բազմաթիւ դամբարաններ: Հարավային կողմը Բեզալով բնտանիքի գերեզմաններն են, իսկ եկեղեցւոյ մուտքին Ղարաբաղի վերջին հայ իշխանին տանկանն է սա վիմագոյութեամբ: Եր քաղցր իշխտակ մեր սիրեցեալ հօր Դուրթի որդւոյ Յորդոն Մելիք Բեզալարի, որ վերջին իշխան Ղարաբաղի ի Թիֆլիզ նահանգի ի Կովկաս, ծնեալ ի մէյ (մայիս) և վախճանեալ ի Զինսուրահ ի 22 տեղտեմբեր 1884: Ես եմ յարգութիւն և կնանքալ ժշխանը ապրած է 89 տարի: Իր որդին ալ, նշանավոր գիտնական, հնագետ Հովսեփ Մելիք Բեզալար հոս թաղված է 1907-ին: սա էր, որ 1892-ին Սկրա առունով առջիներէն պաշտօնաթերթ մը սկսավ հրատարակել, պաշտպանելու համար Հայոց դատը ընդդէմ թուրքերու բարբարոսութեանց: Այս դամբարաններէն քիչ մը անդին, զանգակատան արեւելան կողմը, ժամկոչի մը հանգստարանն է. հայ իշխան և հայ ժամ

կող, քով-քովի Հայ եկեղեցվո հովանիին ներքև...

Բակին մեջ, երիցատուն հարավային կողմը հոր մը կա, որուն շուրջը՝ փոքր ավազան մը: Անոր քով արևի ժամացույցն է, որ ճշգրտորեն որվան ժամերը ցույց կուտա: Երիցատուն մեջ կ'շտրասիրվինք թելով, շտրասրահի որմերին դեմ դիմաց կախված են երկու մեծ էկեղեցականներու՝ երիմյան Հայրերի և Թորգոմ պատրիարքի նկարնալը:

Տարին անգամ մը՝ Ս. Հովհաննես Մկրտչի օրը, որ տոնն է սույն եկեղեցվո, կալկաթայի հայերը ուստի կուգան Ձիշտ, ուր սուրբ պատարագ կ'մատուցվի և հոգեճաշ կտրվի ռվարավորներուն: Մյուս օրերուն լոռած է աղոթասացությունը, թեպետ առավոտ և երեկո, րարերարներու կտակի տրամադրությանց համաձայն, կհնչեն եկեղեցվո զանգակները:

Պիտի մեկնինք երբեմնի հայաշատ այս կեցրոսեն, ուր իմա միայն գերեզմաններ կան և անոնց երեք հավատարիմ պահապաններ, որոնք արդեն իրենց ձմեռին մեջ են, այրի տիկին Աննա Հրուսթունյան (ժամկույն կինը), պարոն Ավդայ Թադևոսյան և պարոն Գրիգոր Կարապետյան: Վերջինս երկար ժամանակ տիրացություն ըրած է հնդկահայ եկեղեցիներու մեջ, լավ շարական գիտեր և գրաբար ընթերցումը անթերի էր. տապանագրությունները այնքան ճշգրտորեն կկարդար, որ միայն հիացում կրնայի ունենալ իրեն հանդեպ: Ավա՞ղ, սակայն, այս պատվական հայր ամիս մը ետք կեքեց իր մահկանացուն, Չինսուրահի հայության թիվը երկուքի իջեցնելով:

Կմանենք եկեղեցի և հավարտ առավոտյան ժամասացության ռեզոլուց մը կարսուսանենք, ... և մանաւանդ այնոցիկ, որք ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցոյ են հանգուցեալս: Կմեկնինք մենաստանեն, նուկնայիմ. րոտր շենքերեն և կառույցներեն վեր, հպարտորեն կրարձրանա եկեղեցվո զանգակատան գմբեթը, որ իրեն վկա ճշմարիտ Լույսին, կտարածե իր հովանին այս այլակրոն քաղաքին վրա:

ԴԱՐՋԻԼՈՒԳ, ՀԻՄԱԼԱՅԱՆ ԼՈՒՆՆՐՈՒ ՀԱՅ ԴԱՐՈՒԹՐ

Դարջիլինգ Հնդկաստանի ամենեն օդատուն և գեղեցիկ ամառանոցն է, հաստադրված Հիմալայան լեռներու մեկ թևին վրա: Կայցելենք այնտեղ մարտ 25-ին կալիթթարնակ հայ ազգայիններեն պարոն Մարգար Մարգարյանի հետ:

Նախ օդանավով կ'մեկնինք Բակուկրա, թռչելով հեղիններու սուրբ գետի՝ Գանդեհի վրայեն: Ապա առանձին տակսիով կշարունակենք մեր ճանապարհը թելի ընդարձակ տափաստաններու, լեռներու բարձունքներու վրա թառած և երբեմն ալ անոնց շրջանգաններեն կախված հինավուրց դուղերու և անդնդախոր հովիտներու մեջեն: Ի՞նչ սիրուն են եղինկներու երամները, որոնց հաճախ կհանդիպի ճամբորդը, և որոնք շուտով կանհայտանան լայնածիր անտառներու մեջ: Ահա վայրաշարժը, որ հեվալով և շարունակ օդին մեջ ծուխ արձակելով ու լեռներու քովերեն պտուտքելով կվերելակն. մեկի հետ է ան, համբնթաց. քիչ անգամ իրմե կրաժնվինք: Ահա ան կանցնի կամուրջի մը տակեն ու հետո լայնարձակ բոլորակի մը վրայեն պտուտքելով կշարունակի իր ուղին. հնարամիտ միջոց մը բարձրունքներ նվաճելու: Ու երբ յուրաքանչյուր նվաճված բարձունքն վարկնալինք՝ անդունդը մեր առջև ավելի կմեծնա, կլայննա ու ամենհի, սոսկավիթխար կերպարանք մը կզգենու: Այսպես են Հիմալայան լեռները: Հապա սա նոճիները, երկնամեծ, մշտադալար, «խոյանշարժ», ինչպես պիտի ըսեր ժնեռաշխարհ-ի հեղինակը՝ Տիրան Ձրաթյան, և որոնց մեջեն հավերժությունը տեսավ: Արդյո՞ք բուզդալականներն ալ, որոնց հիշատակարաններով հարուստ է այս շրջանը, նույն հզացքը ունեցած են:

Չորս ժամեն կհասնինք Դարջիլինգ, ծովու մակերևույթին մոտ 7000 ոտք բարձունքի մը վրա փոխված ու կորսված ծով մորճությանց մեջ: Կեղևանինք «Բել վրա» պանդոկ, որուն տնօրենը հայ մըն է՝ պարոն Գեվորգ Բեղլյան, վաթսուը անց համակրելի չուղայնցի մը, որ 15 տարին ի վեր Դարջիլինգ կրնակի և տեղացիներեն ճանջված ու հարգված է: Այցելուներու համար պատրաստած է համառոտ ուղեցույց մը:

Դարջիլինգ կաթոլիկներու և անկիկալներու քսանն ավելի վարժարաններու կեդրոն մըն է: Քաղաքին յուրաքանչյուր անկյունը կհանդիպիք վառվռուն, կապույտ ու սանդղներու ամեն ազգե և կրոնքե: Հնդկաստանի տաք կլիման կսլաքտադրե, որ եկեղեցական կազմակերպություններ, այսպիսի հովասուն վայրերու մեջ դպրոցներ քանան, մեկ կողմն դիտություն չամբելով, և մյուս կողմն ալ իրենց փարախեն ներս նոր ոշխարներ բերելով: Այս դպրոցներու տարեթղակները շատ սուղ են և այդ պատճառով միայն հարուստները իրենց զավակ-

ները կրնան հոն զդնել հայեր ալ կգտնվին այդ հարուստներուն մեջ:

Իրիկնապահին պարոն Մարգար Սար-
գսյանի հետ կայցելենք լատինաց աղ-
կանց վարժարանը՝ Լորենտ Կոնվենտ: Կը-
խաժորաբար Կանադային նկատ կաթոլիկ
եկեղեցական հայրեր և մայրապետներ
կաշառտնաժարեն այստեղ: Մեզ պատշնող
քահանան Սոնրեային է: Եկեղեցի կառաջ-
նորդվինք: մայրապետներ հսկում կկատա-
րեն: Իրիկնային խորհրդավոր պահ մը կհայի
հոգևույս... Անզգայարար ծունկի կուգամ և
կունկնդրեմ իրենց ազոթասացությանց և
սաղմոսերգությանց, որոնք, դժբախտաբար,
քիչ մը հապենա կարտասանվին:

Հովիվը կծանոթացնեն մեզ դպրոցի տնօրե-
նին, որ մայրապետ մըն է: Մեր խնդրան-
քին վրա, հայ աշակերտուհիները մեզ մոտ
կբերեն: Բոլորն ալ անգլիախոս են: Բա՛մ մը
իսկ հայերեն լին հասկնար, միայն գիտեն,
որ հայ ընտանիքներու զավակներ են:
Կհարցնեմ անունին — Ինգրիդ Թադիոս,
Կարոլին Ականուր, Իվան Արաթուն, Պրենտա
Արաթուն: Մնա՛ք բարով հայ անուններ: ու
իրենց անուններուն հետ օտարացած է նաև
իրենց հոգին:

Հաջորդ օր կայցելենք լատինաց Ս. Հով-
սեփ կոլեջը: ՋՅ հայեր, գրեթե ամենքն ալ
Հիսուսյան, մեծամասնութամբ Կանադային,
դաս կուտան այս հաստատության մեջ:
Տնօրենին թույլտվությամբ, կծանոթանամ
հայ աշակերտներուն — Լեո Լուկաս, Նոնի
Սիմոն, Ալֆրեդ Սիմոն և Հայկ Սիմոն: Ու
պատկերը նույնն է, ինչպես վերը հիշե-
ցինք:

Մնաց անգլիկաններու Ս. Պողոս կոլեջը:
Այնտեղ ևս կփութանք: Դեղեցիկ ու բարձ-
րադիր վայր մը, որուն նմանը այլ ուրեք
տեսած չէի: Սույն կոլեջի հայ աշակերտնե-
րուն ալ ծանոթացանք — Ջան Զետոր, Մալ-
քոմ Բլինկո և Արշակ Սարգսյան: Փա՛ռք
քեզ, Տե՛ր, որ վերջապես հայ անունով ու-
սանողի մը հանդիպեցանք: Արշակ Կալկա-
թայի հայոց ճեմարանն է, հայերեն կխո-
սի և ծրագրած է Անգլիա կրթալ և իր ուսու-
մը շարունակել:

Կաթոլիկ և անգլիկան վարժարաններու
տնօրեններուն համաձայնությունը առինք, որ
Հինգզարթի առույն, Ս. Անդրեաս անգլի-
կան եկեղեցվո փոքր մատուան մեջ առա-
վույթանք: Ժամերգություն կատարենք հայ ու-
սանողներուն համար և հետո սուրբ հաղոր-
դություն: Խառն իրենց: Զառարկեցին, ընդ-
հակառակը, շնորհակալություն հայտնեցին
ներկայացուցած խնդրանքին համար և
կալոթնս կերպով մըն ալ ուրախ էին, որ իմ

միջոցով Դարչիլինգի իրենց դպրոցներուն
հայ տղաներն ու աղջիկները առիթ պիտի
ունենային Հայաստանյայց եկեղեցվո սուրբ
հաղորդությունը ճաշակելու:

Հայ ուսանողներին զատ Դարչիլինգ ու-
նի նաև հայ բնակիչներ: անոնցմե հիշեցինք
արդեն պարոն Գ. Բեդելյանը: «Սյուիս»
պանդոկի տնօրենն ալ նույնպես հայ է: Ար-
շավիր Գրիգորի Գալուստյան, Ջուդայեն,
շնորհալի երիտասարդ մը: Սյուա հայը Ջան
Դիմետրիոսն է, կզբաղի պետական հաշվա-
պահությամբ: Իսկ գաղութին նահապետը Յ1
տարեկան ծերունի մըն է, Սեթ Սամվել,
վառվռուն, եռանդալից, Հարուստ է կրսեն
իրեն համար, բայց ոչ մեկ հետաքրքրու-
թյուն ունի հայության հանդեպ:

Հինգզարթի առավույթան ժամը 7-ին Ս.
Անդրեաս եկեղեցվո մատուան մեջ էին Դար-
չիլինգի հայ համայնի անդամներն ու ա-
շակերտները, ինչպես նաև Աղդիս-Արեքա-
յեն և Կալկաթային երկու հայ ընտանիքներ,
որոնք օդափոխության եկեր էին: Խոսեցա
հաղորդության նշանակության մասին և ա-
պա խոսքս մասնավորելով ուսանողներուն,
թեյադրեցի, որ սուրբ հաղորդության ճաշա-
կումով, լեցվին նաև մեր սուրբերուն և նա-
հատակներուն հոգիով և ապրին իբրև ճըշ-
մարիտ հայեր, նվիրված Հայ Ազգին, Հայ
եկեղեցիին և Հայ Հայրենիքի ծառայության:

ԱՌԱՔՐԱԶԱՐԿ ԶԱՅՐ

Ասանսոյ քաղաքը, որ 186 մղոն հեռու է
Կալկաթայեն, նշանավոր է գործատունե-
րով, բայց մանավանդ իր ածխահանքերով:
Հուս կրնակին երկուտասնյակ մը հայ ըն-
տանիքներ: Հայերեն ոմանք՝ Սարգիս
Մկրտչյան, Մկրտիչ Ղուկասյան, Բազրաս,
Հարությունյան, Անդրանիկ Հովհաննեսյան,
Արշալույս Աղեքսանդրյան և ուրիշներ մեծ
պաշտոն ունին երկաթի և ածխահանքի գոր-
ծարաններուն մեջ:

Մարտ 31-ին, կիրակի առավույթ, Ասան-
սոյ պատարագեցի և քարոզեցի անգլիկան-
ներու Ս. Պողոս եկեղեցվո մեջ, ուր համայն-
քին բոլոր հայերը ներկա էին: Սույն եկե-
ղեցվո Հյուսիսային որմին վրա անգլիկներն
լեզվով հետևյալ հիշատակարանը կարդա-
ցի, զոր թարգմանաբար կներկայացնեմ.

«Ի նուիրական յիշատակ Աղաքեկ Առա-
քելանի: Աղաքեկ կառավարիչ Արքաբեան
և Ածխահանաց ընկերութեանց և Ի Սիդա-
րամպոր բնակելուց վախճանեաց ղերկրա-
ւոր ղկեանս իւր յինն ղեկտեմբերի 1892, Ի
տիս 37 ամաց և 9 ամօրց:

Յիշատակարանս. այս կառուցաւ առաւել-
բան ի հինգ հազար Զնմինդարի գործաւո-
րաց, որոց կառավարել էր և այլ Բնկալ-
բարեկամաց, ի նշան խոր զնահատանաց և
յարգանաց, որք գործեցին ի ներքոյ [հրա-
մանաց] նորա, մահուամբն նորա կորու-
սին զտէր մի բարի և արդար, և որք ճանա-
չէին զնա՝ զբարեկամ մի ճշմարիտ, օժա-
նեղծ և յանարատ և յանթառամ ժառանգու-
թիւնն որ պահեալ է յերկինս ձեզա (Ա.
Պետր., Ա 4):

Կյաւնք և հալիտեանական լոպս մշտն-
բնի իր հայու ազնվական հոգիին:

ԱՍՏՎԱԾ ԼՈՒՄԱԼՈՐՆ ՄԵՌԵԼՆԵՐՈՒՆ ՀՈԳԻՆԵՐԸ

Բոմբիյեն մինչև Մադրաս, Կալկաթա,
Ռանգուն, Սինգապուր, ու դեռ մինչև հեռա-
վոր, Զավա հայ մեծերն իր կպահեն Հայ Ե-
կեղեցին: Հայ դպրոցը, քահանաները, աղ-
յատները և ազգային բոլոր հաստատու-
թյունները: Անձնուրաց, կրոնարույր հոգի-
ներ երկար տարիներու իրենց արդար վաս-
տակը—գրամ, շենքեր և արժեթղթեր կտա-
կեր են Եկեղեցիին, որպեսզի իրենց մահեն
ետք այդ արդաղան հաստատութիւնը և ա-
նոր կապված հայ ժողովուրդը միշտ շին ու
պայծառ մնան, և երբեմն ալ աղոթքի՝ մեր-
մունջ մը արտասանեն իրենց հոգիին լուսա-
վորման համար: Ու հաճախ հուզումով է, որ
մաքդ կիմանա: Թե ալ արդար վաստակը
ի նշանաւոր եկեղեցիներով ու զրկանք-
ներով ձեռք բերած են անոնք:

Քանի որ կտակները եղած են, ի նշ կմնա՝
ուրեմն ապրողներուն ընելու— Տնտեսել
մեծեղներուն թողած գումարները: Ի՛նչպես,
վեճերով և կռիվներով: Ինչպես այլ ուրիշ,
հեռաստանյա այս ափերուն ժողովուրդն ալ
քաջածանոթ է վեճի, կազի ու կռիվի: Պատ-
ճառ. մեծերն իր ապահոված են զիրենք
նյութապես ու տարիներ ի վեր առանց ա-
ռաջնորդի մնացած ըլլալուն, յուրաքան-
չյուր հայ ինքը առաջնորդի դեր ուղած է
կատարել: Զուղան, ինքն ալ առանց առաջ-
նորդի, բավականացած է համալքներն ու-
մանց միայն քահանա զրկելով: Եվ ի՛նչ
կընեն այդ զրկված քահանաները: Երեսուն
տարի առաջ այս թեմը այցելող մտավորա-
կան մը կուտա պատասխանը. «Քահանա-
ները հարկադրված են Հնդկաստան և Զա-
վա երթալ, ինչպես ուրիշ ցաղթականներ,
որամ շահելու և վերադառնալու համար: Պա-
տավոր ազգային մը, որ երկար տարի-
ներն ի վեր մոտեն ծանոթ է անոնց կյան-
քին և գործունեության, սրտցավորեն
կարօտահայտվեր այսպես. «Մէր քահանա-

ները Զուղայեն կղզիվն երեք տարվան հա-
մար և ըստ օրինի այդ ժամանակաշրջանի
լրումեն ետք պետք է վերադառնան. սակայն
չվերադառնալու բազում պատճառներ կհա-
րուցանեն ու երեք տարին կըլլա վեց, ինը,
տասներեքու, մինչև այն աստիճան, որ ժո-
ղովուրդը երկպառակովի Քահանաները կա-
նոնավորապես «մեծերն են» կգանձեն ի-
րենց թոշակը, իսկ ժողդերեն» իրենց նվեր-
ները և բավականաչափ գումար դիզելն:
ետք կվերադառնան Զուղա, տուն շինել կու-
տան ու հանգիստ կյանք մը կանցնեն:
Դրական դործ, հովվութիւն, ժողովրդի հո-
ղեմը և կրթական կյանքի մշակում մի՛ ազն-
կալեք անոնցմա:

Ու ճիշտ խոսքեր է ան, որովհետեւ մենք ևս
ամենուրեք նույն կացութեան ահանաւոր ե-
ղանք: Քահանայի և ժողովրդի միջև անհա-
մաձայնութեան և անսիրելութեան բուն
պատճառը մամոնային ջուրջը կկեղորոշա-
նալ Բացառութիւնն էր... այդ մասին խո-
սիլը ավելորդ է:

«Մեծերն են» կպահեն Հայոց Եկեղեցին:
Անոր լավագույն օրինակը Մադրասի Ս.
Աստվածածին եկեղեցին է, կառուցված
1712-ին, և զոր կայացնէմ ապրիլ 4-ին:

Մադրաս... հայ յրազրութեան ծննդա-
վայրը, երբեմնի բազմամարդ ու շին հայ
գաղութը, Հիմա հոն կրնակին միայն վեց
հայեր— հանգուցյալ Տ. Սահակ քահանա
Հակոբյանի տիրուհին՝ Մաղիկ և դավակնե-
րը՝ Անդրանիկ, Վարդուհի և նվարդ ու նաև
Եկեղեցվո ժամկոյը՝ պարուն Լեվոնում Գաս-
պարյան և վիճակավոր քահանան՝ Տ. Ե-
ղիազար Քեշիշյան: Բնիկը անուշով իայ
մըն ալ կապրի Մադրասի մեջ, սակայն չի
հետաքրքրվիր Հայ Եկեղեցիով, 200 մղոն
հեռու: Սկզունդերազ քաղաքին մեջ կրնա-
կի՝ հայտնիին մը՝ Մելիի Ռոբինզոն, ա-
մուսնացած անգլիացիի մը հետ, և որ ա-
մենատարի. Զատիկն անպայման Մադրաս
եկեղեցի հիւզա՝ սուրբ պատարագին ներկա
ըլլալու և հաղորդվելու: Քանի մը տարի ա-
ռաջ ուրիշ երկու հայեր ալ կան եղեր, բայց
շատոնց իրենց մասին որեւէ լուր չկա:

Տ. Նդիազար մեկնած է Բոմբեյ եկեղեցա-
կան գործով: Անդրանիկ Քեշիշյան և ժամ-
կոյը զիս կառաջնորդեն եկեղեցի: Մեկ
կղիմավորեն եկեղեցվո հինգ այլակրոն ծա-
ռաները. անոնցմէ մին կհնչեցնեն եկեղեց-
վո զանգակները դաշն, մեղանուշ. այսպիսի՝
նախ երկու զանգակները երիցս, ապա վի-
ցը միասին. յուրաքանչյուր ձեռքին մեջ երեք
զանգակի լվանները բռնած, ձախ, աջ, ձախ,
կանգ կառնեն, հետո դարձալ ձախ, աջ, ձախ
և կանգ կառնեն ու այսպես կշարունակեն 12

անգամ. ապա վեց շվաններն ալ մեկ անգամեն կքաշե ու կկենա. նույն այս կերպով կհնչեցնեն Ս. էշմիածնի զանգակներն ալ. կհիանամ զանգակահար սպասավորին ճարտարության վրա. Ֆրանսիս է անունը և 40 տարիներն ի վեր այդ պաշտոնը կկատարեն ամենայն հավատարմությամբ և ճշտապահությամբ: Այդպես է մեռելներուն կտակը ու ինքը հավատարիմ գործադրողը անոնց. իր ճարտար զանգակահարությունը սորված է ջուղայեցի քահանաներեն:

Օտարազգի այս հինգ սպասավորներն ալ «Աստված լուսավորե մեռելներուն հոգիները» կըսեն. ու սրտաբույս է այդ մաղթանքը, որովհետև անոնց կտակներուն շնորհիվ է, որ իրենց ամսականները կստանան, հավառակ անոր, որ առավոտեն մինչև երեկոսանգործ կնստին, Ի՛նչ րարի եղած են մեռելները... իսկ ողջե՞րը... ճիշտ հակառակը, որովհետև լին խորհիր իրենց ամսականը ավելցնելու իսկ:

«Աստված լուսավորե մեռելներուն հոգիները», թե՛ հարուստներուն և թե՛ աղքատներուն մաղթանքն է այդ Հարուստները, շնորհիվ մեռելներուն թողած կտակներուն, սզգային հաստատությունաց կամ որեւէ նպատակի դրամ տալու պարտադրանքին տակ չեն: Իսկ աղքատները. բարեկրոն մեռելները անոնց մասին ալ խորհած են և ազատած զանոնք իրենց օրվան հացը ճարելու տաղտուկեն: Օտարներու հետ ամուսնացած հայեր ալ կարծեն մեռելներու հոգիներուն համար, անոնց կիները կամ ամու-

սիները եկեղեցի կուգան ընդհանրապես միայն այն ժամանակ. երբ թշվառության մեջ ինկած Սե. ու կղիմեն Հայ Եկեղեցիով վարչության, որովհետև Եկեղեցին դրամ ունի: «Հավիտյա»ն օրհնյալ ըլլա հայ մեռելներուն հիշատակը:

Բայց ամենեն սրտեռանդ մաղթանքը հայ քահանային շրթներեն կրթի. «Ո՞ղջ ըլլան հայ մեռելները», որովհետև անոնք ոչ միայն իր թոշակը կհոգան և այլ հատկացումներ տնօրինած են իրեն համար, այլ նույնիսկ ինքնաշարժ տրամադրելու շափ գումարներ կտակած են, ու նաև ծառաներ... դրախտը երկրի վրա. միայն զիրենք կմտահոգե օդին սաստիկ տաքությունը, բայց ունոր ալ դարմանը գտած են—սոսանց մորուքի և փակեղի, պարնգոտով ման գալ, առանց անդրդադառնալու, որ քարնայտ իրոնասերները այդ կերպարանքով քահանաներուն համար չէր, որ ըրած են իրենց կտակները:

«Ո՞ղջ ըլլան մեռելները», անոնց թողած կտակներով եկեղեցիներ կառուցված են ողջերուն համար, որոնք դահեկան միակ լին նվիրաբերած: Կրավե միայն, որ ողջերը շնորհալ հիշել մեռելները և աղոթեն անոնց հոգվոյն խաղաղության համար:

Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի երկրներու հայ մեռելներու հիշատակին բյուր օրհնություն, որ իրենց գերեզմաններեն իսկ, Ազգին ու Եկեղեցիին ծառայություն կմատուցանեն:



Հ Ա Ն Գ Ի Ս Տ
ԳԵՐԱԵՆՈՐՀ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
(1891—1957)

Ստամբուլում հունիսի 2-ին վախճանվեց գերաշնորհ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Կարապետյանը:

Հանգուցյալը ծնվել էր 1891 թվականին Կոստանդնուպոլսում: Նա իր ձեռնդրի շորս դավաններից երրորդն է հղել:

Նախնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում: Ուսանողական շրջանը ավարտելուց հետո մի առժամանակ զբաղվել է վաճառականությամբ, բայց վաղ տարիքից իր հոգում զգացել է սեր դեպի հոգևոր ասպարեզը:

1903 թվականին ստացել է դպրության շորս աստիճանները և մի քանի տարի անց ձեռնադրվել է սարկավադ:

1910 թվականին հիմնադիրներից և գործուն անդամներից մեկն է հանդիսացել Վոմիտասս երգչախմբի, իր զեղեցիկ ձայնական տվյալներով հղել է երգչախմբի ղեկավար:

1918 թվականից որպես դարապետ պաշտոնավարել է Իզմիրի հայոց Ս. Ստեփանոս եկեղեցում իր ամբողջությամբ հոգեշնորհ Տ. Հովսեփ վարդապետի առաջնորդության ժամանակ:

1919 թվականին Կոստանդնուպոլսի Կրոնական ժողովի որոշումով և Զավեն Պատրիարք եղիայանի հավանությունը իրավունքով

ձեռնադրվել է Կոստանդնուպոլսի քահանա, Կեսարիայի Ս. Կարապետ վանքի վանահայր Տրդատ եպիսկոպոս Պալյանի շնորհաբաշխությամբ:

Ապա նա վարել է ուսուցչական պաշտոններ Երուսաղեմում և այլուր:

1921 թվականին հրավիրվում է Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության կողմից որպես հոգևոր հովիվ: Հանգուցյալ նահատակ Տ. Ղեռնդ Դուրյան սրբանից ստանում է ժայրագույն վարդապետության աստիճան:

1927 թվականին նշանակվում է օգնական Բուզարիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Ստեփանոս արքեպիսկոպոսի և ապա, ծերունազարդ առաջնորդի մահից հետո, վարում է թեմի առաջնորդությունը 18 երկար տարիներ:

1949 թվականից հետո մնում էր Ստամբուլում և զբաղվում էր առավելապես քաղաքականությամբ:

Հանգուցյալ Գրիգորիս եպիսկոպոս Կարապետյանը քաջ ծիսադեմ էր՝ «ն մասնադեմ» սրբազան երաժշտության:

1954 թվականին Կոստանդնուպոլսում նշվեց նրա քահանայության 35-ամյակը:

Արքազանի մահը մեծ կարուստ է Հայ եկեղեցու համար:

Հանգիստ նրա հոգուն:

